Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ф-31

Lwl
923

N 48

A 816

2012

N n. 207

№ 71.
№ 816
Դպրոց
2 տպ
923.
РА
27631

ՄԽԻԹԱՐԱՅ ԳՕՇԻ

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

ԲՐԻՒԵԼՈՒՆԵԱՆՔ ՀՆՏԶՈՑՈՒԹԻՒՆՔ ՀԱՆԴԵՐՁ ԹԱՆՕՓՈՒԹԵԱՄԲՔ

ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ՄԻԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՎԱՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂՋԻՔԻՆ ՎԱՆՈՒՑ

ЛАЗАРЕВСКІЙ ИНСТИТУТЪ
УЧЕНИЧЕСКАЯ БИБЛІОТЕКА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԷԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1880—Ռ·ՅԼ·

01 MAR 2018

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ· Տ· ԳԼՈՒՐԶԱՑ Գ·

ՎԵՀԱՓԱՌ ՒՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ.

Հայաստանի Ազգային Գրադարան

(1482-98)

923-2012

Ա 918

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ[1]

ՀՐԱՏԱՐԱԿՈՂԻ

Իւրաքանչիւր ազգի ընդհանուր մտաւոր զարգացման պէտք մասնակից մին է և նորա իրաւաբանական զարգացումն։ Սա գործնական է նոյն ազգի մտաւորական, բարոյական, կրօնական և քաղաքական զարգացման հետ. որքան բարձր է և ընդարձակ ազգի ընդհանուր զարգացումն, նոյնքան համեմատաբար լիակատար է և նորա իրաւաբանական զարգացումն։ Փոխադարձաբար՝ և ինքն իրաւաբանական զարգացումն ունի իւր կողմից մեծ ներգործութիւն և շատ նպաստում ազգի ընդհանուր զարգացման, պետութեան կանոնաւոր և նպատակայարմար կազմակերպութեան, և մանաւանդ նորա օրէնսդրական գործունէութեան։

Բայց միւս կողմից մանաւանդ սակաւ չէ, այլ և մեծ է նոյն իսկ պետական կանոնաւոր օրէնսդրութեան ազդեցութիւնը ազգային իրաւաբանական բազմակողմանի զարգացման վերայ։ Եթէ պետութեան օրէնքները խնամատար են և համապատասխան ազգի պէտքներին, եթէ ղեկ վերաքննվում են և փոփոխվում համաձայն հանգամանքներին և ժամանակի պահանջման,—ազգի իրաւաբանական զարգացումն կատարվում կանոնաւոր կերպով և հետզհետէ առնի բարձրանում և ընդարձակվում։ Եւ փոխադարձաբար՝ երբ բարձր է և լայն ազգի իրաւաբանական զարգացումն, նա կարող է խնդրել կերպով և մեծ օգտով վայելել ազատամիտ օրէնքներ, առնել ընդարձակ ինքնավարութիւն, և իւր կեանքի նոր երևոյթների հետ միասին նա պահանջում և նոր օրէնքներ։

Ազգի իրաւաբանական զարգացման վերայ և հետևաբար պետական օրէնսդրութեան վերայ մեծ ներգործութիւն ունին մանաւանդ հետևեալ պայմանները։

---

1 Տես Ճառաբանութիւնք ազատից առաջ ՓՈՐՁ ամսագրի մէջ, Տփղիս· 1879· № № VI· VII–VIII և IX.

1. Տիզարձակութիւն։ Երէկ երկիրը, օրինակ, տափարակ է, գաշտային է և յարմար երկրագործութեան համար — զարգանում և ծաղկում բնակիչների մէջ առաւելապէս երկրագործութիւնը և առ հասարակ շինական-անտեսութիւնը, որով և պետութեան օրէնքները վերաբերվում առաւելապէս այդ մասին։ Երէկ երկիրը լեռնոտ է — ծաղկում խաշնարածութիւն, քարահատութիւն, հանքահանութիւն, և այլն։ Երէկ ծովեզրեայ է կամ ունի ծովակներ, մեծ մեծ լճեր և լայն ու երկար գետեր — ծաղկում ծովազնացութիւն, արտաքին և ներքին ջրային վաճառականութիւն, ձկնորսութիւն, և այլն։ Երէկ պատած է անհաղիստ և թշնամի ղրացիներով և ազգը սոխրուած է վարել յաճախ պատերազմներ — նորա մէջ զարգանում պատերազմական ոգի, զէնքի գործածութեան վարժութիւն, վատահութիւն, և այլն։ Եւ այսպէս տեղաբնակութիւնը ունի և այլ շատ տեսակ հեւուանքներ. ուստի և քան այնմ զարգանում զուգընթացաբար պետական օրէնսդրութեան այս կամ այն ձիւղը առաւելապէս՝ համապատասխանաբար երկրի պահանջման։

2. Վարչական դասակարգութիւն։ Երէկ ազգի քաղաքական կազմակերպութիւնը, կամ որ նոյն է՝ պետական վարչութիւնը միապետական է — ժողովուրդը սովորում հնազանդել իշխանութեան և նորանից է սպասում իրրև իւր բարերարից՝ ամէնայն բան, իւր բոլոր բարեկեցութիւնը, և այլն։ Երէկ վարչական եղանակը ազնուական — հասարակապետական է — միայն բարձրագոյն դասակարգը, այսինքն՝ իշխանները և ազնուականները ժողովուրդն իւրեանց ձեռքի մէջ բոլոր իրաւունքները և արտօնութիւնները, իսկ սորին դասակարգը՝ աշխատաւոր ժողովուրդը կրում մեծամեծ զրկանքներ և հարստահարութիւններ։ Երէկ ժողովրդական — հասարակապետական է — ժողովուրդը վայելում համեմատաբար աւելի ազատութիւն և ինքնավարութիւն։ Եւ այլն։ Եւ քան այնմ զարգանում զուգընթացաբար և համապատասխանաբար պետական օրէնսդրութեան այս կամ այն ձիւղը աւելի ընդարձակ սահմաններով։

3. Կրօնք։ Կրթասիրութիւնը, մանկավարժութիւնը և հետաքրքրութիւնը բոլորովին տարբեր աղգութիւն ունին ազգի ընդհանուր զարգացման վերայ։ Կրթասիրութիւնը բարձրանալով

բարոյականութիւնը՝ զարգացնում ժողովրդի մէջ ճշմարտասիրութիւն, արդարամտութիւն, պարապաճանաչութիւն, մարդասիրութիւն, վեհանձնութիւն, համբերողութիւն, այսինքն՝ ներքազմութիւն դէպի այլ կրօնները, և շատ նպաստում լուսաւորութեան տարածման և բարեկամական հաղորդակցութիւնները հաստատելուն միևնոյն պետութեան այլ և այլ ցեղերի մէջ, որպէս և զանազան պետութիւնների (ազգերի) մէջ։ Մտածմտականութիւնը զարգացնում ժողովրդի մէջ հանճարեղ յատկութիւններ և բաւական մեծ արգելք է լինում լուսաւորութեան տարածման։ Հնութիւնը զարգացնում ինդոլաշտութիւն և նախապաշարմունքներ։ Ժողովուրդը կուրբորէն և անպայման կերպով հնազանդում ձախատոգրին, անտարբեր է մնում և չէ կամենում քննել և հասկանալ իւր կեանքի երևոյթները, հետևաբար՝ նա զրկի է կարողութիւնից զարգանալ մտաւորապէս և վայելել ազատ օրէնքներ և ինքնավարութիւն։ Եւ ահա այս երեք տեսակ դիւտաբեր կրօնների անմիջական ազդեցութիւնը տարածվում և պրոշմվում նաև պետական օրէնսդրութեան վերայ։ Այդ ազդեցութիւնը մանաւանդ տեսիլ և մեծ է երբ կամ այս կամ այն կրօնը աներազատող է համարվում և կամ՝ պետական վարչութիւնը կրօնական է, թէ՛ կրօնապետական է, այսինքն՝ մարմնաւոր և հոգևոր իշխանութիւնը մի պետի ձեռքի մէջ է, որպիսին էր ասորը, որպիսի են մահմետականների սուլթանները, և այլն։

4. Լուսաւորութիւն։ Որքան բարձր է ազգի լուսաւորութիւնը և ընդհանուր կերպով տարածուած է նա ժողովրդի մէջ, այնքան բազմակողմանի են նորա (ազգի) կեանքի երևոյթները և պետութիւնը, այնքան աւելի ընդունակ է նա կշռադատել իւր գործունէութիւնը և վայելել լայն իրաւունքներ առաջ խնամատուն օրէնքներ։ Իսկ եթէ այդ լուսաւորութիւնը տակաւ է, եթէ ժողովուրդը ընկղմած է տգիտութեան մէջ, նա չէ կարող օգտաւէտ կերպով վայելել ինքնավարութիւնը և կարօտ է պետական վարչութեան բարձրագոյն խնամակալութեան։ Եւ այլն այսպէս։ Եւ քան այնմ զարգանում զուգընթացաբար պետական օրէնսդրութեան կամ ինքնավարական, կամ կառավարչական մասնիկը։

Եւ ահա այս և այլ նման այլ նշանաւոր պայմաններից կախում ունի ազգի իրաւարանական զարգացման այս կամ այն աս-

սակ ու զղու թիւնը, որը իւր կողմից նոյնպէս մեծ ազդեցութիւն ունի պետական օրէնսդրութեան այս կամ այն ձիւղի զարգացման վերայ։

Միւս կողմից՝ և ինքն պետական օրէնսդրութիւնը, ինչպէս ասացինք, փոխադարձաբար մեծ ազդեցութիւն ունի ազգի այս կամ այն տեսակ զարգացման և ուղղութեան վրայ։ Ա յսպէս, օրինակ, պետական օրէնսդրութիւնը կարող է զարգացնել արուեստական կերպով —ձնշելով կամ առանց ուշադրութեան թողնելով միւս կողմերը—կամ երկրագործութիւն և առ հասարակ չինական—առևտուրթիւն, կամ վաճառականութիւն, կամ ծովագնացութիւն, կամ գինուորականութիւն, և այլն։ Նա կարող է կամ ձնշել ժողովրդի ազատ զարգացումն՝ տալով միայն մի կամ քանի մի դասակարգերին աւելի ընդարձակ իրաւունքներ և արտօնութիւններ, կամ բոլոր ժողովրդի մէջ զարգացնել ինքնավարութիւն, քաղաքական գործունէութիւն և ազգասիրութիւն։ Նա կարող է կամ աւելի և աւելի ծաղկեցնել և ծաւալել լուսաւորութիւնը, և կամ ընդհակառակն խոչընդոտ և արգելք լինել նորան։ Նա կարող է զարգացնել ժողովրդի մէջ կամ կրօնական ազատութիւն, կամ անպայմանութիւն, կամ կրօնամոլութիւն։ Եւ այն այսպէս, տեսնելով թէ պետական օրէնսդրութեան որ մասն է աւելի մշակած և ընդարձակած։ Եւ յիրաւի՝ եթէ Ալիւդրոսի օրէնսդրութիւնը չզարգացներ Ապարատացիների մէջ զարմանալի քաջասրտութիւն և պատերազմական ոգի, ասելով թէ Ապարտայի պարիսպը իւր քաղաքացիներն են, փոքրիկ Լակեդէմոնը (Ապարտա) չէր կարող առանալ այնպիսի մեծ քաղաքական նշանակութիւն։ Եթէ Մոզոնի օրէնսդրութիւնը չմղեր ահեղ նացի մանուկների կրթութեան և ուսման մէջ կրաժշտութիւն, կրթնդողութիւն, նկարչութիւն, և առ հասարակ աւելի բարձր մտաւոր զարգացումն քանէ մարմնաւոր (ֆիզիքական), որպէս էր Ապարտայում, փոքրիկ Աթենքի մէջ չէին կարող ծաղկել այնպիսի հինարուեստ վանմութեամբ և կատարելութեամբ բանաստեղծութիւնը, ճարտասպետութիւնը և բոլոր գեղարուեստները։ Եթէ հռովմէական իրաւաբանութիւնը և օրէնքները, որը հասան իւրեանց զարգացման այնպիսի բարձր կէտին, իսկզբանէ լիակատար և հաւասար իրաւունքներ տային ոչ թէ միայն Հռովմի բուն բնակիչներին կամ քաղաքացիներին, այլ և բոլոր գաւառների բնակիչներին, բոլոր նաւա-

ձած ազգերին, և չանարգէին նոցա այնպիսի անտանելի խորութիւնով և բարբարոս անուշով, այդ ազգերը դուցէ չցոյց տային այնպիսի տակտութիւն դէպի Հռովմը և չաշխատէին օր առաջ զատուել նորա թունաւոր իշխանութիւնից, որով այնպէս շուտ չէր կորճանում այդ հզօր պետութիւնը, որոյ անդամ հնաքերը չկան այժմ։ Եթէ Անգլիայի օրէնքները չտային այնպիսի մեծ ազատութիւն վաճառականութեան, այժմ անգլիական վաճառականութիւնը սիրած չէր լինի երկրագնդի բոլոր ծովերին և ովկիանոսներին և այնպէս չէր հարստանայ ամբողջ ազգը։ Եւ ի՞նչ հարկաւորէ թուել այստեղ մի առ մի այն անթիւ և անհամար օրինակները, որք ապացուցանում են թէ արդարև մի օրէնսդրութիւնը կարող է բոլորովին կերպարանափոխել մի ազգի ընդհանուր վիճակը։

Ահա այս է պատճառը որ՝ բոլոր հին և նոր քաղաքակիրթ պետութիւնների բարեմիտ դիւանագործները աշխատել են միշտ տալ իւրեանց ազգին խնամատուն, կեանքի պետքերին և ժամանակի պահանջներին համապատասխանող օրէնքներ։ Ջանացել են միշտ բարձրացնել և ընդարձակել նորա իրաւաբանական զարգացումն, ձգտել են միշտ մշակել և ծաղկեցնել իրաւաբանական դիտութեան բազմաթիւ ճիւղերը։ Եւ թէպետ մի ժամանակ հռովմէական իրաւաբանութիւնը զարմացնում դիտնականների միտքը իւր բազմակողմանի և կանոնաւոր զարգացմամբ, բայց այժմ Եւրոպայի լուսաւորեալ ազգերի իրաւաբանութիւնը անհամեմատ գերազանց է նորանից։ Ձարմացութիւն չի լինի ասել որ՝ այժմ սակաւ գիտութիւններ կան այնպես լաւ մշակուած և կատարելագործուած, ինչպէս իրաւաբանական գիտութիւնը և մանաւանդ նորա մի քանի մասները, սակաւ գիտութիւններ ունին այնպիսի ընդարձակ և հարուստ մասնաղրութիւն, որպիսի ունին իրաւաբանութիւնը և մանաւանդ նորա մի քանի ճիւղերը։ Եւրոպայի բոլոր համալսարանների մէջ կան առանձին իրաւաբանական բաժիններ, ուր ուսուցանում են իրաւաբանութեան բազմաթիւ ճիւղեր։ Շատ երկրներում կան նոյն նպատակով նաև առանձին բարձրագոյն մասնագիտական ուսումնարաններ։

Եւ որովհետև մի ազգի կեանքի քաղաքական, ընտանեկան և այլ տեսակ կողմերը կարելի է յաջողութեամբ բացատրել նորա օրէնքների յատկութիւններով, ուստի եւրոպական գիտութիւնը ա-

առանձին իմն հետաքրքրութեամբ և մանրակրկիտ հետազօտութեամբ ուսումնասիրուէ ոչ միայն նոր ազգերի, այլ և հին՝ մեռած և կիսամեռ՝ ազգերի օրէնսդրութիւնը և իրաւաբանական զարգացումն։ Մանաւանդ մանրամասնաբար և հիմնաւոր կերպով քննուած են այժմ հռոմէական օրէնքները, վասն զի զնոսա որպէս նոցա վերայ հիմնուած են նոր ռոմանական ազգերի, օրինակ Իտալացիների, Ֆրանսիացիների, ևլն. օրէնսդրութիւնները։ Նոյն հռոմէական օրէնսդրութեան և իրաւաբանութեան հետքերը նշմարւում են նաև գերմանական, մինչև անգամ սլաւենական արմատներից գոյացած ազգերի օրէնսդրութեան մէջ, որովհետև ևս դեռ, մանաւանդ գերմանական ցեղերը, սերտ յարաբերութիւններ ունէին Հռոմայեցիների հետ և սկզբներում բաւականին ենթարկուեցան նոցա բարոյական, քաղաքական և լուսաւորութեան ազդեցութեան։ Իսկ յունական ազգերի և մանաւանդ բիւզանդական իրաւաբանութիւնը և օրէնսդրութիւնը, թէ մինչև Յուստինիանոսը և թէ յետոյ մինչև կայսրութեան անկումն, զրեթէ կիսով չափ պարունակուէին իւրեանց մէջ հռոմէական իրաւաբանութեան և օրէնսդրութեան խոշոր և գլխաւոր մասները, իսկ Յուստինիանոսի օրէնսդրութիւնը գլխովին հռոմէական է։

Բայց ախտա որ՝ եւրոպական գիտութիւնը դեռ ևս սակաւ է ուսումնասիրել և քննել ասիական ազգերի իրաւաբանութիւնը և օրէնսդրութիւնը, թէպետև չէ թողել դոցա բոլորովին առանց ուշադրութեան, որպէս և նոյն ազգերի կեանքի միւս կողմերը։ Ա՛յսպէս, օրինակ, մեր լեզուն, մասնագրութիւնը, պատմութիւնը, եկեղեցին, և այլն, գրաւած են իւրեանց վերայ, մանաւանդ ներկայ դարուս սկիզբներից ի վեր, եւրոպացի գիտնականների ուշադրութիւնը, բայց նոքա գեռևս հասարեա ոչ մի խօսք չեն ասել հայկական իրաւաբանութեան և օրէնսդրութեան վերայ, հայոց ազգի հին իրաւաբանական զարգացման վերայ, և այլն։ Եւ որ առաւել ևս զարմանալին է և միանգամայն ցաւալին—նոյն իսկ հայ գիտնականները մինչև այսօր սակաւ են մտածել իւրեանց ազգային իրաւաբանութիւնը քննելու և իրաւաբանական ազգիւրները մշակելու վերայ, վասն որոյ մեր մասնագրութիւնը, ազգասիրի ինքն ըստ ինքեան, մանաւանդ աղքատ է իրաւաբանական շարադրութիւններով։

Տարաբախտաբար՝ մեր ազգասութիւնը մեզ տեսնում ենք մեր հին մատենագրութեան մէջ, և այս կողմից սա զրեթէ մի բացատութիւն է կազմում հին ազգերի մատենագրութիւնների դասակարգում։ Պատմական անցքերը միշտ արգելք էին լինում հայոց ազգի բարոյական, մտաւորական և քաղաքական կանոնաւոր զարգացման։ Մեր պետական բազմադարեան ալեհածեալ կեանքը անցաւ զրեթէ ապարդիւն անընդհատ և անհատասար պատերազմների մէջ հզօր ազգերի և ասիական վայրենաբարոյ ազգերի հետ։ Հայաստանի բոլոր ժողովուրդը սակաւած էր բաժանուել երկու գլխաւոր դասակարգ — զինուորականներ և երկրագործներ. առաջին դասակարգը աշխատութեամբ ապահովացնել հայրենիքի քաղաքական գոյութիւնը, իսկ երկրորդը — նոքա օրական պարենը. իսկ մէջին կամ երրորդ կոչուած դասակարգ՝ le tiers état զրեթէ բոլորովին չկար։ Երբ ժողովուրդը դասակարգի մի այդպիսի վիճակի մէջ գտնուու ընթացքում, նա չէր կարող ունենալ բարձրագոյն մտաւոր զարգացումն։ Օտար ազգերի լուսաւորութիւնը նոյնպես չէր կարողանում յաջողութեամբ մտնել Հայաստանի մէջ, որովհետև Պարսկաստանի, Յունաստանի, Հռոմի և ուրիշ հզօր պետութիւնների յարաբերութիւնները նոքա հետ զրեթէ միշտ թշնամական էին։ Այս պատճառով փիլիսոփայութիւնը, աստեղաբաշխութիւնը, թուաբանութիւնը, բժշկականութիւնը, որպէս և գիտարուեստները՝ քանդակագործութիւնը, երաժշտութիւնը ձայնասոր և գործիքասոր, նկարչութիւնը, քանդակագործութիւնը, ճարտարապետութիւնը, թատրոնը, և այլն, կամ բոլորովին չճաղկեցան Հայաստանի մէջ և կամ ճաղկեցան շատ նուազ կերպով, երբէք չհասնելով այն բարձր աստիճանին, որին հասան դոքա օրինակ Յունաստանում կամ Իտալիայում։ Հայոց ազգը հեթանոսութեան դարերում չմշակեց, չառեղծեց մինչև անգամ իւր սեփական մի ամիսոն զիցաբանութիւն կամ կրօնական վարդապետութիւն, այլ բաւականացաւ զուրկից նկատուա, օտար ազգերից փոխ առած կրօնով և չաստուածներով։ Նոյն իսկ մեր հին մատենագրութիւնը հեթանոսութեան դարերում և քրիստոնէութեան ժամանակ մինչև հինգերորդ դարը ունեցաւ շատ նուազ զարգացումն, իսկ յետոյ ճգնութեան փորը ի շատ միայն նոքա երկու ձիւղը — աստուածաբանու-

խիտը և պատմությունը։ Նա որ ուսյալ զբաղմունքին է մեր մտա-
ղազրության մեջ հին ժամերից սկսած մինչև մեր օրերը ամեն ջան-
քերից ավելի նպաստած է իրաբարանական գիտության։

Մի ազգ, որ դեռ գոյության սկզբնաղբյուրները կորչում են հնա-
դոյն ժամերու անհայտության մեջ, իսկ քաղաքական անկախու-
թյան վերջը հասնում է մինչև հեգնատաններորդ դարը, մի ազգ,
որ հաշվում է իր կյանքի օրերը տասնյակ և քսանյակ դարերով
և ժամանակակից է դրեթե բոլոր հին և նոր ազգերին, մի այդպիսի
ազգ պիտի անշուշտ ունենար իր իրաբարանական զարգացումն։
Այդպիսի խիտ երկարաև պատմական կյանքի մեջ, այն էս մի
կողմից՝ ունենալով անընդհատ, մերթ ընդմիջական և մերթ բարե-
կամական, հարաբերակցություններ համարյա բոլոր հին և նոր քա-
ղաքակիրթ ազգերի հետ, օրինակ՝ Ասորեստանցիների, Բաբելացիների, Պարսիկների, Հույների, Հռոմեացիների, Արաբացիների հետ, և
այլն, ու եվրոպական ազգերի հետ Միջնադարի թատա-
ոերության միջոցին և մանավանդ Խաչակիր պատերազմների ժա-
մանակ,—միշտ կողմից՝ սահպուած լինելով միշտ հոգալ իր ինք-
նապահպանության վերայ, հայոց ազգը իր սեփական փորձերից
և ուրիշ քաղաքակիրթ ազգերի օրինակներից պիտի ճշակէր մի
հատուկ պետական կազմակերպություն, կանոնաւոր կերպով զար-
գացած ամեն կողմից—դիւանագործական, քաղաքական, անտեսական, և
այլն։ Նա պիտք է նոյնպես ճշակէր հարուստ և բազմակողմանի
կերպով մի ամիսով դիտություն պետական իրաբարանության, նա
պիտք է ունենար մի ամբողջ շարք օրէնսդիր անձինքների, նա պիտք
է ունենար մի մեծ քանակություն օրէնքների և օրէնսդրական խմբ-
բագրությունների կամ ժողովածուների, նա պիտք է ծագկեցներ
ընդարձակ և հարուստ իրաբարանական մատենագրություն. մի
խոսքով՝ նորա բազմադարեան իրաբարանական կողմն պիտի զար-
գանար լայն և բազմակողմանի կերպով։

Բայց, ընդհակառակն, ինչ ենք տեսնում։ Չկայ Հայաստանի
մեջ կանոնաւոր նշանակ պետական կառավարության. Թագաւոր-
ները ըստ մեծ մասին թոյլ են և զուրկ կառավարչական ընդու-
նակություններից. երբեմն երկու և երեք ապստամբ Թագաւորներ
կամ պատերազմներ միանց դեմ՝ ոտնակոխ անելով իրանց

ընդհանուր հայրենիքը, և կամ իշխանները առանձին առանձին՝
բաժանելով ազգը և հայրենիքը. յաճախական գահընկեցություն-
ներ Թագաւորների, երբեմն ժառանգական և երբեմն անհատան եղա-
նակ գահակալության. երկարաև պարապություն գահի. անկումն
Թագաւորության երեք չորս անգամ. բացակայություն կանոնաւոր
և ժամական զօրքի. անհատան հարկահանության. անընդ-
հատ ապստամբություն նախարարների, և նոցա զինաւորած պա-
տերազմներ կամ միանց և կամ Թագաւորի դեմ, և այլն։ Այս
յատուկ ցեղը հայոց ազգի պետական կյանքի նորա բոլոր շարու-
նակության ժամանակ։

Ինչպես յայտնի է՝ Հայոց ազգը բախտացաւ զանազան ընդել և
նկատելա ցեղերից[2]։ Այդ ցեղերը զանազան ընթացքում փոքր ա-
փոքր խառնուեցան միանց հետ և գոյացրին մի ամբողջություն—
Հայոց ազգ, բայց այդ ամբողջությունը շատ երկար ժամանակ միայն
արտաքին էր, քաղաքական էր։ Եւ յերաւ թէպետ հնադոյն զա-
ներից սկսած Հայաստանի և Հայոց ազգի վերայ սկսեցին իշխել
ամէն իշխանները և ապա Թագաւորները, որոց գերագոյն պետական
իշխանությունը ճանաչուելին իւրեանց վերայ բոլոր ցեղերը, բայց
ներքին կեանքի մէջ այդ ցեղերից ամէն մէկը երկար ժամանակ պահ-
պանում իր զատուած, ինքնուրոյն գոյությունը գրեթէ իրրև մի
առանձին քաղաքական մասին։ Իւրաքանչիւր ցեղը ամփոփուած
նստած էր մի առանձին և բաւական ընդարձակ երկրի վերայ և կա-
ռավարվում իր ցեղապետներով. և մի այդպիսի անջատուած
դրության շատ նպաստում էր Հայաստանի աշխարհագրական դիր-
քը, բաժանուած բազմաթիւ լեռներով, որը ամեն տեղ բաւական
արգելքներ և դժուարացնում էր ցեղերի միաւորությունը։
Նեղապետները, որք յայոց նախարարներ կոչուեցան, շատ մեծ դեր
էին խաղում պետական ընդհանուր կառավարության մեջ, իսկ
իւրեանց նախարարության, այսինքն՝ կալուածքի կամ գաւառի մէջ
և իւրեանց ցեղի վերայ նոքա վարում էին գրեթէ անսահման իշխա-
նություն, վանն էր որպես պարզ երեւում է մեր պատմագրությունն-

2. Տե՛ս իմ յօդուածը Արարատի մէջ, 1872 թ., երես 197—205, 213—231, 512—519։

Ների մէջ ճնացած տեղեկութիւններից՝ նոքա ժողովուրդի հարկը, վարչական դասակարգերը, պահուելիք սեփական զօրքը, և այլն։ Այդ իրաւունքները և պարտաւորութիւնները հետզհետէ դնդձան ժառանգական և անցնում էին հօրից որդուն, բաժանելով շատ անգամ երկիրը աւելի մանր մասերի։ Նա այդ հզօր նախարարների քաղաքական կախումն երկրի ընդհանուր վարչակից (միահեծան իշխանութիւնից և յետոյ թագաւորներից) շատ լոյլ էր և արտաքին և արտայայտուելիս ղեկաւորական հետևեալ երեք պարտաւորութիւնն մէջ։

1. Իւրաքանչիւր նախարար պարտաւոր էր տալ թագաւորին հարկաւոր ժամանակ, օրինակ՝ պատերազմի միջոցին, զօրք որոշեալ քանակութեամբ, համապատասխանաբար իւր դաւառի բնակիչների թուին, պահել այդ զօրքը իւր հաշուով և եթէ կարիք էր՝ անձամբ կատարել զօրագլխի պաշտօնը։ Նա այդ առանձին զուարճերից կազմուում էր Հայաստանի ընդհանուր պետական զօրքը արտաքին թշնամու դէմ պատերազմ վարելու ժամանակ[3]։

2. Իւրաքանչիւր նախարար պարտաւոր էր վճարել արքունի գանձարանին որոշեալ հարկ[4]։

3. Իւրաքանչիւր նախարար պարտաւոր էր մասնակցել թագաւորին ընծաներ դահը բարձրանալու ժամանակ, և նորա ու նորա զաւակների հարսանիքի առիթով։

Իսկզբ այդ պարտաւորութիւնների զանազանութիւնը հանդիսանում էր ազատութիւն և քաղաքական մեծ յատկանիշ, և թագաւորները շատ անգամ զգուշով օտարականներին կատարել իւրեանց պարտաւորութիւնները[5]։

Երկրի մի այդպիսի քաղաքական դրութիւնը, որ շատ նպաստում էր պետութեան կազմակերպութեան և քայքայման, չէր կարող շարժել իւր վերայ կեդրոնական գերագոյն իշխանութեան

3. Եղիշէ (Թէոդոսիա, 1864 տարի), երես 112—113։ Խորենացի (Վենետիկ, 1843 տարի), եր. 231 և այլն։ Ճովհաննէս դամձրնեցի (Մոսկուա, 1853 տարի), եր. 93, 97, և այլն։

4. Թովմա Արծրունի, կ. Պոլիս, 1852, եր. 58։

5. Թովմա Արծրունի, եր. 510, 517, և այլն։ Նաև զուգ պատմագրութիւնների մէջ։

ուշադրութիւնը։ Նա ահա Վաղարշակ Ա. (150 թ. Քրիստոսից առաջ)՝ որից վեցն կարելի է համարել Տայկական թագաւորութեան փոքր ի շատէ կանոնաւոր կազմակերպութեան սկիզբը, իրրև օտար և զուրկից եկած թագաւոր՝ կամենալով ապահովացնել հաստատ արքայական գահը իւր և իւր սերունդի համար, իսկոյն իւր բոլոր ուշադրութիւնը ժողովից նախարարական իրաւունքի վերայ։ Նա հարկաւոր համարից որքան կարելի է թիւը պակասցնել և աշխոյժնել այդ հզօր և զրկել անկախ իշխանների զօրութիւնը և իրաւունքները և ընդհակառակն հզօրացնել կեդրոնական վարչութեան զօրութիւնը և իշխանութիւնը։ Այդ նպատակով ձիշտ պատմական տեղեկութիւններ ժողովելով նախարարական տների մասին՝ Վաղարշակ թագաւորը իսկոյն ձեռք զարկեց պետական կառավարութեան արմատական կերպարանափոխութեան։ Օգտուելով քօղարկելով նախարարների աչքից իւր իսկական նպատակը, որպէս զի ապստամբութեան կամ ընդդիմութեան չզոյց տան, նա տարածեց իւր բարեփոխութիւնները (ռէֆօրմները) պետական կառավարութեան բոլոր ճիւղերի վերայ — զինուորական, բարեկարգական կամ ոստիկանական, տնտեսական, դատաստանական և այլն։ Նա ձգտութեամբ որոշեց նախարարների իրաւունքները և պարտաւորութիւնները, որպէս և նոցա կալուածքների սահմանները։ Նա հաստատեց զանազան տեսակ պատուական կոչ ու կանոններ, և այս բոլորից աւելի ստորադրեց նախարարները արքունի գանազան ծառայութիւններին։ Երբ կարծեց որ ղեկաւորն է նա հաստատել նոր նախարարութիւններ, շատ մեծ մասին անուշան ցեղերից կամ անձնիցից, համարեա առանց կղերի և իրաւունքների, յանձնելով նոցա հնչին և տարբ պաշտօններ, օրինակ՝ պահպանել և կառավարել թագաւորի մատաններըն, հանդոյնները (որտորութեան հաւբ), սպասաւորներին, տանջանքները և այլն[6], շատացնելով իւր կուսակիցները, ինչպէս Ընդհանրապէս թագաւորները անում են այդ մինչև այժմ — հետևելով Պետրոս և Լուդովիկոս տիրողները, որ կամենում են շատացնել իւրեանց կուսակիցները Խարտիր Պալատի մէջ (պետական Խորհրդարան ժողով)։

6. Խորենացի, եր. 76։

Թէպէտ նաև յայտ մի քանի հետաքրքիր և պետութեան կանոնաւոր կազմակերպութեան վերայ ժամանակ թագաւորները, ինչպէս օրինակ Աբասլէս Ա.[7] և վերջին Տիգրանը[8], հետևողական ճիգեր քաջալերանութեան և հաստատութեան նոր նոր նախարարական ցեղեր, թէպէտ մի քանի անխոհեմ թագաւորները բռնութեամբ կամենուին ջնջել և թուլացնել մանաւանդ հզօր նախարարների ցեղերը, ինչպէս օրինակ Տիգրանը[9] և Երշակ Ա.[10], և թէպէտ նոյն ձգտումն ցոյց էին տալ Խոսրովատւոյ թագաւորները[11]; դայց այնու ամենայնիւ հին նախարարական ցեղերը և մանաւանդ նոցա նից մի քանիսը միշտ պահպանուին իբրև հզօր պրօթէիւը և ընդարձակ իրաւունքները, որ և աւանդուին ժառանգաբար իրանց սերունդին։ Այս թէ արշաւի հզօր էին հայոց նախարարները ոչ միայն Երշակունեաց, այլ և Խոսրովատւնեաց և Տրդատեանց թագաւորութեան ժամանակ, այդ երևում նոցա յաճախական ապստամբութիւններից, մինչև անդամ նոցանից ոմանք երբեմն երբեմն անջատուին թագաւորին տարադրելուց և թագաւորութեան առանձին։

Այդ հզօր նախարարները իրանց հզօր պրօթէիան շնորհիւ, մի դրօթէիան որ պատմական իմն վաներացութեամբ ստացել էր դարերու ընթացքում, վարուին պրիվէ անսահման իշխանութեամբ իրանց գաւառի ներքին գործերի եւ կառավարութեան մէջ։ Նոքա կառավարուին իրանց ժողովուրդը աւանդական կամ ժողովրդական իրաւունքով եւ հին սովորութիւններով, երբեմն երբեմն նոր կարգադրութիւններ անելով կամ բանաւոր պատուէրներով եւ կամ գրաւոր հրամաններով։ Բայց այդ բանաւոր կարգադրութիւնները և գրաւոր հրամանները չէին կարող պարտաւորութիւն օրինքի զօրութիւն ունենալ յաջորդող նախարարների համար, որը լիագօր իրաւունք ունէին խոտանել դոցա կամ փոխել, եթէ հարկաւոր էր այդ։

7. Խորենացի, եր. 124 և 135։

8. Նոյն, եր. 143։

9. Փաւստոս Բիւզանդ. գիրք Գ. գլ. 18 եւ գիրք Դ. գլ. 14։ և Խորենացի, եր. 204։

10. Խորենացի, 218 — 19։

11. Ագաթանգեղոս, եր. 141։

Այս որովհետև իւրաքանչիւր նախարարութեան կազմածքը կամ նախարարութիւնը ներկայացնում բաւականին ընդարձակ գաւառ, որոյ սահմանները էին լաւ մեծի մասին բարձր լեռներ, և այդ լեռները խափանուին զրացի գաւառների բնակիչների մէջ մերձաւոր հաղորդակցութիւնները, մանաւանդ որ չկային յարմար ճանապարհներ, ուստի գաւառների բնակիչները միօրինակ զրկեալ բոլորովին անջատած միմեանցից, և մի գաւառի աւանդական իրաւունքը և իրաւարանական ու այլ սեռակ սովորութիւնները, մինչև անգամ խօսակցութեան լեզուն (բարբառ), շորերը, և այլն, բաւականին տարբերվում էին միւս գաւառներից, կրելով իւրեանց մէջ ինքնուրոյն յատկութիւններ։ Այդ պատճառով և մի նախարարի բանաւոր կամ գրաւոր նոր կարգադրութիւնը հազիւ թէ հազարից մէն անգամ անցնում էր միւս գաւառը և ընդունելութիւն գտնում այնտեղ։ Հայկական պետութեան այսպիսի աւատական (ֆէօդալական) կազմակերպութեան պատճառով կեդրոնական գերագոյն իշխանութիւնը արտայայտվում միայն արտաքին կերպով։ Գաղտնիների բոլոր հրամանները և կարգադրութիւնները վերաբերվում էին անմիջապէս ոչ թէ ժողովրդին, այլ նախարարներին, որք ի կատար էին ածում իւրեանց գաւառների մէջ, ուստի նոքա կարող էին պարտաւորել իւրեանց մէջ միայն որ և իցէ արտաքին, ժամանակաւոր բարեկարգութիւններ կամ հրահանգներ, և ոչ թէ արմատական վերանորոգութիւններ։ Ա՛ւան որոյ կեդրոնական գերագոյն վարչութիւնը հազիւ թէ կարող էր կարիք ունենալ հրատարակել ընդհանուր օրէնքներ ամբողջ պետութեան համար, կամ կազմել օրինագրքեր և օրէնսդրական ժողովածուներ նոյն նպատակով։ Իսկ գաղտնիների հրովարտակները եթէ և պահպանվում էին արքունի դիւանների (արխիվների) մէջ, հազիւ թէ արձանագրվում էին մի ընդհանուր մատեան կամ օրէնսգրքի մէջ։ Այդ՝ Հայաստանը չունէր այնպէս Լեհաստանը, Սաքսոնիան, Շուէտիան և Հունգարիան, որ ամեն նոր կարգադրութիւն կամ նոր օրէնք անպատճառ գրվում էին ազգային ժողովների գրքերում, և ամեն նոր ընտրութեան ժամանակ ընտրուած թագաւորը պարտաւորվում էր հաստատել ամեն հին օրէնքներ և սովորութիւններ, որոնք ազգի ներկայացուցիչների կամ նախարարների կողմից պահանջվում էին։ Իսկ թագաւորների կամ իշխանների մէկը, կամ մի մանաւանդ մարդ, մի օրէնսդէտ կամ մի մատենագիր, երբ և իցէ կազմէր օրէնքների խմբագրութիւն ամբողջ պետութեան կամ այս կամ այն նախարարութեան համար, ոչ ապաքէն մեր պատմագիրները, որք սովորաբար բաւականին մանրամասնօրէն նկա-

բանդրեան մանաւանդ իւրեանց ժամանակակից նշանաւոր անձերը, ու բան կ՚իշէին զրա մասին։ Ի՞նչու մնացել են տեղեկութիւններ օրինակ՝ եկեղեցական Մաշտոցի մասին, որ մի տեսակ եկեղեցական օրէնսդիրը է և պահպանուել է հարիւրաւոր օրինակներով կանոնադրքերի մասին, որք նոյնպէս եկեղեցական օրէնսդրքեր են և զուտ-վաճառ են բազմաթիւ օրինակներով։ Մխիթար Գոշի Դատաստանադրքի մասին, որ խաւեր ժողովածու է եկեղեցական և աշխարհական օրէնքների և նոյնպէս պահպանուել է շատ օրինակներով, իսկ հայոց պետական օրէնսդրքի կամ օրէնքների ժողովածուի մասին ոչինչ տեղեկութիւն չէ մնացել ոչ պատմագրութեան մէջ և ոչ ձեռագիր օրինակներով։

Թէպէտ ոմանք կարծում են որ Վաղարշակը այնքան բարեկարգութիւններ հաստատելուց յետոյ պիտի անշուշտ յօրինած և հրատարակած լինէր նաև մի օրէնսդիրք, և այդ ենթադրութիւնը հիմնուելն Խորենացու ակնարկութեան վերայ, որ ասում է թէ նա հաստատեց օրէնքներ և կարգեց ամէն տեղ դատաւորներ, բայց այդ կարծիքը ըստ մեզ չէ հիմնաւոր։ Նախ որ նոյն Խորենացին, այն երևելի գիտնականը և հմտագիտող պատմագրիչը այնպիսի մանրամասնութեամբ նկարագրելով Վաղարշակի բոլոր բարենորոգութիւնները, բնաւ չէ յիշում որ նա յօրինած և հրատարակած լինէր օրէնսդիրք կամ դատաստանագրքեր։ Եւ երկրորդ՝ քննենք թէ ի՞նչ է ասում նա։

«Եւ օրէնս իմն հաստատ (Վաղարշակ) ի տան թագաւորութեան իւրոյ, և ժամս որոշէ կիւմիից և խորհրդոյ և խրախճանութեանց և ղեօտանաց։ Եւ կարգս ղնուռորութեանց, և նոցունդ առաջինս և երկրորդս և երրորդս, և որ ի կարդին։ Եւ յիշեցուցանող երիցս ի ձեռն զրոյ. այլ սմն զրարի յիշողութիւն առնելով, եւ այլ սմն դիրեւմնդրութեանցն։ Եւ բարեյոյ յիշեցուցանողին հրաման տայ ի բարեմիտն արքայի և յանիրաւ հրամանն՝ յիշեցուցանել զերաւն և դմարգասիրին։ Իրաւարարս ի տան արքունի, իրաւարարս ի քաղաքս և յատենս։ Հրաման տայ քաղաքացոյց մարդկան արդոյ և պատիւ լինել քան զղեղջկացն, և զեղջկայ պատուել զքաղաքացին օրպէս զիշխանս. և քաղաքացոյց մի կարի առ զեղջկօքն պերճանալ, այլ հղբայրարար վարել, վասն բարեկարգութեան և անվնասութեան կենաց, որ է շինութեան և քաղաքավարութեան կենաց պատճառք։ և որ ինչ նման այսոցիկ[12]։

Ահա պատմագրի այս խօսքերի վերայ հիմնուելով, ինչպէս վերը ասացինք, մեր գիտնականներից ոմանք, օրինակ՝ Մխիթարեան վարպետ Ղուկաս Ինճիճեանը[13], կարծիք են յայտնում թէ Վաղարշակը հրատարակած պիտի լինի մի օրէնագիրք։ Այդ լուռ քննելով Խորենացու վերոբերեալ խօսքերը, պարզ երևում է որ Վաղարշակի կարգադրութիւնները վերաբերում են ամէն արատքին և պետական բարեկարգութեանց։ Ուստի եթէ նա յօրինէր նոր օրէնսդիրք պետութեան համար, կամ ամէն հին օրէնքների ժողովածու և դատաստանագիրքը, էջ առաքէն Խորենացին կ՚իմացնէր այդ յստակապէս, և մեզ կարելի է կարծել որ այս գիտնական հեղինակը մոռացման կամ զանցառութեան տար մի այդպիսի երևելի գործը։ Եւ նայն ուստի նաև մասնիկը — Օրէնս նմա հաստատ — մի անորոշութիւն է տալի և ցուցնում որ Խորենացին ակնարկում ոչ թէ մի ամփոփ օրէնսդրութիւն, այլ մասնաւոր մեծ օրէնքներ, կամ աւելի լաւ ասել՝ կարգադրութիւններ բարեկարգութեան մասին։ Պատմութեան այդ անորոշ խօսքերից չէ երևում միևնոյն ատեն թէ Վաղարշակի հաստատած այդ Օրէնս իմն բաներ հրամայողական էին թէ զրուցք—հրովարտակներով հաստատած կարգադրութիւններ, որք կարող են և բաւարար կերպով հրամայուած լինել։ Եւ եթէ ենթադրենք անգամ որ Վաղարշակի այդ բոլոր կարգադրութիւնները գրով հաստատուեցան, միևնոյն ատեն պիտի լիներ բանիւ ասուածով նոցա և գիւղական մարդկանց պահելու համար, բայց այնու ամենայնիւ չէ պիտոյ խաւսնել երկու զանազան ատարիանք — այլ են հրովարտակներ պետութեան և մասնաւոր արքայական պալատի բարեկարգութիւնների մասին, և այլ է օրէնսդիրք, որոյ մէջ պիտի սահմանադրուած լինին զանազան քաղաքացիական, քրէական, և այլն, օրէնքներ, որպէս և այլ է դատաստանագիրք, որոյ մէջ գոյց առած պիտի լինի զանազան տուժումների դատարանների կազմակերպութիւնը, օրինակ թէ դատա-

12. Խորենացի, եր. 80—81։

13. Հնախօսութիւն Հայաստանի, հատոր Բ. եր. 502։

բանը քանի՞ դատաւորից բաղկացած պիտի լինի, ինչպես պէտք է առնան կոչել յանցաւորը, դանդատաւորը, վկաները, ինչ կարգով պիտի հարց ու փորձ անել նոցա, ինչ ձեւով երդուացնել, և այլն, մի խօսքով պիտի բացատրուած լինին դատավարանակազմութիւնը և դատաստանադատութիւնը, թէպէտ հին ազգերի օրէնագիրքը և դատաստանագիրքը երբեմն խառնուած կամ միաւորկուած էին լինում միասին։ Սակ ինչ վերաբերվում է իրաւարարներին, թէպէտ Խորենացին ասում է թէ Վաղարշակը կարգից փրաւարարս ի տան արքունի, իրաւարարս ի քաղաքս և յաւանսն, բայց այդ չէ նշանակում որ՝ թագաւորը միևնոյն ժամանակ հատատաց այդ իրաւարարների կամ դատաւորների համար, եթէ միայն կարելի է իրաւարարը ընդունել դատաւոր բառի բուն նշանակութեամբ, — նոր օրէնագիրը կամ ժողովածու հին օրէնքների։ Շատ կարելի է որ՝ Վաղարշակը կարգից գանազան քաղաքներում և աւաններում դատաւորներ, — թէպէտ դժուար կլինի այն ժամանակ հաստատել թէ ինչ է նշանակում դատաւոր թագաւորական պալատի մէջ [14], — բայց նոքա կարող էին վարուել հին օրէնքներով կամ աւելի լաւ ասել՝ դատաստանական աւանդութիւններով, Նոյն Խորենացին այնպիսի հետաքրքրական մանրամասնութեամբ պատմելով մեզ Երկրորդ Երատշէսի դէպքերի բարեկարգութիւնները եւ ասելով թէ նորա ժամանակ, ինչպես ասում են, չէ եղել Հայաստանում անզօրծ և անմշակ երկիր, ոչ լճանային և ոչ դաշտային, և թէ՝ թէպէտ Վաղարշակը և ուրիշ թագաւորները հաստատեցին դէպքերի կարգեր և սովորութիւններ, բայց չկային միաձոյլ արուեստներ և գիտութիւններ, շաբաթների և ամիսների և տարիների կանոնաւոր հաշիւ, նաւագնացութեան ծովակների վերայ

14. Գ. Էմինը Խորենացու ասերն թարգմանելիան մէջ այդ բառերը թարգմանելով այսպէս «Назначаетъ судей при дворѣ» (տես 86), այսինքն՝ դատաւորներ արքունի պալատի մէջ կամ պալատի համար, ուշիւ բացատրութիւն չէ տալի իւր ծանօթութեանց մէջ թէ ինչպես պէտք է հասկանալ պատմագրի այս մասը խօսքերը։ Եթէ բառացի մտքով վերցնենք յայտնի է որ՝ ոչ հին և ոչ նոր ազգերի մէջ երբէք չեն եղած առանձին դատաւորներ արքունի պալատում կամ պալատի համար։

և ճանապարհորդութիւն գետերի վերայ, ձկորսութեան գործիքներ, երկրագործութիւն ամեն տեղ, և այլն, և այս բոլորը հաստատեց և բարեկարգեց Երատշէսը [15], — Խորենացին բնաւ չէ յիշում որ՝ այն այս Երատշէսը յօրինած և հրատարակած լինէր նոր օրէնագիրք կամ ժողովածու հին օրէնքների։ Եւ եթէ այս պնդական պատմութիւնը պատահմամբ զանց է առել կամ մոռացել է, — որ միանգամայն դժուար է ենթադրել այդ, — յիշել մի այդպիսի երևելի գործ, գոնեա ուրիշ պատմագիրները կյիշեին այդ, եթէ իրօրէն Վաղարշակը, Երատշէսը կամ մի ուրիշ թագաւորը Երշխունեաց հարատութիւնից յօրինած լինէր օրէնագիրք կամ դատաստանագիրք։ Աւտի պրևեէ պրակտապես կարելի չէ ասել որ՝ այդպիսի օրէնագրքեր և դատաստանագրքեր ոչ թէ միայն չեն հասել մեզ և կորել են ուրիշ շատ գրքերի հետ, այլ չեն եղել բոլորովին։

Իսկական չէ այս, այլ եթէ պիտենք Խազրատունեաց թագաւորութեան ժամանակամիջոցին, որ աւելի մօտ է մեզ քան թէ Երշխունեացը և աւելի շատ պատմագիրներ ունի, մենք միևնոյն լուսաբիւրը կտեսնենք պատմութեան մէջ հայկական օրէնագրքի և դատաստանագրքի մասին։ Ինքն ըստ ինքեան մի նուազ պետութիւն, ամէնքից անդադար պատերազմել արտաքին թշնամիների հետ և մաքառել ներքին երկպառակութիւնների դէմ, Խազրատունեաց թագաւորութիւնը հազիւ թէ կարող էր մտածել մի այնպիսի գործի վերայ, որ պատրաստ է և պահանջողութիւն պետութեան ճարտարութեան, ներքին բարեկարգութեան և անդորրութեան։ Այդ միջոցին մի քանի նախարարական ցեղերը առաւել ևս հզօրացան և իւրաքանչիւր նախարար շարունակուէր կառավարել իւր երկիրը գրեթէ բոլորովին անկախ, ինքնիշխանարար, վարուելով միշտ հին աւանդութիւններով և ժամանակաւոր կարգադրութիւններով։ Զարմանալի բանը այնէ որ՝ թէպէտ այդ միջոցներին Հայաստանը շատ սերտ յարաբերութիւններ ունէր՝ մերձ թշնամական և մերձ բարեկամական՝ Իւրաքանչիւր կայսրութեան հետ, և թէպէտ նոյն միջոցներին բիւզանդական իրաւաբանութիւնը ասանձին ընդարձակ զարգացումն ստացաւ թէ կայսրների կողմից հրատարակած նոր օրէնագրքերով

15. Խորենացի, եր. 135 և 136։

923 - 2013 (1482 - 98)

և հին օրէնքների ժողովածուներով, թէ մանաւանդ պետականների կոզմից խմբագրած օրէնագրքերով և օրէնքների ժողովածուներով, և թէ իրաւարանական մատենագրութեան մէջ, բայց և այնպէս Յունաստանը այս կողմից ոչինչ ազդեցութիւն չունեցաւ Հայաստանի վերայ։ Եւ ոչ միայն մեր թագաւորներից և ոչ մէկը չմտածեց հետևել իւրեանց ժամանակակից կայսրների օրինակին, օրինակ՝ Վասիլ Ա. Մակեդոնացուն (867—886 թ.), Լեւոն Իմաստասէրին (886—911 թ.), և այլն, որք այնպէս հարատացրին բիւզանդական իրաւարանութիւնը հին օրէնքների վերաբերութիւններով և նոցանից նոր խմբագրութիւններ կամ ժողովածուներ կազմելով և բազմաթիւ նոր օրէնքներ հրատարակելով, այլ մինչև անգամ ժամանակակից հայ պետականներից կամ հեղինակներից և ոչ մէկը չմտածեց գոնեա թարգմանել նոցա, և ահա Մխիթար Գոշը, ինչպէս կտեսնենք յետոյ, բազդատմամբ բարձրաձայն թէ՝ հայերը չունին ամենևին (մտերմաման և յիսկատար) օրէնքներ։

Բայց այնու ամենայնիւ հայ նոր պետականներից սմանք, կարծես թէ պետքի աչքերը փակելով պատմութեան առաջև, հաւատացուցեալն մեզ թէ Բագրատունեաց հարատութեան ժամանակ արդէն յօրինուած կար պետական օրէնագիրք, որով վարվում էր պետութիւնը։ Եւ այդպիսի կարծիքը հաստատումն ոչ թէ ժամանակակից պատմագրիների վկայութեան վերայ, կամ մեզ հասած օրէնագրքի և կամ գոնեա նորանից մնացած հատուածների վերայ, որք չկան ամենևին, այլ թոյլ ենթադրութիւնների վերայ։ Այսպես, օրինակ, Ա. Ինձիճեանը առում.

«Յաղագս օրինաց Բագրատունեաց ժամանակին թէպէտ և պատմագրաց մերոց չունիմք ինչ ծանօթութիւն, բայց ի գրեանց գիտեմք յԱրիվ քաղաք Լեհաստանի իմանամք թէ Հայկազունք գաղթեալք յԱնի քաղաքէ և յայլոց կողմանց Հայաստանի ի Լեհաստան, ընդ իւրեանս առեալ ունէին մատեան օրինաց, որով վարէին յայնժամ ի Հայաստան։ Զայն մատեան Սիքիսմոնդոս Ա. թագաւոր Լեհաց որ ի 1518 ամի ետ թարգմանել ի լատին բարբառ, որ գտանի առ մեզ [16]. և ի յառաջաբանութեան

16. Ա յսինքն՝ Վենետկի Մխիթարեանների մատենադարանի մէջ։

այնը մատենին օրինաց այսպէս խօսի Սիգիսմունդոս. «Թէպէտ զհայկազունս Լեհաստանեայս, կամ որ նոյն է Արմինիոս, զսպատակեալս մեր, մինչև ցայժմ պահել ուշեալ իւրեանց հայկական աթոռնստեամբ և օրինօք, որով նախորդք մեր ընկալեալ և հաստատեալ ունէին, այլ ի ծագիլ հակառակութեան իրիք ի միջ նոցա և քաղաքի, կարեւոր եղեւնացաւ զայն գիր օրինաց իւրեանց որ գրեալ էր ի բարբառ հայկական, որով և ինքեանց միայնոյ ծանօթ, թարգմանել տալ նոցա ի լատին բարբառ, և այնպէս մեզ ասացեալ առ ի չտալ ասպի ինչ ատելութեանց կամ նենգելոյ, որպէս զի և մեք ընդ խորհրդականս մեր ողջախոհ խորհրդով քննեալ և ինչ ինչ փոփոխեալ, վերստին հաստատեցուք։ Եւնա զայս գրեցի՝ ապա յանուանէ յիշելով զՅովհաննէս Թագաւոր Լատրատունեաց, որք պատուէր նորա այսպէս. Յովհաննէս շնորհօքն Աստուծոյ Թագաւոր Հայոց ի ժամանակս բարեկեցիկ տէրութեան իւրոյ ես համառնացի յաւուրս կիւրակիից ոչ քանալ գաղտանան, ոչ առնալ տուրս, ոչ պահանջել դրամ ի պարտապանէ, և այլ պահպանութիւնս վասն կիւրակիից։ Եւս այնորիկ ասէ. Արեգնիշատակ և բարեացակամ Աստուծոյ Թագաւորաց և իշխանաց ուղղափառաց Հայոց, հրամայեցի առնել արդարութիւն և իրաւունս ամենեցուն, քաղաքաց, ազանաց, գիւղից, և այլոց։ Եւ ես ի հիշատակութիւնք Հայոց առնեմ թէ եւ Աստուածնէք ուսեալ օրէնս և մատեան օրինաց [17]։

Մեզ ոչ սակաւ զարմացուցեալ է Ինձիճեանի, ու այդպիսի դիտնական և հետևողութեան մէջ հմուտ հեղինակի, զոյնպիսի անտեղի կարծիքը, որ հիմնուած թոյլ ենթադրութեան վերայ, և ահա ինչպես կարելի է բացատրել այդ հարցի հետևիւնը։

Նախ որ՝ ինքն Ա. Ինձիճեանը, խոստովանում է և վիպասում թէ ժամանակակից պատմագրութեանց մէջ չկան ոչինչ տեղեկութիւններ որ Բագրատունեաց ժամանակ յօրինուած լինի կամ ժողովածու հին օրէնքների, կամ նոր օրէնագրքի, ուրեմն այս կողմից մեր երկոսից կարծիքները բոլորովին հակառակ են և վիճաբանութեան տեղիք չէ մնում մեզ։

17. Հանգուցեալ Հայաստանի, հատ. Ա. էր. 505։

Երկրորդ՝ ինչու հմուտ հեղինակը ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում Թէոդոս անուան վերայ և յանձն չէ առնում մի թեթև աշխատանք՝ բացատրել մեզ թէ ում է այդ Թէոդոս Հայոց։ Ինչպէս յայտնի է ազգային պատմութիւնից՝ մենք բոլորովին չենք ունեցել ոչ Պարթևաստանի թագաւորների մէջ, և ոչ նոցանից առաջ կամ յետոյ, Թէոդոս կամ Թէոդոսս կամ Թէոդորոս անունով թագաւոր։ Արդ՝ ի՞նչ թագաւոր կարող էր հրատարակել նոր օրէնսգիրք կամ հին օրէնքների ժողովածու։ Պայց գուցէ անունների շփոթութիւն կայ։ Տեսնենք։

1. Յայտնի է որ՝ յունաց Թէոդոս Ժ. կայսրը հրատարակեց 438 թ. մի օրէնսդիրք, որ յայտնի է Codex Theodosianus (Օրէնսգիրք Թէոդոսի) անունով և որի մէջ ամփոփուած են նկղեցւոյն և նկղեցական կառավարութեան վերաբերեալ պետական օրէնքները։ Պայց առաջին՝ մենք չունինք պատմական տեղեկութիւններ որ այդ օրէնսդիրքը իւր հրատարակվելու ժամանակ կամ յետոյ երբ և իցէ թարգմանուած լինէր հայերէն կամ ամբողջապէս և կամ հատուածներով։ Ու թէպէտ Մխիթար Գօշի Դատաստանագրքի մի քանի օրինակների վերջում կան յաւելուած քաղուածքներ յունաց կայսրների նկղեցական օրէնսդիրքերից, ուր կայսրների անունների մէջ յիշած է և Թէոդոս, բայց բաղդատութիւնը ցուցանում է որ դրա թարգմանուած են ոչ թէ նոյն Թէոդոս կայսրի վերոյիշեալ Codex-ից — Օրէնսդրքից, այլ Լևոն Իսաւրացու, Կանստանդին Կոպրոնիմի, Վասիլ Մակեդոնացու, Լևոն Խմաստասիրի, և այլն, օրէնսդրքերից։ Երկրորդ՝ դժուար է ենթադրել որ՝ Լեհաստանի հայերի ձեռքին հասած լինէր Թէոդոս կայսրի Codex-ի թարգմանութիւնը ամբողջապէս կամ հատուածներով և դրա մասին ոչինչ տեղեկութիւն չպահպանուէր պատմագրութեանց մէջ. առաւել ևս դժուար է ենթադրել որ՝ Լեհաստանի հայերը շփոթած լինին թագաւորների անունները և յունաց Թէոդոս կայսրը կոչած լինին հայոց թագաւոր։ վերջապէս՝ փորձ ինչ ցած մենք կտեսնենք որ՝ Լեհաստանի հայերի օրէնքների մէջ մի բառ անգամ չկայ Թէոդոսի Օդէքսից հանուած։

2. Կարելի է ենթադրել որ՝ ուրիշ տեսակ շփոթութիւն կայ անունների մէջ։ Վերոյիշեալ հատուածի մէջ յիշած Յովհաննէս թագաւորը, որ յայտնի է թանձրամարմ իւր մականունով, թագաւորեց իւր եղբօր Աշոտի հետ միասին մինչև Աշոտի մահը, և յետոյ մի քանի տարի տասնձին մինչև իւր մահը, 1042 թ.։ Այս Յովհաննէսը, և մասամբ իւրը իւր եղբայր Աշոտը, յայտնի են իրրև հայրենասէր գործիչներ և ազգի մասնիչներ, վասն զի Յովհաննէսը՝ վանենալով Վասիլ կայսրի արշաւանքներից՝ զրօվ խոստացաւ նորան՝ յանձնել նորան իւր մահից յետոյ մայրաքաղաք Անին և իւր տոքր թագաւորութիւնը, եթէ կայսրը հանգիստ կթողնէ նորան քանի որ կենդանի է։ Թէ որպիսի ազգասիրական հեռանկներ ունեցաւ Թանձրամարմ (յիշեալ Թանձրամիա) այդ դիրքը, յայտնի է ամենքին և վերաբերվում պատմութեան, բայց թէ նա կամ Աշոտը հայկական օրէնսգիրքը հրատարակած լինին՝ ամենևին չէ յայտնի պատմագրութիւնների մէջ։ Վերջապէս՝ բաւական դժուար է ենթադրել որ՝ Լեհաստանի հայերը պատահմամբ շփոթեին թագաւորների անունները։

Մնում է, քան խոչ, միակ և հիմնաւոր բացատրութիւն, որ է հետևեալը։

Երբ հայերը, քաղաքական զառն և անտանելի տառապանքներից տարուած՝ սկսեցին մեծաքանակ խումբերով գաղթել իւրեանց սիրելի հայրենիքից և հեռաւոր օտար երկիրներում որոնել անպորրութիւն հոգու և մարմնոյ, շատերը գնացին և Լեհաստան։ Առաջին անգամ մեր յիշեցինք գաղթեցին Լեհաստան 1046—1064 թուականների մէջ, երբ յիշեալ Յովհաննէս թանձրամարմ զրաւոր պայմանի շնորհիւ՝ Յունաստանը պատերազմով և դաւաճանութիւններով տիրեց Անի քաղաքին և նորա նահանգին։ բայց այդ անգամ գաղթականների թիւը աւելի շատ չէր։ Երկրորդ անգամ հայերը, համաժողովաբար աւելի մեծ քանակութեամբ, գաղթեցին Լեհաստան 1064 թուականից յետոյ, մանաւանդ Անի քաղաքից, երբ Ալփասլանը վերցրեց և աւերեց այդ հրաշալի մայրաքաղաքը։ Վերջապէս, երրորդ անգամ շատ մեծ բազմութեամբ գնացին հայերը Լեհաստան 1239 թուականից յետոյ, երբ Անին բոլորովին աւերեցին Թաթարները Ջալմագան խանի առաջնորդութեամբ։ Նորա առաջ գնացին Հաշտարխանի կողմերը, բայց այնտեղ և նա մեծամեծ նեղութիւններ կրելով Թաթարներից, կան և երիս ճիշդ բաժանուելով գնացին՝ մինը Վրիմ, միւսը Լեհաստան։ Ու որովհետև այդպէս շատացան

հայկը Ազհատանի դատաւորներում և մանաւանդ Լվով (Լէմբէրգ)ի Կաժներից, և ուրիշ մի քանի քաղաքներում, ուսում Ազգաց թագաւորները հարկաւոր և օգտակար համարեցին իւրեանց երկրի և քաղաքականութեան համար տալ նոցա զանազան իրաւունքներ և արտօնութիւններ և թոյլ տալ որ՝ նոքա վարուին իւրեանց ազգային օրէնքներով և աւանդութիւններով, մանաւանդ որ տեղական լեզուն էլ չէին խմանում։ Ս. յարկս օրինակ Կազիմիր մեծը 1344 թուին Կաժնից քաղաքի Հայերին և 1356 թուին Լվով քաղաքի Հայերին հրամարտակով արտօնութիւն պարգևեց ունենալ իւրեանց առանձին հայկական դատաստան, որով և նոքա հատատացին իւրեանց յատուկ դատարաններ տանտէրերով Ս. յարպիսի արտօնութիւններ տալոյ ժամանակ Ազհատանի թագաւորները, երկնում են, պէտք է թոյլ տային Հայերին կառավարուիլ դանդա առաջանակ իւրեանց երկրի հին օրէնքներով և աւանդութիւններով, ինչպէս սովորաբար անում են տէրութիւնները երբ տիրում են մի նոր երկրին կամ տանում են գաղթական նոր ժողովուրդ։ Հայերը, ինչպէս երևում է, վախճանին ոչխարներում միայն նոքաներ առանդութիւններով, և Ազհատանի տէրութիւնը չէր հատատում նոցա համար յատուկ օրէնսգիրք։ Այդ երբ ինչի ժողովուրդը սկսեց նախանձով նայել Հայերի արտօնութիւնների վերայ, երբ ձգտեցան Հայերին և տեղական քաղաքային վարչութիւնների մէջ զանազան տարաձայնութիւններ և վէճեր, ինչպէս յիշում է ինքն Սիգիսմունդոս թագաւորը իւր հրովարտակի մէջ, այն ժամանակ տէրութիւնը հարկաւոր համարեց ուղիղ ճշտութեամբ որոշել նոցա իրաւունքները, վասնզի պահանջից Հայերից որ՝ նոքա ներկայացնեն իւրեանց հին ազգային օրէնքները։ Ուրեմն Հայերը տպագրած հին կամ թղթի անցնել իւրեանց հին դատաստանական աւանդութիւնները և ծնաւոր ժամանակների Հայոց թագաւորների կարգադրութիւնները, և կամ ցոյց տային մի որևիցէ հին օրէնսգիրք։ Երբ՝ վերոյիշեալ հատուածի խօսքերից «Յովհաննէս չնորհօքն Աստուծոյ թագաւոր Հայոց ի ժամանակս բարեչնորհ տէրութեան իւրոյ ՍԱՄՈՒԵԼԻՑ — պարզ երևում է որ՝ Ազհատանի Հայերը ներկայացրին իւրեանց նոր տէրութեան ոչ թէ որևիցէ մի տմրոյջ հին օրէնսգիրք կամ դատաստա-

նագիրք, այլ միայն ինչ ինչ քաղուածներ, ոտա թէ ոչ նոյն խոսքերը պիտի գրած լինէին առաջին դէպքով ինչպէս սովորութիւն ունին թագաւորները, այն է — «Յո Յովհաննէս չնորհօքն Աստուծոյ ԱՄԱՄՈՒԵԼԻՑ կամ ՍԱՄՈՒԵԼԻՑի, կամ — Մեք Յովհաննէս..... ՍԱՄՈՒԵԼԻՑ — կամ — ՍԱՄՈՒԵԼԻՑԸ»։ Ընդդէմ չէ կարելի բացատրել և այն պատմական սխալը և չիմաստութիւնը մեռնողների, որը տեղանք թէ՛ թագաւորի մասին։

Ս. այդ պէս պղտրուից քաղցրին Ազհատանի Հայերը այն օրինքները, որը նոքա ներկայացրին Սիգիսմունդոսին ի հաստատութիւն։ Ոչ ոքա համար հարկաւոր է քննել այդ օրինքները, և այն ժամանակ տատանել և կամ կարճանալ Ս. Խաչենանի և նոքա հետևողների կարծիքի սխալ լինելը։

ԹՈՒՐՔ ԱՉ ԵՅԼ ԻՆՉ ՆԱ ԵՒՈՒ ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԱՏԱՑԱ ՊՕՀՆԱՑԻ ԴԻՏՑԱՍՏՈՒՑԱՑԻՔՈՒՆ։

Բացատրութիւն։

Գերմանացի գիտնական Ֆերդինանդ Բիշօֆ, Լէմբէրգի (Լվովի) համալսարանի ուսուցչապետ (պրօֆէսսոր), տպագրեց Վիէննայում 1862 թուին լատիներէն լեզուով և կրկնակ թերի գերմաներէն յառաջաբանութեամբ մի փոքր թերթով 50 երեսով — Ազհատանի Սիգիսմունդոս թագաւորի Հատատած Հայկական օրէնսգիրքը՝ այդ վերնագրով «Das alte Recht der Armenier in Lemberg»[18], այսինքն է «Հին իրաւունք (օրէնք) Լէմբէրգի Հայկեցի»։ Գիտնական հեղինակը իւր համառօտ յառաջաբանութեան մէջ ասում, և միջի այլոց հետևեալը[19]։ «Օրէնքներիս (յոդ-

[18] Das alte Recht der Armenier in Lemberg, Von Dr. Ferdinand Bischoff, Vienne, 1862.

[19] Ս. Երբոյ չենք համարձակ մէջ բերել այսպէս այդ յառաջաբանութիւնը ամբողջ թեև այդ, որ շատ հետաքրքրելի է և տակաւին չէ թարգմանուած Հայերէն։

«Դատ տատոչ երբ Լէմբէրգը դեռ չէր կազմուած քան գերմանական իրաւունքի առանձին համարներ, բնակվածների նորա մէջ Հայերը արտօնութիւնների և Հրէաների պէս կազմուելին մի առանձին հատարակութիւն և կառավարվելին իւրեանց առանձնաւորներով կամ դատաւորներով և առա-

ուածներին) մեծագոյն մասը առած է Հին և Նոր Կտակարանից, իսկ մնացած մասը պարունակում իւր մէջ մի առանձին բարք և հայեացք կեանքի վերայ։ Նորա յօդուածներից մի քանիսը նման են ուրիշ ազգերի, մանաւանդ գերմանական օրէնքներին։ Առաջին մեզ գրքոյկը

(*) Համեմատեալ այս եւ հետեւեալը իմ յօդուածիս հետ, «Das alte Recht der Armenier in Polen» (Հին իրաւունք (օրէնք) Լեհաստանի Հայերի) Աւստրիական Թերթի մէջ մատենագրութեան մասին (գրագէտ Oester. Blättern....) յայտնուած Վիէննայի լրագրին (Vienner Zetung) 1857 ամի. № 28. 33. 37. եւ 39. (ծանոթ. Խ.ԳԷ.).

վերագրում են Հայոց Թագաւորներին, միւս մի քանիսը պարունակում են իրենց մէջ անշուշտ շատ հին օրէնքներ. իսկ ասոր այս իրաւաբանական գրուածքը հատկապէս է որ պատկանում է այն ժամանակին, երբ Հայերը գաղթեցին Լեհաստան, և յամենայն

Հայերին որ թարգմանեն իրենց օրէնքները Հայերէնից ռուսերէնին կամ լատիներէն և ներկայացնեն նորան հետեւեալ ընդհանուր (պետական) ժողովի ժամանակ (սէյմ)։ 1519 Թուին Աստուածածնի Ասումնան օրը, Հայերը ներկայացրին իրենց օրէնքները լատիներէն թարգմանուելեամբ Թագաւորին Կրակովում, իսկ նոյն 1519 թ. Պինտէկոստէի (Հոգեգալստեան) շաբաթի օրը հաստատեց դոյն Թագաւորը։ Իւր հաստատողական հրովարտակի մէջ Թագաւորը ասում է թէ՝ շատ կարեւոր համարեց որ Հայերէն գրած և այդպէսով միայն Հայերին հասկանալի օրէնքները լատիներէն թարգմանուէին, որպէս զի նորա նոյնպէս հասկանալի լինէին քաղաքապետին և այն մարդիկներին, որք չէին կանեն Հայերի հետ։ Եւ թէ՝ իւր խորհրդականների հետ հասուն կերպով կշռադատելուց յետոյ՝ նա փոխել է և մշակել մի քանի յօդուածներ, և պետական խորհրդարանի համաձայնութեամբ տալիս է Հայոց օրէնքներին իւր հաւանութիւնը և հաստատութիւնը։

Հաստատած օրէնսգիրքը ունի տասը գլուխ առանց համարի և համրիւր քսան և չորս յօդուած համարով և վերնագիրներով, որք պարունակում են շատ մեծի մասին բովանդակութիւնը. յօդուածները շատ երկար չեն, իսկ մի քանիսը շատ կարճ են։ Մեծ մասը վերաբերում է մանուածոյ (անձնական) և պատժական օրէնքներին. մի քանիսը դատաստանականին, միւսները՝ ոստիկանականին (պոլիցիականին)։ Այս իրաւաբանական գրուածքը շատ նշանաւոր և ուշագրութեան արժանի աղբիւր է իւր ժամանակի հասարակութիւնը, իրաւունքը և պետութեան դրութիւնը իմանալու համար։

Յօդուածների մեծագոյն մասը առած է Հին և Նոր կտակարանից. իսկ մնացած մասը պարունակում իւր մէջ մի առանձին տեսակ բարք և հայեացք կեանքի վերայ։ Նորա յօդուածներից մի քանիսը նման են ուրիշ ազգերի, մանաւանդ գերմանական օրէնքներին։ Առաջին մեզ գրքոյկը վերագրում Հայոց Թագաւորներին, միւս մի քանիսը պարունակում իրենց մէջ անշուշտ շատ հին օրէնքներ. իսկ սոյն այս իրաւաբանական գրուածքը հատկապէս է որ պատկանում է այն ժամանակին, երբ Հայերը գաղթեցին Լեհաստան, և յամենայն դէպս նրա է վերջինիս արքայական հրովարտակներից առաջ, որք խափանեցին Հայերի սեփական դատաստանական իրաւասութիւնը։ Հայոց ուսուցիչները և հոգևորականները ունէին նորա մէջ անշուշտ ոչ սակաւ

դէպ՝ եթէ ես վերյիշեալ տրքայական հրովարտակներից առաջ, որք խափանեցին Հայերի սեփական դատաստանական իրաւասութիւնը, Հայոց աւագանիներն և հոգևորականներն ունէին նոցա մէջ անշուշտ ոչ սակաւ մասնակցութիւն։ Մինչեւ հետևող յօդուածներից մի քանիսը կապ ունէին միմեանց հետ, բայց ընդհանու-

մասնակցութիւն։ Միմեանց հետևող յօդուածներից մի քանիսը կապ ունէին միմեանց հետ, բայց ընդհանուրի գաւառաբարեկանոն մէջ չէ երևում մի որոշ նախագիծ կամ կարգ։ Հայոց անգամ Սիգիսմունդ Թագաւորի նշանաւոր փոփոխութիւնները մտնում են յօդուածների մէջ, բայց դարանով օրէնագիրքը չէ կարցրած իւր նախկին կերպարանքը։

Աներկրայելի է որ այս օրէնագիրքը ոչ միայն Լեմբերգի, այլ և ուրիշ տեղերի (Լեհաստանում) Հայերը ընդունած էին։ այս երևում է նորանից որ նորա ձեռագիր օրինակները գտնուած են զանազան տեղերում։

Եբեզ զարգարած և նոյն իսկ Սիգիսմունդ Թագաւորից պատրաստած բնագիրը Հայերէն և լատիներէն լեզուով գտնվում է Տիտոս Զիալինսկի կոմսի մօտ, ինչպես ասում էպ. Ալինգենց (Գիկենատոս) Գոլ մնծահրաշակ բանաստեղծը։

Երկու լատիներէն ձեռագիր գտած եմ ես այստեղ Լեմբերգում։ Մէկը, որ ունի 26 (կամ 13 կիսածալ) մագաղաթեայ թերթ մեծագրի կաշու կազմով և լայն լուսանցքներով, գտնվում է Լեմբերգի քաղաքային դիւանում (արխիվ)։ սա ունի Լեհաստանի Թագաւորութեան փոխ—քարտուղարի Պրժէմիսլ Պետրս եպիսկոպոսի ստորագրութիւնը բնագրի հետ համեմատած և նոյն ժամանակ պատրաստած ձեռագիր է, երևի թէ քաղաքային վարչութեան գործադրութեան համար։ Սոյն ձեռագրից է արած մեր այս տպագրութիւնը։—Իսկ երկրորդը գտանվում է Լեմբերգի կայսերական և Թագ։ Համալսարանի մատենադարանում և ունի 42 թուահամարած և նմանապես բոլոր լուսնութեամբ գրած թղթի քառածալ թերթ մագաղաթի կազմով։ առաջին երեսի վերայ կայ այսպիսի վերնագիր։ Statuta juris Armenici per Sigismundum primum Regem Polonie pientissimum approbata et confirmata iussuque ac mandato ejusdem Regiae Majestatis ex lingua illorum nativa in latinum sermonem translata et hic fideliter ex exemp ari descripta 20) (Օրէնքն Հայոց իրաւանց Լեհաստանի բարեպաշտ Սիգիսմունդ առաջին Թագաւորից հաւանութիւն տացած և նորա հրամանով հաստատած, և նորա Թագաւորական մեծութեան հրամանով նոցա մայրենի լեզուից լատիներէն Թարգ-

20) Օրէնքն եր . . . . և այլն։

րի դատաւորութեան մէջ չէ երևում մի որոշ նախագիծ կամ կարգ։ Հայ անգամ Սիգիսմունդ Թագաւորի նշանաւոր փոփոխութիւնները մտնում են յօդուածների մէջ, բայց դարանով օրէնագիրքը չէ կորցրած իւր նախկին կերպարանքը։

Գերմանացի դիտնականի այս խօսքերից պարզ երևում է, որ նա առանձին զգացմունք չէ ունեցել Սիգիսմունդ Թագաւորի մասին, ասում թէ ոչ նա ուղիղ կասէր որ իւր հրատարակած Լեմբերգի Հայոց Օրէնսգիրքը քաղուած է ուղղակի նորանից։ Բայց և այնպէս նա անհամեմատ աւելի մօտ է ճշմարտութեան, քանի որ Լեհերը նա միայն առաջին վից գլուխն է վերագրում Հա-

մանած և ընագրից ուղիղ ընդօրինակած)։ Առաջին և երրորդ թերթի վերայ գրուած խօսքերը Conuent. Leopol. Carmelit. discalceat. նշանակում են ձեռագրի սիրոյ անունը, ձեռագրի որ հաւիւ թէ աւելի նոր է քան թէ առաջինը։ Սոյն երկրորդ ձեռագրից նշանակուած են այստեղ (ներքև ծանօթութիւնների մէջ) տարբերութիւնները։

1601 Թուին Հայոց աւագանիների անօրէնութեամբ Հայոց օրէնագիրքը թարգմանուեցաւ լեհերէն 21)։ Այդ թարգմանութիւնը պարունակում իւր մէջ Լեմբերգի Հայոց պատմութեան վերաբերեալ ուրիշ հատուածների հետ միասին մի կանոնագիրք թղթի վերայ գրուած, որ անշուշտ չէր կարող հանդիսս գալ տասնեւօթներորդ դարուց առաջ, գուցէ և աւելի ուշ, որև գտանվում է Օսսօլինսկի մատենադարանի կառավարիչ պ. Ռէյտմկու մօտ։ Պ. Ռէյտմկին մատուցում որ՝ տեսել է մինչև տասը օրինակ այդ տեսակ ձեռագրի Գալիցիայում և ռուսական Լհհաստանում։

Ընդհանրական կարգով գտաստուրած մի լեհերէն թարգմանութիւն Հայոց օրէնագրքի հիշատակված է քաղաքային հին գիւանի (արխիվ) ցանկի մէջ։ բայց ես իզուր որոնեցի, ինչպէս և այլ շատ բան։

Իսկ ռուսերէնէն թարգմանութեան հետքերը անգամ չգտայ։

21) Իմ վարշավ եղած ժամանակ (1878 սկզբում) շատ որոնեցի այս լեհերէն հրատարակութիւնը արքունի մատենադարաններում և մատենադարաններում և թէ մասնաւոր գրավաճառանոցներում, բայց ինձ ամենևին չյաջողեցաւ գտնել գեթ մի օրինակ։ Բայց յետոյ իմացայ (Տէօ Մեղու Հայաստանի . . .) որ գտ տպագէ եղել նաև . . .*)

*) Տպագրութիւն ընտանեկան սկսեալ յայսմ թերթէ, օրպէս եւ տպագրութիւն բնագրին Պետրոսեան տպագրոյ Գազ. Մխիթարեան սկսեալ ի 25րդ թերթէ։ Լեհերէն յետ մահուանն վարդապետի Խաչատուրեանց, յայսմ վայրի օրպէս եւ յայլ ուրեք տեղիս այսր գործոյ թղթով գտանին ինչ ինչ թերթ եւ ընդհատ ծանօթութիւնք հեղինակին առ ի լուսաբանել առ յայտնի. Եւ ազնուէս մեծարեալ, հիւսուք եւ անկատարք, տպագրեցաք զայնս նպատակ ընտրեմք օրպէս եւ էին յիւրում ին բնագրի։

Տպագրութիւն Տպարանի.

յոց թագաւորներին, մինչեւ սա վերադարձ նոցա ամբողջ օրէնքներըն։ Ուշագրելը, որ շատ է նկատել որ իւր օրէնսդրի յօդուածներից չատերը վերցրած են Աստուածաշունչից, բայց ոչ թէ անմիջապէս այնտեղից, ինչպէս նա կարծում է, այլ միջնորդութեամբ Մխիթարի գաւազանագրքի, որը յիրաւի անմիջապէս քաղել է Ս. Գրքից։ Այս նրա մի գերմանացի դիտակցութիւն, որ չգիտէ Հայկական եկեղեցուն, նեղուել է անել օտարներ, ամենևին նեղուել չէր այնպիսի մեծ սխալ անել ։։ Իհարկէ նա չէ տեսել մի թեթև աշխատութիւն բաղդատել իւրաքանչիւրում հազար, ինչպէս ինքն է վկայում, Լաստիներէն բնագիրը Մխիթար Գոշի գաւազանագրքի հետ։ Այս կողմից ճշմարտութեան սեղի մտանում և սեղի յաջողակ կարծիք յայտնից զգալով Վրիդոր Ուրծայեցին (այժմ Խմրագրապետ Մշակի), որ հետաքրքրութիւն տալով ։։ Հայկական Աշխարհ ամսագրի մէջ Ուխտանէսի վերոյիշեալ հրատարակութեան մասին, ասաց թէ «Հետաքրքրութեան արժանի տգիտութիւն մեր իմացանք, որ մեծ մասով այս օրինքները քաղուած են XII դարի Հայ հեղինակից, Մխիթար Գոշից գրուած օրինագրութիւնից»[22]։ Թէպէտ Պ. Ուրծայեցին միայն ուրիշից լսած կարծիքն է հաղորդում, բայց և այնպէս այդ կարծիքը շատ հիմնաւոր է։

Իսկ թէ ով էր Ամբատս — այդ պարզ բացատրուած չէ այդ յիշատակարանի սկիզբը — Որպէս Պատանդեայ թագաւորաշէն և կարգեալ թագաւորի բարեպաշտին Հռիփսիմեայ։ Այս Ամբատը յայտնի է մեր պատմութեան մէջ Սպարապետ և գունդգունդաւոր մականուններով և նշանաւոր հանգիստացաւ ոչ միայն պատերազմական քաջութիւններով իրրև զօրապետ, այլ և իբրև թէպէտ համառօտ բայց շատ հետաքրքրական պատմութիւնով կամ լաւ ասենք՝ տարեգրութիւնով, ուստի նա կոչուած նաեւ Պատմագիր։ Թէպէտ ոչ ինքն Ամբատս իւր յիշել տարեգրութեան մէջ և ոչ այլ պատմութեան ազգագրողները՝ Սեպան Յովհաննիսեան Երեւանցին, որ ապից այն Մոսկուայում 1856 թ. և Պարապետ Վարդապետ Հ. Տէվոնդեան, որ ապից նոյնը Փարիզում 1859 թ. նաեւ ոչ Ձամչեանը և ոչ այլ պատմագիրներ չեն յիշում որ Ամբատ Սպարապետը յօրինած կամ թարգմանած լինէր մի այդպիսի գատաստանագիրք, բայց վերոյիշեալ յիշատակարանը և մի քանի այլ ազատ յայտնութիւնք, որք կ՚յիշեմ, խնդրոյ առնելիք են կատարեալ որ՝ սոյն այս գատաստանագրքի աշխատասիրութիւնը պատկանում նորան։

Մեր № 491 օրինակը պարունակում իւր մէջ, բացի ուրիշ դրուածքներից, օրինակ եկեղեցական կանոններից, և այլն, զլխաւորապէս երկու բան — Ընտիրք քաղաքի օրէնքների թարգմանութիւնը և Մխիթարի գատաստանագրքից հանած քաղուածքը աշխարհիկ ոճով։ Կազմուածով սոյն քաղուածքը Վօշի գատաստա-

Նպատքի վեհ, մենք տեսնում ենք որ՝ Ամրաւոր թագաւորել է ոչ թէ բռնաւոր, այլ ըստ սիրոյ մարդու իւրաքանչիւրը յօդուածի միայն իմաստը՝ կրճատելի մի բան աւելացնելով կամ պակասացնելով, և զգաստ է յօդուածները աւելի յարմար կերպով քան թէ դասաւորուած են բնագրի մէջ, նմանները միասին խմբելով, օրինակ հոդուորականներին կամ ժառանգութեան վերաբերեալները միասին, և այլն։ Մէջբերութիւն Ամրաւոր աւելցրել է իւր կողմից մի քանի խօսքեր, օրինակ Լ. (34) յօդուածի սկզբում նա ասում է. «Ոչ ոք ինձ Ամրաւոյ ծառայից Պրխատոսի յայժմ հարկ եղել յայս տեղիս գտանել զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ տահմանն և անտի ճշմարտի զուղղութիւն առնել տահմանին։ Եւ զայս անտի կուգրեմ յասկից յառաջ համառօտութեամբ։ Եւ ապա համառօտութեամբ յառաջ է բերում Ս. Սահակի կանոններից մի քանիսի բովանդակութիւնը, առնելով նոցա սկիզբ տեղից և ոչ թէ Գօշի դատաստանագրքից։ Մի օրէնք տեղ նա ասում է. «Եւ ի յայս տեղս ոչ կարացի ես Ամրաւոյ, զինչ Աւետրն Նոահակի հոգ (այտեղ) օրինօք ի հին և ի նոր կատարտարանաց պղնդել էր և խրատէր, զրել զի թէ զամենն զրել էի՝ նա կարի շատ էր։ Այսպիսի յատկութիւններ կան և այլ շատ։

Մի քանի տարի առաջ, այն է 1870 թուին, Ամրաւ պատմագրի սոյն դատաստանագրքի մի օրինակ գտել էր Ն. Պօղոս մի քահանայ Յովհաննէս Մկրեան (երբեմն վոխանորդ պատրիարքական)՝ որոյ մասին նա տպել էր մի յօդուած Ընտրաւոր վանքից հրատարակուող Ցոյս ամսագրի մէջ։ Այդ յօդուածը կարդացի եմ ամբողջապէս պատասխան Ն. Պօղոսի Օրագրի թիւերի մէջ 34), որ և աւելորդ չեմ համարում՝ մէջ բերել այստեղ ամբողջութեամբ։ Մկրեան քահանայն գրում է.

«Օրինագիրք և դատաստանագիրք մեր Ուրիւնեանց Հեթում և Լեւոն թագաւորներից։

«Այս օրինագիրքը մագաղաթի վրայ գրուած է Հայոց ՃՉ թուին 1331 Փետր. ձեռամբ Սարգիս անուն գրչի, հրամանաւ Լեւոն

34. Օրագիր, 1870 թ., 21 ապրիլի, № 151։

թագաւորի Հայոց՝ որդւոյ ի Պրիսատոս Հանգուցեալ թագաւորին Օշնի։ Եւ հետևնակ կամ թարգմանիչն է Ամբաւ ծառայ Ընտուծոյ Գունդստապլ Հայոց և որգի Կոստանդեայ և եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ, և տէր Պապաւօնին, զոր Ընափոքայ բրինձները գրած և հաստատած են եղեր, այն Լուսոպացի իշխանները՝ որոնք խաչակրութեան ժամանակ մեր երկիրը գալով հան հաստատեցան և մեր թագաւորաց հետ խնամութիւն ու ազգականութիւն ունեցան։

«Որդ՝ ես մինչև ցայժմ չէի լսած և տեսած, որ Յանօօթ եկեղեցական կանոնագրքերէն և Մխիթար Գօշի դատաստանագրքէն զատ, Հայոց թագաւորութեանց ժամանակ գործածուած ուրիշ մէկ օրինագիրք մը կեցած լինի։ Ընդհակառակն մենք մեր պատմութեանց մէջ այսպիսի նշան մը տեսած չենք, և ոչ Վ. Կենսակից Մխիթարեանք, երբ Գօշի դատաստանագրոց վրայ 1848-ին Վազգենվէնի մէջ տեղեկութիւն հրատարակեցին, Ամրաւոյ անունով օրինագիրք մ՝ալ կենալը նշանակեցին, որ եթէ գիտցած ըլլային՝ անշուշտ նոյն դատաստանագրոց վերայ խօսած տեղերին երկու տողով կը յիշատակեին, ինչպէս ինչանակեն Լամբրոնացւոյ անուամբ օրինագրքի մը վրայ։ Եւ այս Ամրաւ Գունդստապլ Հայոց, որդի Կոստանդեայ և եղբայր թագաւորին Հայոց Հեթմոյ, նոյն ինքն է Ամրաւ Սպարապետ Հայոց՝ որ Տարեգիրք անուանով պատմութիւն մը ունի գրած իր ժամանակի անցից վրայ, զոր ապագրեց ի Փարիզ 1859 թ. Կ. Շահնազարեան[35], որոյ ոչ յառաջարանին և ոչ ծանօթութեանց մէջ բնաւ տեղեկութիւն մը չտաք՝ թէ այս Ամրաւ Սպարապետը օրինագիրքը մ՝ալ ունի շինած, որով կիմացուի թէ բազմահմուտ Շահնազարեանցն ալ տեսած կամ լսած չունի եղեր։ Ինչպէս որ նոյն ինքն Ամրաւ Սպարապետան ալ՝ որ այս օրինագիրքը Հայոց ՉԺԴ. (1265 թ.) թուականին թարգմանած է*), այսինքն՝ իր Տարեգիրքը գրելէն 11 տարի յառաջ, այս մասին տեղեկութիւն չտար իր պատմութեան մէջ։

35. Երևում է որ՝ Մկրեան քահանային տեղեկութիւն չէ ունեցել Ոսկան Յովհաննիսեանցի տպագրութեան մասին, 1856 թ. որը վերը յիշեցինք։

*) «Եւ ես քաջում աշխատութեամբ փոխեցի զսա ի ժեր հեշտալուր բառս ի Թուականութեանս Հայոց ՉԺԴ

«Բայց որքան որ այսպիսի յիշատակութիւն մը չկայ թէ ևս պատմագրաց գրուածոց և թէ նոյն ինքն Ամբատայ Տարեգրոց մէջ, սա սաոյգ է որ մեր ձեռքը հասած օրինագիրքը մի և նոյն Ամբատ Կոստանդնուպոլսի կամ Սպարապետի է, որ Տարեգիրքը շինեց, ինչպէս որ այս երկու գրուանց մէջ յիշուած թուականներն և իւր թագաւորաց անուններն ալ կատարեալ կանոնաւորութեամբ կ՚ընդունին։ Միայն թէ ինչպէս Ամբատ Սպարապետը կրսկ, այս օրինագիրքը թարգմանութիւն ըլլալով «ՅՅՆ ԸՆԴՈՒՆԵՑԱՒ ԻՐ ԸՆՏՐՈՒԱԾ ԳՈՏՈՒՆ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՀ ԱՂԲԻՒՐՆ ԷՒՆ ԳՐՈՎ ՀԱՅԵՑԵԼՈՅ», կհասկցուի թէ չէ սա հարազատ հայկական օրինագիրքը, որով վարեին թագաւորք մեր թէ Ամբատ Սպ. առաջ եղած Կուրիւնանք և կամ թէ անդր քան զնոսին Բագրատունեայք, այլ ֆրանկ իշխանաց շինած, կամ եւրոպական օրէնքներ է հաւաքածոյ մը, որ մեր Կուրիւնեան վերջին թագաւորները ու իշխանները իրենց օտարասիրութեամբ ընդունեցին։ Ի վերայ այսր ամենայնի, Ամբատ Սպ. եկեղեցականաց վերաբերեալ կանոններուն մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի և Սահակի կանոններն ալ գրած ըլլալով, կրնայ կարծուիլ թէ Ամբատ, որքան որ այս օրէնքները ֆրանկերէնէ թարգմանեց, դարձեալ ազգային քաղաքական և եկեղեցական սովորութիւն եղած կանոններն ալ անոնց մէջ յարմարցուց, և եղաւ ազգային օրինագիրք մը՝ որով վարեցան հայք մինչև ցվերջ թագաւորութեան իւրեանց յամին 1375, այսինքն 100 տարուոյ չափ ժամանակ։ Լեզուն խիստ ազատաւաղեալ է և կերևի թէ Ամբատ Սպ. դիտմամբ զործածած է այդ գեհիկ լեզուն՝ ամենուն դիւրիմաց ընելու համար, ինչպէս ինքն ալ կրսկ՝ «փոխեցի զսա ի մեր հեշտալուր բառս», ինչպես կտեսնուի տոքա մէջ թաթախ, պարսիկ և եւրոպական բարբառներ։

Բրդ՝ Մկրտեան քահանայի վերոբերեալ գրուածքէց պարզ երևում է որ նորա գտած Օրինագիրքը բոլորովին նման է մեր № 491 գտ-

---

. . . . . Ե. յիշատակարան ի սկիզբն կանոնաց՝ «ուստի թագաւորաց և որդւոց նոցին»։ Ծանօթ. քահանայ Մկրտեանի։

Յիշատակարանի այդ խօսքերը բառ առ բառ նման են մեր օրինակի խօսքերին, որ վերը մէջ բերինք։

տատանագրքին։ Իսկ ինչ վերաբերմամբ է նորա այն կարծիքին, որով նա ենթադրում է թէ՝ իբր Ամբատը թարգմանել է միայն Ընտիրքի օրէնքները և աւելցուել է նորա վերայ միայն մեր Հայրապետաց կանոնները և աշխարհական դատաստանական սովորութիւնները, զորանից երևում է որ՝ Մկրտան քահանայ չունէն չէ առել մի թեթև աշխատութիւն՝ բաղդատել իւր օրինագիրքը Մխիթարի Դատաստանագրքի հետ, եթէ նա կատարէր այդ բաղդատութիւնը, կհամոզուէր որ՝ իւր գտած Օրինագրքի երկրորդ մասը վերցրել է Ամբատը Դատի Դատաստանագրքից և միայն թեթև յաւելուածներ է մտցրել Ս. Սահակի և ուրիշ կանոններից, ինչպէս ցուցինք վերը։ Սորա ապացոյցն է Հայս ամենայրի 52 համարում նոյն Օրինագրքի մասին տպուած յօդուածը, ուր յառաջ բերուած էին Ամբատ Պատմագրի յառաջաբանութիւնները և ուրիշ խօսքերը, որպէս և օրէնքների կամ յօդուածների ցանկը։ Բաղդատելով այդ տեղեկութիւնները մեր № 491 օրինակի հետ, տեսայ որ՝ մերի մէջ պակաս են Ամբատի հետևեալ խօսքերը։

«Ընտանոր սկիզբն առնեմք ողորմութեամբ և օգնականութեամբ Միծին Ընտուծոյ ի զիր արկանել զսովորութիւնքն և զանսիգն զպարսնութեան մայրաքաղաքի Ընտիրքա. զիր լինձ ձորտերուն և զպարոնացն սովորութիւնն և զիրաւունքն զոր ունին առ իրար. և են գլուխք ԺԷ. (17) ի ցանկ ածած։ Օրդս խնդրեցի ես Ամբատ ծառայ Ընտուծոյ և Կոստանդնուպոլսոյ Հայոց և օրդի Աստանդեայ և եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմայ, և տէր Պապաւօնին, ի միծաղարմ իշխանէն և յարեան մերձաւորէն մերոյ ի Սիր Սիմոն Ընտաքոյ Կոստանդնուպոլսէն։ Եւ ինքն ունէր զոր ի բրինձ Պըմբոնին ժամանակն Սիր Փեռտուս ընդելին և Սիր Թումաս մարաջախոն և այլ իմաստուն և զիտուն իշխանացքն Ընտաքոյ էին զրով հաստատել։ Եւ Հանդուցեալն ի Քրիստոս Սիր Մանսէլ Կոստանդնուպոլսոյն իր հայրն էր առել ի նացմէ և իր որդւոյն Սիր Սիմոնին պարգևել, և ինքն վասն իմ սիրոյս և հաւասիս ինձ պարգևեց։ Եւ ես աշխատեցայ և փոխեցի ի հայ լեզուս։ Եւ արդ վասն զի սովորութեամբ այն անսիզովն կուզայր աղգս մեր զարպասս հայոց, և սխալուն ինչ կուգայր մեզ վասն տգիտութեան և վատզութիւնք օգոց, և պղերգանք ինչ վասն հարցանելոյ

այդ զմեծամեծ գառաստանն։ Ու՛ս ես ուժգին տենչմամբ և բազում աշխատութեամբ զօրս զսա և հոլածեցայ ի փոխին։ և երբ փոխեցի եմ՝ յօդարկեցի զդարձեալ ի յԱնտաքիա դարսման որ դիմընդդիմեցին և հաւատացեցին խրեանց ձեռնգրերովն և վկայութեամբն ու սպառդ է և ըղծդ բան բանի։ Ու՛ս արդ՝ որ կամի ճշմարտութեամբ ուղղել զանսիպս և զերեսուն, նայ այս է ըղծդ անսիպն Անտաքիոյ։ Ու՛ս արդ՝ որք օգտիք կամ շահիք սոքաս, ինձ Ամբատայ մեղաց թողութիւն հայցեցէք։ Ու՛ս օր վղնկիք՝ դուք չէք յիանէ վղնկիլ, այլ ի յիրաւանցն։ Ես անդատապարտ եմ։ Ու՛ս եթէ օր վատ ասէ ի վղնկելոյն, նա Աստուծոյ իրաւանցն ասէ և ոչ ինձ։

Մայն խօսքերից պարզ երևում է որ՝ Ամբատ, տեսնելով որ Սիւնիքի հայկական պետութիւնը չունի իւր սեփական ազգային օրէնքներ և օրէնսդիրք, այլ վարվում է մասամբ օտար պետութիւնների օրէնքներով, որը յայտնի չէին ժողովրդի մեծ մասին, և մասամբ ազգային հին իրաւաբանական աւանդութիւններով, շատ հարկաւոր և օգտակար է համարում թարգմանել հայերէն, այն ևս ժողովրդական պարզ և ամենքին հասկանալի ոճով, Անտիոքի օրէնսդրքի մի մասը, որը դարձից առաջ մտել էր արդէն գործածութեան մէջ, և միացնել նորա հետ Մխիթարի Գառաստանագրքի համառօտութիւնը, նոյնպէս թարգմանելով գրաբարից աշխարհաբար, վասն զի այդ Գառաստանագիրքը նմանապէս անհասկանալի էր դարձել ժողովրդի համար գրոց ոճի պատճառով։

Ո՛չ հերյրեթեալ յիշատակարանից կամ յառաջաբանից յետոյ Ձոյս ամսագրի յօդուածի մէջ կար Ամբատի Օրինագրքից հանած չորս ցանկ, որոց վերջինը բունելով 177 (ՃՀԷ) գլուխ՝ բոլորովին նման էր մեր № 491 օրինակի ցանկին թէ յօդուածների թուով, թէ նոցա գասաւորութեամբ և թէ բովանդակութեամբ, բացի անշնան տարբերութիւններից ոճի մէջ։ Ու՛ս որովհետև, ինչպես վերը յիշեցի, մեր օրինակի այդ մասը քաղած է Գօշի Գառաստանագրքէ, ուրեմն և Ա՛կրեան քահանայի օրինակի մէջ նոյն մասը հանած է մեր նշանի Գառաստանագրքից։

Ամբատի Գառաստանագրքի առաջին մասը, այսինքն՝ Անտիոքի Ասիզը ի Հնոտկի Ա՛խիթարեան միաբանութիւնը հրատարակեց 1876

Թուին Հայերէն և Ֆրանսերէն լեզուով [36], որոյ վերանորին յառաջաբանութեան մէջ ասած է թէ միտք այլոց այսպէս «Մասի իւր Տարեգրութիւնից և Ասանիներից Ամբատը մեզ համար թողել է երկու աւելի մեծաւոր դրուածներ. և թէպետ ինքն չէ նոցա հնգիւնակը, բայց և այնպէս արժանի է ամենայն յարգանաց։ Երկուքը ևս են՝ այսպէս ասել՝ համանմանք, նոքա խօսում են մի և նոյնանման առարկաների վրայ։ Մինը է Անտիոք Անտիոքայ, միւսը կարելի է անուանել Անտիոք Հայոց [37]։

Ցետոյ, յայտնելով կարծիքը թէ հայերը՝ Արշակունեաց ժամանակ գործածելով դրացի ազգերի օրէնքները ունեին անպատշաճ և իրենց սեփական օրէնքներ, յիշեալ յառաջաբանութեան հեղինակը աւելացնում է. «Այլ ոչ ինչ այսպիսակ գրուածքի հետքեր չեն գտնուած մեզ անուն, և հետևյն գրուածքը է ժողովածու Օրինաց Իւզանդեան կայսրութեան (Bas—Empire), և ոչ թէ Թէոդոսեան կամ Յուստինեան օրէնսդրքերից, այլ աւելի նորագոյն կայսրների—Լևոնի, Կոստանդնի և Նոմենի (թագուհու)։ Շատ հաւանական է որ մեր Ներգաւորների պատասխանը գործածուեմբ այսրինակ օրէնքները թոյն ազգային սովորութեանց հետ [38]։

Ապա՝ խօսելով Մխիթարի Գառաստանագրքի վերայ, նոյն յառաջաբանութիւնը շարունակում է. «Այդ մեզ համար աւելի հետաքրքրականը այն է որ՝ այս հայկական Օրէնսդիրքը (գառաստանագիրքը) նոյնպէս գործածելի էր մեր հայրենակիցների գառարանների մէջ Սիւնիքում։ Ու՛ս նոյն Գաւնդստանպլը (Ամբատ) ոչ միայն մտածեց այն այնտեղ, այլև վերափոխեց թարգմանելով իւր հասարակ ժողովրդական լեզուով, մի քանի փոփոխութիւններ կամ յա-

---

36. Ե՛ս է վերնագիրը. Assises d' Antioche reproduites en francais et publiées au sixième centenaire de la mert de Sempad de Counttable, leur ancien traducteur arménien, dédiées à l' Academie des Inscripeions et Belles—Lettres de France, par la société Mekhitariste de Saint—Lazare. Venise, 1876.

37. Ցառաջաբ. Ֆրանսերէն, եր. VII - VIII.

38. Նոյն, եր. XVII.

ակրաւածներ աւելացնելով, և յարմարեցուցանելով տէրութեան և իւր երկրի պիտոյքներին։ Ի համառօտ յառաջաբանի մէջ Սմբատ ցուցնում է Թոռնականը՝ 1265 և պատճառը իւր աշխատութեան. «Զայս գրեցի, ասում է նա, այս Կիրքը Օրինաց Աստըբ Ն հնդկացոց պատասխանութիւնք ի թագաւորն հնդից ծանծոսթեան համար, բաւական անանձնալով համառօտացն ի խօսքերի իմաստս։ Ի խիթարի Դատաստանագիրքը կարող էր գործածուիլ գուցէ իբրև օրինակ հասարակ գատաւորներում. բայց Վիրկինեայի թագաւորութեան բարձր գատաւորների համար, որը (թագաւորութիւնը) վաղուց կազմակերպուած էր Բիւզանդեան քէօղալական սովորութեան և առանդութեանց համաձայն, հարկաւոր էին բոլորովին այլ օրէնքներ. Սմբատը, որ գիտէր այդ փորձով, չգժուարացաւ իւր ընտրութեան մէջ և որպէս բնական էր, ինչպէս յայտնում է և ինքն, Ընտիրքի Ընտիրը նախագասհամարեց միւս օրինադրքերից»[39]։

Վերոբերեալ քարոզածքներից երևում է որ նախ՝ Վենեկի Ի խիթարեանցների օրինակը Օրէնսդրքի, որոյ յօրինողը կամ խմբագրողը նոյն Սմբատ Սպարապետն է, բոլորովին նման է Մխրեան քահանայի և մեր № 491 օրինակներին, և երկրորդ որ՝ Ռուբինեան պետութիւնը չէ ունեցել, բացի Սմբատի դատաստանագրքից, ոչ առաջ և ոչ յետոյ, մի ուրիշ սեփական օրէնսդիրք կամ դատաստանագիրք հայկական օրէնքների և իրաւաբանական սովորութիւնների։ Եւ յապէս ուրեմն մեր բոլոր վերոգրեալ հետազօտութիւններով հաստատուած, որպէս կարծում ենք, աներկրայելի կերպով, այն մեր կարծիքը թէ հայկական պետութիւնը ոչ Մխիթար Գոշից առաջ և ոչ նորանից յետոյ չունէր իւր սեփական ազգային օրէնսգիրք և դատաստանագիրք իբրև ժողովածու հայկական հին և նոր օրէնքների, ևան զի դժուար է ենթադրել, կրնում ենք դարձեալ, որ լինէր մի այդպիսի բան և գէթ մի պատմագիր հասիշէր դորա մասին։ Եւ այս երևոյթը չպիտի շատ զարմացնէ մեզ, որովհետև կան այդպիսի օրինակներ և ուրիշ ազգերի մէջ, օրինակ Վրաց ազգը, Հայոց ազգի

39. Յառաջ. եր. XIX.

պէս մի հին ազգ, նորա դրացի և նորանից աւելի երկարակեաց իւր քաղաքական ինքնիշխանութեամբ իրրև կազմող մի անկախ պետութիւն, նոյնպէս չունէր իւր պետական ընդհանուր և կանոնաւոր օրէնսգիրքը և դատաստանագիրքը, մինչև 18 րդ դարու սկիզբը, երբ Վախթանգ Զ. թագաւոր կազմեց իւր տէրութեան համար մի ժողովածու զանազան օրէնքներից, որ և կոչից վրացերէն՝ Սամարթլիա Տրիգնի (նամահատոլոն ֆոգնո) — Դատաստանագիրք կամ Գիրք իրաւագատութեան։ Վերջապէս, Պարսկաստանը և Տաճկաստանը, այս հզօր պետութիւնները, թէև ունին անթիւ և անհամար օրէնքներ առանձին առանձին, բայց մինչև այժմ չունին մի կանոնաւոր կերպով խմբագրած ժողովածու պետական ընդհանուր օրէնքների։

Հասարակ պարզ երևում է որ մեր ազգի և պետութեան իրաւաբանական և օրէնսդրական զարգացումն շատ նուազ է եղել և ձիշտ է մեացել նախապարապան իրաւունքի և դրացի պետութիւնների, մանաւանդ Յունաստանի և Պարսկաստանի, օրէնքների ազդեցութեան տակ։ Հլլապէս չէ կարելի բացատրել և այն զարմանալի աղքատութիւնը, որը տեսնում ենք այս կողմից մեր հին մատենագրութեան մէջ։ Մինչդեռ բաւականին շատ են գրել ամեն տեսակ պետութեան վերաբերեալ և մանաւանդ պատմական և աստուածաբանական գրուածքները, մենք ոչ միայն չունենք բացի Դօշի Դատաստանագրքից և եկեղեցական կանոնագրքերից մի առ բովդ շարադրութիւն զուտ իրաւաբանական բովանդակութեամբ, որը խօսէր ազգային օրէնսդրութեան և իրաւաբանական սովորութիւնների վերայ, կամ պետական, քաղաքական, քրէական և այլ տեսակ իրաւունքների վերայ, այլ չունինք այսպիսի խնդիրների մասին փոքր ի շատէ գոհացուցիչ տեղեկութիւններ մինչև անգամ և մեր պատմագրութիւնների և միւս տեսակ երկասիրութիւնների մէջ։ Ակնյայտ է մեր հին հեղինակներից մեծագոյն մասը բոլորովին ուրիշ տեսակ ուղղութիւն ունին և իրրև հոգևորական անձինքներ կամ գրել են վերացական աստուածաբանական քննութիւններ և մեկնութիւններ, կամ յայտնել են իւրեանց կրօնական ջերմ զգացմունքները եկեղեցական բանաստեղծութեան մէջ, և կամ վերջապէս նկարագրել են պատմական անցքերը, ըստ մեծի մասին իւրեանց ժա-

մանակակից ազգային հաշուառութիւնները և գոն տառապանքները, հաւարեալ ամենևին չմերձենալով ընտանեկան և հասարակական կեանքի երևոյթներուն,—բայց և այնպես պէտք է նոքա գոնեա երբեմն երբեմն յիշէին ինչ ինչ տեղեկութիւններ և՛ իրաւաբանական երևոյթների մասին, ինչպէս անուամ են այդ օրինակ Յունաց և մանաւանդ Հռովմայեցւոց պատմագիրները և մինչև անգամ վիպասանները և բանաստեղծները։ Եւ նոյն իսկ այն սակաւաթիւ տեղեկութիւնները, օրք հատուկտոր և կարծես թէ պատահմամբ մտել են մեր պատմագրութեանց մէջ ժողովրդի կեանքի իրաւաբանական երևոյթների մասին, չեն այնչափ նշանաւոր և մանրամասն որ՝ կարողանայինք գէթ գոհացուցիչ բաւարարութիւն տալ մեզ գոնեա այս կամ այն մասնաւոր խնդրոյ մասին։ Ուստի մենք այժմ գրեթէ ամենևին չենք կարող գոնեա մօտաւորապէս որոշել թէ՝ ինչ տեսակ կազմակերպութիւն և ընթացք ունէին մեր պետութեան վարչական, զինուորական, քրէական, քաղաքական, քաղաքացիական, տնտեսական և այլ մասները։ Զգիտենք՝ նմա արդեօք և ինչ տեսակ էր բարեկարգական կամ ոստիկանական հսկողութիւնը (պօլիցիա) ևս բազմաթիւ ձեւերով. պետական վարչութիւնը ինչպէս էր ապահովացուած հասարակական անդորրութիւնը, ինչ միջոցներ էր գործ դնում բնութեան հարուածների՝ հեղեղի, տարափոխիկ ցաւի, հրդեհի, սովի դէմ և այլն։ Ոչնչապէս չգիտենք թէ՝ որպիսի կազմակերպութիւն ունէր պետութեան տնտեսական վարչութիւնը, ինչ տեսակ հարկ կար ժողովրդի վերայ՝ գլխահարկ, ձեռահարկ, թէ հողահարկ, ով էր որոշում հարկերի չափը և ով էր ժողովում—տեղութեան հարկապահանջները (մենք խօսում ենք ընդհանուր պետական հարկերի վերայ, որովհետև՝ ինչպես իւր տեղում յիշեցինք՝ գաւառական հարկերը ժողովում էին նախարարները), կապալառութիւնը թէ ինքն հասարակութիւնը. և ով էր հարկատու և ով ազատ հարկից։ Զգիտենք՝ ինչ դրութեան մէջ էր վաճառականութիւնը և ինչ օրէնքներ կային դորա մասին, ազատ էր առևուտը հասարակ թէ սահմանափակուած էր զանազան արգելքներով սեփական՝ պատուիրների և օտարահպատակների համար։ Ինչ կազմակերպութիւն ունէին եղած մաքսատները և բաժանները։ Մի խօսքով՝ թէ պէտք այժմ դժուար է որոշել ճշտութեամբ թէ ինչ տեսակ կազ-

մակերպութիւն ունէր պետական տնտեսութիւնը (ֆինանսները), ով պետութեան կանոնաւոր զարգացման և բարգաւաճութեան այս գլխաւորագոյն միջոցներից մէկը, բայց և այնպէս՝ ի հարկէ առնելով ինչ ինչ պատմական յուշմունքներ՝ կարող ենք ասել վստահօրէն որ՝ դա եղել է միշտ սարսին վիճակի մէջ։ Եւ ինչպէս պատմագրութիւնները յիշում են երբեմն երբեմն թագաւորական պալատների մեծաձախ հոյակապութիւնը, նոցա ներքին շքեղութիւնը, արքայական հանդերձների և թագերի թանկագնութիւնը, պալատական խնջոյքների պերճութիւնը և շռայլութիւնը, տուր թագաւորներին և նոցա գեղազեղներին տուած երեկի և հարուստ ընծայները, և այլն, բայց այդ բոլորը չեն ցուցանում թէ արքան կանոնաւոր էին փող կամ հարկ ժողովելու միջոցները և որպիսի իրաւաբանական հիմունքների վերայ հաստատուած։ Եթէ այդ միջոցները կանոնաւոր լինէին և միևնոյն ժամանակ ոչ—ձնշողական՝ ժողովրդի մէջ պէտք է տարածուէր, գոնեա խաղաղ ժամանակներում, նիւթական բարեկեցութիւն և հարստութիւն. բայց մենք չենք տեսնում ժողովրդի կողմից գոնեա մի նշան հարստութեան։ Ընդհակառակ իբր կրօնական չքաւորութեան վերայ պատմութիւնը բնաւ չի յիշում որ ինքըն ժողովուրդը հանդգնակութեամբ չլինէր իւր ծախսով եկեղեցի կամ վանք, այլ ընդհակառակն նոցա շինողները միշտ թագաւորներն էին և առաւելապէս նախարարները. բաւականին մեծ հարստութեան տէր մարդիկ, որովհետև նոքա էին տանուտէր ժողովրդից՝ գաւառի կամ նախարարութեան մէջ ներքին հարկերը, և երևի թէ բաւական գասարկուածին ժողովրդի գրպանները։

Մինչդոյն պետականութիւնը կարևոր տեղեկութիւնների մասին պետութեան կեանքի գլխաւոր երակներին — քրէական և քաղաքացիական 40 իրաւունքների վերաբերութեամբ։ Զգիտենք թէ՝ ով էր ձյակում և խմբագրում քաղաքացիական և քրէական օրէնք-

40. Մենք ունինք երկու բառ՝ քաղաքական և քաղաքացին բայց որովհետև առաջինը ստացել է այժմ նշանակութիւն իրեև պոլիտիկական (политическій, politique), իսկ երկրորդը ցուցանում է աւելի քաղաքին վերաբերեալ գործ ևն. ուստի մենք հարկաւորեք համարում ընդունել մի նոր բառ՝ քաղաքացիական, քաղաքացի բառից, մարդոց առևտրական, ընտանեկան, հասարակական, և այլն յա-

ները, ինքը թագաւորը, թէ կար առանձին օրէնսդրական ժողով կամ ծերակոյտ, ինչպէս օրինակ Հռոմում. արքայական հրամանները և հրովարտակները ընդհանուր և հաստատուն օրէնքների նշանակութիւն և զօրութիւն ունէին, թէ մասնաւոր և տեղական։ Նոյնպէս չգիտենք թէ՝ քաղաքներում, աւաններում և գիւղերում ինչ տեսակ դատաւորներ կային քաղաքային և քրէական գործերի համար, և առանձին՝ առանձին՝ թէ երկու տեսակ գործերը ևս կարող էր քննել և վճռել միևնոյն դատաւորը. ատենական տեղերը և դատարանները միանձնական էին թէ բազմանձնական. դատաւորները պետական էին թէ ընտրողական ժողովրդից, ժամանակաւոր թէ ցմահ, տեսնում էին նոքա ոռճիկ և ռւսից, կային արդեօք ստորին, միջակ և բարձր դատարաններ՝ մէկի վճռի դէմ միւսին բողոքելու համար։ Գիտենք՝ որպիսի օրէնքներ կային անշարժ կալուածք գնելու, վաճառելու, գրաւ դնելու, կապալով և վարձով տալու, պարգևելու համար, ուրիշի կալուածքը անխափան տիրապետութեամբ սեփականացնելու համար, ժառանգութիւնը բաժանելու, կտակը վաւերացնելու կամ վաւերական համարելու համար, մեռած և անյայտացած կամ վտանգ ծնողների մատակարար զաւակների վերայ խնամակալութիւն և հոգաբարձութիւն հաստատելու համար, և այլն։ Նոյնպէս չգիտենք թէ՝ ինչ տեսակ պատիժներ կային բռնական յանցանքների համար՝ մարդասպանութեան, աւազակութեան, գողութեան, և այլն. ինչ տեսակ պատիժներ, տէրութեան դէմ ցուցած յանցանքների համար՝ մատնութեան, թագաւորի պատիւը անարգելու, և այլն։

Ա՛ինչև անգամ միջազգային իրաւունքի մասին չգիտենք կարևոր և զոհացուցիչ տեղեկութիւններ, թէպէտ սա աւելի սերտ կապակցութիւն ունի պատմութեան հետ։ Ա՛ր պատմագրութեանց մէջ տեսնում ենք միայն նորա արտաքին կողմը. մենք տեսնում ենք ինչպէս հայոց տէրութիւնը ուշադրում օտար տէրութիւնների մօտ դեսպաններ և ընդունում է նոցա դեսպանները, կապում է այս կամ այն տէրութեան հետ խաղաղութեան դաշնագրութիւն պատերազ-

---

բաները[1]թիւնները ցոյց տալու համար, այն նշանակութեամբ, ինչպէս ռուսերէն гражданскій (гражданское право) կամ ֆրանսիական civil (droit civil), որոց և շատ մօտ է իր նշանակութեամբ։

մից յետոյ և կամ միաբանական դաշնակցութիւն մի ուրիշ տէրութեան դէմ պատերազմ վարելու համար։ Տեսնում ենք նոյնպէս որ՝ մեր տէրութիւնը որոշում, պատերազմից յետոյ ստացած կամ արած գաւառների սահմանները, փոխում գերիները, վճարում կամ ստանում պատերազմական տուգանք, և այլն։ Ա՛յց թէ՝ կայի՞ն արդիօք առանձին դաշնագրութիւններ ճանապարհական հաղորդակցութեանց, արտաքին վաճառականութեան, օտարահպատակների դրութեան, հպատակութիւնը ընդունելու կամ փոխելու, և այլ շատ այսպիսի գործերի համար, — չգիտենք ոչինչ ձիշտ տեղեկութիւններ։ Դէ անձամբացած պէտք է դիմենք օտար ազգերի պատմութեան և մանաւանդ թուրքերի, բայց և այնտեղ կգտնենք կամ հարևանցի և հատուկտոր ակնարկութիւններ, և կամ փաստերի ամփոփումներ գիտակցաբար կամ անգիտակցաբար։

Ա՛ինչև անգամ մեր լեզուն, այնպէս հարուստ պատմական ապացուցանական և առ հասարակ գրեթէ ամենայն տեսակ գիտութեանց մտքերը յայտնելու համար, չափազանց աղքատ է իրաւաբանական բառերով և ոճերով, իսկ այս բանը գլխաւոր ապացոյցներից մէկն է թէ՝ որպիսի ստորին վիճակի մէջ է ձեացել ազգային ընդհանուր իրաւաբանական զարգացումն և նորա իրաւաբանութիւնը, որովհետև երբ չկայ առարկայ, չկայ միտք — լեզուն չէ ստեղծում և նորա արտայայտող բառերը։ Դէ յիրաւի՝ որ գիտութիւն ունի և զարգանում մի ազգի մէջ, նորան վերաբերեալ բառերով և ոճերով աւելի հարստանում է լեզուն, ինչպէս օրինակ՝ զարմանալի կերպով հարուստ է յատկական լեզուն իրաւաբանական բառերով և դարձուածներով, որովհետև հռոմէական իրաւաբանութիւնը հասաւ իր զարգացման բարձրագոյն կէտին։

Ի՛ տարեկ մենք չենք կամենում այս բոլորով ասել թէ՝ առ հասարակ հայկական թագաւորութիւնը ապրել է իր բազմադարեան պետական կեանքի ընթացքում առանց իրաւաբանութեան և օրէնքի, առանց դատարանների և դատաւորների։ Ա՛չ. կային անշուշտ օրէնքներ և մանաւանդ իրաւաբանական սովորութիւններ, կային դատարաններ և դատաւորներ, հասարակական բարեկարգութիւնը և անդորրութիւնը պահպանող պաշտօնեաներ, հարկապահանջներ, և այլն։ Ա՛յց թէ՝ որպիսի կազմակերպութիւն ունէր այս բոլորը

և ոչխարի փոփոխութիւններ և կատարկլաղծութիւններ հին առնում զանազան թագաւորներ ժամանակ, ահա այս և սոցա նման թանկագին տեղեկութիւնները պահպանեալ են մատենագրաց մեր հին դրքերի մէջ։

Քրիստոնէութիւնը, ինչպէս յայտնի է, մեծ յեղափոխութիւն է գործում Հայոց ազգի կրօնական, բարոյական, ընտանեկան, հասարակական և քաղաքական կեանքի մէջ։ Ազգի պետական և ժողովրդական կեանքը սահմանվում կրօնական ուղղութիւն. կրօնը և եկեղեցին դառնում հինի ազգութեան. կրօնի նշանը փայլում միշտ պատերազմական դրօշակների վերայ. պատերազմներից մեծագոյն մասը լինում սրբազան — կրօնի և եկեղեցու պաշտպանութեան համար, և քաջ նահատակները տեսնում այդ պաշտպանութեան մէջ նաև պաշտպանութիւն ազգութեան և քաղաքական ինքնիշխանութեան և ազատութեան. եկեղեցական դասի պատիւը և ազդեցութիւնը բարձրանում աւելի և աւելի, և եկեղեցական վարչութեան իրաւասութեան և իշխանութեան սահմանները ընդարձակվում պրամանաի արագութեամբ, ոչ մի նշանաւոր խնդիր — ակզբել պատերազմ, կռել ընկերութեան կամ խաղաղութեան դաշն, նստացնել նոր թագաւոր, գահընկէց անել թագաւորը, և այլն, — առանց գիտութեան, մանաւանդութեան և համաձայնութեան կաթողիկոսի և եպիսկոպոսների չեն կատարվում։ Միւս կողմից՝ և եկեղեցական ծանր գործերը և խնդիրները չեն քննվում և լուծվում առանց մանաւանդութեան մարմնաւոր իշխանութեան և ազգի, ուստի եկեղեցական ժողովների մէջ գրեթէ միշտ ներկայ են լինում աշխարհականներ, թագաւորներ, նախարարներ և ժողովրդականք։ Եւ ահա այսպէս եկեղեցին՝ ներգործելով ազգի կեանքի բարոյական, մրտաւորական, ընտանեկան և քաղաքական կողմերի վերայ՝ անշուշտ մեծ ներգործութիւն պիտի ունենար նաև նորա իրաւաբանական կողմի վերայ. և միթէ մենք տեսնում ենք մեք օրըսիսի յայն ասպարեզ գալ և եկեղեցական կամ կանոնական իրաւաբանութիւնը (jus canonicum. церковное право) մեր ազգի կեանքի և մտաւանդութեան մէջ։ Ընդհակառակն զոր օրինակ՝ երբ Հայաստանի մէջ քրիստոնէական եկեղեցին այնպէս հաստատուեցաւ որ՝ նորա պաշտօնեայները և մանաւանդ բարձրագոյն աստիճանաւորները — եպիսկոպոսները և կաթողիկոսները պարձան ընդհանուր բարոյականութեան և արդարութեան պաշտպաններ, երբ նորա փոքր առ փոքր ձեռք բերին այնպիսի դարձր նշանակութիւն և ազդեցութիւն որ՝ հանդիսանում էին իրրև գերագոյն դատաւորներ և բացարձակապէս առանց երկիւղի և աչառութեան իրաւութեամբ յանդիմանում էին և պատասխանատու էին ոչ միայն հասարակ ժողովրդականներին, այլև նախարարների և իշխանների, նաև նոյն իսկ թագաւորների վատ և պախարակելի գործերը և մանաւանդ անարդարութիւնը, իրատում էին և պատժում էին նոցա ապաշխարանքով, բանադրանքով, և այլն. այն ժամանակ դատաստանական իրաւունքը աննկատելի կերպով պիտի անցնէր, մանաւանդ քրէական գործերի վերաբերմամբ, եկեղեցականների ձեռքը և գլխաւորապէս վիճակաւոր առաջնորդների և եպիսկոպոսների ձեռքը։ Մերաքաղիբ քրէական յանցանք, զոր օրինակ՝ մարդասպանութիւն, աւազակութիւն, գողութիւն, հրդեհապատութիւն, և այլն. մինչև անգամ իրաւաբանիբ գործոդութիւն, որ խախտում էր ուրիշի քաղաքացիական իրաւունքները, զոր օրինակ պարտք չհատուցանելը, գրկանքը, խարեութիւնը, և այլն, քրիստոնէական կրօնը և եկեղեցին հանդուրժին նախ և առաջ իրրև յանցանք, իրրև մեղանչանք ընդդէմ Աստուծոյ։ Երբ այս հայացքը տարածուեցաւ նաև ժողովրդի մէջ և երբ ժողովուրդը ընտելացաւ խոստովանութեան խորհրդի հետ և ընդունեց որ՝ մեղքերը պէտք է յայտնել հոգևորականներին, որը իրաւունք ստանին մէջ նորոյն աւ Աստուած և թողութիւն տալ՝ դնկով ապաշխարութիւն մեղաւորների վերայ, այն ժամանակ դատաստանական իշխանութիւնը քրէական գործերի վերաբերութեամբ հեշտութեամբ փսրող էր անցնել եկեղեցականների՝ քահանաների և եպիսկոպոսների ձեռքը։ Եւ յիրաւի քրիստոնէութեան այս հետևանքը մենք տեսնում ենք բոլոր քրիստոնեայ ազգերի և մանաւանդ կաթոլիկ ազգերի կեանքի մէջ, երբ նորա դեռ նոր են ընդունած քրիստոնէութիւնը։ Այն իսկ ժողովրդի համար աւելի օգտակար էր և ձեռնտու որ՝ քրէական գործերի դատաստանը լինէր ոչ թէ մարմնաւոր, այլ հոգևոր իշխանութեան ձեռքին, որովհետև այդ իշխանութիւնը միշտ աւելի ներողամիտ էր և գործածում էր միշտ աւելի թեթև, միայն ու զղեցուցիչ պատիժներ — զանազան տեսակ ապաշխարանք-

ներ։ Սորանով միայն կարելի է բացատրել այն փաստը որ՝ բոլոր ազգերի եկեղեցական ժողովների կանոնների մէջ տեսնում ենք շատ յօդուածներ, որք միայն ապաշխարութիւն են նշանակում զուտ քրէական յանցանքների համար — մարդասպանութեան, գողութեան, աւազակութեան, յափշտակութեան, և այլն։ Նոյն բանը մենք տեսնում ենք և մեր եկեղեցական ժողովների կանոնների մէջ. զոր օրինակ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի կանոնների մէջ կան հետեւեալները.

15-րդ կանոն.—Ով զբէբէզեան քանայ ածանիցի՝ դ. (4) ամ արտաքոյ և ա. (1) ամ ի ներքս (ապաշխարեսցէ)։

16-րդ ,, —Ով զբէս կողոպտէն՝ ժե. (15) ամ արտաքոյ և ա. (1) ամ ի ներքս (ապաշխարեսցէ)[41]։

Ընդ կանոնների մէջ յիշած յանցանքները — գերեզման բանալը և դի կամ մեռած մարմին կողոպտելը իբրեւանց իրաւաբանական յատկութիւններով քրէական են. բայց երբ դոցա համար պատիժ է նշանակվում ապաշխարութիւն, իսկ ապաշխարութիւն կարող է նշանակել միայն Եկեղեցին և եկեղեցական իշխանութիւնը, ուրեմն և այդպիսի քրէական գործերը պէտք է քններ նոյն իշխանութիւնը։ Թէպէտ կարելի է ասել որ՝ այդպիսի դէպքերում ոչինչ քննութիւն հարկաւոր չէր, այլ եթէ յանցաւորը յայտնուէր քահանային խոստովանանքի մէջ իւր չար գործերը, քահանան դնում էր նորա վերայ ապաշխարութիւն. բայց որովհետև այդ ապաշխարութիւնը պիտի կատարուէր հրապարակաւ եկեղեցու դրան մօտ դուրսից կամ ներսից, և ոչ միայն ժողովուրդը, այլև ինքն մարմնաւոր իշխանութիւնը կարող էր տեսնել և իմանալ, ուրեմն գործը չէր կարելի ծածկել և մարմնաւոր իշխանութիւնը իւր կողմից նոյնպէս պատիժ պիտի տար, եթէ լիներ այդ սովորութիւնը։ Եւ թէպէտ այժմեան պետութեանց օրէնքներով, նաև հոգեվկական և մանաւանդ բրեզանդական օրէնքների զօրութեամբ, մարմնաւոր իշխանութիւնը քննում նաև այնպիսի քրէական յանցանքներ, որոց համար նշանակուած է իրրև պատիժ միայն ապաշխարութիւնը, և գործը

41. Էջմիածնի Մատենադարան, կանոնագիրք № 761, և Պատմութիւն ժողովոց, Աբել եպիսկոպոսի Մխիթարեան եր. 21։

քննելուց ու յանցանքը ստուգելուց յետոյ մարմնաւոր զօրաբանը տալիս է իւր վճիռը, իսկ հոգեւոր իշխանութիւնը միայն ի կատար է ածում այդ վճիռը՝ որոշելով ապաշխարութեան չափը և ձեւը համաձայն եկեղեցական կանոններին, բայց մի այդպիսի կանոնաւոր կազմակերպութիւն և փոխադարձ որոշ յարաբերութիւն աշխարհական և եկեղեցական զօրաբանների մէջ չկար քրիստոնէութեան առաջին երեք դարում, իսկ մեր պետութեան մէջ հաղիւ թէ կարող էր այդպէս լինել երբ և իցէ, ուր՝ ինչպէս տեսանք՝ այնպէս նուազ էր իրաւաբանական զարգացումն։

Ընդպիսի դրութիւնը ոչ միայն շարունակվում Հայաստանի մէջ այլ և աւելի ու աւելի զարգանում հետեւեալ ժամանակներում։ Ընդպէս զորօրինակ՝ Շահապիվանի (Խաղեւանդ զաւառում) ժողովում, որ գումարեց Յովսէփ կաթուղիկոսը 447 թ. և ուր ներկայ էին երեւելի իշխաններ — Վասակ Սիւնի Մարզպան Հայոց, Վահան Ամատունի հազարապետ, Վարդան Մամիկոնեան Սպարապետ և շատ աշխարհական մարդիկ «էլխոնէ, գաւառապետք, գաւառակալք, պետք, բդեաշխք, զօրավարք, ազատք, կառավարք», և այլն, ինքեանք աշխարհականները խնդրեցին հայրապետից և եպիսկոպոսներից հաստատել խիստ կանոններ և խստացան կատարել նոցա ճշտութեամբ «Լուծել հալածանք նմին և հաւատացեալ պահիմք, Եթէ ոք հաւատացեալ ոչ պահիցէ կամ եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւագ, կամ շինական պատուհաս կրեսցէ և գործեսցէ գործ»[42]։ Եւ այս ժողովը հաստատեց քսան կանոն, որք կոչվում են պատճառաց կանոն և որոց վերջինը ասում է այսպէս.

«Եթէ ուրեք ժողովրդի ըղձութիւն զոյի և երիցունքն զիաիցեն և ոչ յայտնասցեն եպիսկոպոսին, և յորժամ դնիցէ լինի ի վերայ հաստատիցին և ձշմարիտ իցէ, և զիտեր երիցն առաջի և ամէն ժամանակէ զգործս նոցա և ոչ բողոքեաց եպիսկոպոսին, զի ծրնեիցին զպատուհասն զոր եդին կանունք՝ կրեսցեն . . . Ընդ էրէկ էրէցն ասէ չէ չէպէէ-պոտ և ձայո-ըէնամբ յայտ առնիցէ, և եպիսկոպոսն կամ կարասի առնիցէ և ծածկիցէ, կամ աչառիցէ, և ձայո-ըէնամբ յայտ էլիասցէ՝ եթէ արդարև եհաս յականջս նորա բողոք էրէցոյն և նա

42. Յանոնագիրք Էջմիածնի Մինոգի, յատաջաբանութիւն Շահապիվանի ժողովի կանոնների. Ա.յլև Պատմ. ժող. Աբել եպս. եր. 60։

արհամարհեաց զպատուիրանս Աստուծոյ և կորուսանոյն ինդիր չարաբար և ջեղև նախանձախնդիր և վրէժխնդիր օրինացն Աստուծոյ, անկեալ կործանեացն յանմոռացն և երեցն անպարտ հղիցն։ Ապա եթէ եպիսկոպոսն Ջնախացւոյ և վրէժխնդիրն եղև և երիցուհեաւն և այլ հաղորդիչ վկայեցեալն զաշխատութենէ եպիսկոպոսին, և ղբաժինն իւր յայտ արար (նա) իշխանութեան ոտիւքն և իշխանն՝ որ էր աշխարհ հին և զկնի ոտիւքն ուստ դահճապետ առեր գաւառին՝ կամիցի պէղ՝ ձա-ընեան թիկունք լինել և ղընծայողն դողոլ կամ թնդուցանել՝ կամ վասն կորուսիչ արծաթոյ, կամ վասն անպատուութեան և ծառայութեանն, և ոչ ընդոհացեալ զՔրիստոս սիրել և զպատուիրանս նորա և վրէժխնդիր օրինացն սխտան և հղուցոյն և մարմնոյն լինել, եղիցի նզովեալ այնպիսին և յիկեղեցւոյ սրբոյ ի բաց կացցէ, զինչ պատճէ ղընծայեցեալն ի յԱթոռ եկեղեցւոյն։ Եթէ ի նախարարի տան զոյքն պղծութիւնք կամ կին նորա, կամ զաւակ, կամ որդի, կամ ինքն իսկ զինուին և ոչ ղընծայեսցեն ի յԱթոռ պատճէ եկեղեցւոյ, և ոչ ինքն ի սրբութիւն դարձցի՝ բուռն ածասցան կալցի (կամեցեալ) լինիլ։ Ածեսցի պատճէ ի-բոլ և ձեռնքով և ինձե։ դովեալ լցցէ ի հրապարակ փ՝ իջեցեալ գետն ընկերք և աշխարհն անհնազն մի հանդերձեցին ընդ նմա զինեալ ինքն ի սրբոյն եկեսցե։ Ապա եթէ ինքն օձ իցէ ի պղծութեան, ղընծայեսցեն և զնդապետն ի յԱթոռ պատճէ եկեղեցւոյն գլխաւորն ի իշխանութիւնն։ Ապա եթէ ի տան Աստուածէն գոյքն պղծութեան, կամ ինքն և ընտանիքն, որպէս ասացաք՝ զընտանին կշտամբեցին ըստ օրինի պատուհասի զոր եցաք։ Ապա եթէ ինքն ևս ընդ ընտանեաւն ի մեղսահասի զոր եցաք։ Ապա եթէ ինքն ևս ընդ ընտանեաւն ի մեղսահասի գոյքն կալցին մեսրան պղծագործ ընտանեաւքն հանդերձ և հրապարակ ածցին և ոտոքն գլխաւոր եկեղեցւոյն և առաջի մեծամեծաց իշխանացն և ոտոքն պատուոցայ։ և միսրան վրէժխնդիրք լինիցին Աստուծոյ։ [illegible] 15։

Ինչպէս տեսանում ենք՝ այդ կանոնը շատ հետաքրքրական է և շատ կողմից։ Առաջին՝ Թէոփիլոս կիսից գան սա խօսում է մանաւանդ պէս միայն մի տեսակ վատ գործ՝ վերաբերում է անառակութեան վերաբերում, այլ ընդհանրապէս անառակութեան ամեն տեսակները, ինչպէս մեղսութիւն կամ սրբապղծութիւն և այլն։ Կանոնը տեսնում ենք, որ այդ իրաւասութիւնը միայն մի վերաբերում էր քահանայի, բայց որովհետև սկզբունքը յիշում է ընդ-

15. Մատենագ. Էջմիած. ձեռագիրը № 761 կան. ոսկեր. Արեվ. ս-պետկապան։

հանրապէս ղընծայեցեալներ, և այս՝ որպէս կարծում՝ ոչ անառակութեան իմաստով, այլ իբր պարզ և առօրեական իմաստով։ ուրեմն այս կանոնը վերաբերում է ոչ միայն անառակութեան որ տեսակ և լինի դա, այլ առհասարակ չար գործերին, որոց մէջ կարող ևն մտնել և զուտ քրէական յանցանքները։

Երկրորդ՝ կանոնը ունի ի նկատի ոչ թէ եկեղեցական խոտովանութիւնը և ապաշխարութիւնը, այլ բացարձակ պատասխանատուութիւնը որ պիտի լինի քննութեամբ և հաստատուն վկայութեամբ, որովհետև խոտովանութեան մէջ յիշած մեղքերը նեկեղեցին պարզում յայտնել ամէն և իցէ, և յայտնող քահանային այդպիսի յանցանքների հաժար պատիժ ևն նշանակում եկեղեցական կանոնները։

Երրորդ՝ քննութիւնը և պատասխանը չեր գործերի համար յանձնում, այլ կանոնը եկեղեցական իշխանութեան, որը բաժանում երեք դասակարգի—քահանայ, եպիսկոպոս և ամէն եպիսկոպոս այսինքն՝ կաթողիկոս կամ պետական ազգնորդ՝ որ միմեանում կամ բոլոր նոցանից յաջորդ կամ օգնական եպիսկոպոսներ (աստիքանաներ, suffraganeus, suffragant)։

Ընդրորդ՝ ամենայն դասակարգի աշխարհական մարդիկ—զինուորի, քաղաքացի, հարկատու, ազատ (ազնուական)։ իշխան, նախարար, սատարողում կանոնը առաջին երկու դասակարգի՝ քահանայի և նրանց պատասխանին, իսկ ստորինները, այսինքն՝ արքայազունները կամ թագաւորական ընտանիքի ծագումն ունեցողները առաջարկում կանոնը մի գերագոյն դատարանի, որ կազմուում գլխաւոր եպիսկոպոսից, մեծամեծ իշխանններից և ուրիշ պատուորներից։

Ուրիշ մեր կանոնից հասած վիճակներով չեր կազմակերպութիւնը պարզ ապացուցանում որ՝ իբրեւ եկեղեցական իշխանութեան ձեռին էր քրէական գործերի դատաստանը, նրանք ընդհանուր խօսքի մէջ տեսնենք քրէական յանցանքները կամ նրանք քրէական յանցանքներին վերաբերները անառակութեան ամեն խոշոր և զազրելի տեսակները, ինչպէս մեղսութիւն կամ սրբապղծութիւն և այլն։ Կանոնը սահմանափակում այդ իրաւասութիւնը միայն մի կէսքում՝ երբ յանցաւորը պատկանում թագաւորական ցեղին կամ ընտանե-

Դատաստանի ժողովոյ դրի մէջ, որպէս և Զամչեանի պատմութեան մէջ (հատ. Ա.), այս կանոնը շատ համառօտած է գրած։

քին, այդ ևս՝ ժողովը այդպէս սահմանել է կամ ի պատիւ ներկայ եղած երևելի նախարարներին, և կամ հին սովորութիւն է եղել այդ և մարդասէր զեղազոյն իշխանութեան կողմից հաստատուած, որպէս զի շատ չընդարձակուի հզօր իշխանութեան իրաւասութիւնը։ Իսկ ինչ վերաբերմամբ ասոյ գաւառականներին, որը յիշում, կանոնը, դոքա երևի թէ կամ նշանակ մումին ամէն անգամ կրս առաջ էր գալի մի այդպիսի ծանր գործ, կամ կազմումին առանձին առեան միայն զուտ քաղաքական յանցանքների համար՝ ապատամբութեան, թագաւորի հրամանին չհնազանդուելու, թագաւորը անպատուելու, և այլն, և կամ կազմումին մի մշտական բարձրագոյն դատարան անարդար վճիռների դէմ մատուցած բողոքները քննելու համար։

Նոյն հետագայ ժողովների կանոնների մէջ մենք ապացոյցներ ևնք գտնում որ՝ քրէական յանցանքների դատաքննութիւնը և պատիժը եկեղեցական իշխանութեան ձեռքին էր։ Ս. յայտնի զրօրինակ՝ Նիկեայ Ի. կանոնիկոսի կանոնները ասում են։

Ի. կանոն. — վասն պոռնկաց որ չնան և զնանկահս ապառնանէն ժե. (15) ամ ապաշխարեսցեն։

ԺԵ. ,, — վասն որ զդուռն այլեւ ընկէ՛ն ժ. (10) ամ ապաշխարեսցէ։

Ի. ,, — վասն գողոց, սասպակաց և մարգարոպաց և որ հրով կնքան և սպրդոց աբեղն հեղան և հայհոյեն ժէ. (17) ամ արտաքոյ և է. (7) ամ ընդ օրինաց ապաշխարեսցեն։

ԻԹ. ,, — վասն որ հացի գեղ այլէ՝ է. (7) ամ ապաշխարեսցէ,

Լ. ,, — վասն կնոջ որ յդի էր և հարկանի յանգիտս յոյժ և անդանի մանուկն՝ գ. (3) ամ ապաշխարեսցի հարկանողը։

ԼԳ. ,, — վասն որ ա. կամաս ապա՛ առնէն՝ է. (7) ամ ապաշխարեսցին [44]։

44. Ներսէս Ե. Աշտարակեցին 527 թուին Տվին քաղաքում գումարեց ժողով, որը սահմանեց 38 կանոն. Բայց Էջմիածնի մատենադարանի ձեռագիր կանոնագրքերի մէջ № № 741, 742, 743, 746, 750, 752, 759, 761, որպէս և սինոդում գործածած ձեռագիր կանոնագրքի մէջ,

Ս. յայս կանոնների մէջ յիշած բոլոր յանցանքները — մարդասպանութիւն, գողութիւն, աւազակութիւն, հրձիգութիւն և այլն, զուտ քրէական են. բայց երբ հզօր իշխանութիւնը նշանակում, գոցա համար եկեղեցական ապաշխարութիւն, ուրեմն և գոցա գատաքննութիւնը նորա ձեռքին էր։

Վ. Կիրիլլապէս՝ Մխիթար Գօշը իր Դատաստանագրքի մէջ, ինչպէս տեսանում ևնք ներկայ ապագրութեան մէջ, շատ տեղ ակնարկում որ՝ քրէական գործերի գատաքննութիւնը և գատաստանը եկել է հոգևորականների ձեռքին։ Ս. յայս զրօրինակ նա ասում է։ Վ. թէ ո՞ւմ ատնգիսի է (գատաստանը), քանզի ըստ օրինացն (Մովսիսի) յատուկ էին գատաւորքն և ըստ պատահման եղեն թագաւորք և մարգարէք, և քահանայք, որպէս ասացաւ յառաջագոյն այլ քանզի ոտ մեզ ապականեալ է այսոքիսի կարգ՝ ասա՝ դէպի է զէրտագտանի է յետ եղեկոպոսաց[45]։ Դարձեալ ասում է նա՝ «Ս. զի եպիսկոպոսն պի նա է ատաջի գատաստ բ. կամ գ. (2 կամ 3) ատ ինքն կայցի աբս իսնասատնս և նօտօ գտաքեոչ գրագտասպան ոչ միայն զի նորա իրաւանցն վիայք լիցին, այլ զի և ինքն ի նոցանէ ուսցի զգատաստանն»[46]։ Ուրիշ տեղ նա ասում է. «Ս. ուսցին այժմու եպիսկոպոսք զի տուգանք պոռնկի յայտ գտաս հրամայի։ Ս. այդոցիկ և այլոց (տուգանքների) զանազանութիւն է, զոր ինքնանց այժմու առնուն գտաքոչ, որ են եպիսկոպոսք»[47]։ Դար-

քացի այդ 38 կանոնից, կան այլ ևս 42 կամ 43 կանոններ նոյն ներսիսեան յատկացած. և ուշադրութեան արժանին այն է որ յիշեալ բոլոր կանոնագրքերի մէջ այս երկու տեսակ կանոնները միշտ միասին են գրած՝ երբեմն նաև 38 և յետոյ 42 և երբեմն ընդհակառակն. Բայց ոչ հին պատմագրիններըը, ոչ Զաքէոսեանը և ոչ Արել եպիսկոպոսը չեն յիշում երկրորդ տեսակ կանոնները. Սակայն որովհետև այդ 42 կամ 43 կանոնները կան կանոնագրքերի մէջ և միշտ միասին յիշում 38 կանոնների հետ, հետևանքան է կարծել որ՝ առաջիններըը յօրինել է ինքն ներսէս կաթուղիկոսը, ժողովից առաջ կամ յետոյ, իսկ 38 կանոնը կազմել է և հաստատել է նորա ժողովը։ Վերոյիշեալ կանոնները մենք հանեցինք 42 կամ 43 կանոններից։

45. Նախագր. գլ. Ե.

46. Նոյն, գլ. Ջ.

47. Դատաստանագիրք, մասն Ա. կանոն Գ.Ջ.

ձեալ ասուած է նա. «Եմէք ի թագաւորէն և յիշխանաց կարկեալք լինիլն (զատաւորները), ոչ առանց ոճիրի ... , Եւ պի այժմ ոչ ունիմք թագաւոր և իշխան զի այսոքիսի բարեկարգութիւն ի ձեռն նոցա լիցի, զայսոսիկ ի հայրապետէ մերմէ լցցաք զի նա է ՓԸ-ի գործաւորաց եկեղեցւոյ»[48]։— Չի կարելի ասել որ Ս՝Խրիմեանը ի նկատի ունի միայն հոգևորական գործերի գատաստանը, որ ինքն ըստ ինքեան պատկանում է ցարդ պատկանում ամենայն տեղ եկեղեցական իշխանութեան, որովհետև նորա Վճռաբեկ ատեանների մէջ անդամները որ եպիսկոպոսի գատաստանին նիմարկուած են և շատ անգամ աշխարհական կամ խառն գործեր։

Ընդհակառակին՝ բոլոր վերոյիշեալ քաղաքացիական գործերը գատաստանին, գոնեա իմ մէջ, պրեմէ անկասկածելի կերպով, այն համոզմունքը որ արդարև գատաբանութիւնը և գատաստանը, դէմ քրիստոնեական յանցանքներին, գանձուած հոգևոր իշխանութեան ձեռքին երկար ժամանակ սկսած ։։։ Գրիգոր Լուսաւորչից մինչև Ներսէս Շնորհալեանց Թագաւորութիւնը Սիւնիքայում, Ընդհակառակը շատ է լինել մանաւանդ այն երկարատև պատմական ժամանակ, որ պատահեցաւ Երշակունեաց Թագաւորութեան անկումից յետոյ մինչև Բագրատունեաց Թագաւորութեան սկիզբը և որ տևեց 150 տարուց աւելի, երբ իշխանութիւն Հայաստանի վերայ տատանվելէն օտար պետութիւնները և օտարական իշխանները բռնակալութեամբ և բարբարոսութեամբ։ Ընդ ժամանակամիջոցին, որպես և Երշակունեաց Թագաւորութեան վերջերում, մեր Եկեղեցին մեծ և նշանաւոր գործեր էր կատարում ազգային կեանքի մէջ. կրօնի զգաստիք բարձրացրած՝ Հայոց ձեռնատ և ապրատզօրիկ ազգը արիւնահեղ և նահատակութեան պատերազմներ էր վարում հզոր թշնամիների դէմ, պաշտպանելով կրօնը և նորա հետ միասին ազգութիւնը։ կամիկեանները, եպիսկոպոսները և քահանայները գինքն փոխանակ հաշ և աւետարան ձեռքին բռնած՝ առաջնորդում էին զօրքերին և խրախուսում նոցա. և այսպէս Եկեղեցին և եկեղեցականք պաշտպանում էին և պահպանում էին քրիստոնէութեան հետ և ազգութիւնը, Նախարարները և իշխանները՝ չունենալով իրենց վերայ հզօր բազուկ և զինավար— թագաւոր, նիզ և զօրաւոր հաստատութեան-

48։ Նոյն, մասն Ա. գլուխ Ա։

բում գիտէին իրենց կամ օգնականներին և եպիսկոպոսներին և տարագնում էին նոցանից խրատ և խորհուրդ, ինդրում էին օգնականութիւն, ուզարկում էին նոցա իրրև միջնորդ այս կամ այն բանաւոր և օրինիմ ինդիրներ մեծ և միշտ գանում էին նոցա մէջ արիական հովիւներ՝ պատրաստ անձնուիրաբար ծառայել ազգին և անձնազոհ լինել Եկեղեցւոյ համար։ Տեսնելով այս բոլորը և Հայրապետական խնամքը իւր վերայ՝ ժողովուրդը իւր վստահութեամբ և սիրով դիմում էր իւր եկեղեցականներին իւր առաջնորդներին և ընտանեկան վիշտերը փարատելու համար, իւր կարիքները և նեղութիւնները նոցա օգնականութեամբ լրացնելու և հեռացնելու համար, իւր ամեն անհայ վէճերը նոցանով քննելու և լուծելու համար։ Եւ ահա միայն մի այսպիսի պրօբլեմատ կարող ենք բացատրել մի կողմից՝ աշխարհական օբէնսդրէն և դատաստանապետէն լիակատար զբաղմունքը, և միւս կողմից՝ եկեղեցական դէն տանտրէն։

Իսկ ինչ վերաբերում է քաղաքացիական գործերի գատաստանութեան և գատաստանին, զոր օրինակ՝ անշարժ կալուածքները գնելուն և վաճառելուն, բաշխելուն կամ գրաւ գնելուն, կալուածքը սիրատպանով անփախանացնելուն, պարտքը պահանջելուն, ժառանգութիւնը բաժանելուն, օրէնքի վերայ խնամակալութիւն և հոգաբարձութիւն հաստատելուն, և այլ վիճաբիթս, դոցա հետ մեր եկեղեցին թէ կամ առանձին աշխարհական գատաբաններ կային, որք սկիզբն սահման կամ բարեկարգութեան Վաղարշակ Թագաւորի օրով՝ եթէ նորա էջմիածին էջը ընդհանուր գատաւոր բանին յատուկ մաքով, որպիսի հաստատութիւնը անշուշտ շատ փոփոխութիւնների պիտի ենթարկուէր գարերու ընթացքում. և կամ գատաստանները, գաղաքապետները, գիւղական տանուտէրները, և ժամանակ նահապետները վարում էին գատաստանական իրաւասութիւնը քննելով և վճռելով իրենց իշխանութեան տակ եղած ժողովրդականների վէճերը. և այս երկրորդ ենթադրութիւնը ժամանակ նախապատիւների ժամին աւելի հաւանական և հիմնաւոր պիտի համարվնը, ինչպես վերը ասած եմ, հիմնուելով պատմական ցուցմունքների վերայ։ Իսկ Սիւնիքայի Թագաւորութեան ժամանակ եկեղեցական պետութեանց օրէնքների ազդեցութեամբ ոչ միայն քաղաքացիական գործերը, այլ և քրէական գործերը բոլորովին կամ մեծա-

գոյն մասնով անցան աշխարհական զաւուրներուն ձեռքը։ Ու այս երեւոյթի, ոչ միայն Սմբատ Սպարապետի վերջիչներ թագաւորութիւններից՝ Ընտիքաւ Ընտղի և Մ՝խիթար Գօշի Դատաստանագրքի, այլ և եկեղեցական կանոնագրութիւններից։ Այսպէս, զոր օրինակ՝ Սահ կրկրորդ Ժողովը, որ գումարուեցաւ Սսատանդ Ը. կաթուղիկոսի օրով 1243 թ.։, ուրիւն Սմբատի Դատաստանագիրքը յօրինելուց 22 տարի առաջ, սահմանից ուրիշ կանոնների հետ և այսպիսի կանոն. «Կանոն ԻԲ. Հայհոյիչք պղծութեան զատաստանաւ պատուհասանցին»[49]։ Ընդառեղ հայհոյիչ բառով պէտք է հասկանանք ոչ թէ Ընտուեծոյ անուանն Ս. Հոգւոյ, ևայլն հայհոյիչները, որոց այսպիսի մեծ յանցանքը քննութիւն միշտ ինքն Եկեղեցին և զա երբէք չէր մանուկ մասնաւոր իշխանութեան զատաստանի տակ, այլ այնպիսի մարդիկ որք անարգուէին ուրիշի պատիւը հայհոյութիւնով, յիշոցներով և այլ ձեւր և անպատիւ խօսքերով։ Բայց Սիւնիքայի Թագաւորութիւնը ոչինչ իշխանութիւն կամ քաղաքական ազդեցութիւն չունենալով բուն Հայաստանի վերայ՝ չէր կարող մտցնել այնտեղ իրաւարանական նոր սկզբունքներ և փոփոխութիւններ։

Թանի որ հայկական պետութիւնը գոյութիւն ունէր Հայաստանի մէջ, ընդհանուր պետական օրէնքների և օրէնսգրքերի ու զատաստանագրքերի պահպանութիւնը կարող էր աւելի սակաւ զգալի լինել։ Բայց երբ տարաբախտաբար Բագրատունեաց Թագաւորութեան անկումից յետոյ գաղթեցաւ Հայաստանի ազատութիւնը և ինքնիշխանութիւնը, հանգամանքները շատ փոխուեցան և այդ պահպանութիւնը շատ զգալի եղաւ։ Այդ միջոցներին և մանաւանդ 12-րդ դարու վերջերում շատ ծանրացաւ և զառնացաւ Հայոց ժողովրդի դրութիւնը և վիճակը. գրոր Հայաստանը բաժանուած էր մի քանի խաշոր մասների։ Ընի, Կարնոյ, Մանազկերտ և մի քանի մեծամեծ քաղաքներ իւրեանց շրջակայ գաւառներով ենթարկուած էին առանձին առանձին մահմետական Էմիրներին, որք իշխում էին գրեթէ իրրև փոքր ինքնակալներ կամ միահեծան իշխաններ։ Երբէք մի նշանաւոր մասին տիրացել էին Հոյները, միւսին՝ Վրացիները։ Դամասկոսի

---

[49]։ Պատմ. Ժողովոց Եբեղ եպիս. եր. 124, կանոն ԻԲ.

ամիրապետների զօրքերը անդադար արշաւում էին Հայաստանի վերայ և Հայերէ ի Հայր աւերումին նորան սրով և հրով։ Ընդոր ժողովուրդը կրում էր սոսկալի տառապանքներ—բռնութիւն, գերութիւն, մահ, հալածանք և նահատակութիւն գրծի համար, զրկանք և յափշտակութիւն, և այլն։ Հայրապետական Էջմիածնի, որ այնպէս սիրտ շոգիտուած էր արքայական գահի հետ և ազգի քաղաքական վիճակի հետ, շրջապատող ձախորդ և գժուար հանգամանքներից ստիպուած լինելով՝ սկսաց տառապական թափառել և վիրջը նոյնպէս գնաց դադրեցաւ Սիւնիքայում։ Ընդ փոքր հարուած չէր Հայաստանի համար, վասն զի Հայոց Հայրապետները քանի որ այնտեղ էին՝ միշտ յաջողութեամբ էին ընդդիմանում, միջնորդելով, ընծայներով և այլ միջոցներով միմիայնել բռնակալների խստութիւնը և պահպանել իւրեանց ժողովուրդը փոքր ի շատէ ապահովի միխիթարուած դրութեան մէջ։ Բայց սորանից՝ Հայրապետական Էջմիածնի հետ ստորադրութեան պատճառով Հայաստանում ծագեցան Եկեղեցւոյ վարչութեան մէջ ոչ սակաւ անհարգութիւններ և խռովութիւններ. ժամեր անարժան, բախտախնդիր և շահասէր քահանայ ժողովրդական եպիսկոպոսներ, բացարձակապէս անջատուելուին կամ ինքնիշխանական իշխանութեան հետ ազատելու և փոխանակ իւրեանց տառապեալ հօտի անդորրութեան և բարեկեցութեան վերայ հոգալու՝ խռովութիւն և երկպառակութիւն էին ձգում ժողովրդի մէջ, փոխանակ առաքինութեան և բարեպաշտութեան՝ ժողովրդում էին տարածում կեղծաւորութեամբ էին տարում, փոխանակ արդարութեան և անաչառութեան՝ կողմնապահութեամբ, անարդարութեամբ և կաշառառութեամբ էին դատում։ Մի սարսափելի անիշխանութիւն (անարքիա) թագաւորում ամենայն տեղ, ոչ որ ապահով և հանգիստ չէր հետևել աւուր համար։ Եկեղեցին՝ մաքառելով մահմետականութեան հետ՝ այլ ևս չէր կարողանում գործածել իւր դատաստանական իրաւասութիւնը։ Տիրապետող մահմետական օրէնքները և իրաւարանական սովորութիւնները բոլորովին տարբեր և հակառակ էին քրիստոնեայ Հայերի դէպքերին. արդարութիւնը և արդարադատութիւնը չէր կարելի գանել նոցա մէջ։

Հայրենեաց և Եկեղեցւոյ այսպիսի տիտապի և դառն վիճակը տեսնելով՝ ժամանակին աղգասէր և բարեմիտ մարդիկ անշուշտ ապե-

խարշ ելին ընծայէ և մեռանելու վրէժ ի վրէն այլոց նաև արդարացու-
ութեան վրայ։ Օտարների բանաւէճեան և կամայագործութեան և
անհնազան անարդարադատութեան ան-անարդարադատութեան ան-
ժամն դնելու համար հարկաւոր էր ունենալ որոշեալ օրէնքներ և
օրէնագիրք ու դատաստանագիրք։ Խնդրել այդ բաները բանական օ-
տար իշխաններից՝ ի հարկէ անկարելի էր։ Ժողովրդի մէջ չէին երե-
ւում հին ազգային օրէնքներ և օրէնագրքեր, և նա շատ բաների մէջ
վարվում էր նախնի իրաւարանական աւանդութիւններով, բայց մի
կողմից՝ զգալ և քաջ ականջն խանգարուել կին և ազատազուել,
միւս կողմից՝ զգայ վերայ ուշ չէին դարձնում և չէին յարգում ա-
բարակացների գատաւորները։ Այդ ազատ իշխանները և նախարար-
ները, որք շատ նուազել էին թուով և զօրութեամբ, չէին կարող
կատարել այդ գործը և ընդհանուր օրէնքներ հանել ու օրէնագրքեր
հաստատել, վասն զի նոցա իշխանութիւնը համատարած չէր բոլոր
Հայաստանի վերայ կամ նոքա խոշոր մասների վերայ, և ինքեանք
էս սահմանած էին զիրքը ձեռնհաս գիշեր ցերեկ հսկել և արիւն հա-
փել մի կողմ երկիր և մի բուռը ժողովրդ խրեանց իշխանութեան
տակ պահելու համար։ Ժողովրդի մէջ փարացեր էր ուսումն և դի-
տութիւն, և ի տեղի նոցա իրաւարարութիւնը։ Քահանայք
ուսումնականներ և օրէնսգէտներ որ գոնեայ նոքա ձեռք զարկին օ-
րէնքներ ժողովելու և օրէնագրքեր կազմելոյ մեծ գործին։ Այդ ժա-
մանակը և կանոնի հանդամանքները անհրաժեշտ կերպով պահան-
ջում էին օրէնագիրք և դատաստանագիրք։ Դարձեալ գործը մեռա՛ր
եկեղեցականներին, գարձեալ Եկեղեցին պէտք է ցոյց տար ազգին
այդ ճառագայթները։ Եւ ահա յիրաւի տուն և կրկրող գործ
վիրջներում երևում մի նշանաւոր և պիտանական վարդապետ, որ
վառուած ստուգմամբ հայրենասիրութեան և մարդասի-
րութեան վսեմ զգացմունքներով՝ ձեռնամուխ կ՚լինում մի մեծ և
յաւիտենական հիշատակաց արժանի գործին — նա յօրինում է եկե-
ղեցական կանոնների և աշխարհական օրէնքների ու իրաւարանա-
կան աւանդութիւնների մի ընդարձակ ժողովածու։ Այդ նշանաւոր
վարդապետը Մխիթար Գոշն է, և այդ երևելի ժողովածուն նորա
Դատաստանագիրքն է, այս մի հատ վարդը մեր իրաւարանական
մատենագրութեան չոր ու ցամաք պարտէզի մէջ, Եւ ոչ միայն չափով
ցաւի և ափսոսալ որ՝ ժամանակակից պատմագիրները և մանաւանդ

իւր աշակերտները և Դատաստանագրքի ընդօրինակողները չէն հո-
գացել թողնել ապագայ սերունդի համար Մխիթարի այս երանելի
և երջանկայիշատակ վարդապետի մանրամասն և ընդարձակ կենսա-
գրութիւնը։ Այդ և այնպէս՝ սա այս կողմից աւելի բաղդաւոր է
քանթէ մեր նոյնպէս արժանայիշատակ հոգևնաւիներից շատերը։
Զատկով Դատաստանագրքի յառաջաբանութենից և յիշատա-
կարանից, Վարդան Արևելցուց Տիեզերական Պատմութիւ-
նից[50], Ստեփանէ Ասողկոյ Պատմութիւնից[51], Պատմութիւն հայերէն
Դպրութեանց գրքից[52] և մանաւանդ գլխաւորապէս Ակրակոս Գան-
ձակեցու Պատմութիւնից, որք նուիրուած է Մխիթարի կենսագրու-
թեան ամբողջ չորս թերթ իւր Պատմութեան մէջ և որին ուսոի
շատ շնորհակալութիւն պիտի յիշիմք[53], — մենք կարողացանք կազմել
առ այժմ Գոշ Մխիթարի հետևեալ կենսագրութիւնը։

Մխիթարը ծնուեցաւ Գանձակ քաղաքում, որ յետոյ կոչուեցաւ
Գանձա, իսկ այժմ Նէլիսաւետապոլ։ Նորա բարեպաշտ ծնողները
ուրժանաւոր խնամք տանելով իւրեանց զաւակի կրթութեան վերայ՝
առանց ուշադրութեան չթողին նորա ուսմունքը և տուին նորան
աշակերտ երևի թէ մի քահանայի կամ մի այլ հոգևորականի մօտ՝
«յառաջ ածին զնա ի Գիրս», ինչպես ասում Ակրակոս պատմագիրը։
Այսպիսի կրօնական կրթութեան մէջ մնալով, ննձարկուելով իւր
վարժապետի ազդեցութեան տակ, և գուցէ թէ մի տրամադրութիւն
ևս ունենալով իւր բնաւորութեան մէջ՝ ուշիմ աշակերտը սէր և
համակրութիւն ստացաւ առ եկեղեցական կոչումն, ուսոի հասակը
առնելով՝ ձեռնադրուեցաւ կուսակրօն քահանայ։ Մնալով այդ
սրբազան կոչման մէջ և ծառայով շատ տարիներ՝ բարեխիղճ Մխիթարը
չհագաղեց իւր անձն արժանապէս պատրաստած և նորա հոգին
միշտ փափագուկր և ձգտուկր դէպի առաւել բարձր և խոր գիտու-
թիւն աստուածային բանից՝ «հմուտ լինել Գրոց Սրբոց և պահել
խոցոց, որ կան ի նոսա—ասում է Ակրակոսը, ուսոի թողնց նա իւր
պաշտօնի և բնակութեան տեղը և գնաց որոնել աւելի գիտական

50. Վարդ. Բարձր. Տիեզ. Պատ. եր, 182—184.
51. Ձամչեան, Պատ. Հայոց, հատ. Գ. եր. 95, 96, 181, 183, 184, 187,
52. Պատ. Հայերէն Դպր. եր. 559 — 568.
53. Ակրակոս Գանձակեցի, Պատմութիւն, եր. 95, 97—103, 120—129.

վարժապետներ։ Նա հանդիպեցաւ Յովհաննէս Տաճուճեցի ուսումնական վարդապետին՝ «որ ի ժամանակն այնմիկ եբեալ էր նա ճեպաւորել»—ասուած Պիրակոսը։ Ընկերանալով նորա մօտ շատ տարիներ՝ «ամս յալեալս», Մխիթարը գնաց ի ուրիշ դիմնական վարդապետի մօտ, որ նոյնպէս կոչուում էր Մխիթար[54], և ապա ուրիշների մօտ, և այսպէս հետզհետէ հարստանալով մանաւանդ աստուածաբանական դիտութիւններով՝ նա ստացաւ Վ. ԸՐԴԱՊԵՏ կոչումը[55]։ Բայց գարձեալ չբաւականանալով իւր դիտութեան պաշարով և լսելով որ՝ Սեաւ լերան, այսինքն՝ Պիւիւթայի կողմերում կան Հայոց վանքեր, ուր բնակւում են նրանցի դիմնական վարդապետներ, Մխիթարը գնաց և այնտեղ, և չգոյանալով թէ արդէն ստացած ունի վարդապետական բարձր կոչումը և պատիւը՝ սկսեց վերստին աշակերտութիւն անել, երեւի կարծելով վանքում, որ այն ժամանակ ծաղկեալ դրութեան մէջ էր, և շատ օգուտ քաղեց իւր պարապմունքներից։ Մի քանի ժամանակից յետոյ նա վերադարձաւ Հայաստան և գնաց Կարնի քաղաք (Էրզրում), ուր Տանօթեցւոյ Պուրթի անուն Հայ քրիստոնեայ բարեպաշտ իշխանի հետ, որը սկսեց շատ

54. Պատմութ. Հայերէն Դպր. եր. 559.— բայց Պիրակոսը չէ յիշում այս Մխիթարի անունը, այլ ասում է միայն՝ «եւ ա այլ ոմանս»։

55. Վ. ԸՐԴԱՊԵՏ բառը այժմ գործածվում է արեւմտահայ վանական բառերի նշանակութեամբ, որը գրեթէ գեղօրովին չէն գործածվում խոսակցութեան մէջ՝ միայնէ անգամ վանքերում։ Աւետարանի մէջ Վ. ԸՐԴԱՊԵՏ դրուած է Էրբև թարգմանութիւն Էրբայական բառին։ (Բառնի՝ որ Վարդանի վարդապետ, Ծով. Ի. 16.) որ նշանակում է ուսուցիչ և այդ մտքով յաճախ է գործածվում Աւետարանի մէջ։ Եւ մեր նախնիքը նոյն մտքով էին հասկանում այդ բառը և տալիս էին այդ անունը իրեւ մի դիտական կոչումն, որով միայն արեղան իրաւունք էր ստանում ուսուցանելու, այսինքն՝ քարոզել ժողովրդին եկեղեցու մէջ և ուրիշ տեղ։ Իրեն պատճառին նշան այդ բարձր կոչման՝ Վ. ԸՐԴԱՊԵՏը կարող էր գաւազան բռնել ձեռքին, օրհնել խրատական առանձին հանդիսական կարգ, որը Պաշտօնի մէջ կոչւում է կանոն մանաւանդ իշխանաւորին տալու։ Իրեւ դիտական կոչումն Վ. ԸՐԴԱՊԵՏ բառը շատ համապատասխանում է այժմեան եւրոպական գոկտոր (docteur) բարձր դիտնական կոչմանն։ — Տես և Պատմութ. Ա. մատն, կանոն Գ. և Դ. մեր 166 ծանօթ.

սիրել նորան։ «Էբէն ընդէր»։ Վերջապէս՝ Մխիթարը վերադարձաւ Հայրենիքը, ուր շուտով այնպէս ատրածուեցաւ նորա դիտնականութեան համբաւը որ՝ շատերը սկսեցին աշակերտել նորան։ Բայց երկար չմնաց նա իւր տեղում, վասն դիւանդութիւնների կրկով մայրաքաղաքներից՝ նա գնաց Աստիանոս Եղուանից կաթողիկոսի յորդորանքով Ըրցախում Խրիմը (այժմեան Վաբարագ), Խաչէն գաւառը, Հաթերք ամրոցի տէր Վախթանգ իշխանի մօտ, որը՝ որպէս և նորա նախայրները՝ մեծ պատուով ընդունեցին նորան։ և Մխիթարը մնաց նոցա մօտ բաւական երկար ժամանակ։ Նոյն միջոցներին և Պուրթի իշխանը վերադարձաւ Կարինից իւր Հայրենիքը՝ Կայենոյ կամ Կայենական գաւառը, մօտ Հաղրատաւան։ Վախթ այդ և յիշելով իւր և Պուրթի փոխադարձ սէրը՝ Մխիթարը գնաց նորա մօտ և բնակուեցաւ Գոսիկ կոչուած վանքի մէջ, որ նոյն գաւառումն էր Եղնդեռ (Ագաւաձոր) գիւղի աջ կողմը (ոչ հեռու Դիլիժանից, որ Թիֆլիս— Երեւանայ աբջանի ճանապարհի վերայ է)։ վանքի վանահայրը՝ Սարկաւագ անուն, որ առաջ աշակերտել էր Մխիթարի մօտ, մեծ պատուով ընդունեց նորան՝ և «ինձ ողջոյնդ նմա», —ասում է Պիրակոսը։

Բայց երբ նոյն միջոցներին սասունի գանազան քանդուկտան Գետիկ վանքի և գիւղերի շատ շինութիւնները, իսկ եկեղեցին այնպէս խախտուեցաւ որ՝ անկարելի էր վերստին նորոգել նորան, մանաւանդ բնակիչները կամեցան ցրուել գանազան տեղերը, մանաւանդ այն պատճառով որ՝ ոմն Սարգիս իշխան փոխադրեց իւր գիւղը և հաստատեց նոյն վանքի մօտ, և այդ գիւղի բնակիչները շատ նեղացուցին նոցա։ Սակայն Մխիթարը չմոռաց նոցա ցրուել, այլ խրատեց որ՝ միան միասին և գնան տեղ խնդրեն իւրեանց համար Վրաց Իվանէ իշխանից, որ էր եղբայր Օ.ազարեթա զօրավարի և քեռորդի նոյն Պուրթի իշխանի։ Իվանէ իշխանը յարգելով նոցա խնդիրը և մանաւանդ Մխիթարի միջնորդութիւնը՝ իրաւունք տուեց նոցա գտնել իւրեանց համար և մանաւանդ նոր վանքի և եկեղեցու համար յարմար և պատշաճ տեղ։ Նորա գան մի բարեվայելուչ տեղ երկու լեռների տարողում՝ Տանձուտայ ձոր անուանով՝ փայտաէա և ջրաէա, և հաստատուեցան այնտեղ։ Մխիթար և այս փոխադրուելով այնտեղ իւր սիրելի ժողովրդի հետ՝ խնդրեց

սկսեց շինել Իվանէ իշխանի հաճութեամբ եւ իւր միաբանների օգնութեամբ մի գեղեցիկ փայտաշէն եկեղեցի յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչին։ Մի ուրիշ փոքր եկեղեցի եւս շինելուց յետոյ վանքի ծայրում յանուն Ս. Կարապետի՝ Մխիթարը սկսեց շինել մի մեծափառ եկեղեցի սրբատաշ քարերից զմրկեթայարկ եւ գեղեցիկ ճարտարապետութեամբ. այդ եկեղեցու հիմնարկութիւնը կատարեց նա հայոց ՈՒ թուականին (1193 թ. Փրկչի) եւ աւարտեց հինգ տարուց յետոյ՝ օծելով յանուն Ս. Աստուածածնի։ Այդ շինութիւնների ժամանակ Մխիթարին շատ օգնում էին Իվանէ և Օգաբարէ իշխանները, Պռուբէ իշխանը և նորա որդիքը, Վահթանգ իշխանը և նորա եղբայրները. և Վահթանգի կինը Բերդուխաթուն, որը ի միջի այլոց շինեց իւր աղջիկների հետ միասին նոյն եկեղեցու համար մի գեղեցիկ վարագոյր՝ «զարմանալի տեսողաց, ի մաղոյ այծից կակղագունաց, նեղկեալ պեսպէս և զանազան, գործ քանզակակերպ և նկարեալ պատկերօք, ճշդրտապոյն հանուածովք, անօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն»— ինչպես նկարագրում Վիրակոսը։ Նոյն իշխանները ընծայեցին Մխիթարի նոր հաստատած վանքին, որ կոչուեցաւ Նոր Գետիկ, գիւղեր և հողեր և այլևայլ կալուածքներ։ Եւ այս բոլորը ապացոյց է անշուշտ թէ՝ սրպիսի մեծ պատիւ էր վայելում Մխիթարը այդ իշխաններից և նոցա ընտանիքից, լինելով միանգամայն լուսաւորչահայր Օգաբարէի։ Այլ ինքն Մխիթարը սիրելով աւելի անապատ տիպ և առանձնութիւն՝ շինեց իւր համար առանձին բնակարան վանքից դուրս և մի փոքրիկ եկեղեցի յանուն Հոգւոյն Սրբոյ. իսկ իւր Ննջեցեալ ժամանակ շինեց նա վանքի դիմին, աջ կողմում, դարձեալ մի եկեղեցի քարուկրով յանուն Համբարձման Քրիստոսի, իրրև շիրիմ իւր ապագայ գերեզմանի վերայ։

Փոքր առ փոքր այնպէս հաւաքուեցաւ Մխիթարի գիտնականութեան և առաքինութեան համբաւը որ՝ շատ տեղերից, մինչև անգամ հեռաւոր գաւառներից, գալիս էին նորա մօտ աշակերտութիւն անելու համար ոչ թէ միայն երիտասարդները և ուսման կարօտ մարդիկ, այլ և շատ գիտնական վարդապետներ, որք ծանօթանում իւրեանց վարդապետական կոչումն և յետոյ վերադին ստանում նոքանից, ինչպես ասից այդ երբեմն և ինքն Մխիթարը։ Ով արդարև

շատ աշակերտներ ունէր նա՝ դորա մասին վկայում ոչ միայն Վիրակոսը, որ գրեթէ ժամանակակից էր նորան և նոյն իսկ Վանական վանքում ուսումն ստացած, այլև ինքն Մխիթարը իւր Ներատամանադրքի նախաբանութեան 11-րդ գլխի մէջ, ուր ասում՝ «ի ընդ ոտիւք ինձ ուսուցչաց՝ ընդունայն առնէի քեզ»։ Վիրակոսը այսպէս է դովաբանում զՄխիթարը։ «Ազգումք էին որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին. քանզի համրաւ իմաստութեան նորա հաչակեցաւ ընդ ամենայն տեղիս և գային առ նա համայն կողմանց։ Ուստի ըստ անուանն ի լուս ինքնեւեան։ քանզի էր նա մխիթարական որպէս Ներատաւոր ի մէջ ժողովրդոց որպէս զՆետան, և բանք նորա արդիւնականք լի՛ ընդհօք։ և ամենայն որ փափագէր անսանել զնա վասն այսպիսի Համբաւոյ» 56։ Մխիթարի աշակերտների մէջ մանաւանդ երեւելի Հանդիսացան Ներսես վարդապետ և միւս Ներսէհանէս վարդապետ Տաւուշեցի, որ աւելի յայտնի է Վանական մականունով 57։

Մխիթարը յայտնի է աւելի Գօշ մականունով, օրով նա որոշվում ուրիշ շատ Մխիթարներից։ Գօշ կամ Գոշ բառը նշանակում է խաչ, ժողովրդական ոճով՝ խօսա կամ խչօխ, այսինքն՝ սահակաւոր։ և Վիրակոսը բացատրում մեզ այս մականունի պատճառը. և Վիրակոսը բացատրում մեզ այս մականունի պատճառը ասելով թէ շատ ուշ ծաղկեցաւ նորա մօրուքը՝ «ղի այսպէս կոչէին զնա մականունմբ (Գօշ), քանզի հնգազգոյն եկին մազիք նորա»։

---

56. Պատ. եր. 127.

57. Ինչպես վկայուվէ Վիրակոսը, որ աշակերտ էր Վանականին, այս Վանականը գրել էր իւր ժամանակակից անցքերի պատմութիւնը, որը տարաբաստարար տակաւին կորած է համարվում. Մեզ համար մանաւանդ աւելի ցաւալի է այդ կորուստը, վասն զի Վանականը պէտք որ մանրամասնօրէն նկարագրած ունենար իւր հաչակաւոր վարժապետի՝ Գօշ Մխիթարի կենսագրութիւնը, ինչպես վկայուվէ Վիրակոսը ասելով. «Զբռնագնակ իրս, զգան և զգործ այսմ ժողովրդոյս (Անեցի) գրեաց մեծիմաստ և առատամիտ վարդապետն Վանական յիւրում պատմութեան, զի ակնատես էր իրացն եղելոց ականջալուր՝ յաշակերտի կարգի զոյժ յայնժամ առ մեծ վարդապետին (Մխիթար)։ Այս և այլ յոլով իրք գտանին ի գիրս նորա, որք կամին մեծագրութեամբ ուսանիլ» (եր. 103)

Մէր Մխիթարը կրնկի հանդիսացաւ ոչ միայն իւր կիսանախանձելի եւ վարժապետական շնորհքով ու արդիւնքներով, այլ եւ նշանաւոր դիր խնդալով ազգային եկեղեցական կեանքի մէջ։

Օձաքարիա կամ Օձաքարէ Հայոց էշխանը եւ Սպասալարը՝ Վրաստանի Թամար Թագուհւոյ յանձնարարութեամբ եւ նորա զօրքերով շատ պատերազմներ վարեց տաճիկների եւ պարսիկների դէմ, որք սերտուէին Հայաստանի մեծագոյն մասին, եւ խլեց նոցանից շատ գաւառներ եւ քաղաքներ՝ ինքնիշխանաբար տէրութիւն վարելով մանաւանդ Լօռու ամրոցին եւ նորա շրջակայ գաւառին։ Էյս Օձաքարէն շատ ջերմեռանդ մարդ էր եւ հետաւորիմ զաւակ Հայաստանեայց մայրենի Եկեղեցւոյ, մինչեւ նորա հարազատ կորովը Իվանէն աշխարհային անցաւոր փառքերը վայելելու ցանկութեամբ եւ մանաւանդ գեղեցիկ Թամար Թագուհւոյն հաճոյանալու եւ նորանից Վրաստանի Ընթարկութիւնը պահպանելու նպատակով՝ հեռացաւ իւր մայրենի ուղղափառ կրօնից եւ մկացաւ վրացիների հետ։ Իսկ Օձաքարէն՝ անընդհատ պատերազմների պատճառով սրտիթ միշտ բանակի մէջ տորելով եւ ցաւելով որ՝ բազմաչարչար պատերազմական կեանքի մէջ զուրկ էին մնում թէ՛ ինքն եւ թէ՛ իւր զօրքի մէջ եղած բազմաթիւ Հայոյն զինուորականները եւ զինուորները բարձրագոյն հոգեկան մխիթարութիւնից—ժամ պատարագից, կամեցաւ շարժական Ս. Անդան եւ քահանայներ շրջեցնել իւր հետ, ինչպէս որ անում էին վոցիքը։ Նա խորհուրդ հարցրեց դրա մասին Մխիթարից, որը՝ ինչպէս ասացինք վերը՝ նորա խոստովանահայրն էր եւ շատ սիրելի, այլեւ ուրիշ նշանաւոր վարդապետներից թէ՝ Հայոց Թագաւորները եւ իշխանները չի՞ն ունեցել արդեօք սովորութիւն շրջեցնել իւրեանց հետ շարժական սեղան կամ եկեղեցի պատերազմի կամ ճանապարհորդութեան ժամանակ, եւ նորա ցոյց տուին ազգային պատմութիւնից այդպիսի մի քանի օրինակներ։ Իմանալով այդ՝ Օձաքարէն կամեցաւ որ ինքն էլ ունենայ շարժական եկեղեցի եւ քահանայներ իւր զօրքի մէջ եւ հրամայեց խնդրել Մխիթարից, բայց նա չհամաձայնուեցաւ թողլ տալ այդ իւր հրամանով, ասելով, թէ այդպիսի ծանր խնդիրները վարդապետները չեն կարող լուծել առանց կաթողիկոսի հրամանի։ Ապա տարբերը յայտնեց նորա այդպիսի հիմնաւոր բացատրութիւնը եւ խոյն գնապան-

ներ եւ նամանիներ ուղարկից Պիլիկիա Լեւոն Ա. Թագաւորի եւ Յովհաննէս Ա. կաթողիկոսի մօտ, խնդրելով որ Թոյլ տան գալոց Տիրամօրն եւ Պաւղէն ի պատկեր աւետեաց ծնելոյ, եւ զՆրբազգեստն չլուծանել, եւ կրօնաւորաց մի չուտել եւ կենդանեաց պատառագ մատուցանել, եւ վրանաւ պատարագիլ ի բացեայ՝ գալոց եւ սարիազաղօք։ »[58]

Ի այդ որովհետեւ այդ միջոցին Յովհաննէս կաթողիկոսը Լեւոնի հրամանով դահընկից եղած էր եւ բանտարկուած եւ նորա տեղը նստել էր Վահրամ կաթողիկոսը, ուստի Վահրամը Լեւոնը խորհրդակցելով միասին Օձաքարէի միջնորդութեան մասին՝ որոշեցին եկեղեցական ժողովով քննել գործը։ Վանորոյ 1204 թուականին գումարեցաւ Սիս մայրաքաղաքում առաջին Սիս ժողով մերձակայ եպիսկոպոսներից եւ վարդապետներից Վահրամի նախագահութեամբ, եւ քննելով Օձաքարէի խնդիրը եւ չհամարելով այն հակառակնամեն աւանդութեանց եւ եկեղեցական կանոններին՝ որոշեց Թոյլ տալ նորան պահպանել շարժական եկեղեցի կամ սեղան եպիսկոպոսական, եւ սահմանեց սորա մասին 8 կանոն[59]։ Յետոյ Լեւոն Թագաւորը եւ Վահրամ կաթողիկոսը ուղարկեցին Օձաքարէին ժողովի թոյլտուութիւնը եւ կանոնները իւրեանց առաձեռն նամակներով։ Իսկ դահընկէց Յովհաննէս կաթողիկոսը կամենալով իւր կողմը գրաւել Հզոր Օձաքարէին՝ չատալով ուղարկից նորան իւր Հայրապետական Թոյլատուութիւնը եւ մի գիրքերայարի եկեղեցական դեղեցիկ վասն, մարմարեայ աճած սեղանաքար եւ այլ պատարագներ ու Պատարագ մատուցանելու համար, մի ճոխնոցոս Մխիթար անուն եւ մի քանի քահանայներ, սարկաւագներ եւ երգիչ դպիրներ։

Առանալով այսպէս Ժողովի, երկու կաթողիկոսի եւ Թագաւորի Թոյլտուութիւնը, կանոնները, նամակները եւ ընծայները՝ Օձաքարէն շատ ուրախացաւ եւ խոյն ժողով դուռարից մերձակայ նոյեակոսգոսներից եւ վարդապետներից Լօռում 1205 թ. որպէս զի Երեքեան այսինքն՝ Հայաստանի եկեղեցական Հարքն էլ հաստատեն Սիս Ժողովի վրիռը եւ կանոնները։ Այդ Լօռու Ժողովի անդամները բա-

58. Վարդան Բաբգր. Տիեզեր. պատ. եր. 182.

59. Պերակոս. պատմ. եր. 88—99. և Արէվ. նպաս. պատ. Ժող. եր. 119.

ժանուելոյն երիս կարծելէ — եպիսկոպոսներէ և վարդապետներէ
ամենք հաւանութիւն տուին, և ամենք միաժպին Սմ ժողովի թոյ-
լատրած նորաձեւութիւնները՝ մանաւանդ Ս. Ընծաւածածնի վ-
բահոխման և Ս. Խաչի տօներուն օրերը փոխելու մասին, ուսմի ժո-
ղովը քանդուելուս և ժողովականներէն շատերը ցրուելուն գիշերով
Ծածուկ Օ.աքարէի երիւղից, ինչպես զորօրինակ Հաղբատու վա-
նահայր Գրիգոր եպիսկոպոսը փոխան Գնեակայ վանքը Մխիթարի
մօտ գալ գիտէր թէ՝ մեծ համարձակութիւն ունի նա առ Օ.աքար-
բէ. ասուած է Պիրակոսը։ Օ.աքարէն՝ զայրացած՝ հրամայից իւր
իշխանութեան տակ եղած բոլոր վանքերին և եկեղեցիներին անխա-
փան և ձգտութեամբ կատարել Սմ ժողովի կանոնները։ Հակառա-
կորդները ընդդիմանալին և զրգռելին ժողովուրդը, մինչ զի շատ
տեղերում տագնապ մեծամեծ անկարգութիւններ և խռովութիւն-
ներ։ Ապաստարը ստիպուեցաւ երկու տարուց յետոյ նոր ժողով
գումարել Հիրակ գաւառի Ընի քաղաքում, ուր հաւաքուեցան
բաւական շատ եպիսկոպոսներ և վարդապետներ։ Հրաւիրուած էր
և ինքն Մխիթարը, բայց նա չկամեցաւ գնալ՝ պատճառելով իւր
ծերութիւնը և տկարութիւնը, և նամակով յայտնեց Օ.աքարէին
թէ՝ ինքն համաձայն է այն վճռի հետ, որը կհաստատէ ժողովը։
Բայց Ընու ժողովը տեսնելով Մխիթարի բացակայութիւնը՝ չկա-
մեցաւ սկսել իւր նիստերը, ասելով թէ՝ անհարիր է այդ առանց
ՄԵԾՈՑ Վ.ԱՐԴԱՊԵՏԻ «զի այսպէս կոչէին ընդ ասէս պատուոյ»—
ասում է Պիրակոսը։ և թէպէտ Օ.աքարէն ցոյց տուից ժողովին
Մխիթարի նամակը, բայց ժողովը խնդրից նորանից սպասել առ-
ժամանակ մինչև ինքն ժողովը կս խնդրէ Մխիթարից գալ անպատ-
ճառ։ Ապաստարը համաձայնուեցաւ և ժողովը հրաւիրանքը գրից
Մխիթարին «զանձագրութիւն յարգոյ ի նէ պատճառեր, երբէ է ծանո-
պարհն հասանէ տեղ կարճան՝ ընդ առումին առաքն վարդապետացն կոր-
ծեցուածոց վշեցապիտ էր», ինչպես վկայում է Պիրակոսը։

Մխիթարը չկարողացաւ այլ ևս բացասել Ընու ժողովի պղպեղ-
սի թախանձանքին և գնաց Ընի։ Օ.աքարէն մարդիկ և մի իշխան
ուղարկից նորան քաղաքից դուրս ընդ առաջ հանդիսաւոր ընդու-
նելութեան համար և հրաւիրից գնալ ուղղակի իւր մօտ և իջևա-
նել իւր պալատի մէջ։ Թէպէտ Մխիթարը համեստութեամբ և

խոհեմութեամբ հրաժարուեցաւ այդպիսի պատուից, որպէս զի որը-
ատուղջի և կասկածանքի տեղիք տուած չլինէր ժողովին, բայց Օ.ա-
քարէի մարդիկը նորա հրամանով սաստիկին նորան և հանդիսաւորը
իշխանը բռնեց նորա ձիու երասանակը (սանձը) և այնպէս տարաւ։
Ժողովի անդամները լսելով այդ՝ խիզին ներսէս անուանով մի վար-
պետ ուղարկեցին Մխիթարի մօտ որ՝ յորդորէ նորան նախ և ա-
ռաջ անպատճառ ժողովը գնալու, բայց նա հասաւ այն ժամանակ,
երբ Մխիթարը արդէն մանուկի փառաւոր հանդիսով Օ.աքա-
բէայի պալատը։ Վ.ասն որոյ ներսէսը հեռուից բարձր ձայնով դուչ-
լով յայտնեց նորան ժողովի պատգամը, սակայն արդէն ուշ էր և
Մխիթարը այլ ևս չէր կարող յետ դառնալ, որովհետև շատ բաղ-
մութիւն կար ժողովածի և առաջնորդող իշխանը սաստկով ներս
տարաւ նորան պալատի բակը, իսկ Օ.աքարէն ուրախութեամբ
ընդառաջ գալով Մխիթարին ասաց. «ՄԻԱՑ Հ.ԱՅՏՆԻ ԵՒ ՆԻՒ
ԴՈՒՒ, ԻՆՁ ՈՁԻՆՁ ՓՈՁՅՈ Ի Օ.ՆԵՑԸՆԴ», որպէս վկայում
Պիրակոսը։

Երբ ներսէս վարդապետը վերադարձաւ և պատմեց ժողովական-
ներին՝ անցքի բոլոր որպիսութիւնը և Օ.աքարէի խօսքերը, նորա սև
նախանձով նախաձեռնին Մխիթարի պատուին և սկսեցին բամբա-
սել նորան և մեղադրել թէ՝ Օ.աքարէն նորա խրատով և ղրկմամբ
է բռնութեամբ վարվում նոցա հետ։ Իմանալով ժողովի այդպիսի
պատուհասը և մեղադրանքը՝ Մխիթարը «մեծագոր եղև առ զօրավարն
թէ՝ «չչեհառաչեաբ ած էր պարբ առնել ընդդեմ-ի էդբ». և ժողովին
հաղորդից թէ՝ «բառ հոգայ վան ազգիս, զի մի այդպիսի ոտվտռո-
ընեաք խառնեսցեն ընդ Վ.էբս (որովհետև հակառակորդները ասում էին
թէ՝ Սմ կանոնները ազգը կվնասեց վտանգների հետ և կկորչի)։—
Եւ ես հոգայ վան զբուսաւորէիք զի ոչ լեզի ոս վերսի ներս վերեսաց էոբ
(Իմանել) արտաք ոտաւեն Վ.էբ։ 60. Ընդ՝ ըն այսպէս է՝ ասպ զի ծեղա-
գրէբ էին, զի հրամանն առնի է խոտոզկեսաւն և է ընտգա-սրեն Լ.ետնի ատ-
նել ընդ՝ Ե ոչ ըն լսելի և ըն ած՝ ատ ած գտագրաբ յատնելը դեպը։

60. Այն ամարդի ձգտումն, որով վրացիքը մինչև այժմ աշխատում են ձեռքին ընկած միամիտ և ազգասէր հայերին խրեանց հաւատին դարձնել, ինչպես տեսնում ենք՝ դարաւոր հնութիւն ունի, և այդ ոգին յատուկ է առաւելապէս այն ազգերին, որը ընդունում են քաղկեդոնի ժողովը։

Ընդ՝ ջոջիքէ չնչաւանալէ քնախոխնա կ՚ծէ ալուզեղոցուէ զա՞ ին հառնել, գնել չնչելեցնաց ներոց և ի ոչնչաց. և մնք զպաշտօնն զոր հաճել գնել չնչելեցնաց ներոց և ի ոչնչաց. և մնք զպաշտօնն զոր

61. Ակրակաց, պատ. եր. 102։ Այսինքն մեր եկեղեցական հին սովորութիւնները և կարգերը չարունակենք պահպանել անփոփոխ։

Խաչատուր վարդապետի անունը 62, Լեւոնեան նոքա եթէ եւ ներկայ չէին նոյն պատասխանը գրելու ժամանակ։

Հասնելով խորին Ճերուսաեան և կանխատես զգալով իւր մահը՝ Ա՛խթարը կանչեց իւր մօտ նոր Գետիկոյ վանքի ժողովրդը, որը աշխատել էր նորա հետ միասին նոյն վանքի և եկեղեցու շինութեան վրայ, և օրհնեց նոցա։ Օրհնեց նա նմանապէս և՛ իւր աշակերտները և նոցանից մեկը՝ Ա՛արութրոս անուն՝ կարգեց իւրեանց տեղը վանահայր և առաջնորդ։ Հետայ կտակ գրեց Իվանէ Ընձայեցի անունով, ուր զի Չաքարէն արդէն վախճանուած էր, և յանձնեց նորան իւր վանքի և միաբանների խնամատարութիւնը։

Ա՛խթարը վախճանուեցաւ 1213 թուին, ինչպէս վկայում Կիրակոսը։ Թէպէտ յայտնի չէ նորա ծննդեան տարին և ուսումը, որ ժուռը է ձգտութեամբ օգնել թէ՝ քանի տարի տարիցաւ նա, բայց նայելով նորա կեանքի հանգամանքներին, կարելի է ասել, որ՝ նա հասաւ ութսունչորս Ճերուսաեան՝ 79-80 տարեկան կամ գուցէ աւելի և մեծ հասակին, մանաւանդ որ ինքն Կիրակոսը վկայում է թէ՝ ի ժամանակի Ճերու-Ընեան . . . շինեաց եկեղեցի մի։ և թէ՝ վերանիմ այս . . . եհաս ի կնքին Ճերու-Ընեանն, և գործեալ թէ՝ և ինքն փոխեցաւ յաւուրսն առ Քրիստոս ալելուիա։ և վ ա ռ ո ղ ք ։

Նոր Գետիկոյ վանքի միաբանութիւնը և Ա՛արութրոս վանահայրը մեծ սրտով և փառաւոր հանդիսով թաղեցին իւրեանց բազմերախտ և քրտնաջան հոգևոր հօր մարմինը այն փոքրիկ եկեղեցու գրան առաջև, որը ինքն Ա՛խթարն էր շինել յանուն Հոմրոմայեան իրրև շիրիմ իւր գերեզմանի վերայ, ինչպէս վերը յիշեցինք։ Կիրակոսը պատմում է թէ՝ «Եւ մինչև ցայսօր գերեզման նորա (Ա՛խթարի) օդնէ ցաւագնելոց, որք հաւատով ապաւինին յաղօթս նորա, և զհոգ տիզոյն հանապազ տանին ի պէտս հիւանդացս մարդոց և անասնոց, զի Աստուած գիտաւորիչ իւր փառաւորէ կենդանութեամբ և մահուամբ»։ Իրրև ապացոյց Ա՛խթարի սրբութեան՝ Կիրակոսը յառաջ է բերում հետևեալ պատմութիւնը։ «Դէպ եղև երբեմն զի պաշտօնեայք նորա գային գրաստաց բարձեալ

62. Նորա գրածն է ձեռագրի հարի հրաշալի երգը, որ առաջ են եկեղեցւ մէջ ս. Գաւթրգի տեղբաստ, երբ գեհառաւարվուժ ժամաբարը Երգի առների սկզբնատառերը յօգուտին հեղինակի անունը կազմացած։

զինի ի պէտս վանիցն, զբացի սմն Թասիլիա անուն նկուալ բռնութեամբ կամիր առնուլ ի նոցանէ ի գինւոյ անտի, պն զործակալ էր նա Իմանէի ի վերայ մոյրոյն՝ որ պահէր զանդի իջևանի նորա. և պաշտօնեայքն ասեն ցնա՝ մի նեղեր զվէղ, քանզի Պօշին ևմք . . . Իսկ թշուառականն անարգեաց զնոսա և զՊօշն հայհոյութեամբ. և իրեև եկին յայն տեղի որ յիշեր զանուն նորա Ձագանաք՝ անդէն վաղվաղակի համբացաւ և կապեցաւ լիզու նորա և այնպէս եկաց բազում աւուրս, մինչև հառաչանօք ինդրեաց թողութիւն. և ամենայն որ որ տեսանէր զայրն զովէին զնաւայն Աստուծոյ։

Մխիթարը հռչակից իւր անունը նաև իրեև նշանաւոր հիմնադիր, նա ունի գրած, ինչպէս վկայում է Պրակոսը, հետևեալ աշխատասիրութիւնները։

1. Ոգբ է վերայ բռնութիւնն է ընծայ Աբգարայ առ աղբիւր նորա և է ընծայ Նազար առ գոմէրս նորա։

2. Հայոցարքունիքն առգաբանութիւնն հառաջոյ ընդդէմ ածինայն հերձուածոցա— գրած Օմարաբէ և Իմանէ իշխանների ինդրանօք՝ ինչպէս ասում է Պրակոսը։

3. Մեկնութիւն մատթէոսեան Ենթենդիչ —համառօտ է։

4 Կանոն վան առաքառաքելոյ մարթոյ և աբեան Տէառն։

5. Կոչի 65։

6. Ընդէ։

7. Դատաստանագիրք։

Մխիթարի այս բոլոր երկասիրութիւններից մինչև այժմ, որչափ մեզ յայտնի է, տպուած են միայն Աղօթքները և Առակները 1790 և 1842 թ. Վենետիկում. Առակների աշխարհաբար թարգմանութիւնը ուրիշ առակների հետ միասին տպեց 1878 թուին Խորէն քահանայ Մխրզաբեկեանցը։

65. Պրակոսը թուելով մի առ մի Մխիթար Գօշի գրածը աշխատասիրութիւնները՝ չէ յիշում նորա Առակները. բայց գասմուիրեան հայերէն գրագրութեանց դրքի մէջ, եր. 566 ասած է՝ թէ «Հարիւր բնաւորի չափ առակներ ալ շարադրած է Մխիթար եւ իրաւամբ այս դժուարին արուեստին մէջ անուն ստացած ու Հայոց Եզովբոսը կոչուած». Նոյն առակ. Ները յիշում է և Ձամչեանը. Հին ձեռագրերի մէջ նոյնպէս պատահում են առակները Գօշի անունով։

Ի բոլոր վիրոյիշեալ գրուածքներն մէջ ամենանշանաւորն է թէ՛ քան իւր ժամանակն և թէ՛ մանաւանդ քան իւր բազմազանութեան ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ. սա մի հատ ծաղիկ է մեր մատենագրութեան մէջ, որը բուրում փոքր ի շատէ իրաւաբանական հոտ, սա մի հատ կերք է իրաւաբանական բազմազանութեամբ։ Մխիթարի մի հատ կերք է իրաւաբանական բազմազանութեամբ։ Մխիթարի Դատաստանագիրքը բաղկանում է երեք գլխաւոր մասներից — 1. Նախաբան-ից, 2. Եկեղեցական կանոնից և 3. Աշխարհական օրէնսդիր։

Դիանական կողմից նայելով՝ մեզ համար ամենից աւելի մեծ նշանակութիւն ունի Նախաբանը։ Նորա մէջ երևում մի կողմից՝ Գօշի մասնաւոր զարգացման ասպարէզը և դիտութիւնների չափը, միւս կողմից՝ նորա սեփական հայեացքը իրաւաբանական մի քանի գլխաւոր հարցերի վերայ։ Իսկ բուն Դատաստանագիրքը, այսինքն՝ նորա Առաջին, Երկրորդ կամ Եկեղեցական մասները ոչ այլ ինչ են, եթէ ոչ ժողովածու եկեղեցական և այլ տեսակ կանոնների և իրաւաբանական աւանդութիւնների։ Բայց մեր գիտական վարդապետը շատ ազնիւ և բարձր կէտից է նայում իւր աշխատութեան վերայ։ Նա ոչ միայն ձգտութեամբ ցոյց է տալիս իւր գլխաւոր աղբիւրները, ոչ միայն պարզ գաղափար իւր սեփական յաղուածները ուրիշ աղբիւրներից վերցրած կանոններից, այլ շատ անգամ բարեխիղճ անկեղծութեամբ յիշում որ՝ այս ինչ կամ այն ինչ կանոնը իւրը չէ։ Բայց ի սորանից՝ նա շատ լաւ հասկանում մի գատաստանագրքի կամ օրէնսդրքի նշանակութիւնը և նպատակը։ Նա լաւ գիտէ որ՝ գատաստանագիրքը յօրինվում ժողովրդի համար, որ՝ նա պիտի պարունակէ իւր մէջ ժողովրդի գաղափարը և հայեացքը իրաւաբանական յարաբերութեանց վերայ, որ՝ նա պիտի զարգանայ և կատարելագործուի ժողովրդի իրաւաբանական և ամհատական մասնաւոր զարգացման հետ միասին։ Այս պատճառով մեր իրաւաբան վարդապետը շատ տեղերում ներողամտութիւն է խնդրում իւր Դատաստանագրքի մէջ եղած պակասութեանց և թերութեանց համար՝ մանաւանդ իրեև առաջին փորձ, և իրաւունք տալի հետագնել նոցա և կատարելագործել Դատաստանագիրքը՝ միայն զգուշութեամբ և խոհեմութեամբ, ինչպէս ինքն ասում է՝ «առնել փոփոխութիւնք և քաջեհաճոյ փոփոխութիւնք»։ Իրաւական չէ այս՝ նա հասկանում է որ՝ յօրինել գա-

տասնամեակիը կամ օրէնսգիրքը մի ամբողջ ազգի համար ոչ թէ մի ժարդու գործ է, այլ վերաբարեան և ուսումնական մարդոց ժողովի. Նա ցանկանում կարվել մի այդպիսի ժողով ; բայց՝ ինչպես ինքն ասում՝ գործը չէ յաջողում շատ պատճառներով , վասն որոյ խնդրում որ՝ այդպիսի վարուիլ, այդպիսի միանական ժողով կազմին որ հնարաւոր կլինի այդ։

Ահա արդէն վերը յայտնեցի զրահանապէս իմ կարծիքս որ՝ միևչև Մխիթար Գօշը չկար նորա Դատաստանագրքի նման մի բան։ Գօշա մասին վկայում և ինքն Մխիթարը. իւր Նախաբանութեան Առաջին դլուխը յատուկ այդ բանով է սկսում նա։ Աստիկ վշտանալով այն յանդիմանութիւններից, որով թէ ինքևանք հայերը և թէ միանաւանդ մահմետականները ասում էին թէ՝ հայերը չունին օրէնսգիրք և դատաստանագրքը, և ցաւելով որ՝ յերբեմն այդ խոչ պատճառով քրիստոնեայ հայ ժողովուրդը սահպատած է դիմել այլազգիների, այսինքն՝ մահմետականների[61] դատարաններին, Մխիթարը ևս միտք է յղանում յօրինել մի դատաստանագիրք, բայց լսե հանահանալով այդպիսի ձեռնարկութեան մեծագոյն դժուարութիւնը, առաջ չէ վատահանում նա սկսել գործը։ Ուր թէպետ շատ խորը փերպով զրուած նա մի այդպիսի մեծ պատասխանան բոլոր նշանակութիւնը, այսինքն որ կայ օրէնսգիրք կամ դատաստանագիրք, բայց և այնպէս նա աշխատում միմանալ և նուազացնել այդպիսի նախատինքների բոլոր ծանրակշռութիւնը, ապացուցանելով նայն Ուռաջին դլխի մէջ թէ՝ հայերը իրրև քրիստոնեայ ազգ ունին իւրեանց օրէնքները Ս. Գրքի մէջ ։ Նա մատնացոյց է լինում նոցին պէս և բնական օրէնքի վերայ, որը յայտնի է ամեն մարդուն բնազդմամբ և չէ կարօտ գրաւոր սահմանադրութեան։ Նա յիշում և քրիստոնէական խղմնտանքը, որը գրաւոր օրէնքներից աւելի լաւ որոշում և գուցանում մարդուն նորա իրաւարանական յարաբերութիւնները ուրիշ մարդոց հետ։ Նա թոյլ է տալի նմանապէս և աւանդական իրաւունքի (droit coutumier, обычное право), այսինքն՝

61։ Այլազգի բառը թէ մի քանի հեղինակների գրուածքների և թէ մանաւանդ մեր ժողովրդի բերանում, առաւել ևս Տաճկաստանի և Պարսկաստանի հայերի բերանում, գործածվում այդ մտքով, այսինքն մահմետական բառի մեջով. (Տես և մեր յանօթութիւնը.)

ժողովրդի իրաւարանական սովորութիւնների կամ աւանդութիւնների գործածութիւնը, որը նախօրօք լինելով ամեն ինչից գրուած լինելուն, ուր այսպէս իրր մերժելով և ջնջելով վերոյիշեալ նախատինքները՝ Մխիթարը ինքն էս փոխադարձաբար նախատում նոցա, որը յատկապէս այդ պատճառով , այսինքն՝ օրէնսգիրքը կամ դատաստանագիրքը չունենալը պատճառաբանելով՝ նախապատուում մահմետական բռնակալների օրէնքները և դիմում նոցա դատաստանին ի գայթակղութիւն իւրեանց և ուրիշներին։

Որչափ և զոհացուցիչ պիտի հնարաւորէին մի կրօնաւոր մարդու, մի աստուածարան վարդապետի աչքին այդպիսի բացատրութիւնները, այնու ամենայնիւ Մխիթարը լաւ զգում, լաւ ճանաչում մի ընդհանուր օրէնսգրքի կամ դատաստանագրքի պահանջութիւնը և հարկաւորութիւնը, որով պիտի կառավարուէր ժողովուրդը, և ահա ձեռնում նա իւր մէջ մի երջանիկ միտք լցացնել այդ պակասութիւնը — յօրինել մի դատաստանագիրք։ Բայց որպես զի հակասութիւն չընծարուի իւր խօսքի և գործքի մէջ՝ նա սկսում ընդարձակօրէն բացատրել իւր Նախաղրութեան Երկրորդ դլխի մէջ այլևայլ խորհրդածութիւնները և հանդամանքները, որը յորդորելին և սահպեցին նորան ձեռք զարնել դատաստանագիրքը յօրինելու։ Մեծ գործին։ Իւր խորհրդածութիւնները Գօշը շարադասում սասն և երկու յօդուածով , և այդ թիւը բնաւրում է ոչ թէ պատահմամբ, այլ նմանութեամբ Խորհրդոյնների 12 նահապետներին Երբիատոսի 12 առաքեալներին և այլն, այլ և այն պատճառով — ասում նա — որ՝ Գիդեոնին (այսինքն՝ մահմետականները) հարմարում այդ թիւը երբև կատարեալ թիւ և թէ դա գոյանում եթե անզամ վեցից, իսկ աշխարհը Աստուած վեց օրում սահպեց, և այլն։ Այդ սասն և երկու խորհրդածութիւնները շատ հետաքրքրելի են, որովհետև գոյա մէջ ցոլում իւր Հայկու մէջ Մխիթարին ժամանակակից զրութիւնը Հայոց ազգին։ Երբ անի են ուշադրութեան նոցանից մանաւանդ հետևեալները։

3. Որովհետև տերում ընդհանուր նուլութիւնը, որով ոչ ոք չէ վարժվում ուսանել օրէնքները, մարդարէութիւնները և Աւետարանը, որպես զի կարողանան արդար դատաստան վարել ;

4. Որովհետև չկայ զիտութիւն, որով կարողանային փորձել և ընտրել դատաստանական օրէնքներ ուրիշ ազգերից և երկիրներից

6. Որովհետեւ վտա սովորութիւն է մեզ՝ երբուել ամէն չքնչին բանի համար [63]։

7. Որովհետեւ վեսաւակար է որ՝ քրիստոնեայները՝ չունենալով իւրեանցը՝ դիմեն այլազգիներուն (մահմետականներուն) դատաստաններուն։

8. Որովհետեւ եպիսկոպոսներից, վարդապետներից, քահանայներից, իշխաններից եւ պետական աշխարհականներից շատերը տգիտութեամբ եւ կաշառքով ծառայեն ուղիղ դատաստանը։ — Եւ այլն։

Եւ ահա այսպիսի եւ սոցա նման ծանրակշիռ խորհրդածութիւններից շարժուած՝ Մխիթարը վաղուց մտածուեր մի պատասխանագիրք յօրինել, բայց չէր վստահանում՝ աչքի առաջև ունենալով զանազան դժուարութիւնները։ Յայտնելով նաեւ ուրիշներին իւր այդ մեծ միտքը՝ ոմն Պօղոս — «Անչեղեալ աշակերտ» — Վրդ. — ինչպես ասում ինքն Վօշը, սկսց խնդրել նորանից եւ յորդորել որ՝ փութայ ի կատար ածէ իւր այդ գովելի խորհուրդը. բայց Մխիթարը միշտ բացատրում նորան եւ ուրիշներին և յանձնառու չէր լինում՝ պատճառելով իւր տգիտութիւնը եւ ախտրութիւնը, ինչպես ասում ինքն։ Նա մտադիր եղաւ խնդրել ուրիշ գիտնական վարդապետներից որ՝ նոքա կատարեն այդ մեծ գործը, բայց չէր վստահանում՝ վախենալով բացատրութիւն տուտալ, և յայտնում իւր զարմանքը թէ՝ ի՞նչպէս մինչև այդ ժամանակ ոչ ոք չէ մտածել այդպիսի հարկաւոր բանի վերայ։ Բայց և ինքն շատրում բացատրել այդ տարօրինակ և զարմանալի երեւոյթը, ասելով թէ կամ ժամանակ չկար և անյարմար էր, կամ հալածանքների պատճառով, կամ ոչ ոք չեղաւ խնդրող և գիտնականները ինքեանք չէին վստահանում վախենալով պարսաւանքներից, կամ հայերը օտար ազգերի իշխանութեան տակ լինելով՝ բաւականանում էին նոցա օրէնքներով և դատաստանով։ Ուրեր այսպիսի պատճառները կային՝ ինչպէս վկայում ինքն Մխիթարը՝ և՛ նոքա ժամանակ, բայց նա յաղթեց նոցա։

63. Մխիթարը այստեղ ի նկատի ունի՝ ոչ թէ խօսակցութեան մէջ մտած սովորութիւնը երդուելու խօսքերով, այլ դատաստանական երդումը, որով հին և միջին դարերում եւ ամեն տեղ վճռվում էին գրեթէ ամենայն տեսակ վէճերը։

Վ՚երջապէս՝ մի անգամ Մխիթար Վօշը հանդիպում Ընտանիից Առեփանոս Ր. կաթողիկոսին, որը խնամալով նորանից խոկ նոքա մեծ գիտաւորութիւնը՝ սկսում խնդրել և յորդորել որ՝ նա անպատճառ կատարէ իւր մտադրութիւնը։ Մխիթարը թէպէտ առաջ դարձեալ հրաժարվում այդ գործից՝ պատճառ բռնելով իւր տգիտութիւնը և ոգեւորութիւնը, այսինքն՝ անպատրաստ լինելը մի այդպիսի ծանր ձեռնարկութեան համար, ինչպէս ինքն ասում՝ «և ես պատճառեցի զանձինս տգիտութիւն և դժգիտութիւն», բայց երբ Առեփանոս կաթողիկոսը կրկնում և երեքկնում իւր յորդորանքը, այն ժամանակ նա վերջապէս յանձն է առնում՝ համարելով այդ իրրև մի հրաման հայրապետի, որից պատուէրներին պարտ է հնազանդվել, և իրրև մի անսրէնութիւն Աստուծոյ։

Ընդունում ուրեմն Մխիթարը, ինչպէս և մեր հին մատենագիրներից մեծագոյն մասը, յօրինում իւր Դատաստանագիրքը՝ բաց ի ուրիշ շարժառիթ պատճառներից՝ մանաւանդ Ընտանից Առեփանոս կաթողիկոսի խնդրով։ Եւ ինչպէս այդպիսի դէպքերում մեր հեղինակները սովորութիւն ունին գառնալ դէպի իւրեանց յորդորողը, դէպի իւրեանց Մկիթարը, կամ առանձին գլխով շարադրութեան սկզբում և կամ նոյն շարադրութեան մէջ գանագան անգիրում, նոյնպէս և մեր Վօշը գառնում դէպի իւր Մկիթարս Առեփանոս կաթողիկոսը իւր Նախաբանութեան Երրորդ գլխի մէջ, որը սկսում այսպէս՝ «Ընդէ՞ր ջնջեալ պատուական ձեր-նիւթ նկիւեցեալ գանո Ընտանիդ, ի՛ վայրապար և ընդունա գործ հոմարիչ գնգիտալոյ հարկ, ընդ նիւթ է վերայ ն՞ . . . »։ Մենք և օրհնութեամբ և երախտագիտական զգացմամբ յիշենք երանելի հայրապետի անունը, որ պատճառ եղաւ պարզելու հայկական մատենագրութեան այս անգին գանձը։

Ինչպէս սովորութիւն ունին դիտնական հեղինակները՝ Մխիթարը ցոյց է տալի Նախաբանութեան Տասներորդ գլխի մէջ այն աղբիւրները, ուսած նա նիւթ է քաղել իւր Դատաստանագրքի համար։ Ի հարկի մի մատնաւոր մտրդ՝ առանց քաղաքական իշխանութեան, օրպիսի էր մեր Մխիթարը, կամենալով յօրինել մի այնպիսի օրէնսգիրք, որը ունենար գործադրութիւն ժողովրդի կեանքի մէջ, չէր կարող իւր գլխից շարադրել իւր Դատաստանագիրքը, այլ պիտք է կազմէր զայն ժողովելով միասին հին թագաւորական օրէնքները,

ժողովրդի իրաւաբանական աւանդութիւնները, ուրիշ ազգերի օրէնքներից առած յարմարաւոր յօդուածները, և աւելացնելով ազգի ոգուն և ժամանակի պահանջման համապատասխան փոփոխութիւնները՝ տալ նոցա բոլորին մի կատարեալ ամբողջութիւն։ Այսպէս իսկ վարվում և մեր գիտնական Մխիթարը և ապացուցած ասում է նոյն Տաճկերգրգ գլխի մէջ այսպէս՝ «Հանդերձեալ մեր գրով դրօշմել զիրս դատաստանի՝ պարտ է ցուցանել թէ՝ յո՞րոց գրոց կամ յո՞րոց ազգաց հաւաքեմք զսա, զի ձշմարտութիւնն յայտնեսցի և ոչ ոք գայլակղեսցի ըն ձե դեղվե ֆաացաֆն ֆռնիօ գիքմե գաա»։

Իբրև նոր և առաջին գործ՝ Գօշը պէտք է անշուշտ մեծամեծ դժուարութիւնների հանդիպէր մանաւանդ ազգիւրնիր գանելու կողմից։ Ժողովրդի ձեռքին չէր երևում օրէնդիրք կամ դատաստանագիրք, թագաւորանիստ մայրաքաղաքները բազմաթիւ էին և այդ շատ վնասումէր պետական կառավարութեան վերաբերեալ գրութիւնները ամփոփ կերպով պահպանելուն որոշ և հաստատ դիւաններում (արխիվ)։ Մխիթարի ժամանակներում արաբների և Թաթարների անընդհատ արշաւանքներից Հայաստանի մէջ գրեթէ քար քարի վերայ չէր մնացել—բոլոր քաղաքները քանդած, սրած, աւերակ գարձրած, որոց հետ ի հարկէ և արքունի պալատները և դիւանները։ Վ՞ան որոյ Մխիթարը չէր կարող գանել իւր Դատաստանագրքի համար զուտ իրաւաբանական գրաւոր աղբիւրներ. և ահա նա գանգատվում իւր Հիշատակարանի մէջ աղբիւրների աղքատութեան վերայ ասելով «և զպէտսն ֆռնիօ հաֆէնիչ յորոց գնիօ գիքո հռաֆէլ է գէկ էր ֆռնիչ»։ Այս պէտք էր բառականաւար ժողովրդի մէջ մնացած իրաւաբանական աւանդութիւններով և ինչ ինչ քաղուածքներով երիորդական աղբիւրներից, զորօրինակ՝ Ս. Գրքից, եկեղեցական կանոններից, և այլն։ Այս յիրաւի այն աղբիւրների մէջ, որը Գօշը թվում մի առ մի Նախագրութեան Տաճկերգրդ գլխում՝ մենք չենք տեսնում ոչ մի զուտ իրաւաբանական աղբիւր, որ պարունակէր իւր մէջ ազգային հին օրէնքներ կամ օրէնքի զօրութիւն ունեցող հրովարտակներ և այլ գրաւոր կարգադրութիւններ թագաւորների և նախարարների,

Մխիթարի աղբիւրները սորա են.

1. Ընական կամ բնաւորական օրէնքներ.

2. Օրէնքներ, կամ լաւ ասել՝ իրաւաբանական աւանդութիւններ քրիստոնեայ ազգերի.

3. Մահմետական օրէնքներ.

4. Հին և Նոր Կտակարան, բայց մանաւանդ Գիրք Ծննդոց, Երկրորդ Օրինաց, Դատաւորաց և այլն.

5. Կանոններ Հայոց ժողովներով հաստատած և կամ Հայոց Եկեղեցու կողմից ընդունած։

Ահա այս ցուցակի մէջ մենք չենք տեսնում բուն հայկական աղբիւրը թէ զրաւոր և թէ աւանդական, Ինչ որ վերաբերվում հայկական զրաւոր աղբիւրներին՝ մենք արդէն յայտնեցինք մեր կարծիքը՝ թէ չկային նոքա իբրև մի ամփոփ ժողովածու. բայց Մխիթարը՝ ինչպես երևում՝ չէ գտել մինչև անգամ առանձին հատուածներ, զորօրինակ՝ Թագաւորական հրովարտակներ, նախարարների զրաւոր կարգադրութիւններ, և այլն. ես ասում՝ չէ գտել, որովհետև ժամանակ է կարծել որ՝ Գօշը որոնած չլինէր նոցա։ Նա այդ մեծ թերութիւնը նա աշխատել է լրացնել եկեղեցական կանոններով՝ առատօրէն նրանք քաղելով նոցանից։ Իսկ ինչ վերաբերվում ազգային իրաւաբանական աւանդութիւններին՝ թէպէտ Մխիթարը չէ յիշում և այդ տեսակ ազբիւրը, բայց նա չէր կարող առանց ուշադրութեան թողնել դորան. նրանք հարկաւոր և օգտակար համարեց մի քանի բաներ քաղել ուրիշ քրիստոնեայ ազգերի իրաւաբանական աւանդութիւններից, մահմետական և հրէական զրաւոր օրէնքներից, ինչպես կարող էր առանց ուշադրութեան թողնել այն ազգի իրաւաբանական աւանդութիւնները, որոյ համար նա զրում իւր Դատաստանագիրքը։ Այս թէ արդարև նա օգտակար նրանք է քաղել նաև ժողովրդի մէջ եղած իրաւաբանական աւանդութիւններից՝ այդ պարզ երևում ամբողջ Դատաստանագրքի մէջ և մանաւանդ նորա Երկրորդ մասնում, ուր ամփոփուած են առաւելապես աշխարհական օրէնքները։ Վ՞երջապէս՝ ինչն Մխիթարը մի քանի տող բացայայտ կերպով վկայում թէ՝ ի նկատի է ունեցել և ազգային իրաւաբանական աւանդութիւնները. զորօրինակ՝ Առա-

ջին մասնի 109 կանոնի մէջ [66], ուր խօսուէ ազգականներէ ամուսնութեան չհաստատեան վերայ, նա ասուէ՝ «Մէ թէ ունէի յաղագս այգոցիկ այլ ինչ ըսա անօրէնութեան գնել մտաց՝ ոչ կամեցայ զի մի՛ ընդդէմ ինչ կարծիցիմ կանոնաց, այլ որ ոչ թոյլ ի կանոնաց՝ ՚ի կենդանի առաւ յայնէ»։ Իսկ Երկրորդ մասնի առաջին յօդուածի մէջ բացատրելով թէ՝ ի՞նչպէս պէտք է բաժանել պատերազմուէ ժողոված աւարը, նա ասուէ է՝ «զայս ըսա առնելոցն-ընեան առացուք, զի ոչ է հրաման ի Գրոց»։

Հարկաւոր է առանձին ուշադրութիւնը դարձնել վերոյհիշեալ յուշակի մէջ յիշած երկրորդ պղիւրի վերայ։ Մխիթարը ասուէ՝ «Երկրորդ՝ առնուք յամենայն ազգաց քրիստոնէից իրրև ի հարազատ եղբարց, զի լաւ է եւ պեղաւ ՚ի նոսա քարոզ քրիստոսական, հաւաքեմք ի գիրս»։ Այս խօսքերով հեղինակը կամենուէ ասել թէ՝ նա քաղել է նիւթ նաև զանազան քրիստոնեայ ազգերի իրաւաբանական աւանդութիւններից, բայց՝ ոչ ազգից — նա չէ յիշում այդ ոչ մի տեղ։ Հաւանաբար է՝ Նախագրութեան Վերջերորդ պլխի մէջ խօսելով դատաւորների թուոյ վերայ՝ նա յիշուէ Հռոմայեցիներին, Յոյներին եւ Վրացիներին, բայց նորա Դատաստանագրքի մէջ, ինչպէս յետոյ էլ ցոյց կտանք, ոչինչ չկայ փոխառած այդ ազգերի աշխարհական օրէնքներից կամ իրաւաբանական աւանդութիւններից. իսկ այստեղ կասենք որ՝ Գօշը իւր Դատաստանագրքի Առաջին մասնի կանոններից եւ սակաւ ինչ նաև Երկրորդ մասնի յօդուածներից խիստ շատերը վերցրել է Յոյների այն եկեղեցական կանոններից, որը ընդունել է մեր Եկեղեցին, այլև Ս. Բարսեղ Կեսարացու կանոններից, ինչպես իւրաքանչիւր անդամ ցոյց տուած ունինք ծանօթութիւններով ներկայ տպագրութեան մէջ։

Վերջապէս՝ իւր Յիշատակարանի մէջ, որ Նախագրութեան Մեստանները պլուին է, Մխիթարը մանրամասնաբար պատմուէ թէ երբ եւ ո՞րտեղ է գրել իւր Դատաստանագիրքը։ Նա որոշա-

66. Կանոն կոչուէում՝ առաջին մասնի յօդուածները, որովհետև գրքա քաղուած են եկեղեցական կանոններից և վերաբերվում են առաւելապես եկեղեցական գործերին. իսկ յօդուած կոչուէում երկրորդ մասնի յօդուածները, որովհետև գրքա կազմած են աւելի իրաւաբանական աւանդութիւններից և վերաբերվում են աշխարհական գործերին։

պէս ասուէ թէ սկսել է իւր մեծ գործը Հայկեան ՈԼԳ (633) թուականին որ հաւասար է 1184 թ.։ Այդ ժամանակ նա աւարտել է միայն Նախաղրութիւնը, և չկամենալով թէ ե՞րբ կ՚յաջողի աւարտել բոլոր Դատաստանագիրքը՝ նա ասուէ է. «Թէպէտ գնդ-ընեան (Յիշատակարան) է Նախագրութիւնս գրոցս գտանիցի եւ ՚ի վաղ ԿԸՏԸՐԸՆ ՍՈՐԸ Ի ՉԵՒԱՑ ՄԵՐ ՄԻՆՉԳԻԱՄԵՑՆ ՈՉ Ի. . . . Եւ այդ՝ ոչ է կար է գրոյդ անկանիլ ՀԻՒՄԵԼ ՕՎՏԻ գէջս գտանիցի»։ Այս խօսքերից պարզ երևուէ որ Մխիթարը գրել է իւր Դատաստանագիրքը ոչ թէ կանխապէս ժողովելով և պատրաստելով բոլոր ազգերի բնեթերը և ապա մարթողութիւն տալով նոցա միանգամից, այլ որոշելով յօրինել մի դատաստանագիրք՝ նա գրել է նախ իւր Նախագրութիւնը ամբողջապէս, իսկ Դատաստանագիրքը կազմել է յետոյ՝ ժողովելով հետզհետէ ձեռքին ընկած նիւթերը։ Այս հաստատուէում և նորանով որ՝ մինչև Նախագրութիւնը ունի կանոնաւոր շարադարութիւն և ամբողջութիւն, Դատաստանագիրքը թէպէտև բաժանուած է երկու պլսաւոր մասն՝ Եկեղեցական և Աշխարհական, բայց չունի կանոնաւոր դասաւորութիւն, ինչպէս կըրացատրեմ փոքր ինչ յետոյ։ Իսկ գալով թուականին թէ ե՞րբ աւարտեց Գօշը իւր Դատաստանագիրքը՝ այդ չէ երևուէում ոչ Յիշատակարանից և ոչ Դատաստանագրքից, բայց որովհետև հաստատ կերպով յայտնի է որ՝ նա վախճանուեցաւ 1213 թուին, ուրեմն այդ միջոցներին նա պէտք է աւարտած լինէր իւր աշխատասիրութիւնը։ Սակայն՝ նայելով Դատաստանագրքի ներկայ դրութեան վերայ, որտ մէջ ոչ Առաջին մասն և ոչ Երկրորդ մասն չունին մի ամփոփ ամբողջութիւն և վերջաւորութիւն, ես կարծուէում որ՝ այդ Դատաստանագիրքը չէ բոլորովին վերջացրած, և Մխիթարը հարստացնուէր նորան մինչև իւր մահը գրեթէ 25 — 30 տարու ընթացքում, և եթէ աւելի տպրէր՝ գործ ձեռք կշարունակէր աւելացնել նորա մէջ նորանոր յօդուածներ։

Նայն Յիշատակարանի մէջ Մխիթարը ցոյց է տալի և այն տեղը, ուր սկսել է իւր Դատաստանագիրքը կամ լաւ ասել՝ Նախաղրութիւնը. նա ասուէ՝ «Յաշխարհն Լոռանայ, ՚ի նահանգին որ կոչի Տայրաւազան Գառնոյ, յամենապատ եւ յեղբայրական անհատանել Վահանայ, ԱՆՕՐՆԱՒԻՒՐԵԱՆ ՚ի վերահոգն գնառատ՚ն կոչեցեալ Հոռոմա-

ձէն, ընդ հովանեաւ ոչխոյ եղէալ էաւտաւոռանաց յիւղեցաւ։ Այս խօսքերից երևում է, որ՝ Մխիթարը սկսել է գրել իւր Դատաստանագիրքը ոչ թէ Վեհակայ վանքի մէջ, այլ Հոռոմկլէն վանքում. երևի թէ այդտեղ իսկ նա հանդիպեցաւ Սահմանաւոյ կաթողիկոսին և ընդունելով նորա յորդորանքը՝ գրեց իւր Նախադրութիւնը։ Այս նախադրութիւնը աւելի հաւանականութիւն է տանում երկ ուշ դարձնենք Սիրակոսի այն խօսքերի վերայ, ուր նա ասում է՝ Նոր Վեհակայ վանքի մեծ եկեղեցու շինութիւնը Մխիթարը աւարտեց Հայոց ՈՒԽ (640) թուին, այսինքն՝ 1191 թ., այն է՝ Դատաստանագիրքը սկսելուց ութը տարի յետոյ. ուրեմն Դատաստանագիրքը սկսելու ժամանակ Հին Վեհակայ վանքը երևի արդէն աւերակ էր, իսկ Նոր Վեհակայ վանքը դեռ չէր հաստատուած և Մխիթարը թերևս առժամանակ ապրում էր Հոռոմոց կամ Հոռոմկլէն վանքի մէջ։

Այդ Ձիշատակարանից երևում է որ՝ Մխիթարին օգնել են երկու անձինք՝ հայր Յովսէփ և եղբայր Պօղոս։ Երկրի Նախադրութեան երկրորդ գլխից մենք իմացանք որ՝ այս Պօղոսը աշակերտ էր Մխիթարի և դեռ Սահմանաւոյ կաթողիկոսից առաջ սկսել էր ինդրել և յորդորել նորան որ՝ յօրինէ դատաստանագիրքը։ Իսկ թէ ո՛վ էր Յովսէփը՝ այդ չէ յայտնի, և Սիրակոսը չէ յիշում այդպիսի ոմն. այսքանս միայն կարելի է նկատել որ՝ նայելով նորա հայր մականուան վերայ՝ Յովսէփը պէտք է որ՝ քահանայ լինէր և կամ՝ որ աւելի հաւանական է՝ վարդապետ և միաբան Հոռոմկլէն կամ Նոր Վեհակ վանքի, իսկ Պօղոսը՝ նայելով նորա էղբայր մականուան վերայ՝ երևի թէ էր սարկաւագ կամ պարզ միաբան վանքի և դեռևս աշակերտութիւն անող։ Դարձ ի սորանից՝ Մխիթարի խօսքերից երևում է որ՝ հայր Յովսէփը օգնել է նորան նիւթաւորապէս՝ կամ ապրուստի կողմից, կամ ազրիւրներ գտնելով և տալով, և կամ թուղթ և այլ պարագաներ հասցնելով, որոց մէջ Մխիթարը մեծ պահանջութիւն է կրելիս եղել, ինչպէս ինքն վկայում է՝ «ի պակասութենէ՝ գրչեցաւ գիմարքս»։ Իսկ Պօղոսը օգնել է նորան միայն բարոյական կողմից խնդրելով և յորդորելով անդադար։ Եւ մեր այս կարծիքը հիմնում ենք Հօր հետևեալ խօսքերի վերայ՝ «Ընդառաջեցաւ հօր Յովսէփայ, և եղբօր Պաւղոսի յորդորմանէ յառաջարկութենէս»։

Վերջապէս՝ Ձիշատակարանի մէջ արժանի են ուշադրութեան Մխիթարի և հետևեալ խօսքերը. «Ապա եթէ ընդ՞է ոգեղէն եղբա՛ք սխալանացս լինիցիք պարսաւիչ և ոչ ուղղիչ, գիւրավրէ գոչեցէք հայկազեայդ ղայդոսիկ, միանգամայն զչափ անձին (իմոյ) անվկայիր ձեզ այդոցիկ լինիմք»։ Մեր Հայոց ազգի մէջ նշմարած մի քանի վատ յատկութիւնները, որոց մասին յիշումեն և մեր ուրիշ մատենագիրները զանազան ժամանակ, ընդարձակ են նորան։ Եւ որպիսի վհատութիւն, որպիսի քրիստոնէական միտք զգացմունք Մխիթարի մէջ—նա խնդրում իւր Դատաստանագրքի ամեն կարդացողից ուղղել նորա մէջ նկատած թերութիւնները, իսկ պարսաւողներին և բամբասողներին յայտնում միանգամ ընդմիշտ որ՝ անվերադրիչ կը լինի նոցա։

Մխիթարի Դատաստանագիրքը նշանաւոր է ոչ միայն իրեև իրաւաբանական գրուածք, այլև ուրիշ կողմից. մեր մատենագրութեան մէջ շատ քիչ գիրք կայ, որ ունենար այնպիսի ընդարձակ գործնական նշանակութիւն և գործածութիւն, որպիսի ունեցել է այդ Դատաստանագիրքը թէ ժողովրդի և թէ Եկեղեցու մէջ։ Սորա հաստատութիւնն էնախ այն որ՝ խիստ շատ օրինակներ կան գրուած զանազան տեղերում. միայն մեր մայր Էջմիածնի հռչակաւոր մատենադարանի մէջ ունինք վից—եօթը օրինակ, Փարիզի Ազգային մատենադարանում ևս տեսայ չորս օրինակ, նոյնպէս տեսայ մի օրինակ Վենետկի Մխիթարեանների Ս. Ղազարու վանքի գրադարանի մէջ, բայց այնտեղ կայ բոլորը միասին 12 օրինակ. մի օրինակ Վիեննայի Մխիթարեանների գրադարանի մէջ, մի օրինակ կայ Մոսկուայի Լազարեան Հնութեան մատենադարանի մէջ, և այլն։ Երկրորդ ապացոյցը այն է որ՝ ինչպէս երևում՝ այս Դատաստանագիրքը պարունակելով իւր մէջ շատ եկեղեցական կանոններ՝ գործածութիւն է ունեցել ազգային եկեղեցական դիւանատներում և առաջնորդ եպիսկոպոսների ձեռքին, մանաւանդ ամենական չհաստատեան և մի քանի այլ քաղաքական խնդիրների մասին։

Այսպէս գործերինակ Էջմիածնայ Սիւնեաց մէջ, որպէս և սորա հաստատութիւնից առաջ հին Հայրապետական Սիւնհոդոսի մէջ, գործածութիւն է ունեցել և ունի ցարդ մի մեծագիրք և հարուստ Կանոնագիրքը, որոյ մէջ կայ նաև Գօշի ամբողջ Դատաստանագիրքը։

քը։ Սորա գործածութիւնը կարծեմ բառականին տարածուած պէտք է լինի նաև Տաճկաստանում և տեղւոյն առաջնորդների ձեռքին, որովհետև երջանկայիշատակ Մատթէոս կաթողիկոսը աւանդաբար շատ յարգում էր այս Վառապատանագիրքը և մեծ հեղինակութիւն էր տալիս սորան՝ մանաւանդ ամուսնական ծիւրգարութեան և չհաստութեան գործերի վերաբերմամբ, սորա յօդուածների վերայ հիմնելով այդպիսի գործերի վճիռները։

Մխիթարի Վառապատանագրքի արտաքին գործնական նշանակութիւնը ժողովրդի կեանքի մէջ իրև ազգային օրէնսդիրը մենք արդէն ցուցինք և հաստատեցինք վերը. մենք տեսանք որ՝ Լեհաստանի հայերի ազգային օրէնքները հանված էին սորանից, որ՝ սորա թարգմանութիւնը ցոյց է տալի սորա գործածութիւնը Վրաստան հայերի մէջ, որ՝ սա Ամբաս Սպարապետի թարգմանութեամբ մտաւ Ախլխիայի մէջ իրև ազգային օրէնսգիրք։ Ոչ այլ ևս ևս դրական գործածութիւն ունեցաւ անշուշտ Մխիթարի Վառապատանագիրքը բուն իսկ Հայաստանում, կամ գոնեա նորա միքանի նահանգներում, մանաւանդ Կաչէն գաւառում։ Վերջինս վերաբերմամբ այս ենթադրութիւնը հաստատվում է Վենետիկի օրինակի հետևեալ փոքրիկ Յիշատակարանով. «Տէր Ստեփաննոս տայէ ապստաձատիկը և բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանգայ որդւոյ Հասանայ ի կամս իւր զդիրքս դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին»։

Բառական չէ այս, Դօշի Վառապատանագիրքը ազդեցութիւն ունեցաւ մինչև անգամ Վրաստանի պետական օրէնսդրութեան վերայ և իւր նշանաւոր մասնով գործադրութիւն ստացաւ իրև ժողովրդական օրէնսգիրք։ Ինչպէս յայտնի է Վրաստանի, կամ աւելի ճիշտն ասել՝ Քարթալինիայի Թագաւորը Վախթանգ Ը. յօրինեց վերջերին լեզուով 18-րդ դարու սկզբներում մի ընդարձակ օրէնսգիրք, որ կոչվում է Սամարլիս Ծիգնի Վախտանգ Մէֆէոս (Համարտլոն Ցոցնօ Յախտանգ Մեցիսա), այսինքն՝ Վառապատանի գիրք (կամ Վառապատանագիրք) Վախթանգ Թագաւորի։ Այս վերջերին Վառապատանագիրքը բազմանում, եօթը մասից կամ բաժանմունքից, որոյ երրորդ մասը կազմուած է Հայոց օրէնքներից։ Ամենայով մի կողմից՝ աւելի շատ նիւթեր ունենալ ձեռքի տակ, միւս կողմից՝ այլ

Վրաստանի մէջ բնակուող բազմաթիւ հայերին, նոցա կեանքին և սովորութիւններին յարմար օրէնքներ՝ Վախթանգ Թագաւորը խնդրից Էջմիածնից Հայոց օրէնքներ, և Թարգմանել տալով վերացրէն մուծից նոցա իւր Սամարլիս Ծիգնի գատաստանագրքի մէջ իրև առանձին ամբողջ երրորդ մաս[67]։ Ահա այդ նորա հայկական օրէնքները նոյնպէս քաղուած են մեր Մխիթար Դօշի Վառապատանագրքից, Փարիզի ազգային Մատենադարանի մէջ ես տեսայ մի մաքուր, ընտիր օրինակ Վախթանգի Վառապատանագրքի. այդ ձեռագիրը չունէր յիշատակարան ոչ սկզբից և ոչ վերջից, միայն սկզբում կար Ֆրանսերէն լեզուով երկու տող ծանօթութիւն, որից երևում էր՝ նոյն ձեռագիրը նուիրել է Ընքունի Մատենադարանին Թիֆլիսի Ֆրանսիայի հիւպատոսը Դամբա 1825 թ. և թէ ընդօրինակած է Թիֆլիսում 1823 թուին։ Ահա այս վերացրէն Վառապատանագրքի Յառաջաբանութեան մէջ ես կարդացի որ՝ Հայոց օրէնքների Թարգմանութիւնը արած է Հայոց Վառապատանագրքից. նոյնը ասած է և երրորդ բաժանմունքի կամ Հայոց օրէնքների սկզբում գրած խիստ համառօտ ծանօթութեան մէջ։ Հայկական օրէնքները բազկանում են 130 յօդուածից. իրև նախադուռն կամ յառաջաբան՝ նոցա սկզբում գրած է Մխիթարի Վառապատանագրքի հայերին բնագրի վերջում եղած հռոմէական օրէնքներից յօդուածներից առաջինը թեթև փոփոխութիւններով սկզբում, և այդ փոփոխութիւնները կամ յաւելուածները քաղուած են Մխիթարի Նախադրութեան Առաջին և Տասներորդ գլուխներից։ Ցետոյ գրած են նոյն հռոմէական — բիւզանդական օրէնքներից 150 յօդուած, ուր մի քանիսը յետ ու առաջ են դասաւորած, ոմանք պակաս են, ոմանք բաժանած են երկու և ոմանք ընդհակառակն երկուսից միաւորուած են իրև մի յօդուած։ Ապա գրած է Մխիթարի բուն Վառապատանագիրքը 280 յօդուած բաժանած, որք չեն բառացի ձիշտ թարգմանութիւն, այլ երբեմն համառօտած են երբեմն փոփոխած, երբեմն երկու յօդուածը միացրած, և երբեմն միայն մի քանի տող վերցրած,

67. Տես վերացրէն լեզուով ქართული ძრისტომატია կամ Грузинская хрестоматія (Ընտիր ասացուածք) Զուբիևովի, մասն առաջին, Ցառաջաբանութիւն, եր XII։

ինչպէս զորօրինակ՝ Առաջին մասնի կրօնով ընդարձակ կանոնից թարգմանած է միայն մի և կէս տող։ Ետքն սորանից Առաջին մասնից բոլորովին չեն թարգմանած Լ՚Ը., Լ՚Թ., Ա՚Ի., Ա՚ԺՊ., Ա՚ԻԸ., Ա՚ԻՐ., Ա՚ԻՊ., կանոնները։ Իսկ Երկրորդ մասնի առաջին և շատ ընդարձակ յօդուածը վերացրէն թարգմանութեան մէջ բաժանուած է 28 յօդուածի։ Միւս կողմից՝ վերացրէն թարգմանութեան 151-րդ յօդուածի սկիզբը (որպիսի յօդուածը է իրրև առաջին յօդուած Անթիմոսի բուն Դատաստանագրքից թարգմանած յօդուածների) է համառօտ թարգմանութիւն Անթիմոսի Դատաստանագրքի Առաջին մասնի առաջին կանոնից։ բայց նորա վերջը, որը խօսում է կախաղանի մասին, թագման և նոր կախաղանի ընտրութեան մասին, չկայ ամենևին Հայերէն Դատաստանագրքի մէջ, և ինչպէս երևում՝ ուղղացրած է ինքն Վ. Ախթամար Թագաւորը։ Վ. Երջանկաց՝ Հայոց օրէնքների թարգմանողը, ինչպէս երևում, աւելի հմուտ չէ եղել Հայերէն լեզուին, որովհետև շատ բառեր չէ հասկացել և թարգմանել է բոլորովին սխալ կերպով, զորօրինակ՝ եղէնբռաս թարգմանած է եղէնվոպս, և այլն [68]։

68. Ճանկացողների համար գնում եմ այստեղ Մխիթարի բուն Դատաստանագրքից թարգմանած վերացրէն յօդուածների և Հայերէն կանոնների բաղդատական ցանկը. աստղանիշ (*) յօդուածները Մխիթարի Երկրորդ մասնից են հանած, իսկ մնացեալները Առաջին մասնից։ վերացրէնի մէջ համարները գրած են նոյնպէս տառերով, իսկ ես գրի համահամարներով դիւրութեան համար։

151—Ա.	165—ԺԳ *	179—Ի.*	195—Իլ.	207—ԻԳ.*	224—Լի *
152—Ա.*	166—ԺԵ.*	180—ԻԱ.*	194—ԻԸ.	208—ԻԳ.*	222—ԼԸ.*
153—Բ.	167—ԺԶ.*	181—Ժ.*	195—ԻՓ.	209—ԻԵ.*	225—ԼՓ.*
154—Գ.	168—ԺԷ.*	182—ԺԱ.*	196—Լ.	210—ԻԶ.*	224—Ա.*
155—Դ.	169—ԺԸ.*	183—ԺՓ.*	197—ԼԲ.	211—ԻԷ.*	225—Լ.Ե.
156—Ե.*	170—Ը.*	184—ԺԳ.*	198—ԼԱ.	212—ԻԸ.*	226—ՄԱ.*
157—Զ.*	171—Թ.*	185—ԺԴ *	199—ԺԷ.*	215—ԻՓ.*	227—ՄԲ *
158—Է.*	172—Ժ *	186—ԻԲ.	200—ԺԸ.*	214—Լ.*	228—ՄԳ.*
159—Ը.*	173—Ի *	187—ԺԵ.*	201—ԼԳ.	215—ԼԱ.*	229—ՄԴ.*
160—Թ.*	174—Զ *	188—ԺԶ.*	202—ԺԲ.*	216—ԼԲ.*	230—ՄԵ *
161—Ժ.*	175—Է.*	189—ԻԴ.	205—ԼԶ.	217—ԼԳ.*	251—(1)
162—ԺԱ.*	176—Ը.*	190—ԻԳ.	204—Ի.*	218—ԼԴ.*	212—ՄԶ.*
165—ԺԲ *	177—Թ.*	191—ԻԵ.	205—ԻԱ.*	219—ԼԵ.*	255—ՄԷ *
164—ԺԳ.*	178—ԺԹ.*	192—ԻԶ.	206—ԻԲ.*	220—ԼԶ.*	254—ՄԸ.*

(1) 231 յօդուածը նման է ԼԶ.

Վ. Ախթամար Թագաւորի վերացրէն Դատաստանագրքերը և մանաւանդ նորա քաղաքացիական իրաւունքների մասը այսինքն ընտանեկան, ժառանգական, կալուածական, առևտրական և այլն իրաւունքներին վերաբերեալ օրէնքները, հետևաբար և Անթիմոսի Դատաստանագրքից հանած յօդուածները շատ բան օրինքի զօրութիւն և գործադրութիւն ունէին Վ. Յովսեփի մէջ էլ Վ. Յոց Թագաւորութեան ժամանակ և էլ Ռուսաց տիրապետութեան սկզբին բաւական երկար ժամանակ։ Ընդհանուր Երեսփոխանական ժողովի՝ Հրամայուած էր որ Վ. Յովսեփի տեղական դատարաններում քա-

253—ԽԲ.*	269—ՀԸ.*	302—ԿԳ.	336—ՃԳ.*	370—ՃՃԱ*	405—	Առաջին յօդ.
256—Ւ *	270—ՀԹ.*	307—ԿԴ.	337—ՃԶ.	371—ՃՃԲ*	404—	
257—Լ.Ի.	271—Ձ.*	304—ՂԲ.*	338—ՃԸ.	372—ՃՃԳ*	405—	
258—Լ.Ը.	272—ՄԳ.*	305—ՂԳ.*	339—ՃԸ.*	373—ՃՃԴ	406—	
259—ՄԱ.*	273—ՁՈ *	306—ԿԵ.	340—Ձ.*	374—յԲ.	407—	
240—ՄԲ.*	274—ՁԲ.*	307—ԿԶ.	341—Ղ.*	375—ՃԴԳ.	408—	
241—ՄԳ *	275—ՁԳ.*	308—ԿԷ.	342—ՂՈ.*	376—ՃԴԴ.*	409—	Երկրորդ մասնից
242—յԲ.	276—ՁԴ *	309—ԿԸ.	345—ՂԲ.	377—ՃԴԵ*	410—	
245—ՄԴ.*	277—ՁԵ *	310—ԿԹ.	344—ՃԳ.*	378—ՃԴԶ.	411—	
244—ՄԵ.*	278—ՁԶ *	311—Հ.	345—ՂԳ.*	379—ՃԴԷ.	412—	
245—ՄԶ.*	279—ՁԷ.*	312—ՀԱ.	346—Ղ.*	380—ՃԴԸ.*	415—	
246—ՄԷ.*	280—ՁԸ.*	313—ՀԲ.	347—ՂԵ.*	381—ՃԴԹ *	414—	
247—ՄԸ.*	281—ՁԹ.*	314—ՀԳ.	348—ՂԶ.	382—ՃԵԸ*		
248—ՄԹ.*	282—Ղ.*	315—ՀԴ.	349—ՂԷ.	385—ՃԵԹ.*	413—	Առաջին յօդուածից
249—Ն.*	283—ԽԳ*	316—ՀԵ.*	350—ՂԸ.	384—ՃԶ*	416—	
250—ԿԱ.*	ՂԱ.*	317—ՀԶ.*	351—ՂԹ.	385—ՃԸԱ*	417—	
251— ԿԲ *	284—ԽԵ	318—)* ՀԸ.	352—Ճ.	386—ՃԸԲ*	418—	
252—ՂԳ.*	285—ԽԶ.	319—)*	353—ՃԱ.	387—ՃԸԳ*	419—	
255—ԿԴ.*	286—ԽԷ.	320—ՀԹ.	354—ՃԸ.	388—ՃԸԴ*	420—	
254—ԿԵ.*	287—ԽԸ.	321—Ձ.	355—ՃԳ.	389—ՃԹԶ.	421—	
255—Խ.	288—ԽԹ.	322—ՁԱ.	356—ՃԴ.*	390—ՃԸԵ*	422—	
256—ԽԱ.	289—Ժ.	325—ՁԲ.	357—ՃԵ.	391—ՃԸԶ*	425—	
257—ԿԷ.*	290—ԺԱ.	324—ՂԴ.*	358—ՃԶ.	392—ՃԸԷ*	424—	
258—ԿԸ.*	291—ԺԲ.	325—ՂԵ.*	359—ՃԷ.	393—ՃԸԸ*	425—	
259—ԿԹ *	292—ԺԴ.	326—ՁԴ.*	360—ՃԸ.*	394—ՃԸԹ*	426—	
260—ԿՊ	295—ԺԴ.	327—ՁԴ.	361—ՃԶ.*	395—ՃԹ.*	427—	
261—Հ *	294—ԺԵ.	328—ՂԶ.*	362—ՃՊ.	396—ՃԺԷ.	428—	
262—ՀԱ.*	295—ԺԶ.*	329—ՂԷ.*	363—ՃՈ.*	397—ՃԼԱ*	429—	
263—ՀԲ.*	296—ԺԷ.*	350—ՂԸ.*	364—ՃՒ.*	398—ՃԺԸ.	430—	
264—ՀԴ.*	297—ԺԸ.*	331—ՂՈ.*	365—ՃԺ.	399—ՃԺՈ.		
265—ՀԴ.*	298—ԺՈ.	332—Ճ.*	366—ՃԸ.*	400—ՃԻ.		
266—ՀԵ *	299—Ի.	333—ՃԱ.*	367—ՃՈ.*	401—ՃԼԲ*		
267—ՀԶ.*	300—ԿԱ.	334—ՁԵ.	368—ՃԺ.*	402—Ը.Նա-		
268—ՀԷ.*	301—ԿԲ.	335—ՃԲ.*	369—ՃԺԱ.	խագր.		

դաբացիական գործերի համար օրէնսդիրը համարեա Վախթանգ Թագաւորի Դատաստանագիրքը [69]։ Յետոյ՝ Փետրուարի 28-ին 1825 թ. Ռուսահպատիւնը որոշեց որ՝ այդ Դատաստանագրքով վարուի Սէնաթը Վրաստանից մնած քաղաքացիական գործերը քննելու ժամանակ [70]։ 1801 թուի կայսերական հրամանը մասը իրեւ օրէնք 1835 թուին Նիկողայոս կայսեր հրամանով հրատարակուած Ընդհանուր Օրէնսգրքի մէջ (Сводъ Законовъ) [71]։ Նոյնպէս ուրիշն Մխիթարի Դատաստանագրքի մի մասը կողմնակի ձեւն կերպով մտաւ և Ռուսաստանի օրէնսգրութեան մէջ։

Նոյն ահա մի այսպիսի գիրք, որը մի անդին գոհար է մեր մատենագրութեան մէջ, որը այսպիսի ընդարձակ գործադրութիւն ունեցաւ ոչ միայն Հայոց ժողովրդի և պետութեան մէջ, այլև օտար պետութեան մէջ, մինչև այսօր մնացել է առանց ապագրութեան [72]։ Նոյնս ես արդարև երջանիկ եմ համարում ինձ որ՝ այդ բանաը ինձ վիճակուեցաւ։ բայց Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեր ներկայ հրատարակութիւնն է, ոչ իրեւ մի ազգային օրէնսգիրը կամ մի եկեղեցական կանոնագիրը, որպէս զի գործնական գործութիւն ստանայ, այլ իրեւ նախնի մատենագրութիւն և մանաւանդ իրեւ մի իրաւաբանական շարադրութիւն, յայտնապէս այն նպատակով որ՝ սա դառնայ այսուհետև մի կողմից՝ վէմ անկեան հայկական իրաւաբանութեան և միւս կողմից՝ մատչելի առարկայ իրաւաբանական բարձր դիտութեան հետա-

69. Տե՛ս Полное собраніе законовъ, 1801 ամի 12 Սեպտ. յօդուած № 200 7, О укрожденіи внутренняго въ Грузіи Управленія

70. 1825 ամի 28 Փետր. յօդուած № 30272, О приниманіи Сенату въ руководство, при ревизіи грузинскихъ гражданскихъ дѣлъ, перевода Уложенія грузинскаго царя Вахтанга.

71. Տե՛ս Сводъ Законовъ 1835 г. Т. X. Ч. I. ст. 2658 - Порядокъ судопроизводство дѣлъ тяжебныхъ учреждается въ грузіи по общимъ правиламъ Россійскаго судопроизводства съ наблюденіемъ особенныхъ правилъ, заключающихся въ грузинскихъ обычаяхъ и У ложеніи царя Вахтанга.

72. Վերնագրում Մխիթարեան միաբանները ասացին ինձ թէ՝ գեռ ներկայ դարու քառասուն թուականներին նորա պատրաստած են ուղղել Մխիթարի Դատաստանագիրքը տպագրութեան համար, բայց արգելք են տեսել Պարի իշխանութեան կողմից։

գաութեանց համար։ Յայտնի է որ՝ այսպիսի գրքերը, մինչև ամեն եկեղեցական կանոնագրքերը, և՛ ապուխտից յետոյ չեն կարող հոգևորականների համար, որպէս և հոգևոր տաճարների և եկեղեցական գործերի համար, պարտաւորիչ հեղինակութիւն ունենալ, մինչև որ ինքն բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը չտայ նոցա այդ նշանակութիւնը գրաւոր հրամանով և տնօրէնութեամբ։

Մեր մայր Էջմիածին հարուստ և հարստատուր Մատենադարանում ես գտայ ձեռագիր հինգ օրինակ Գոշ Մխիթարի Դատաստանագրքի հետևեալ համարներով — № № 488, 489, 490, 492, և 749. բայի առաջից՝ Էջմիածնի Սինոդում գործածվում է վաղուց անտի, ինչպես վերը յիշեցինք, մի հարուստ եկեղեցական կանոնագիրքը, որոյ մէջ կայ և Մխիթարի Դատաստանագրքը։ Ուզադատելով այս բոլոր օրինակներն՝ ես տեսայ որ ոտքա մէջ ընտրելագոյնն էր № 492. ոտքա վերջում եղած յիշատակարանից, որոյ մէջ տարաբաղդաբար շատ տեղ հետքերից տառերը ջնջուել են և անվերծանելի են, պարզ երևում է որ սոյն օրինակը գրուած է Հայոց ՀՃՀԳ. (744) թուին, այսինքն՝ Փրկչականի 1295 թուին, ուրեմն 111 տարի Դատաստանագրքերը սկսելուց յետոյ և միայն 82 տարի Մխիթարի մահից յետոյ։ Ընդոպես ուրիշն՝ այս օրինակը գուցէ ամենահին օրինակներից մէկն է կամ գոնեա հնագոյն օրինակից ընդօրինակած։ Հնութիւնը երևում է և գրքից. Թուղթը թէպետ բամբակի է, բայց ստամոկ մաշուած է մանանակից և շատ տեղ բառերը բոլորովին ջնջուած են և անվերծանելի։ Ոտց ի սորանից՝ պակաս են սոյն № 492 օրինակի մէջ Նախաղրութեան առաջին թերթը և մի կամ երկու թերթ Երկրորդ մասնի վերջից, այն է ՃՀԸ. և ՃՀԾ. յօդուածները, որպէս և ամբողջ գրքի վերջում մի քանի թերթեր։ Ընդ № 492 օրինակը ամփոփած է այժմ սինոյ թղթեայ կազմի մէջ, որը շինած է յետոյ, ինչպես ասած է բոլորովին վերջում կցած փոքրիկ Յիշատակարանի մէջ։ Միւս օրինակները գրած են նոյնպէս թղթի վերայ և ջունին յիշատակարաններ, ուստի չէ կարելի որոշել նոցա գրութեան թուականը, բայց ոտքա և պէտք է բաւականին հին լինին, մանաւանդ № 488, որը շատ տեղ ջեղջ ծակծկոտել է։ Իսկ Սինոդի մէջ գործածած Կանոնագիրքը՝ ինչպես երևում է Յիշատակարանից՝ գրած է 1817 թուին, բայց նորա առաջին թեր-

թի վերայ ասած է թէ՝ նոքա մէջ եղած Մխիթարի Պատասանադիւքը ընդօրինակած է մի ձեռագրից, որը գրած է ևս 1636 թուին:

Այս բոլոր ձեռագիրը օրինակները կարևի է բաժանել երկու դասակարգի: №№ 488, 489, 749 և Սիոնի օրինակները գրեթէ բոլորովին նման են միմեանց, իսկ №№ 490 և 492 օրինակները՝ միմեանց, բայց այս երկու խմբի մէջ մեծ տարբերութիւն կայ բառերի և ոճի կողմից, թէպէտ խնդասը գրեթէ միշտ միևնոյն է: Բայ ի սորանից՝ №№ 490, 492 և 749 օրինակների մէջ Պատասանադրքի յօդուածները բաժանուած են երկու մասն՝ Առիւծեցական և Աշխարհական, իսկ №№ 488 և 489 օրինակների մէջ բոլոր յօդուածները խառնած են միմեանց, և այն շատ անկանոն կերպով: Ա.յլ և №489 օրինակը չունի ամենևին Մխիթարի Նահապետութիւնը, իսկ № 488 ի մէջ պատած են Պատասանադրքից 11 թերթի և տասնեմն ևս մի ինչքի, որով պակաս է 35 յօդուած. և այս օրինակի ոճը շատ ազնուացած է և գեղեցիկ հասկանալի, մանաւանդ որ բառերը ըստ մեծի մասին պարզուած են գրած, այսինքն՝ հասկանօտ, իսկ գրիչը անհմուտ լինելով աչքից փախցրել է շատ տառեր:

Ես նայ այս բոլոր օրինակներից ես ընտրեցի ազատութեան համար իրրև լաւագոյն №492 օրինակը: Բայ ի այն ամենատմնդրատուն բազդատութիւնից, որը ես կատարեցի սորա և Էջմիածնի միւս օրինակների մէջ, ես միջոց ունեցայ իմ ձեռնադարձութեանս ժամանակ Բերմոնտ Նուրպայում 1876—1877 թուին բազդատել իմ օրինակը, որ տարած ունէի հետս, մի քանի ուրիշ օրինակների հետ: Ես նայեցայ զօրօրինակ և գտայ Փարիզի Ազգային Մատենադարանի մէջ (Biblioteque Nationale) Մխիթար Գօշի Պատասանադրքի հնգրա ձեռագիրը օրինակ[73]. սորանից № 55 ունէր իր երիցորդ երեսի վերայ Փրանսերէն լեզուով հետևեալ մակագրութիւնը՝ «Ձեռագիրը, որից ընդօրինակեցի սոյն օրինակը բառ առ բառ և գետոյ բազդատեցի, է մեր 74 զրադարանի Թանկագին զարդերից մէկը. որովհետև գրած է այն 1184 թուին սովորական ժամանակագրութեան (Քրիստոսեան), յատկապէս այն ժամանակ, երբ կենդանի էր հեղինակը, և մենք կարծում ենք որ՝ սա է նորա ինքնաձեռագիր օրինակը. Վ.-

73. Տես նախընթաց 31 ծանօթութիւն:

74. Այսինքն՝ Վենետկի Մխիթարեան Ս. Ղազարու վանքի:

նետիկ, Ս. Ղազարու վանք, մարտ. 1858, ՟. Խառնարան Նշանեան: Ընդօրինակած և բազդատած Բրժ. ՟. Խառնարան Նշանեանի օրինակի հետ, Փարիզ, Յուլիս 1858, Եզուարդ Տիւրլօթէ:» № 111 օրինակը գրել է միւս հայագիտ Պրուչհամը շատ գեղեցիկ վայրկեանների համար 1861 թ. № 104 օրինակից: Այսպէս ուրեմն՝ երկու հաշակատար գիտնական փիլոսոփայիք չեն խնայել իւրեանց Թանկագին ժամանակը և համեմատութեամբ ընդօրինակել են իւրեանց ձեռքով մի բառական ընդարձակ ձեռագիր. սորանից երևում է թէ՝ օրդիսի մեծ գիտնական նշանակութիւն են տուել նոքա և մեծ պատիւ Մխիթարի Պատասանադրքին: № 104 օրինակը արտագրել է ՟. Խառնարան Նշանեանը 1857 թուին իւրեանց գրադարանի օրինակից և նուիրել է Փարիզի մատենադարանին: Ձորրորդ օրինակը (առանց № մուծած յուշագրի մէջ) չունի ոչ յիշատակարան և ոչ թուական թէ ո՞վ է գրել, ե՞րբ և ո՞րտեղ. բայց ձեռագրի վերջում վայրկեանական այլ ոճով գրուած է այսպէս՝ «Ովան Ծէր Գէորգեան Յովհաննէսեան Նշանեան. անունից և մանաւանդ ձեռքից ես խնդացայ որ՝ ընծայել է այդ Նշանեանցի Ոսկան Յովանիսեանցը, երբոմն իմ ուսուցիչ Հայերէն լեզուի Մատենայի Ազգարեան Հնութեան առարին գասատանում: Այս օրինակը շատ թերի է և նման է Էջմիածնի մատենադարանի № 488 օրինակին. իսկ ՟. Նշանեանի օրինակը աւելի ընտրելագոյն է և նման է մասամբ Էջմիածնի նոյն № 488 և մասամբ № 489 օրինակներին, բայց ընդհանրապէս շատ նման է միւս № 492 օրինակին. միայն նորա մէջ պակաս են Առաջին մասն Ա՛Ի Գ.-, Ա՛Ի Գ. և Ա՛Ի Ե. կանոնները:

Գնալով Իտալիա՝ ես միջոց ունեցայ գնել Վենետկում Մխիթարեանների Ս. Ղազարու վանքի Գրադարանի մէջ Մխիթարի Պատասանադրքի այն օրինակը, որից արտագրել էր ՟. Նշանեանը Փարիզի օրինակը, ուստի և աւելորդ համարեցի վերստին բազդատել սորա հետ իմ օրինակը: Դա բառական հին օրինակ է և գրած է մագաղաթի վերայ, բայց երբէք չէ կարելի ընդունել ՟. Նշանեանի կարծիքը, որպիսին կրնկեցին և նոյն վանքի միաբանները՝ ՟. Ալիշանեանը և այլք, թէ իբր նոյն իսկ Մխիթարի ինքնաձեռագիր օրինակ լինի նա և գրած 1184 թուին, որովհետև ինչպէս ես վերը բացատրեցի և ինչպէս պարզ ասում է ինքն Մխիթարը իւր Նախա-

դրութեան մէջ նա այդ թուականում միայն սկսեց գրել իւր Վատատատանագիրքը։ Նա թէպէտ իւրնանց այդ կարծիքը նոքա հիմնում էին անշուշտ իւրնանց օրինակի հետևնալ Յիշատակարանի վերայ։— «Փառք Փրկչին մերոյ Յիսուսի, ընդ նմին Հօր և Հոգւոյն, որ ետ զդատաստանօր տալ զորոց զատաստանին։ զի թէև յառաջադոյն ասացաք գրելով զսահման յիշատակարանն՝ եթէ աւարտումն սորա ոչ է, սակայն այժմ մեք հանդուցանել կամիցաք գրելով ըստ կարի, ոչ խափանել զայլոց որք կամին գրել և յաւելուլ։ և թէպէտ յամի յորում սկսաք գրեցաք զնոսա զատաստանին, սակայն յաղագս հալածանաց որ եհաս մեզ՝ ընտանի և ոչ օտար՝ յապաղեաց գրիլ զյիշատակս զայսոսիկ։»

Բայց նախ՝ մի այսպիսի Յիշատակարան չկայ ոչ Էջմիածնի և ոչ Վ֊ենետկի օրինակների մէջ, երկրորդ՝ դժուար է անորոշ խօսքերս՝ թէպէտ յամի յորում սկսաք գրեցաք զնոսա չափս զատաստանի վերաբերել ամբողջ Վատատատանագրքի աւարտման, մանաւանդ հետևնալ տողերի մէջ ակնարկած հալածանքները պիտի համարենք այն նեղութիւնները, որը կրեց նա մահմետականներից Գանձակում, ինչպէս յիշում Կիրակոսը, իսկ դրքա պատատեցան Վատատատանագիրքը սկսելուց առաջ։ և երրորդ՝ այդ Յիշատակարանը չունի թուական, ուստի յայտնի չէ թէ ինչ ի գրել այդ տողերը Մխիթարը։

Վ֊ենետկի Մխիթարեանների վանքի գրադարանի մէջ ես տեսայ մի օրինակ Վոշի զատատատանագրքի, փոքրագիր, մագաղաթի վերայ, և թէպէտ առանց յիշատակարանի՝ բայց բաւական հին։ Ես այս օրինակը, որպէս և Փարիզի և Վ֊ենետկի օրինակները, պարունակում էին իւրնանց մէջ միայն Մխիթարի զատատատանագիրքը և չունէին սկզբից կամ վերջից ոչինչ յաւելուած հետևյալ օրէնքներից կամ ուրիշ զրուածներից։ Նպատակելով իմ օրինակը Վ֊ենետկի օրինակի հետ՝ ես գտայ որ այդ երկու օրինակները միայն մի քանի տեղ են տարբերում իրարից, ոչ միայն բառ առ բառ, այլ գրեթէ կէս առ կէս, նմանութեան վերայ։ Այս բազմաթիւները շատ ուրախացրեց ինձ, որովհետև նախ՝ առաջ ես համոզուեցայ որ՝ Էջմիածնի օրինակների մէջ յիրաւի ընտրելագոյնն է իմ № 492 օրինակը, և երկրորդ՝ ես նպատակ լրացրի իմ օրինակի թերութիւնները՝ արտագրելով Նա-

խապրութեան պակասողը սկզբից — Առաջին գլուխը և Երկրորդ կէսը, և Երրորդ մասի Ա֊Լ֊Ը. ու Ա֊Լ֊Ժ. յօդուածները, որոյ փոխարէն և Մխիթարեանների զրադարանապետ վարդապետը լրացրեց իմ օրինակից իւրնանց օրինակի մի քանի աննշան թերութիւնները։

Բայի սորանից՝ երբ մեր ձեռագիրը մաքրուբ արտագրած պատրաստ էր բոլորովին տպագրութեան համար, անհնկալ կերպով մեր ձեռքն ընկաւ Վատատատանագրքիս դարձեալ երկու օրինակը։ Դորա պատկանում էին մէկը Ալաչկերտի Հանդուցեալ Արապետ եպիսկոպոսին, միւսը՝ Հանդուցեալ Յ֊ալալեանց Սարգիս եպիսկոպոսին։ Երկու Հանդուցեալ եպիսկոպոսների դրքերը մնալով Մայր Աթոռոյս մատենադարանի մէջ (մօտ 200 ձեռագիր, որ այս օրերս, այսինքն՝ Մարտ և Ապրիլ ամսին, ցուցակագրեցին Մանկունի և Ներսէս եպիսկոպոսները Կաթողիկոսի հրամանով), ես միջոց ունեցայ օգտա քաղել և դոցանից։ Արապետ եպիս. օրինակը թէպէտ թղթի վերայ է գրած, բայց բաւական հին է, որպէս երևում է՝ վայելչագրութիւնից և թէ արտաքին դրութիւնից. բայց ափսոս որ չէ կարելի ճշտութեամբ որոշել օրինակիս դրչութեան թուականը, որովհետև վերջից պակաս են թերթերն, ուստի և չունի յիշատակարան։ Ընութիւնից դնաստել էնաև ամբողջ ձեռագիրը և տեղ տեղ անվրձանելի է, Ուշադրութեամբ բաղդատելով սորան մեր միւս օրինակների հետ՝ ես տեսայ որ սա գրեթէ բոլորովին նման է № 488, 749 և Ախտոյի օրինակներին և մանաւանդ № 488 օրինակին, Վ֊ատն որոյ երբ այս երկու օրինակը ճանաչութեանց մէջ գրած են միասին, գոբութեամբ պէտք իմանալ և Արապետ եպիս. օրինակը, իսկ երբ դրքա միասին չեն՝ մենք գրինք բաղդատութիւնները Ա֊բ. կամ Ա֊բ֊պ. (Արապետ) համառօտութեամբ։ Բայի սորանից՝ պետք տեսնցնենք որ՝ այդ օրինակի Նախադրութեան մէջ և մանաւանդ սկզբներում գործածած է գրեթէ աշխարհաբար ոճը, որը հետզհետէ գրաբարի է փոխվում, իսկ դրքա Ժ֊ և Ժ֊Ա֊ միացրած են, Իսկ բուն Վատատատանագրքի մէջ բոլոր կանոնները և յօդուածները, այսինքն՝ Առաջին կամ Եկեղեցական և Երկրորդ կամ Աշխարհական մասները խառնուած են միասին և ունին ընդհանուր թուատառեր. բայց դոցա մէջ պահած են մեր ձեռագրի եկեղեցական մաս-

նի ՆԻԵ. ՆԻՒ. և ՆԻՊ. կանոնները. — Ձեռագրի վերջում կան քաղուածքներ Բիւզանդական և Մոմխեական օրէնքներից։

Իսկ ինչ վերաբերւում հանգուցեալ Սարգիս եպիսկոպոսի օրինակին՝ պէտք է ասեմ որ՝ ես կարդալով նորա ճանապարհորդութեան մէջ թէ ինքն իր ձեռքով արտագրել է Դամձամարու վանքում Մխիթար Վ-օշի Դատաստանագրքի մի ընտիր օրինակը, երբ կենտրոնի էր խնդրեցի նամակով նորանից բան տալ ինձ այդ օրինակը իմ օրինակների հետ բաղդատելու համար, բայց նա պատասխան անդամ չտուեց ինձ։ Նայց այժմ ձեռքիս ունենալով այդ գոված օրինակը՝ ես տեսնում եմ որ նախ՝ դա գրած է ոչ թէ իր, Սարգիս եպիսկոպոսի ձեռքով, այլ վից հօրը տեսակ գանազան, — գուցէ տիրացուների — ձեռքով. երկրորդ՝ դա գրած է հասարակ թղթի վերայ փոքր, գրիչէ ուղիածալ գիրքով, և մի է գանազան տեսակ պակասութիւններով — 1, գրիչների անհմտութիւնից ոչ միայն խառն են բառերը, այլ և պակաս են տառեր. բառերն և տողեր. 2, պակաս է առաջին մասից մեր ձեռագրով՝ ՆԺԴ. կանոնի վերջի մասը և միացեալ կանոնները մինչև վերջը. իսկ Երկրորդ մասից սկզբի Ը.— ԿՆ. վաթսուն և մէկ յօդուած և ՆԻԹ. և ՆԼ. այսինքն պակաս է այս մասի գրեթէ կէսը. 3, կազմարարի անհմտութիւնից յօդուածները խառնեն, զոր օրինակ Երկրորդ մասից առաջ գրած է Գ.Ը.— ՆԻԸ. և ՆԻԻ. յօդուածի վերնագիրը, յետոյ ԿՒ.— Գ. և ապա գրէնալ ՆԻՒ։ Կան. սոյն օրինակի մէջ նաև Մոմխեական և Բիւզանդական օրէնքներից քաղուածքներ. Նաղդատելով սոյն միւս օրինակների հետ՝ տեսանք որ՝ սա բոլորովին նման է մեր №492 օրինակին և եթէ կան ինչ ինչ տարբերութիւններ, զոքա պարզապէս անգրագէտ արտագրողներին են պատկանում։ Գտան որոշ աւելորդ համարեցինք ցոյց տալ զոքա ծանօթութիւնների մէջ։ Այս ձեռագիրը ընտրւեցաւ Ղազանից Յովհաննէս կաթողիկոսի ձեռքով արտագրած օրինակից, որ գրել է նա 1778 թուին, երբ նա ասած է նորա փոքրիկ Յիշատակարանի մէջ։

Նէ ահա այսպէս բաղդատելով տանից աւելի օրինակներ՝ ես միանգամայն համոզուեցայ, որ այդ հնարաւոր էր, մի կատարեալ օրինակ Մխիթարի Դատաստանագրքի. բոլոր տարբերութիւնները — բազմաժամանակեայ և կարի տաղտկալի աշխատութեան պտուղ — գրած

են բնագրի կէսերի ցած։ Այց ի սորանից ես հարկաւոր համարեցի ուրիշ տեսակ սրբագրութիւն ևս անել բնագրի մէջ, զորօրնակ՝ ասգրելով օ, է դնելով է և ընդհակառակն է դնելով է երբ այդ հարկաւոր էր, և մանաւանդ կէտադրութեան մէջ, որպիսի թերութիւնները պիտի վերագրենք անշուշտ բնօրինակողներին։ Իսկ ինչ վերաբերւում Դատաստանագրքի ոճին՝ մենք ամենևին ձեռք չտուինք նորան, այլ թողնք անփոփոխ և նոյնութեամբ։ Պէտք է ասել որ՝ Դատաստանագրքի շարադրութիւնը կամ ոճը չէ վսեմ և անթերի կառնաւոր, այլ կրում իւր մէջ զրոյց ոճի անկման և ազատազրութեան հետքերը, որ նշմարելի են Մխիթարի ժամանակակից հեղինակների գրուածքների մէջ։ Ես այս պատճառով ոչ սակաւ զարմանում եմ որ՝ պ-ոֆ-ր-Ն. հայհոյեն Դպրոցի գրքի հեղինակը խօսելով սոյն Դատաստանագրքի վերայ, ասում՝ «Այս գրուածքին մէջ ընթէր ե հմաւ ոճ մը կգործածէ Դօչ.»[75]։

Որովհետև Մխիթարը իւր յօդուածներից մեծագոյն մասը, մանաւանդ Ընդհանուր կամ Եկեղեցական կանոնների մասնի մէջ, ժողովել է եկեղեցական և հայրապետական կանոններից, Ընտրեցաշունչից, և այլն. մենք հարկաւոր համարեցինք ցոյց տալ իւրաքանչիւր յօդուածի ազբիւրը, որ տեղից վերցրած է այն։ Սորա համար հարկաւոր եղաւ անպատար աչքի տակ ունենալ երեսի չափ ձեռագիրը կանոնագրքեր հետևեալ №№735, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 752, 753, 754, և այլն. և Սիմեոնի օրինակ. սոցա մէջ ընտրելագոյնն էր №761 կանոնագիրքը։ Մխիթարեանց նպատակով մենք սարքուած էինք հարիւրաւոր անգամ թերթել Ընտրեցաշունչը և մանաւանդ Հին Կտակարանի մի քանի մասները, որոյ համար տարաբախտաբար չէինք մինչև այժմ շինած մի համաբարառ, որպիսին կայ Նոր Կտակարանի համար։ Նայց այնուամենայնիւ մի քանի յօդուածները միացին առանց որոշելու ազբիւրները, որովհետև չկարողացանք ոչ մի տեղ գտնել։ Ընթերցողին թեթևացնելու համար մենք զատեցինք միմեանցից ուրիշ տեղից քաղած կանոնը և յօդուածները և Մխիթարի սեփական խօսքերը՝ սկսելով զոցա չակերտով և նոր տողով։

---

75. Տես եր. 565։

Մեր №492 ձեռագիրը օրինակը, որը կրում է ընդհանուր վերնագիր — Վարդապետութիւն Վօշ Մխիթարայ, բաղկանում է հինգ բաժնից՝

1. Նախադրութիւն.
2. Մասն Առաջին կամ Եկեղեցական կանոններ.
3. Մասն Երկրորդ կամ Աշխարհական օրէնքներ.
4. Բազուածքներ Մովսիսական օրէնքներից.
5. Բազուածքներ Յունական օրէնքներից.

Այս բոլոր հինգ կտորը կամ բաժանումները մենք վերածում ենք երկու գլխաւոր մասների՝ առաջին — Նախադրութիւն և Վարդապետական նագիրք, երկրորդ — միացեալ երկու կտորը՝ այն է՝ քաղուածքներ մովսիսական և յունական օրէնքներից։ Թէ առաջինը պատկանում Մխիթար Վօշին՝ այդ բոլորովին հաստատ և աներկբայելի է. բայց թէ երկրորդը նոյնպէս պատկանում նորան — այդ անհաստատ է և երկբայելի։ Մեր կարծիքով այդ երկրորդ մասն, այսինքն՝ քաղուածքները մովսիսական և յունական օրէնքներից, բոլորովին չեն պատկանում Մխիթարին, այլ արած են ուրիշի ձեռքով կամ նորանից առաջ, կամ որ աւելի հաւանական է նորանից յետոյ։ Ահա մեր այդպիսի կարծիքի ապացոյցները։

1. Ինչպէս վերը բացատրեցինք, և կարծում ենք թէ հաւանական և համոզիչ կերպով, Մխիթարը սկսելով իւր Վարդապետական նագիրքը՝ չունեը ձեռքին կանխապէս ժողոված միասին իւր բոլոր ազբիւրները, այլ նա գրից նախ իւր Նախադրութիւնը, բացատրելով նորա մէջ բաց ի ուրիշ երկրորդական բաներից, վարդապետական տեսութեան և վարդապետական վարքի դլխաւոր կէտերը, և ապա սկսեց կազմել իւր Վարդապետական գիրքը հաւաքելով հետդհետէ և մուծանելով նորա մէջ ձեռքին ընկած և յարմար կանոնները և յօդուածները։ Եթէ ի նկատի առնենք որ՝ գրեթէ բոլոր հին — հայկական, յունական, լատինական, և այլն, կանոնագիրքերը՝ երբ գրքա լինում էին մանաւանդ մարդոց աշխատութիւն՝ այդ կերպով էին կազմվում, մեր կարծիքը հաստատութեան չափ հաւանականութիւն կստանայ։ Կայ առաւել ևս հաստատվում նորանով որ՝ Վարդապետագիրքը ամենևին չունի մի որոշ կարգ — սիստեմա, այլ յօդուածները դասաւորած են շատ խառնաշփոթ կերպով, երբեմն միևնոյն առարկային

վերաբերեալները գրուած են այստեղ և այնտեղ երբեմն բոլորովին զանազան առարկաներին վերաբերեալները դասաւորած են միևնոյն հետ. այնպէս որ՝ եթէ կամենայինք դասաւորել յօդուածները ըստ առարկայից նմանները միասին՝ բոլորովին կփոխուէր Վարդապետագրքի արտաքին կերպարանքը։ Ւյս եթէ անհերքայելի է որ՝ Մխիթարը հետզհետէ ժողովելով յօրինեց իւր Վարդապետագիրքը, ապա ուրեմն ի՞նչ կարիք կար և ի՞նչ պատճառ կարող կրնենալ նա իւր ժողոված յօդուածները առանձին բաժանել և ոչ թէ մուծանել և դասաւորել նոցա ամրողջ Վարդապետագրքի մէջ։ Եթէ նա իւր համար կանոն ընդունած լինէր դասաւորել առանձին զուտ հայկական սովորութիւնները և եկեղեցական կանոնները, և առանձին ուրիշ ազգերից առած եկեղեցական և աշխարհական օրէնքները, այն ժամանակ թերևս կարելի կլինէր թոյլ տալ և ընդունել որ՝ յիրաւի և նոյն վերոյիշեալ քաղուածքները մովսիսական և յունական օրէնքներից պատկանում լինին նորան։ Բայց քանի որ Մխիթարը արդէն խառնել է իւր Վարդապետագրքի մէջ ազգային իրաւաբանական աւանդութիւնների և եկեղեցական կանոնների հետ և ուրիշ քաղուածքներ Ըստուածաշունչից, յունաց եկեղեցական և հայրապետական կանոններից և աշխարհական օրէնքներից, այնուհետև ըստ ժամանակի է ենթադրել որ՝ նա հաւաքած և առանձին դասաւորած լինի նաև ուրիշ ժողովածուներ, որպիսի են վերոյիշեալ քաղուածքները։ Բացի սորանից՝ Մխիթարը, ինչպէս պարզ երևում նորա Վարդապետագրքից, ամենևին չէ համակրում մովսիսական խիստ և վրէժխնդիր օրէնքներին, և ընտրելով նոցա միջից մեղմագոյնները՝ ինքն անդադար կամ կերպարանափոխում նոցա և կամ թողնում դասաւորի ազատ կամքին նոցա գործածելը կամ չգործածելը։ Իսկ վերոյիշեալ քաղուածքները մովսիսական օրէնքից՝ վերցրած են բառ առ բառ։ Եթէ վերջապէս սորա վերայ աւելացնենք և այն որ՝ սոյն մովսիսական յօդուածներից մի քանիսը կան նաև Վարդապետագրքի մէջ, յայնժամ պիտի համոզուինք որ՝ դրքա ժողովուած են յետոյ և միայն պատահմամբ կցած Վարդապետագրքին ընդօրինակողների կողմից։

Իսկ ինչ վերաբերվում յունական օրէնքներից հանած քաղուածքներին, սորա համար հարկաւոր է լուծել թէ՝ Մխիթարը գիտէ՞ր

արդեօք յունարէն լեզուն ինչ ոչ։ Մենք տեսանք որ նախ՝ խօսելով իւր ապրիւրների վերայ Մխիթարը ասում էր՝ «առնուք յամենայն ազգաց քրիստոնէից իրրև ի հարազատ եղբարց, ղէ լաւ և պէտ ի նոսա բարւոք գտասատանն հա-ատէնի է ձէնս». և երկրորդ՝ խօսելով Նախաղրութեան վերայ դատաւորների մասին վերայ նա յիշում է Հռովմայեցիների, Յոյների և Վրացիների սովորութիւնները այս հարցի մասին։ Ահա այս երկու կտորից կարելի է բատ արտաքին երևութին եզրակացնել և կարծել որ՝ Մխիթարը դիտէր գոնէ յունարէն և վրացերէն լեզուները։ Եւ թէպէտ ձշմարիտ է՝ նա կարող էր սովորել այդ լեզուները, և մանաւանդ յունարէնը Անաւ լերան կողմերում եղած ժամանակ, բայց նախ՝ այդ ամենևին չէ երևում նորա գրուածքներից և երկրորդ որ առաւել ևս ապացոյն է՝ Պիրակոս Պատմագիրը բաւական ընդարձակ մանրամասնութեամբ նկարագրելով Դօշի կնանքը և ուսումնասիրութիւնը և այնպէս զովարանելով նորա գիտութիւնը՝ անպատճառ կը յիշէր և նորա լեզուագիտութիւնը, որով անշուշտ աւելի կը բարձրացնէր նորա գիտական արժանաւորութիւնը, ինչպէս սովորութիւն ունին մեր հեղինակները խօսելով մի գիտական անձի վերայ յիշել նաև նորա լեզուագիտութիւնը։ Ուրեմն՝ քանի որ Պիրակոսը չէ յիշում այդ, ես գժուարանում ընդունել որ՝ Մխիթարը իմանար յունարէնը կամ ուրիշ լեզու, բաց ի գուցէ Թամարաչէնից, որը կարող էր սովորել գործնական կերպով և որը յիշել աւելորդ կը լինէր Պիրակոսի կողմից։ Բայց ի սորանից՝ վերոյրերևալ առաջին վկայութիւնը՝ ղէ լաւ և պէտ պարզ ցուցանում է որ՝ Մխիթարը ինչ որ վերցրել է քրիստոնեայ ազգերից՝ վերցրել է ոչ թէ նոցա գրած օրէնքներից, այլ այն ժողովրդի իրաւաբանական աւանդութիւններից և գատաստանական սովորութիւններից, ինչ որ լսել է և տեսել է ժողովրդի կեանքի մէջ. և այս ի հարկէ արդէն բաւական է որ՝ նա կարողանար յիշել իւր Դատաստանագրքի մէջ թէ՝ Հռոմայեցիները, Յոյները և Վրացիները քանի գատաւորից էին կազմում իւրաքանչ գատարանները, և այլն։ Իսկ միւս № 492 և ուրիշ մի քանի [5]օրինակների վերջում կամ սկզբում եղած քաղուածքները յունական օրէնքներից՝ պէտք է պահանջէին լեզուագիտութիւն և գրաւոր աշխատութիւն։ Եւ եթէ դորա պատկանէին յիրաւի Մխի-

թարին—նախ մուծուած և գետեղուած կը լինէին բուն Դատաստանագրքի մէջ, ըստ որում նոյն վերոյերևալ վկայութեան մէջ նա ինքն ասում՝ «հա-ատէնի է ձէնս» այսինքն՝ Դատաստանագրքի մէջ, և երկրորդ՝ եթէ առանձին պիտի դնէր դորա կը լինէին անշուշտ աւելի ընդարձակ և ամփոփ, մինչդեռ դորա շատ սակաւաթիւ են և թերի, ոչ ճիշտ բառական այլ ազատ թարգմանութիւն և համառօտութիւն, երբեմն միայն բովանդակութիւն։ Իսկ եթէ ենթադրենք որ՝ այդ քաղուածքները յառաջագոյն թարգմանած կային հայերէն և Մխիթարը նրանք քաղից նոցանից կամ ժողովից և կցեց իւր Դատաստանագրքին, ո՞չ ապացոյն նա անպատճառ կը յիշէր այդ բաները իւր զրքի ապրիւրների վերայ խօսելու ժամանակ։

Պէտք է աւելացնեմ որ՝ Էջմիածնայ մատենադարանի մէջ կայ մի օրինակ ձեռագիր օրէնսդիրք № 493, որոյ մէջ ամփոփուած են միայն հռովմէական—յունական օրէնքներից հանած քաղուածքները, առանց Մխիթարի Նախաղրութեան և Դատաստանագրքի, առանց քաղուածքի ժողովրդական օրէնքներից և առանց որևիցէ այլ յատկութեանների, և թերի լինելով սկզբից և վերջից՝ չունի ոչինչ յիշատակարան։ Այդ քաղուածքները հանած են Թէոդոսի Codex. ից (կոդէքս), Յուստինիանոսի Institutiones-ից (Ինստիտուցիօնէս) և մասամբ նաև նորա Codex ից, Լևոն Իսաւրացու և Վասիլեոսի Կոպրոնիմոսի Ecloga ից (Էկլոգա), և այլն։ Կամք կարծումեն որ՝ մի այսպիսի թարգմանութիւն պիտի լինի կատարուած Նազարատեանց Թագաւորութեան ժամանակ Իւզանդեան կայսրութեան և իրաւաբանութեան ազդեցութեան պատճառով, և թէ Նազարատեանի Թագաւորները գործածուէին այդ թարգմանած օրէնքները ազգային իրաւաբանական աւանդութիւնների հետ միասին։ Մի այսպիսի կարծիք յայտնուած է նաև Ամրատ Ապարապետի ձեռքով թարգմանած Ընտիրքայ Ընտիրք Ֆրանսերէն հրատարակութեան Յառաջաբանութեան մէջ [76], ուր ի միջի այլոց ասած է թէ «Հնագոյն գրուածքը է Ժողովածոյ Օրէնից Հռովմայեցւոց կայսրութեան (Bas-Empire, բիւզանդական կայսրութիւն) և ոչ թէ Թէոդոսեան կամ Յուստինիանոսեան օրէնսդրքերից, այլ նորագոյն կայսրների Լևոնի,

76. Սոյն հրատարակութեան մասին մենք արդէն յիշած ենք յառաջագոյն։

Աստուածային և Եռմէկի օրէնքներից։ Թէպէտ դեռ ևս չէ հետազօտած արժանապէս և գիտական կերպով թէ՛ երբ, ո՞րտեղ և ո՞ւմ ձեռքով է կազմած այդ հայերէն ժողովածուն Իւրգանդական օրէնքների, բայց և այնպէս կարելի է ասել որ՝ դա կազմուել է կամ Մխիթարից յետոյ և կամ նորա իսկ ժամանակ, այնպէս որ՝ նա տեղեկութիւն անգամ չէ ունեցել դորա մասին։ Յայտնի է որ՝ նոյն իսկ միջնադարներին, երբ Մխիթարը Հայաստանում յօրինուածք իւր Դատաստանագիրքը, մի ուրիշ հռչակաւոր հեղինակ՝ Ներսէս Լամբրունացին կազմուածք իւր օրէնսգիրքը, ամենևին տեղեկութիւն չունենալով միմեանց միւսի աշխատութեան վերայ։ Ամենք կարծուածն թէ՝ Լամբրունացին պատահմամբ գտնելով արդէն իւրեանից առաջ կազմած վերոյիշեալ ժողովածուն Իւրգանդական օրէնքների և թիերի ուպակասորդ համաբերով նոցա՝ ինքն ասելացրեց Հռոմանիանոսի օրէնքներից և լատինական եկեղեցու ծիսարանից հանած քաղուածքներ և Ա. Պօլոս՝ նա ինքն թարգմանեց և ժողովեց այդ բոլորը։ Թէ այսպէս և թէ այնպէս՝ մեզ համար նշանաւորն այն է որ՝ Մխիթարը կամ տեղեկութիւն չուներ այդ և նախընթաց ժողովածուների վերայ, և կամ առանց ուշադրութեան թողնել իրրև օտար և Հայաստանի մէջ գործածութիւն չունեցող օրէնքներ։ Իսկ յետոյ պրիչները կարող էին նորա Դատաստանագրքի սկզբում կամ վերջում կցել Լամբրունացու օրէնսգիրքը ամբողջապէս կամ հատուածօրէն։

2. Երկրորդ ապացուցութիւնը, որոյ վերայ հիմնուած ենք մեր կարծիքը թէ՝ ժողովական և յուշական օրէնքներից հանած քաղուածքները չեն պատկանում Մխիթարին՝ համարում ենք այն, որ նախ՝ Հայկազեան միւս օրինականների մէջ կան նաև ուրիշ յաւելուածներ, զորօրինակ՝ §188 մէջ — ոստանաւոր ներբողեան, ազօթք յանուն Ս. Կիրիոզ Տարեկացու, Թուղթ սուն Նահապետի (թերևս եպիսկոպոս կամ վարդապետ) առ սուն Տէր Մատթէոս՝ կրօնական խորհրդածութիւնք, և այլն §189 մէջ — Եղիշէի խրատական խորհրդածութիւնք դիւահարների Ս. հաղորդութիւն տալու վերայ, զօրքերի և ուրացողութեան վերայ, Ագաթանգեղոսից, Մեսրոպից, Եզնիկից, Յովհան Ոսկերբերանից քաղուածքներ կրօնական բովանդակութեամբ, և այլն, §190 մէջ — խրատական ճառեր շնորհեան և պահեցողեան,

սիրոյ և առելութեան, ազօթքի և կիւրակի օրը պատուելու վերայ, և այլն որը ոչ Մխիթարին են պատկանում և ոչ Դատաստանագրքին են վերաբերվում։ Երիորդ՝ յուշական և մովսիսական օրէնքներից հանած քաղուածքները չեն Հրմիածնի §490 օրինակի մէջ, իսկ Փարիզի օրինակների և Վենետիկի մեր տեսած օրինակի մէջ, որը արդարև մի ընտիր օրինակ է, չկան ոչ դորա և ոչ ուրիշ տեսակ օրէնսիւքաղուածքներ կամ յաւելուածներ, բայց մեզ համար ունի նշանաւորն այն է որ՝ Վենետկի ընտրելագոյն օրինակը, որը ինչպես վերը յիշեցինք՝ բոլորովին նման է մեր §192 օրինակին, ոչինչ յաւելուած չունի, այլ պարունակում իւր մէջ միայն Մխիթարի Տաճատրութիւնը և Դատաստանագիրքը։ Իսկ Վենետկի Թագաւորի վերայ գրչի Դատաստանագրքի մէջ թէպէտ ընդհակառակն կան բաւական շատ յօդուածներ, որը լոռ ու բառ նման են յուշական օրէնքների քաղուածքներին և դրած են Մխիթարի Դատաստանագրքի վերջերին թարգմանութեան սկզբում, բայց դորանից երևում, միայն որ՝ Հրմիածինը ուղարկել է Վենետկին Դատաստանագրքի մի այնպիսի օրինակ՝ որոյ մէջ եղել են նաև այդ քաղուածքները և Վենետկը թարգմանել է առել նոցա հայերէնից Մխիթարի յօդուածների հետ միասին։

Նայ ասած բոլոր վերոյիշեալ խորհրդածութիւնների և բացատրութիւնների վերայ հիմնուելով, ես չեմ ընդունում որ՝ թէ մեր §192 օրինակի մէջ եղած մովսիսական և յուշական օրէնքների քաղուածքները և թէ միւս օրինականների մէջ եղած գանազան յաւելուածները պատկանեին Մխիթարին։ Ժամանակին գուցէ աւելի լաւ կը վերահաստատուի իմ կարծիքը կամ սորա հակառակը։ Բայց քանի որ առ այժմ ինձ համար կասկածելի են դորա՝ ես աւելորդ և անտեղի համարեցի կցել դորա Դօշ Մխիթարի Դատաստանագրքի ներկայ տպագրութեան։ Սակայն առանձին իմն իրաւարանական նշանակութիւն տալով յատկապէս հաւմկական—յուշական օրէնքների քաղուածքներին, ես պատրաստուում առանձին հրատարակել նոցա աւելի ընդարձակ հետազօտութիւններով։

Մեր տպագրութեան մէջ ընթերցողները կը տեսնեն երկու տեսակ ծանօթութիւններ, որ չէ պակաս խառնել միմեանց հետ։ Օձանազան օրինականների բազմաթուութեան ծանօթութիւնների թուատառերը

ա, բ, գ, դ, ... եւայլն տառերով եւ վերջանում են բաքանչիւր եկեղեցական տօնի վերայ։ այդ ծանօթութիւնների մէջ Փարիզի երիք միմեանց նման օրինակները, հետեւաբար եւ Վենետիկի այն օրինակը, որից դրքա արտագրուած են, մենք որոշում ենք համառօտութեամբ Վ. եղեսիա. այսինքն՝ Վենետկեան, իսկ Փարիզի չորրորդ օրինակը գրեթէ միշտ զօրութեամբ պիտի ի նկատի ունենալ. ամեն անգամ երբ դրած կը լինի №488, Մ. իւս տեսակ, այսինքն՝ մեր սեպհական ծանօթութիւնների թուահամարները դրածեն 1, 2, 3, 4, ... եւայլն թուերով և շարունակութիւն ունին անընդհատաբար մինչև ամբողջ դրքի վերջը։

Վերը մենք ասացինք որ՝ Մխիթար Գօշի յառաջաբանութիւնը՝ իրրև հեղինակի ինքնուրոյն սեփական շարադրութիւն՝ մեր աչքին աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ ամբողջ Վատաստանադիրքը, որ մի ժողովածու է կամ խմբագրութիւն ուրիշ անդերից հաւաքած յօդուածների և ուր միայն սակաւ հատուածների մէջ երեւում նորա սեփական գատողութիւնները։ Մենք ասացինք նոյնպէս որ՝ այս կողմից առաւել եւս մեծ նշանակութիւն ունին նոյն յառաջաբանութեան Ձորրորդ, Հինգերորդ, Վեցերորդ, Եօթներորդ, Ութերորդ և Իններորդ գլուխները, որովհետև գոյա մէջ հեղինակը յառաջ է բերում իւր սեփական հայեացքը և գատողութիւնները մի քանի իրաւաբանական հարցերի մասին, ուստի և գոյա մէջ առաւելապէս երեւում նորա իրաւաբանական գործագործման և գիտութեան այս կամ այն աստիճանը։ Վանորոյ հարկաւոր ենք համարում փոքր ի շատէ մանրամասնօրէն քննել այս տեղ այդ գլուխները։

Մեր հեղինակի վերայերեալ կենսագրութեան մէջ մենք տեսանք որ՝ նա իւր ուսումնառութեան ժամանակ կամ նորանից յետոյ ուսած և ուսումնասիրած լինելը իրաւաբանութիւնը իրրև առանձին գիտութիւն։ Ընդ չէ երեւում նոյնպէս, ոչ նորա Վատաստանադրքից և ոչ սորա Նախաբանութիւնից։ Վորա պատճառը մենք համարում ենք այն որ՝ Մխիթարը չգիտեր յունարէն լեզուն, ինչպէս բացատրեցինք իւր տեղում։ Հայտնի է որ՝ 9 — 12 դարերու ընթացքում և մանաւանդ Կոմնենների ցեղից նստած կայսրների օրօք, որոց իշխանութիւնը տեւեց 1057 թուից մինչև 1185 թիւը,

միջոց՝ որուն ժամանակակից էր Գօշը, Կ. Պոլսում վերսին ծագղեցան թէ առհասարակ պետութիւնները և թէ առանձնապէս ընդհանուր և եկեղեցական իրաւաբանութիւնը։ Կայսերները սկսեցին հրատարակել նոր օրէնքներ և հին օրէնքների ժողովածուներ և խմբագրութիւններ։ Կանոնագիտ գիտնականները սկսեցին առանձին ուշադրութեամբ ուսումնասիրել և հետազօտել իրաւաբանական գիտութեան զանազան ճիւղերը և մանաւանդ եկեղեցական իրաւաբանութիւնը, հրատարակելով ընտիր շարադրութիւններ։ Կանոնների մէջ առանձին այժ տեսին իրաւաբանութեան զատատուածութեան, և մինչև անգամ բացուեցան վերսին մանուագիտական դպրոցներ։ Եւ ահա այդ իսկ միջոցներին մեր Մխիթարը յօրինում իւր Վատաստանադիրքը, բայց նորա մէջ չէ նշմարում բիւզանդական իրաւաբանութեան ազդեցութիւնը։ Փոխանակ կայսերական օրինադրութիւններից և ժամանակակից գիտնականների գրուածքներից նիւթ քաղելու՝ նա յօդուածներ է հանում՝ բացի մովսիսական օրէնքներից՝ Կարսեղ Անտարացու կանոններից, երբորդ և չորրորդ գարու յունաց եկեղեցական ժողովների տահմանադրութիւններից, այսինքն այնպիսի աղբիւրներից, որք վաղուց թարգմանուած էին հայերէն լեզուով։ Պարզ է ուրեմն որ՝ նա ոչ յունարէն լեզուն գիտէր և ոչ իրաւաբանական գիտութեան հետ ծանօթ էր։ Սորանով միայն կարելի է բացատրել նորա Վատաստանադրքի շատ տեսակ թերութիւնները. զորօրինակ սա չունի ինչպես ասացինք ոչինչ կանոնաւոր դասաւորութիւն կամ սիստեմա, եկեղեցական կանոնների մասին մէջ կան աշխարհական օրէնքներին վերաբերեալ յօդուածներ, և ընդհակառակն. միևնոյն առարկային վերաբերեալ յօդուածները չեն տեղաւորուած միասին, այլ ցրուած են զանազան տեղեր, որից միւս կողմից երեւում է որ՝ դրքա հաւաքուած են հետզհետէ, քրէական մասն նուազ է, և այլն։ Նոյն իսկ իւր ներքին դասաւորութեան մէջ Մխիթարը չէ առաջարկում մեզ, գոնեայ հետեւօդ կերպով, ոչ պատմութիւն իրաւաբանութեան, ոչ պատմութիւն իրաւաբանական պրիւդենցների, ոչ մի տեսակ վարդապետութիւն կամ տեսական մասն (dogma) իրաւաբանութեան ընդհանրապէս կամ նորա որևիցէ ճիւղի մասնաւորապէս։ Ընդ որում զորօրինակ՝ նա բնաւ չէ բացատրում ընդհանուր սկզբունքները քաղաքացիական իրաւունքի կամ

նորա որ և իցէ ձիւղն, որպիսի են՝ ընտանեկան, ժառանգական, կարուածական, և այլն։

Ի հարկէ առ այս կարելի է նկատել որ՝ Մխիթարը կարէր չունէր խօսելու այդ բաների վերայ, քանի որ նա յօրինուածը ոչ թէ դատաստիրքը, ոչ թէ տնտեսական քննութիւն, այլ մի դատաստանագիրք գործնական նպատակով՝ դատաւորների գործածութեան համար։ Այդ եթէ հիշենք որ՝ Պօշը լաւ գիտէր որ նա ինքն առաջինն էր սկսում գրել մի իրաւաբանական գիրք, որ՝ ազգային ժամանագրութեան մէջ նա չէր տեսնում իրաւաբանութեան վերաբերեալ շարադրութիւններ, որ՝ ժողովուրդը և նոյն իսկ դատաւորները կանգնած էին իրաւաբանական զարգացման առոր աստիճանի վերայ, նա պիտի զգար այդ կարիքը—դնել իւր Դատաստանագրքի մէջ նախ և առաջ իրաւաբանութեան տեսական մասն մի ամփոփ կերպով։ Եւ թէ նա յիրաւի զգացել է դոյն կարիքը՝ այդ երևում է նորա Նախադրութեան վերոյիշեալ վեց գլխից, ուր նա խօսում է դատարանի, դատաւորների, վկաների, երդման և այլ հարցերի վերայ։ Այդ նոյն այդ դատաստիրքը ցուցանում էր որ՝ մեր հեղինակի իրաւաբանական գիտութիւնների պաշարը չէ եղել այնքան ընդարձակ և հարուստ որքան պէտք է ունենայ մի դատաստանագիրք յօրինող մարդը, վասն զի նա խօսում է այդ բոլոր նշանաւոր իրաւաբանական առարկաների վերայ աւելի իրրև ատուածաբան քան թէ իրաւաբան։ Ընդհանրապէս նորա Նախադրութեան վերոյիշեալ գլուխները իմանալի են մեզ համար, որովհետև նորա մէջ Մխիթարը բացատրում է, թէպէտև շատ անմշակ կերպով, մանաւանդ երկու բան—դատաստանագրի ուսութիւն (судоустройство) և դատաստանավարութիւն (судопроизводство)։

Մխիթարը նախ և առաջ որոշում է Աորրորդ գլխի մէջ թէ ո՞վ պէտք է լինի դատաւոր։ Ատուածաբանական կէտից նայելով հարցի վերայ՝ նա հաստատում է Հին և Նոր կտակարանից քաղած բազմաթիւ վկայութիւններով և օրինակներով որ՝ իսկական դատաւորը միայն Ատուածն է, իսկ մարդիկ — դատաւորները՝ իրրև նորա փոխանորդներ։ Նոյն վկայութիւնների վերայ հիմնուելով՝ նա համարձակ իրրև բնական դատաւորներ — թագաւորները, իշխանները, և մանաւանդ մարգարէները՝ առաքեալները և քահանաները։ Այսպէս

են է որ՝ բոլոր հին հեթանոս ազգերի մէջ դատաւորական պաշտօնը համարվում էր իրրև քրմերի առանձին սեփական իրաւասութիւն։ և այսպէս շարունակվում էր երկար ժամանակ մինչև որ այս կամ այն ազգի մէջ բարձրանում էր և ընդարձակվում ընդհանուր իրաւարանական զարգացումն և ապա յաճախվում դատաւորական իրաւունքը կրօնական պաշտօնավարութեան իրաւունքից և փոքր գալով քրմերի ձեռից անցնում առանձին աշխարհական դատաւորների ձեռքը։ Մինչև անգամ հռովմայեցիների մէջ, երբ արդէն զարգացել և մշակուել էին բաւական ընդարձակ կերպով իրաւարանութեան շատ ճիւղերը, երբ արդէն անցել էին գրեթէ բոլոր իրաւաբանութեան պաշտօնները թագաւորի սենեկի եւ այլ պաշտօնավարների ձեռքը, դատաւորական իրաւունքը տակաւին մնում էր քրմերի ձեռքին և բաւական ուշ անցաւ աշխարհական դատաւորների ձեռքը։ Իսկ Իսրայէլացիների մէջ փոքր առ փոքր կազմուեցաւ Վաւատական ցեղից և մանաւանդ Եհարօնի սերունդից մի առանձին սրբազնացած դատաւորական, որին ժառանգական սեփականութիւն եղաւ կրօնական և մանաւանդ քահանայական պաշտօնների հետ միասին և դատաւորական իրաւասութիւնը, որովհետև ժողովրդական օրէնքի զօրութեամբ քահանաները վարում էին միշտ և դատաւորի պաշտօնը, իսկ աւագ քահանաները կամ քահանայապետները բաւական երկար ժամանակ կոչվում էին դատաւորներ և վարում էին ոչ միայն լոկ դատաւորական իրաւունքը, այլ կառավարում էին բնութեց ամբողջ ազգը գրեթէ իրրև մի իշխան կամ թագաւոր։ Նոյն սկզբունքը տեղի ունեցաւ և քրիստոնէութեան մէջ՝ ոչ սակաւ չիմն գտնելով Նոր կտակարանի մէջ, դատաւորական իրաւունքը այստեղ ևս փոքր առ փոքր անցաւ եկեղեցականների ձեռքը ոչ միայն առաջին երկը դարում, երբ քրիստոնեաները՝ չունենալ կրօնի համար մարմնաւոր իշխանութիւնից՝ յաժարութեամբ դիմում էին քահանաների և եպիսկոպոսների դատաստանին, այլ և յետոյ՝ երբ քրիստոնէութիւնը հաստատուեցաւ իրրև պետական կրօն և պաշտպանութիւն գտաւ մարմնաւոր իշխանութիւնից և երբ եկեղեցականների իրաւասութիւնները լայն սահմաններով ընդարձակուեցան ամեն կողմից, Եւ թէպէտ յետոյ՝ միջին դարերից սկսած՝ մարմնաւոր իշխանութիւնը ձեռ-

առումբ սահմանափակել և կարձել եկեղեցական դասի շատ տեսակ իրաւասութիւնները, որոց մէջ և դատաւորական իրաւասութիւնը, և թէպէտ այժմ բոլոր պետութիւնների մէջ խլած են եկեղեցական իշխանութեան ձեռքից զրեթէ բոլոր աշխարհական իրաւունքները, բայց այնու ամենայնիւ դատաւորական իրաւասութիւնը՝ մինչև այժմ համարեա կիսով չափ նորա ձեռքին է։ Մ՚ինչև այժմ տեսնում ենք բոլոր պետութիւնների օրէնքների մէջ շատ յօդուածներ, որոց զօրութեամբ մի քանի տեսակ վէճերի և յանցանքների քննութիւնը և դատաստանը յոզուցած ենումն եկեղեցական իշխանութեան ձեռքում։ և այլ իրաւունքը համեմատաբար աւելի ընդարձակ է այնտեղ, ուր եկեղեցին և հոգևոր իշխանութիւնը տակաւին մեծ նշանակութիւն ունին, զորօրինակ կաթոլիկական և յունադաւան պետութիւնների մէջ։

Այդ ընդհանուր սկզբունքը մենք տեսնում ենք և մեր ազգի մէջ, իբրև մի առաւելապէս կրօնական ազգի մէջ, ինչպես բացատրեցինք իւր տեղում։ Եւ ահա այդ սկզբունքի ազդեցութեամբ է՚ որ և մեր Մ՚խիթարը յատկացնում է դատաւորական իրաւասութիւնը առաւելապէս, զրեթէ յատկապէս, եկեղեցական դասին թէ սոյն Ձորրորդ գլխի մէջ, և թէ ուրիշ շատ տեղերում, ինչպես և առաջ տեսանք և յետոյ էս կը տեսնենք։ Բայց այստեղ միայն ընդհանրապես յիշեցինք թէ առաջնորդները, այսինքն՝ վեճակաւոր եպիսկոպոսները պէտք է լինին դատաւոր՝ նա աւելի պարզ բացատրում իւր միտքը հետևեալ Հինգերորդ գլխի մէջ։

Այդ Հինգերորդ գլուխը հետաքրքրական գլուխներից մէկն է, վասն զի դորա մէջ հեղինակը բացատրում թէ ինչ է նշանակում դատարան, ճշ կարող է դատաւոր լինել, ինչ յատկութիւններ պէտք է ունենայ դատաւորը, և այլն։ Մ՚խիթարը նախ և առաջ բացատրում թէ ինչ է նշանակում դատաստան կամ դատարան բառը։ Մ՚եր լեզուն, որ շատ հարուստ է ինքն քան ինքեան բառերով և դարձուածներով և ընդունակ է իւր արմատներից կազմել ամեն պետութիւններին վերաբերեալ մտքեր յայտնող բառեր և ոճեր, շատ ազդատ է իրաւաբանական բառերով և դարձուածներով, իսկ այդ մեծ ապացոյց է ինչպես յիշեցինք, որ՝ մեր ազգի մէջ իրաւաբանութիւնը և իրաւաբանական զարգացումն մեծացել են սաոք

ասպիճանի վերայ։ Հին լեզուների մէջ մեկը այնպես հարուստ չէ ոչ այս կողմից, ինչպես լատինական լեզուն, որովհետև ոչ մի տեղ իրաւաբանական զարգացումն, իրաւաբանութիւնը իրրև պետութիւն, և օրէնսդրութիւններ չհասան այնպիսի բարձր կէտին և կատարելութեան, ինչպես այդ լեզուով խօսող ազգի, այսինքն՝ Հռովմայեցիների մէջ։ Եւ թէպէտ վաղուց, շատ վաղուց, անհետացել է այդ արդարև երևելի ազգը, բայց նորա իրաւաբանութիւնը մինչև այժմ հիմն է եւրոպական իրաւաբանութեան, և այս ոչ միայն ազգային ազգերի մէջ, զոր օրինակ Ֆրանսիացիների, Իտալացիների մէջ և այլն, որք կազմուեցան գլխաւորապես Հռովմայեցիների ճեացորդներից, այլ և գերմանական, մինչև անգամ՝ սլաւոնական ազգերի մէջ։ Այդ ազդեցութիւնը այնչափ մեծ է որ՝ բոլոր եւրոպական ազգերի մէջ իրաւաբանական բառերի մեծագոյն մասն կամ ամբողջապէս վերցրած են լատիներէնից և կամ բարդուած են լատինական արմատներից։ Ասկ մեր լեզուի մէջ ընդհանրապէս զրեթէ ամենևին չկան իրաւաբանական բառեր և կամ լատինական արմատներից բարդուած բառեր, եղածներ էս ևս քիչ են կամ բոլորովին չկան իրաւաբանական բառեր, որով երևում է՚ թէ ծրչափ հետու և զուրկ է մեացել հայկական ժողովրդի զարգացումն և դպրութիւնը ընդհանրապէս և իրաւաբանութիւնը մասնաւորապէս հռովմէական այդ հանաշխարհական նշանակութիւն ունեցող լուսաւորութիւնից և իրաւաբանութիւնից։ Ընդհակառակն՝ հայոց ազգի մտաւոր զարգացման և հայկական դպրութեան վերայ աւելի մեծ ազդեցութիւն ունեցաւ հելլենական և բիւզանդական լուսաւորութիւնը, ուստի և մեր լեզուի մէջ տեսնում ենք շատ բառեր կամ ամբողջապէս վերցրած յունարէնից և կամ բարդած յունարէն արմատներից։

Իսկ թէ առ հասարակ ծրչափ սակաւ էր զարգացած և տարածուած ազգի մէջ իրաւաբանական գիտութիւնը, երևում է նորանից որ՝ Մ՚խիթարը հարկաւոր է համարում բացատրել դատաստան բառը, մի բառ՝ որ ամենայն բուկ լսվում ժողովրդի բերանում։ Թէպէտ՝ իսկապես ասկ՝ նա կամենում բացատրել ոչ թէ բառը կամ անունը, այլ դատաստանի էութիւնը և նշանակութիւնը թէ իրրև մի այնպիսի հաստատութիւն՝ ուր քննվում որև իցէ

քրէական յանցանք կամ վիճելի գործ և սահմանվում վճիռ, և ինչ մի այնպիսի գործողութիւն՝ որով քննվում են յանցանքի կամ վէճի հանգամանքները, ապացոյց և դատախազի բացատրութիւնները, վկաների ցուցմունքները, և այլն. բայց չըննդատով հիմնաւոր իրաւաբանական գիտութիւն՝ Կ՚ուշը չէ կարողանում յաջողակ կերպով կատարել այդ, և առաջարկում մեզ աւելի բան ազնական (փիլոսոփայական) բացատրութիւն։ Ընդհանուր առնելով նա չէ շփոթում դատաստանի երկու գլխաւոր մասը — տեղը և գործողութիւնը, այլ պարզ կերպով զատում նոցա միմեանցից։ Ապա նա շփոթում է դատաստան և դատարան բառերի նշանակութիւնը՝ համաձայնով նոցա հոմանուշ կամ նոյնանշան, միևչև մեր լեզուի մէջ՝ թէ ժողովրդի բերանում և թէ գրքերում, զրօրինակ՝ Սատանայի շուրջի մէջ, դատաստան կամ դատ նշանակում է յատկապէս գործողութիւն, իսկ դատարան — գործողութեան տեղը։ Սատանայի պնդութեան կողմից Կ՚ուխիարի բացատրութիւնը ուղիղ է, որովհետև սատան վիրջաւորութիւնը, ինչպես ինքն էլ օրինակ է բերում՝ Հայաստան, Սոբեստան, և այլն՝ սանակերիմ — պարսկական մանրիկ է և ցուցանում տեղը, բայց լեզուի ոգին շատ անգամ հեռանում է ընդհանուր կանոնից և յատկացնում այս ինչ կամ այն ինչ բառին մի այլ նշանակութիւն։ Այդ բացատրութիւնը տեսնում ենք և որ մասնիկի վերաբերմամբ դատաստան բառի մէջ, Ինչպես յայտնի է՝ որ վիրջաւորութիւնը սովորաբար ցուցանում է նիւթական կամ իմացական առարկայի և կամ գործողութեան պատկանելութիւնը մի ուրիշ ընդհանուր կամ անշունչ առարկային, զրօրինակ՝ թագաւոր — թագ ունեցող, զինուոր — զէնք ունեցող, ապաստան — ապաս, այսինքն ծառայելու պարտաւորութիւն ունեցող, մեղաւոր — մեղք ունեցող, գունաւոր — գոյն ունեցող, և այլն, բայց դատաստան բառի մէջ որ մասնիկը փոխում է իր նշանակութիւնը. Թէպէտ սա այստեղ նոյնպէս ցուցանում է պատկանելութիւն, բայց բոլորովին այլ իմաստով, որովհետև դատաստան չէ նշանակում դատ ունեցող, այսինքն՝ այնպիսի մարդ, որ կամ ինքն դատ տակ է և կամ ինքն դատ ունի ուրիշի հետ, դատաստ ունի ուրիշի վերայ, այլ նշանակում է այնպիսի մարդ, որը իրաւունք ունի դատել, քննել, ուրիշների գործերը,

Տալով դատաստանի սահմանը կամ նշանակութիւնը՝ Կ՚ուխիարը նոյն ընդհանրող գլխի մէջ բացատրում է թէ ինչ տեսակ գործեր են ենթակայ դատաստանին։ Նա բաժանում է բոլոր մարդկային գործերը երեք խոշոր դասակարգի — բարի, չար և միջակ։ Ինքն ըստ ինքեան մի այսպիսի բաժանմունքը ինքնուրոյն է և աւելի փիլոսոփայական քան թէ իրաւաբանական. բայց աւելի տարօրինակն այն է և զուրկ իրաւաբանական հիմունքից որ՝ նա ենթակայ է համարում դատաստանին միայն միջակ գործերը կամ գործողութիւնները, իսկ միւս երկու դասակարգը՝ բարին և չարը ենթակայ չէ համարում դատաստանին։ Թէ բարի գործերի և գործողութիւնների համար ինքն ըստ ինքեան չէ հարկաւոր իրաւաբանական դատաստան — այդ հասկանալի է, թէպէտ նոցա համար էլ կայ այլ դատաստան, բարոյական դատաստան — գովասանութիւն, շնորհակալութիւն, վարձատրութիւն, և այլն. բայց թէ և չար գործերը, գործօրինակ գողութիւնը, աւազակութիւնը, մարդասպանութիւնը, և այլն, ենթակայ չպիտի լինին, ինչպես ասում է Կ՚ուխիարը, իրաւաբանական դատաստանին — այդ բոլորովին անհասկանալի է և միանգամայն հակառակ իրաւաբանական դատաստանին — այդ բոլորովին անհասկանալի է և միանգամայն հակառակ իրաւաբանութեան ընդհանուր սկզբունքին, և դրա մէջ երևում հնդկական իրաւաբանական զարգացման անկատարութիւնը։ Թէպէտ Կ՚ուշը՝ ձշմարիտ է՝ գործանով չէ մերժում բոլորովին չար գործերի պատիժը, այլ միայն աւելորդ է համարում ենթարկել դատաստանական քննութեան այնպիսի չար գործեր, որը արդէն ինքն ըստ ինքեան վատ են, ինչպէս ինքն ասում է — յայտնի չարք են, բայց ոչ մի դարում և ոչ մի ազգի իրաւաբանութեան մէջ չենք տեսնում մի այդպիսի սկզբունք կամ կանոն, որով մի չարագործութիւն, որչափ և սոսկալի լինէր, զրօրինակ՝ մի մարդասպանութիւն օրը ցերեկով և բազմաթիւ վկաների ներկայութեամբ, թէպէտ և իւր յայտնութեամբ դա յայտնի չարագործութիւն է, պատժուէր առանց քննութեան, առանց դատաստանի, Ւրւ եթէ պատահին պատմութեան մէջ մի քանի այդպիսի օրինակներ, դրա ի հարկէ լոկ բացառութիւններ են, Ւրւ թէպէտ մեր հեղինակը նայում առարկայի վերայ աստուածաբանական կամ բարոյական կողմից, բայց նաև՝ այդ իսկ է նորա խո-

շոր պահաստեմբիւնը, որովհետև մի օբէնսգրքի կամ դատաստանագրքի մէջ հեղինակը խօսելով իրաւաբանական խնդիրների վերայ՝ պիտի միշտ մնայ իրաւաբանութեան սահմանների մէջ և այդպէս շատ չեղուած նացանիցի. և երկրորդ՝ ուղիղ չէ նոյն իսկ նորա անհնարկութիւնը վերջին դատաստանի օրինակի վերայ, ուրնորա կարծիքով իբր թէ բոլոր բաբի դործերը և յայտնի չար գործերը պիտի ատանան իւրեանց արժանաւոր վարձատրութիւնը և պատիժ առանց քննութեան, առանց դատիչոյ — որովհետև ոչ թէ միայն Աւետարանի աստուածաբան մեկնիչները և եկեղեցու հայր միաբերան ասում են, այլ և նոյն ինքը Աւետարանը պարզ հաստատում է, որ՝ վերջին դատաստանի ժամանակ նախ քննութիւն պիտի լինի, և ապա վարձատրութիւն և պատիժ տուի[77]):

Յետոյ Մխիթարը թվում է մի առ մի այն յատկութիւնները, որը պիտի ունենայ դատաւորը. Նա պահանջում է՝ որ՝ դատաւորը պիտի լինի չափահաս, հմուտ քաջ ուսումն, հանճարեղ, գիտուն, օրէնսգէտ, բարի, առաքինի, անձնանախանձ, ուշիմ, զգաստ, անաչառ, խիստ, անկաշառելի, համբերող, և այլն: Այս բոլոր պայմաններից միայն առաջինն է պատկանում իրաւաբանութեան: Մնացեալն զորմանալին այն է որ՝ Մխիթարը, ինչպես յետոյ կտեսնենք, ճշտութեամբ որոշելով վիճաների և դատաստանական երդումն տուողների չափահասութեան տարիքը, բնաւ չէ սահմանում դատաւորների չափահասութեան տարիքը. և որովհետև այնտեղ նա որոշում է 25 տարեկան հասակը, այստեղ էլ կարելի էր նոյնը ընդունել: Միւս յատկութիւնները թէպէտ չեն զուտ իրաւաբանական և Մխիթարը պահանջում է նացա բարձր բարոյական կէտից նայելով դատաւորական կոչման և պաշտօնի վերայ, բայց և իրաւաբանութիւնը միշտ ձգտում է տարերութեան հասցնել դատաւորի անձնաւորութիւնը՝ պահանջելով վեմ բարոյական յատկութիւններ. Յայտնի է որ՝ հասկական օրէնսդրութիւնը՝ բացի չափահասութիւնից և այլ շատ պայմաններից, առանց որոյ մի մարդ չէր կարող դատաւոր լինել, պահանջում էր՝ որ դատաւորացուն արատաւորած չլինէր իր պատիւը,

77. Տես Աւետ. Մատթ. գլ. ԻԵ. համար, 31 — 46.

կրած չլինէր դատաստանական անպատուութիւն — iufamia. այդ անպատուութեան — infamia -ին ենթարկուած մարդիկ կորցնելով շատ իրաւունքներ՝ չէին կարող և դատաւոր լինել: Իսկ նոր լուսաւորեալ ազգերի օրէնսդրութիւնները կոյսնակի կամ ուղղակի կերպով պահանջում են դատաւորական բարձր պաշտօն ստանալու համար վրեթէ նոյն բոլոր յատկութիւնները, ինչ որ յիշում է Մխիթարը. այսպէս զորօրինակ բարձր ուսում ունենալը և օրէնսգէտ լինելը անհրաժեշտ պայման է համարվում շատ տեղերում:

Վերջապէս՝ նոյն Ընկերութեան գլխի մէջ Մխիթարը դատաստանական իրաւասութիւնը բաժանում է երկու գլխաւոր մասն — աշխարհական գործերը ենթակայ է համարում մարմնաւոր իշխանութեան, իսկ եկեղեցական գործերը՝ հոգևոր իշխանութեան: Ի հարկէ՝ գործերի այսպիսի մի ընդհանուր կամ անորոշ բաժանմունքը ըստ դատաստանական ենթակայութեան շատ թերի է և անգոհացուցիչ: Յայտնի է որ՝ երբ պարզ և դրական կերպով չէ որոշած թէ՝ այսինչ կամ այնինչ տեսակ գործը մի տեսակ դատաւորի դատաստանական իրաւասութեան կամ մի տեսակ դատարանին է ենթակայ, միշտ կարող են ծագել շփոթմունքներ թէ վիճողների և թէ դատաւորների կամ դատարանների մէջ: Այս է պատճառը որ՝ իրաւաբանապէս զարգացած ազգերի օրէնսդրութեան մէջ անխուսափելի միշտ ձգտումն ճշտութեամբ որոշել գործերի դատաստանական ենթակայութիւնը: Ընդհակառակ զորօրինակ՝ ամեն ազգի մէջ, երբ գեռ մանուկ է նա իւր ընդհանուր և իրաւաբանական զարգացմամբ, զրեթէ բոլոր տեսակ գործերի դատաստանը ենթակայ է լինում քրմերի իրաւասութեան. յետոյ երբ հզօրանում իշխանական կամ արքայական իրաւասութիւնը՝ զինուորական գործերը, այսինքն՝ զինուորականների յանցանքները, վէճերը, և այլն, ենթակայ են դառնում այդ իրաւասութեան: Վերջապէս՝ երբ ամեն զարգանում ժողովրդը քաղաքականապէս՝ ամեն պարզ տրոհվում է գործերի ենթակայութիւնը և յատուկ են դարձել յատուկ դատաւորներ և դատարաններ քրէական գործերի համար առանձին, քաղաքացիական իրաւունքին վերաբերեալ վիճակի համար առանձին, և այլն: Նայելով այն կատարելութեան, որին հասել են այս կոգմից նորկայ պետութիւնների օրէնսդրութիւնները, այնու ամենայնիւ յամենայն պատահումն գատաւոր-

ներէ մէջ, գատաբաններէ մէջ, վիճակներէ մէջ տարաձայնութիւններ գործերէն դատաստանական ենթակայութեան մասին։ Իսկ հոգիերէ մէջ՝ ինչպէս երեւումէ, Մ՝խիթարէ ժամանակ դեռ եւս չկար այդպիսի որոշ բաժանմունք գործերէ դատաստանական ենթակայութեան, որովհետեւ դժուար է պարզել թէ Կօշը ի՞նչ է հասկանում աշխարհի դատաստան կամ աշխարհական գործեր ասելով։ Նոյնպէս դժուար է որոշել թէ՝ ինչ տեսակ գործեր ենթակայ էին եպիսկոպոսի կամ եկեղեցական իշխանութեան դատաստանին, ասելով՝ «եկեղեցւոյ դատաստան եպիսկոպոսն հոգաստէ»։ Երէ զորօրինակ մի քահանայ մարդասպանութիւն կամ գողութիւն անէր, մի կոյս պղծէր, իւր պարտքը վճարել չկամենար, ուրիշի կալուածքը յափշտակէր, ստացած աւանդը ուրանար, եւ այլն, ոչ պէտք է դատաստան անէր — եպիսկոպոսը թէ աշխարհական դատաւորը։ Նոյնպէս միւս կողմից՝ երէ մի աշխարհական մարդ գողութիւն անէր եկեղեցու մէջ, յափշտակէր եկեղեցական կալուածք, անպատուէր գործով կամ խօսքով մի քահանայ, եւ այլն, եպիսկոպոսը պիտի դատէր թէ աշխարհական դատաւորը։ — տէր հարցմունքներ, տարաձայնութիւններ, որ չէ կարելի պարզել Մ՝խիթարի վերոյբերեալ անորոշ եւ մոտ բաժանմունքով գործերի դատաստանական ենթակայութեան, բայց նորա դատաստանագրքից երեւում է որ՝ գրեթէ ամենայն տեսակ քրէական գործերը պիտի ենթակայ լինէին եպիսկոպոսի դատաստանին։ Այսպէս զորօրինակ Դատաստանագրքից Ներկրորդ մասնի ԺԲ. յօդուածի զօրութեամբ եկեղեցական դատաբանը պէտք է դատէ թագաւորին եւ իշխանին թշնամանողի եւ անարգողի յանցանքը։

Բացի սորանից՝ Կօշը չէ կարդում յատուկ դատաւորներ եւ դատարաններ աշխարհական գործերի համար, այլ դատաւորական իրաւասութիւնը թողնում է թագաւորների եւ իշխանների ձեռքին։ Այս եւս նշան է իրաւաբանական զարգացման տարրութեան թէ ազգի եւ թէ Մ՝խիթարի մէջ։ Որ թէպէտ նա պահանջում է որ՝ իշխանները, այսինքն՝ նախարարները, եւ թագաւորները դատաստանը կատարեն ատեանի, բայց թէ ի՞նչ է ուզում ասել նա այս ատեան խօսքով՝ դժուար է որոշել, որովհետեւ դատաստանական ատեան կարող է կազմել եւ մի անձն՝ երբ դատարանը միանձնական է, եւ երբ

կու կամ աւելի անձինք՝ երբ դատարանը բազմանձնական է։ Երէ ենթադրենք որ նա սոյն վերջին մտքով է հասկանում ատեանը, այսինքն թէ՝ թագաւորը կամ իշխանը միայնակ չպիտի դատէ, այլ պիտի դատակիցներ կամ խորհրդակիցներ ունենայ, բայց՝ թէ՞ք պիտի լինին դոքա՝ սովորական պալատականները թէ առանձին պաշտօնականներ, մշտական՝ պաշտօնով թէ առանձին կարգած ամեն դէպքի համար,— դժուար է որոշել։

Մ՝խիթարը աւելի պարզ է որոշում եկեղեցական դատարանի կազմակերպութիւնը. յանձնելով դատաւորական իրաւասութիւնը եպիսկոպոսին՝ նա չէ թոյլ տալի որ դա լինի միայնակ, այլ պահանջում որ եպիսկոպոսը ունենայ իւր հետ երկու կամ երեք մարդիկ։ Ուրեմն եկեղեցական կամ եպիսկոպոսական դատարանը պիտի բաղկանայ առնուազն երեք անդամից։ Մեր հետքնակը ցուցանում է այն մարդիկը, որք պիտի անդամակցին եպիսկոպոսին. նոքա պիտի լինին վարդապետներ, իսկ եթէ դոքա չիան՝ պիտանական քահանաներ, իսկ եթէ դոքա եւս չիան՝ տանուտէրներ։ Այս տանուտէր բառը մեր լեզուի մէջ զանազան նշանակութիւն ունի. առաջին՝ նշանակում սեփական տուն ունեցող մարդ, եւ այս իմաստով ի հարկէ չի վերաբերվում մեր խնդրին, երկրորդ՝ նախարար կամ իշխան, եւ այս մտքով յաճախ գործածվում մեր պատմագրութեանց մէջ. վերջապէս՝ նշանակում գիւղի մեծաւոր կամ կառավարիչ — մի պաշտօնական անձն որոշել իրաւունքներով եւ պարտաւորութիւններով, եւ այս մտքով գործածվում մինչեւ այժմ ժողովրդի բերանում, եւ անշուշտ գործածվում այդպէս Մ՝խիթարի ժամանակ եւ նորանից թեւրեւս շատ առաջ։ Երբ՝ այս երկու վերջին իմաստով տանուտէր բառը յարմարութիւն ունի մեր հարցի համար, բայց Մ՝խիթարը չէ պարզում թէ դոցանից որը ունի ի նկատի — նախարարները եւ իշխանները թէ գիւղական մեծաւորները կամ տանուտէրները, թէպէտ թեւրեւս աւելի առաջինը ունենայ ի նկատի։ Ինչևիցէ՝ մեզ համար ունելի հետաքրքրութիւն եւ նշանակութիւն այն է որ՝ Մ՝խիթարի խօսքով՝ եկեղեցական դատարանը չէր մի փակուած բան իրրեւ յատկապէս մի եկեղեցական ատեան, կազմած անպատճառ հոգեւորականների դասին պատկանած անդամներից, այլ այդ ատեանի մէջ եպիսկոպոսի հետ միասին կարող էին եւ իրաւունք

ունէին անդամակից և՝ աշխարհական մարդիկ։ Ա՛յս հանգամանքը միւս կողմից ցուցանում էր՝ որ եպիսկոպոսական աստիճանին կամ դասասաւանին ենթակայ էին ոչ միայն դատաստանական և կրօնական գործերը, այլ և աշխարհական կամ խառն գործերը։ Բայց թէ՝ եպիսկոպոսի հոգևորական կամ աշխարհական անդամակիցները ի՛նչ իրաւասութիւն ունէին — լոկ խորհրդակիցնե՞ր էին, թէ նորա հետ հաւասար ձայն ունէին — չէ բացատրում Մխիթարը։ Այնու ամենայնիւ աւելի հաւանական պիտի համարենք առաջին ենթադրութիւնը, ելնէ ի նկատ առնենք նախ այն որ՝ ինչպէս երևում, Մխիթարի խօսքերից, ինքն եպիսկոպոսը պիտի ընտրէր իւր անդամակիցները, ուրեմն նա կարող էր միշտ և՛ արձակել նոցա, եթէ չէին համաձայնում իւր կարծիքի հետ, և կարգել ուրիշները. և երկրորդ, հիմնուելով հեղինակի հետևեալ խօսքերի վրայ — «և զի թէ ինքն (եպիսկոպոսն) ոտիւտ իցէ ի նոցա վճռէն ուսցի զղատաստանն»։ Բայց այս վերջին խօսքը երկբացատրութիւն կրկրնդունէ. նախ՝ վճիռ բառը կարելի է հասկանալ որոշեալ խորհուրդ կամ առաջարկութիւն բառի իմաստով, և այդ իմաստով եպիսկոպոսը ուրեմն ազատ էր ընդունել կամ չընդունել նոցա վճիռը. երկրորդ՝ վճիռ բառը կարելի հասկանալ իւր իսկական իմաստով և այն ժամանակ եպիսկոպոսը անպատճառապիտի ընդունէր նորան իբրև միւս երկու անդամակցի միաձայն կարծիք և ուրեմն նորա հետ հաւասար ձայն ունէին եպիսկոպոսի հետ. և երրորդ՝ ուսցի բառը ցուցանում է որ եպիսկոպոսը, եթէ ոտիւտ էր, պէտք է առ ժամանակ վարժուէր իւր դատաւորական պաշտօնի մէջ հմուտ անդամակիցների օգնականութեամբ, և այստեղ վճիռ բառը կարող է դարձեալ երկու նշանակութիւն ունենալ՝ կամ կարծիք, որը եպիսկոպոսը կարող էր չընդունել, կամ որոշումն, որը նա անպատճառ պիտի ընդունէր։ Ենթ այսպէս, երբ հեղինակը պարզ չէ բացատրում իւր միտքը, հազար տեսակ մեկնութիւններ և մեկնութիւններ են առաջ գալի։ Մխիթարը չէ բացատրում որոշ կերպով մինչև անգամ այն հարցը թէ՝ ո՞ր եպիսկոպոսը իրաւունք ունէր դատաստան վարելու, ամենայն եպիսկոպո՞ս, թէ միայն միմանի առաջնորդ եպիսկոպոսա՞ր, թէպէտ մեր կարծիքով պիտոյ է հասկանալ առաջի վերջինս, որովհետև եկեղեցական կանոններով մի եպիսկոպոս

իրաւունք չունի խառնուիլ միւս եպիսկոպոսի թեմի գործերի մէջ. իսկ եթէ թեմը մեծ է և թեմակալը ունի եպիսկոպոս օգնականներ, նոքա կարող են վարել դատաստանական և ուրիշ սեռակ գործեր իւրեանց մեծաւորի թոյլատուութեամբ։

Դատաւորների բնոյթ և նոցա իրաւասութեան մասին մենք զարձեալ առիթ կունենանք խօսելու վոքր ինչ յետոյ, Վ. հոդուրդ գլուխը քննելու ժամանակ։

Սոյն Հինգերորդ գլխի մէջ ուշադրութեան արժանի է Մխիթարի և այն կարծիքը թէ՝ ուր չկան թագաւոր կամ իշխաններ, այնտեղ աշխարհական դատաստանն էլ պէտք է եպիսկոպոսները վարեն։ Նախ և առաջ՝ սորանից պարզ երևում թէ օրպիսի անորոշ հասկացողութիւն ունի նա գործերի դատաստանական ենթակայութեան մասին։ Երկրորդ՝ Հայաստանի վերաբերմամբ Մխիթարի խօսքերը կամ իմաստ չունէին, կամ կարող էին իւր ժամանակ մեծամեծ շփոթութեանց և տարաձայնութեանց տեղիք տալ։ Նորա ժամանակ բուն Հայաստանում թէպէտ չկար թագաւոր, բայց Հոյ իշխաններ շատ կային. սակայն, դատաւորներից շատերը ընկած էին օտար՝ մահմետական և քրիստոնեայ տիրապետողների իշխանութեան տակ։ Երբ այդպիսի դատաւորներում և մանաւանդ մահմետական տիրապետողների դատաստաններում եպիսկոպոսները պէտք է վարէին և՛ աշխարհական գործերի դատաստանը, որը թէպէտև իշխաններ էին, բայց բռնակալ էին և օտար թէ լեզուով և թէ կրօնով։

Թողնելով վերոյգրեալ մի քանի նշանաւոր թերութիւնները, ներկայ Հինգերորդ գլխի մէջ կան երկու պատասխանութիւններ։

Առաջին պատասխանութիւնն այն է որ՝ Մխիթարը բոլորովին չէ բացատրում դատաստանավարութեան մի քանի նշանաւոր մասները. զորօրինակ նա չէ որոշում թէ՝ գանգատը պէտք է անպատճառ գրաւոր լինի, թէ կարող էր լինել և բանաւոր. դատաւորը պարտաւոր էր հաղորդել յարձագանգն դատախազին ասելի գանգատի բովանդակութիւնը, թէ լոկ կոչուէր նորան նշանակած ժամանակին դատարան. եթէ ամբաստանողը կամ ամբաստանուածը նշանակած ժամանակին չներկայանային դատարանի մէջ, ի՞նչպէս պէտք է վարուէր դատաւորը — պիտի յանձգնի՞ գործը, թէ կարող էր քննել և վճռ-

ուն. Եթէ հակառակորդներից մէկ կամ միւս կողմը բաւական չէր դատաւորի վճռով, կարող էր բողոքել կամ խնդրել որ վերաքննուի գործը և քանի՛ ժամանակից յետոյ, որ չկորցնէր բողոքելու իրաւունքը. և այլն, և այլն։ Ձգացաւորել դատաստանավարութեան այսպիսի և ուրիշ շատ տեսակ էական մասները — անշուշտ մեծ պակասութիւն է օրէնսդրի և օրէնսդրութեան համար։

Երկրորդ պակասութիւնը այն է որ՝ Վօշը ոչ այն հիմներորդ պլեխ մէջ և ոչ ուս հասարակ Նախապրութեան մէջ չէ տալի ոչինչ հիմնաւոր և որոշ բացատրութիւն դատաւորների վարձատրութեան մասին։ Նա, ինչպէս տեսանք, պահանջում է դատաւորից շատ վսեմ յատկութիւններ, մի տեսակ մարդկային կատարելութիւն, մանաւանդ անկաշառութիւն, բայց թէ ի՞նչ է նորա վարձատրութիւնը — օրէնքը ոչինչ չէ ասում։ Այս թերութիւնը կարելի է բացատրել երկու պատճառով։ Նախ՝ աշխարհական գործերի համար նա չէ կարգում յատուկ դատաւորներ, այլ յանձնում է նոցա դատաստանը թագաւորին կամ իշխաններին իրրև մի մասն նոցա ընդհանուր իրաւասութեան և ուրեմն հարկ չկայ որ նորա առանձին ուշիկ կամ վարձատրութիւն ստանան դատաւորական պաշտօնի համար։ Երկրորդ՝ եկեղեցական գործերի համար դատաւորը եպիսկոպոսն է, որը կարող է դատել և աշխարհական գործեր. իսկ եպիսկոպոսը, մանաւանդ եթէ նա մենակալ է, ըստ իւր բարձր դրութեան բաւական ապահովացած է եկեղեցական արդիւնքներով։ Ուրեմն դատաւորի վարձատրութեան հարցը այնպէս նշանաւոր է թէ դատաստանավարութեան և թէ արդարադատութեան վերաբերմամբ, որ չէր կարող փախչել և Մխիթարի ուշադրութիւնից. վասնորոյ իւր Դատաստանագրքի առաջին մասի առաջին յօդուածի մէջ նա համառօտ ինչ բացատրութիւն է տալի սորա մասին։ Նա ընդունում է աշխատանքի վարձատրութեան քննդանուր սկզբունքը նաև դատաւորների վերաբերմամբ, բայց ոչ այն պատճառով որ՝ անհրաժեշտ համարէր ապահովացնել նորա նուիրական դրութիւնը, այլ երկուց կրկով որ՝ անվարձատրութեան պատճառով դատաւորը չդրաժարուի իւր պաշտօնից։ Մի այդպիսի երկիւղից կարելի է եզրակացնել որ՝ Մխիթարը համարում է դատաւորական պաշտօնը ոչ թէ մի հաստատ պարտաւորութիւն, դրած մէկի վերայ կամ բարձր իշխանութեան և կամ

հատարակութեան կողմից որոշեալ ժամանակով կամ ցմահ, այլ մի յօժարակամ պարտաւորութիւն, որից կարելի է հրաժարուիլ։ Ի հարկէ դժուար է ենթադրել որ՝ այս կողմից նա ի նկատի ունենայ իւր հաստատ դատաւորները — եպիսկոպոսները և թագաւորը կամ իշխանները, որք ըստ իւրեանց դրութեան երբէք իրաւունք չպիտի ունենան հրաժարուիլ դատաւորական պարտաւորութիւնից, երբ ժողովրդականք դիմումն նոցա՝ դանգատով եկեղեցական կամ աշխարհական գործերի մասին։ Ուրեմն պիտի ենթադրենք որ՝ նա այստեղ ի նկատի ունի պատահական դատաւորներ — Մ իջի մարդիկ կամ հաշտարարներ։ Հին իրաւաբանական սովորութեամբ՝ հատարակ ժողովրդականք իւրեանց վէձերով դիմումն շատ անգամ ոչ թէ պաշտօնական դատաւորին, եթէ մինչև անգամ կպ պրպիսին, այլ մի երրորդ անձին, որը ընտրումն երկուսանք համաձայնութեամբ և խոստանումն միաձայն ընդունել նորա վճիռը առանց տրտունջի և հակաճակութեան։ Ս յդպիսի դատաւորները կամ միջի մարդիկ դատումն հիմնուելով ոչ այնքան պետական օրէնքների վերայ, որը կարող են նորա և չիմանալ, որքան ժողովրդի մէջ ձևացած իրաւաբանական սովորութիւնների վերայ և մանաւանդ իւրեանց բնական խելքի և հասկացողութեան և խղճմտանքի վերայ։ Ս յդպիսի բնական դատաստանը իւր շատ տեսակ օգտակար կողմեր ունենալու պատճառով հետզհետէ ընդունելութիւն և վաւերականութիւն գտաւ հին օրէնսդրութիւնների մէջ, ստանալով աւելի որոշ և կանոնաւոր կերպարանք. մանաւանդ հռովմէական իրաւաբանութեան մէջ առանձին կանոնաւոր զարգացումն ստացաւ այս տեսակ դատաստանը, որ կոչվում էր arbitrium։ Սա պահպանուած է մինչև այժմ բոլոր եւրոպական օրէնսդրութիւնների մէջ։ Ուրեմն ոչ մի տեղ չէր և չէ ընդունուած որ՝ միջի մարդը կամ հաշտարարը — arbiter — վարձատրութիւն սահման կամ իրաւունք ունենար պահանջել այդ, թէպէտև միևնոյն մարդը հինգ, տասն և աւելի անգամ կատարէր դատաւորի պաշտօնը միևնոյն կամ զանազան վիճողների խնդրքով։ Մ՚իւս կողմից՝ և ոչ ոք չէր կարող ստիպել կամ պահանջել մէկից որ՝ նա անպատճառ յանձն առնէր միջի մարդու կամ հաշտարարի պարտաւորութիւնը, և այդ կախուած էր բոլորովին մարդու ազատ կամքից։ Ս՚ն երբէք այդպիսի միջի մարդիկ կամ հաշտարարներ

ունի ի նկատի Մխիթարը, երբ ենթադրում էր, որ՝ դատաւորը կարող է հրաժարուիլ դատաւորական պաշտօնից տաղտկանալով ձրիաբար վարել այն։ Ժամերով արդարացի է համարում որ այդպիսի դատաւորները վարձատրութիւն ստանան։ Բայց որովհետև Պօշը նոցա չէ համարում օրինաւոր կամ հաստատ դատաւորներ, այլ իբրև պատահական դատաւորներ, ուստի չէ յատկացնում նոցա որոշեալ վարձատրութիւն կամ ռոճիկ, և իրաւունք չէ տալի նոցա պահանջել այդ, այլ թոյլատրում նոցա ընդունել ընծաներ, եթէ դրծի տէրերը կամենան տալ իւրեանց յօժարութեամբ, բայց այդ էլ անպատճառ դրծի վճռելուց յետոյ, և ոչ թէ առաջ։

Թէպէտ եկեղեցական դատաւորները կամ եպիսկոպոսները ինչպէս վերը ասացինք, ապահովուած լինելով եկեղեցական արսիւնքներով, կարող էին առանց վարձատրութեան վարել իւրեանց դատաւորական պաշտօնը, բայց մխիթարը և նոցա համար յատկացնում վարձատրութիւն։ Սակայն այդ վարձատրութիւնը չէ հաստատ և մշտական, այլ պատահական և աննշան։ Մխիթարի ընտրած ազգիւրն է անժառանգ մեռնողների ժառանգութիւնը։ Տարակայսութիւնը և վիճաբանութիւնը հեռացնելու համար՝ նա բաժանում է այդ ազգիւրը հետևեալ կերպով. եթէ անժառանգ մեռնողը հայրապետի (կաթողիկոսի) սեփական վիճակի ժողովուրդ է՝ ժառանգութիւնը պիտի հասնի հայրապետին, իսկ եթէ եպիսկոպոսի վիճակին է՝ ժառանգութիւնը պէտք է բաժանուի երկու մասն — մին հայրապետին, միւսը եպիսկոպոսին, երրորդը քահանաներին. բայց եթէ նոյն հանգէսի կամ վիճակի մէջ կայ և՛ վարդապետ, որ նոյնպէս դատաւորի պաշտօն է վարում (թեև եպիսկոպոսի յանձնարարութեամբ), նա էլ պիտի մասն ստանայ այդ տեսակ ժառանգութիւնից։ Ինչպէս յայտնի է՝ առաջին անգամ Մեծն Կոստանդիանոս հաստատեց օրէնքով որ՝ անժառանգ մեռնողների ժառանգութիւնը սեփականութիւն լինի եկեղեցուն։ Այդ օրէնքը հետզհետէ մտաւ և ուրիշ քրիստոնեայ ազգերի օրինքների և եկեղեցական կանոնների մէջ, որպէս և մեր եկեղեցական կանոնների մէջ. իսկ այժմեան օրինքների զօրութեամբ այդպիսի ժառանգութիւնը պիտի հասնի արքունի գանձարանին։ Բայց Մխիթարը այդ տեսակ ժառանգութիւնը յատկացնում դատաւորներին իրբև վարձատրութիւն։ Ինչպէս երևում այս

սովորութիւնը առիլի հին է եղել և ընդհանրացած ժողովրդի մէջ, և մնացել է յետոյ էս երկար ժամանակ, որովհետև մի այդպիսի յօդուած տեսնում ենք և Նոր Նախիջևանի հայկական դատաստանագրքի մէջ, յատկացնելով դատաւորներին անժառանգ մեռնողների ժառանգութիւնը[78]։

Պէտք է նկատել որ՝ Մխիթարի ընտրած ազգիւրը չէ կարող յարմար և գոհացուցիչ համարուիլ, որովհետև շատ սակաւ է պատահում որ՝ մեռնողը չունենայ որևիցէ, գոնեա հեռաւոր ազգական, և ժառանգութիւնը իրբև անտէր հասնի դատաւորին։ Եւ եթէ յատկապէս դատաւորական պաշտօնով կարգուում լինէին առանձին մարդիկ, նոքա ի հարկէ չէին կարող բաւականանալ մի այդպիսի նուազ և անորոշ արսիւնքով, բայց որովհետև այդ պաշտօնը ընդհանրապէս և մանաւանդ եկեղեցական գործերի համար պիտի վարէին այնպիսի մարդիկ, որք ըստ իւրեանց կոչման ունէին և այլ արսիւնքներ, ուստի այդ արսիւնքը — անտէր ժառանգութիւնը, թէև ոչ յաճախ պատահէր, կարող էր բաւական լինել իրբև մի յաւելուած վարձատրութիւն։

Հետևեալ Վ. գլուխը նոյնպէս հետաքրքրական է և ուշադրութեան արժանի։ Մխիթարը շարունակում այս գլխի մէջ իւր խօսքը դատաստանակազմութեան և դատաստանավարութեան վերայ. նա բացատրում այստեղ թէ՝ ինչպէս պէտք է կատարել դատաստանական քննութիւնը, որը պէտք է ընդունել վկաները, առնուազն քանի՞ վկաներ պէտք է լինեն, որը կարելի է երդմամբ վճռել գործը, թէ՝ դատաւորը պէտք է բանտ ունենայ և այլն։ Բայց նախ և առաջ նա պարտիզել նորոգում նախընթաց գլխում յիշած և քննած հարցը թէ՝ քանի՞ դատաւորից պիտի կազմուի դատաստանական առեանը։ Նա պարտիզել կրկնում որ՝ դատաւորը չպիտի լինի միայնակ, այլ առեանը պիտի բաղկանայ գոնեա երեք անդամից։ Այս կրկնութիւնից երևում որ, Պօշին համձին չէ միանձնական դատարանը, վստահութիւն չունի նորա վերայ, և նոցայով աւելի լաւ ապահովացնել ոսոխի և դատապարտի իրաւունքները և դատա-

78. Տես ձեռագիր Դատաստանագիրք Նոր Նախիջևանի, գլ. Ը., յօդ. 66

տանի արդարութիւնը՝ պահանջուէ որ՝ գաւազ առեանը բաղխա-
նայ անպատճառ երկը անդամից: Իւր այս կանոնը աւելի հզօր և
վաւերական կայացնելու համար հնդիւնակը աւելացնուէ նախըն-
թաց գլխի մէջ յառաջ բերած իւր խորհրդածութիւնների և պատ-
ճառների վերայ նոր վկայութիւններ և հաստատութիւններ: Դոցա
մէջ շատ հետաքրքրելի են նորա հետևեալ խօսքերը. «Օրայս սո-
վորութիւն յառաջ հռովմայեցիք ունէին, զի ՀՐ. (այսինքն՝ 72)
այր հանապազ ի խորհրդան ունէին խորհել վասն ամենայն իրաց.
և ՀՐ վասն այնր սահմանեցին՝ զի Թուխցին թէ դՀՐ ազգաց
մարդկան զգիտութիւն նոքօք ունէցին, բայց այժմ ԺՐ (այսինքն՝
12) կարդիցին գատաւորս ըստ ԺՐ առաքելոցն..... Իսկ յորիք երկը
կացուցանեն զգատաւորսն, նոյնպես և վիրք՝ ի նոցունց ուսեալք,
ըստ Թուոյ Աբրբորգութեանն կամ ըստ համարոյ վկայիցն: Եւ մեզ
նոյնս է հաճելի երկքն, զի այլ բազում քան զայս զժուարաւ գտա-
նի յամենայն տեղիս»:

Ընտեղ ամենից առաջ ուշադրութիւն գարձնենք այն հանգա-
մանքի վերայ, որ Մխիթարը յիշումն այստեղ ուրիշ ազգերի ա-
նուններքը և օրէնքներու. այն է, հռովմայեցիներինը, յոյներինը և
վրացիներինը: Ինչպես տեսանք իւր տեղում՝ մեր հեղինակը, խո-
սելով իւր աղբիւրների վերայ, ասում, թէ նրանք է քաղել ուրիշ
քրիստոնեայ ազգերի օրէնքներից մինչ որ տեսել է և լսել է. բայց
ոչ այնտեղ—Վահագրութեան Տաճարորդ գլխի մէջ, և ոչ ուրիշ
տեղ—կամ Վահագրութեան և կամ Վատաստանագրքի մէջ,
բայց նորայ կատրից, չէ յիշում այդ քրիստոնեայ ազգերի անուն-
ները: Վրնելով այդ խօսքերը՝ մենք իւր տեղում բացատրեցինք, որ
Մօշը, մի կողմից, չգիտէր ուրիշ լեզուներ բաց ի գուցէ Թաթարե-
րենից, միւս կողմից, նա չունի ոչինչ քաղած օտար ազգերի օրէնք-
ներից, եթէ չյիշենք յոյների եկեղեցական կանոններից հանած մի
քանի քաղուածքներ: Բայց միևնոյն ժամանակ ասկատրինք, որ նա
կարող էր ծանօթանալ բիւզանդական օրէնքների և իրաւարանա-
կան ուսանողութիւնների հետ թէ Հայաստանում և թէ մանաւանդ
Սև լերան կողմերում լսելով կամ տեսնելով, ինչպես որ ինքն
էլ վկայում: Ահա այդ այս նկատողութիւնը և բացատրութիւնը
յարմարութիւն ունի և նորայ դէպքում վերադրելով կատրի մա-

սին, ուր յիշում հռովմայեցիների, յոյների և վրացիների անուն-
ները: Ընդ իսկ կատրից երևում, որ՝ նա քաղել է իւր տեղեկութիւ-
նը գատաւորների Թուոյ մասին ոչ թէ պատմութիւնից կամ օրէ-
նսդրքից, այլ ի լոյս—ժողովրդական ասանդութիւնից: Ընդհակ
զոր օրինակ նա ասում թէ՝ հռովմայեցիները առաջ ունէին առան-
ձին մշտական գատարան, որ բաղկանում էր 72 անդամից, իսկ յե-
տոյ պակասցրին կարգիով միայն 12-անդամ: Ընդ, ինչպես յայտ-
նի է, հռովմէական պետութեան հաստատութեան սկզբներում բո-
լոր գատաստանական գործերը՝ կրօնական, քրէական, հայցն, քնն-
նուածքն և վճռաւճիռն քրմերը: Յետոյ, երբ բառական հզօրացան
թագաւորները, նոքա թողին քրմերի ձեռքում միայն կրօնական և
քաղաքացիական, այսինքն բնատնեական, կալուածական, ժառան-
գական, և այլն գործերի գատաստանը, իսկ քրէական և պետարա-
կան գործերի գատաստանական իրաւասութիւնը յատկացրին իւր-
հանց իշխանութեան: Ընդ թագաւորները երբեմն երբեմն գատաս-
տանը, զոր օրինակ ապստամբութեան գործերի, կատարուէին ու-
րիշի ձեռքով՝ յանձնելով սովորաբար երկու մարդու, և դոքա կոչ-
ուում էին Duumviri perduetlionis. և մինչդեռ թագաւորի վճռի դէմ
չկար բողոք, այդ փոխանակ—գատաւորների վճռի դէմ կարելի էր
բողոքել, բայց ոչ թէ Օերակուսին կամ Անտաթին, այլ ազգա-
յին ընդհանուր ժողովին: Ապա՝ հասարակապետութեան ժամանակ
այս կարգը փոփոխութիւններ կրեց և գատաստանական իրաւասու-
թիւնը անցաւ Կոնսուլների (Consul) ձեռքը. բայց որովհետև գժգոհ-
ները և այդ ժամանակ կարող էին բողոքել ազգային ժողովին, ուս-
ստի Կոնսուլները յանձնեցին այդ ժողովին գատաստանական իրաւա-
սութիւնը այն տեսակ քրէական յանցանքների մասին, որոց համար
պատիժ էր որոշում կամ մահ և կամ կորուսա քաղաքացիական
իրաւունքների: Ընդ որովհետև շատ կողմերից անյարմար էր քրէ-
ական գատաստանը թողնել այդ բազմամարդ ժողովի ձեռքում,
ուստի փոքր առ փոքր սովորութիւն մտաւ՝ ամեն մի դէպքի համար
ընտրել Օերակուսի (Անտաթի) անդամներից առանձին յանձնա-
ժողով կամ գատաստանական տեղ: Դոքա կոչվում էին արտաքոյ
կարգի տեղեր quaestiones exfraordinariae, իսկ յետոյ հաստատուե-
ցան մշտական տեղեր—quaestiones perpetuae. բայց դրականապէս

յայտնի չէ որ՝ առաջին տեսակ կամ երկրորդ տեսակ առեանի անդամների թիւը լինէր անպատճառ 72, ինչպէս ասում Մ՝խիթարը, այլ անհամեմատ աւելի պակաս էր։ Նոյն միջոցներին և՝ քաղաքացիական գործերի դատաստանը նոյնպէս անցաւ Կոնսուլների ձեռքը, բայց յետոյ փոքր առ փոքր կազմակերպուեցաւ այլ տեսակ դատաստանավարութիւն, որ բաղկանում երկու մասնից—in jure և in judicio։ Առաջին մասն, in jure, այն էր որ գանգատը մատուցանվում պետութեան բարձր ատեանատարին—Magister, զոր օրինակ Կոնսուլին, յետոյ Պրետորին—Pretor, որը քննում և պարզում գործի իրաւաբանական մասն, բայց չէր տալի իւր վճիռը։ Իսկ երկրորդ մասն, in judicio, այն էր որ՝ երբ Մ՝ատիտորը կամ գանգատ քննողը տեսնում, որ գանգատը հիմնատոր է և իրաւաբանական կողմն կանոնատոր, ուղարկում գործը և գործի տէրերը իսկական դատաւորների մօտ վերջնական վճիռը տալու համար։ Պետութիւնը կազմում առանձին ցուցակ— Album [79] այն քաղաքացիներից, որք կարող էին վարել դատաւորի պաշտօնը, այդ ցուցակից Մ՝ատիտորը ընտրում մի կամ մի քանի անձինք իրրև դատաւորներ, որք կազմում էին կամ ժամանակաւոր և կամ երկարատև տեսան, բայց նոյնպէս յայտնի չէ որ՝ դոցա թիւը լինէր անպատճառ 72, ինչպէս ասում Կ՝ոշը։ Կարելի է կարծել, որ Մ՝խիթարը ի նկատի ունի Ծերակոյտը կամ Անտեղը. բայց յայտնի է որ նախ՝ Անտեղը իւր հաստատութեան սկզբում բաղկանում 100 անդամներից, իսկ յետոյ աւելի մեծացաւ այդ թիւը, և երկրորդ Անտեղը յատկապէս օրէնսդրական և մասամբ իւրք վարչական հաստատութիւն էր, և ոչ թէ դատարան։

Ուշադրութեան արժանի է այժմ բառը. յիշել թէ յոյները երեք դատաւոր ունին և միևնոյն ժամանակ ասել թէ հռովմայեցիները այժմ 12 դատաւոր ունին—անհասկանալի է. այդ այժմ բառը վերաբերվում Մ՝խիթարի ժամանակին, բայց այդ միջոցին ոչ հռովմայեցիներ կային և ոչ նոցա սերութիւնը։ Աւստի պէտք է կարծել որ՝ մեր հեղինակը ակնարկում եւրոպացի խաչակիրներին, որք սերեցին Յունաստանի և Եսիայի զանազան երկիրներին, կազմեցին փոքրիկ տէրութիւններ և հաստատեցին Կ՝ոնստանդնուպոլսում 1204 թ. (Մ՝խիթարը մեռաւ 1213 թ.) լատինական կայսրութիւն, կայսր ծնելով Ֆլանդրիայի դուքս Բաղդինը (Բալդուին)։

Ինչպէս տեսանք՝ Մ՝խիթարը նոյնպէս ընդունում ընդհանուր սկզբունքը և պահանջում որ՝ դատարանը բաղկանայ երեք անդամից

երեսին 72 անդամից բաղկացած բաւական երկար ժամանակ տևեց և կար, ինչպէս երևում, ամեն մի քաղաքի մէջ կամ ամեն մի գաւառի մայրաքաղաքի մէջ։ Բայց Իսրայէլացիների մէջ այս կարգը հետզհետէ փոխուեցաւ և կազմուեցան երեք տեսակ դատարաններ, 1· ամեն քաղաքի մէջ կար մի դատարան 3 անդամից մինչ զորձերի համար։ 2· մի դատարան 23 անդամից իրրև երկրորդ ատեճան ունկի ծանր և քրէական գործերի համար։ 3· վերջապէս բարձրագոյն դատարան, մի հատ ամբողջ ազգի համար։ սա կոչվում Սանհեդրին կամ Սինէդրիօն, բաղկանում 72 անդամից և դատվում Երուսաղէմի մէջ։ Այս երեք տեսակ դատարանները գոյութիւն ունէին մինչև անգամ Կրիստոսի ժամանակ և Նորանից յետոյ բաւական երկար միջոց։ Բայց յայտնի չէ որ՝ քրիստոնեաները օրինակ առած լինէին հրէական Սանհեդրինից և կազմէին իրենց դատարանները 72 անդամից։

Իսկ ինչ վերաբերվում մեր հեղինակի այն խօսքերին թէ՝ հռովմայեցիները յետոյ կարգեցին 12 դատաւոր, իսկ յոյները և վրացիները երեք, առ այս պէտք է նկատել որ՝ հռովմայեցիների մէջ արդէն վաղուց մտել էր սովորութիւն 3 անդամից կազմել դատարաններ։ Այդ սովորութիւնը հետզհետէ տարածուեցաւ բոլոր ազգերի մէջ և այժմ ընդհանուր կանոն է դարձած, բայց սորին կամ առաջին ատեճանի դատարանից, որ սովորաբար բաղկանում մի դատաւորից, Բայց Մ՝խիթարի խօսքերի մէջ առանձին ուշադրութեան

Բայց ինչպես նախընթաց գլխում, նոյնպէս և այստեղ, նա չէ տալի այդ երկը անպատճառաբար ձայն և իրաւասութիւն, այլ միայն պահանջում է, որ եպիսկոպոսը իրրև բուն դատաւոր ունենայ իր մօտ երիւռ կամ երեք խորհրդատուներ—փոքռատուս, իրաւասէր և արդարադատ մարդիկ։ Նախընթաց գլխի մէջ արդէն քննած լինելով մեր հեղինակի այս դրութիւնը կամ կանոնը, այստեղ միայն կաւելացնենք մի քանի բացատրութիւններ։ Կարելի է կարծել, որ՝ Մ՝խիթարը չէ կամենում դիմել եպիսկոպոսի բարձր իրաւունքներին և իշխանութեան, և չէ վստահանում ուղղակի սահմանափակել նորա դատաւորական իրաւասութիւնը։ Բայց և այնպէս՝ վախենալով որ եպիսկոպոսը իրրև բուն դատաւոր չսկսուի դիտութեամբ թէ անգիտութեամբ, իրրև մարդ սխալական, չտայ անարդար վճիռ, նա դնում է նորա մօտ երկու կամ երեք դիատուն և արդարամիտ խորհրդատուներ։ Մ՝եր հեղինակի միտքը պարզ է և բարձր, բայց ընտրած միջոցը չէ բոլորովին յաջողակ և նպատակայարմար։ Ի հարկէ՝ բարեխիղճ և հմուտ խորհրդատուները, չատանալով առձիկ կամ այլ վաճառութիւն և ուրիշ գործից կախումն չունենալով, յիրաւի կարող էին միշտ ազդեցութիւն ունենալ դատաստանի արդարութեան վերայ, բայց երբ այդ խորհրդատուները չունին վճռողական ձայն կամ մի այնպիսի իրաւունք, որով կարողանային հարկաւոր դէպքերում ընդդիմանալ բուն դատաւորի սխալ վճռին, այլ միայն ներկայ պիտի լինին դատաքննութեան ժամանակ և ապա լոկ խորհուրդ պիտի տան դատաւորին թէ՝ արդիպի վճիռը աւելի արդար կը լինէր, նորա կորցնում են իւրեանց բոլոր նշանակութիւնը, վասն զի դատաւորը կարող է չընդունել նորա կարծիքը և գործը բոլորովին հակառակ տալ իւր սեփական վճիռը։ Թէպէտ թէ Մ՝խիթարը կամենում մեզ ծանօթանել մի այնպիսի իրաւաբանական սովորութիւն, որոյ նմանը կար վաղուց Հռոմի մէջ։ Ընդհակառակ զինադական իրաւաբանները իրաւունք ունէին բացատրել կամ մեկնել օրէնքները և յայտնել իւրեանց կարծիքը։ այդպիսի իրաւաբան մեկնիչները կոչւում էին օրէնսգէտներ (կամ օրէնսմեկնիչներ—jurisconsulti, կամ իմաստուններ—prudentes, իսկ նորա պատասխանները—responsa prudentum։ Նորա մեկնութիւնը ինքն ըստ ինքեան ոչինչ օրինական զօրութիւն չունէր, բայց կրկնելով հետզհետէ

աւանդութեան զօրութիւն էր ստանում։ Սկզբում ոչինչ առանձին իրաւունք կամ թոյլատրութիւն տէրութեան կողմից՝ չէր պահանջվում օրէնք մեկնելու համար, բայց Օգոստոս կայսրը սահմանափակեց այդ ազատութիւնը և այնուհետև հարկաւոր էր հրաման ստանալ կայսրից։ Ադրիանից յետոյ օրէնսմեկնիչները կամ իրաւագէտները կազմուեցին գրեթէ մի որոշ խումբ և ունէին մի տեսակ հրապարակական կամ պաշտօնական դիրք, բայց նոցա մեկնութիւնը երկու տեսակ նշանակութիւն ունէր—երբ նոքա միասին տալիս էին միաբերան և համաձայն մեկնութիւն, դա ստանում օրէնքի զօրութիւն և պարտաւորեալ էր դատաւորների համար, իսկ եթէ կարծիքները բաժանվում էին՝ դատաւորը ազատ էր ընդունել կամ չընդունել այդ մեկնութիւնը [80]։ Ընդհանուր գիտնական իրաւաբանները կարծում են որ՝ Օգոստոս կայսրից յետոյ հաստատեցաւ Հռոմում այդ տեսակ մեկնիչներից առանձին յանձնաժողով սակաւաթիւ անդամներից բաղկացած դատաւորներին խորհուրդ տալու համար թէ օրէնքի իմաստը հասկանալու մասին և թէ գործին այս ինչ կամ այն ինչ տեսակ վճիռ տալու մասին, և միայն այդպիսի յանձնաժողովի խորհուրդը կամ մեկնութիւնը պարտաւորեալ էր դատաւորի համար երբ անդամների ընդհանուր միաձայնութեամբ էր տուած [81]։

Եւ եթէ դժուար է ենթադրել որ՝ Մ՝խիթարը ի նկատի ունենար մի այդ տեսակ խորհրդարան կամ յանձնաժողով, կազմած իրաւաբաններից կամ առհասարակ գիտնական և բանիբուն անձինքներից, կարելի է թոյլ տալ և ուրիշ կարծիք։ Հին հեղինեական ժողովների կանոնները պահանջում են որ՝ իւրաքանչիւր եպիսկոպոս կազմէ իւր վիճակի հոգևորականներից ժողով տարին երկու անգամ՝ վիճակի գործերը քննելու համար։ Եպիսկոպոսները առաջ ճշտութեամբ կատարում էին այդ կանոնը, բայց յետոյ թուլացնելով կարգը կազմում էին ժողովը միայն տարին մի անգամ, երկու տարին մի անգամ, և վերջապէս բոլորովին խափանեցին այդ սովորութիւնը. սակայն

80 Տես Ցուստինիանոսի Institutiones գիրք Ա., Բ. յօդուած 8։

81 Տես Gustitutes de Iustinien, traduites et expliquées par A. M. du—Caurroy, հատոր 1. եր. 24։

դոքա փոխարէն՝ նոքա գումարումէին միայն իւրեանց քաղաքի հոգևորականներից ժողովներ, երբ հարկաւոր էր լինում այդ վերջը տովորեցնել հաստատուկցաւ ժողովել մայր կամ եպիսկոպոսական նիստերը, որը կազմումէին գրեթէ մի մշտական խորհրդարան կամ սիւնհոդոս եպիսկոպոսի։ Ընդի հաստատական է կարծել՝ որ մեր հեղինակը ի նկատի ունի եպիսկոպոսի համար այսպիսի մի խորհրդարան կամ սիւնհոդոս, և այս կարծիքը աւելի հաստատութիւն է տանում եթէ յիշենք թէ Ա՛նխիմերը պահանջում՝ որ՝ եպիսկոպոսի խորհրդատուները լինին նաև և առաջ վարդապետներ, ապա քահանաներ, իսկ երբ չկան ոչ գիտական վարդապետներ և ոչ գիտական քահանաներ, կարող են լինել և աշխարհականներ։

Թէ այսպէս և թէ այնպէս՝ Կօշի առաջարկած խորհրդատուները կարող էին այնու ամենայնիւ շատ օգտակար լինել արդարադատութեան համար, մանաւանդ մի այնպիսի ժամանակում՝ երբ դատաւորները ազէտ էին, ինչպէս վկայում ինքն հեղինակը, և չգիտին որոշ և հաստատ օրէնքներ։ Նոքա մի բարեյական դատաւորներ են պաշտօնական դատաւորների վերայ։ Ներկայ եւրոպական դատաստանների կազմակերպութեան մէջ չկայանէ մի այսպիսի հաստատութիւն։

Վ. Երկերորդ գլխի մէջ ուշադրութեան արժանի է և այն որ՝ Ա՛նխիմերը թոյլ է տալի հրապարակական, գոնեպատ դատաստան, եթէ ոչ ժողովրդականների համար իրրև ունկնդիրներ և հանդիսատեսներ, գոնեայ ասելի և դատախազի համար։ Նա պահանջումէ որ առաջին՝ դատաւորը կատարէ դատաստանը անպատճառ առեանի մէջ, երկրորդ որ՝ ներկայ լինին միասին ասելը և դատախազը, և երրորդ որ՝ ներկայ լինին երկու կամ երեք խորհրդատուներ։ Նա իրաւունք է տալի դանդատաւորին և պատասխանատուին խօսել դատարանի մէջ համաձայնութեամբ, բայց հանդարտութեամբ, պարկեշտութեամբ, ձշմարտութեամբ և կարդով կամ հերթով, մէկը միւսից յետոյ, չխլելով խօսքը միմեանց բնաւին։

Բայց նա բոլորովին ընդդէմ է փաստաբանութեան և մերժումէ միանգամայն ընդունել դատարանի մէջ վարձած ձարտար ատենախօսներ կամ փաստաբաններ, որովհետև, ասումէ նա, նոքա շատ

անգամ կարողանումեն իրեանց պերճախօսութեամբ խաբել դատաւորի միտքը, նոքա շատ անգամ թիւրումեն գործի նկատութիւնը, փոխումեն փաստերի կերպարանքը և սխալ վճիռ են հատանել տալի։ Փաստաբանների այդպիսի անարեմիտ վարմունքը, որը տարատարատար ներկայ լուսաւորեալ դարում մի սովորական բան է դառնել, աչքի էր ընկնում ոչ միայն բրիւզանդական, այլև հռովմէական դատարաններում։ Բայց և այնպէս՝ մերժելով առհասարակ փաստաբանական հաստատութիւնը, այսինքն, իրաւաբանական դիտաւոր սկզբունքներից մէկը, մարդու դիտաւոր իրաւունքներից մէկը—յանձնել ուրիշին իւր իրաւունքների պաշտպանութիւնը, մեր հեղինակը աւելի աստուածաբանական և բարոյական շրջանի մէջ է քան թէ իրաւաբանականի մէջ։ Ընդհակառակ նա ընդունում փոխանորդ կամ հաւատարմատար կարգելու սկզբունքը, բայց իրրև բացառութիւն, հարկաւոր դէպքերում և որոշեալ մարդոց համար. զոր օրինակ՝ ոմն երթալ գլխի մէջ, ինչպէս կանանցից, նա ոչ միայն թոյլ է տալի, այլև պահանջում որ, կուսակրօնները և ծերաւոր քահանաները անձամբ անձին չվարեն իրեանց դատաստանական գործերը, որպէս զի ստիպուած չլինեն երբեմն երդմամբ վերջացնել վէճը, այլ պիտի յանձնեն իրեանց գործերը իրեանց աշխարհական ազգականներին։ Աւելին փոխանորդական կամ հաւատարմատարական իրաւունքը նա սահմանափակում երկու պայմանով—միայն որոշեալ անձինք կարող են կարգել հաւատարմատար և միայն որոշեալ անձինք՝ ազգականներ, կարող են լինել հաւատարմատար։ Մ՛ինչդեռ ոչ միայն ներկայ ազգերի օրէնքներով, այլև հռովմէական օրէնքներով գործի տէրը իրաւունք ունէր յանձնել իւր գործի պաշտպանութիւնը ում որ կամենումէր. ճշմարիտ է, սկզբներում և այդ օրէնքները իրաւունք չէին տալի փոխանորդ կարգելու, բայց դոքա անյարմարութիւնը շուտով նկատուեցաւ և նոքա թոյլատրուեցաւ իրրև բացառութիւն մի քանի գործերի համար, իսկ յետոյ հաստատուեցաւ իրրև ընդհանուր կանոն [82]։ Ինչպէս յայտնի է հռովմայեցիների մէջ յետոյ կազմուեցաւ փաստաբաններից մի ամբողջ դասակարգ. ամեն մի դատարանի մօտ կար մի որո-

82 Տես Ցուստինիանոսի institutiones, գիրք Դ. Տիտղոս 10։

շեալ խումբ փաստաբանների կամ պաշտպանների, որոց անուանները մուծուած էին առանձին ցուցակի մէջ. նոքա օգնում էին հակառակորդներին իրաւաբանական խորհուրդներով և խրատներով, նոքա պաշտպանում էին գատարանի մէջ նոցա գործերը, և ստանում էին որոշեալ վարձատրութիւն [83]; Բայց երբ հռովմէական փաստաբանների անբարեմասութիւնը հասաւ ծայրահեղութեան, օրինադրութիւնը սահպրուեցաւ գործ դնել զանազան զգուշաւոր միջոցներ. այսպէս զոր օրինակ փաստաբանը պարտաւոր էր յառաջագոյն երդուիլ որ՝ որ գործի մէջ կը պաշտպանէ միայն ճշմարտութիւնը [84];

Յանկանալով որ գատաւորի առեանը մի անսակ վսեմ պատկառանք ազգէ բոլոր քաղաքացիների, գատախազների և վկաների վերայ՝ Պօշը խստիւ արգելում գործել գատարանի մէջ որևիցէ ազմուկ, խռովութիւն և անկարգութիւն, և պատուիրում գատաւորներին խափանել և հեռացնել իսկոյն այդպիսի անկարգութիւնները: Մի գոյնպիսի պատկառանք առ գատաստանական առեանը միշտ պահանջել են հին և նոր ազգերի օրէնքները:

Մխիթարը նոյն Վ. հեղերորդ գլխի մէջ պահանջում, որ գատաւորը հիմնէ իւր վճիռը ոչ միայն ասելի և գատախազի խօսքերի վերայ. այլ և վկաների ցուցմունքների վերայ, և նա սահմանում, որ՝ այդ վկաները լինին գոնեա երիւ կամ երեք, ինչպէս պահանջում Ս. Պիլքը: Եւ հաստատակ շատ հակառակ լինելով երդման սովորութեան՝ նա ոչինչ չէ ասում վկաների երդման մասին, բայց Ութերորդ գլխում խօսելով գատաստանական երդման վերայ, մասամբ իւրը ամփոփում, և վկաների երդման մասին, վասն որոյ իւր տեղում մենք դարձեալ կը խօսենք այս հարցի վերայ:

Մխիթարը ցանկում, որ՝ գատաստանը լինի արագ և ոչ թէ դանդաղ և երկարատև, որով մեծամեծ վիճաներ են հասնում վիճողներին: Թէպէտ նա իւր Դատաստանագրքի Եռաջին մասի առաջին յօդուածի մէջ պահանջում, որ՝ գատաւորները անպատճառ ուշնեան գոլերներ կամ քարտուղարներ գատաստանական գործերը

83 Տե՛ս Յուստինիանոսի Codex, գլ. Բ. Տիտլոս 7:
84. Տե՛ս Յուստինիանոսի Institutiones, գիրք Դ. Տիտլոս 16:

գրով վարելու համար, բայց ներկայ գլխու մէջ, ուր աւելի իւրկեպ և յարմար էր, ոչինչ չէ յիշում գոլերների և գրաւոր գատաստանավարութեան մասին: Սորանից կարելի է ենթադրել թէ նա կամենում որ՝ գատաստանը լինի բանաւոր, որ՝ ոսկը և գատախազը իւրեանց բացատրութիւնները տան բերանացի, որպէս և վկաները իւրեանց ցուցմունքները, գատաւորը քննէ գործը նոյնպէս բերանացի հարց ու փորձով: Թէև գործերը կարող էին վերջանալ և բանաւոր վճռով, առանց գրաւոր ատենագրութեան, ունենալով այն ապահովութիւնը որ՝ այդ վճիռները տրուելիս վիճողների, վկաների և մանաւանդ խորհրդատուների ներկայութեամբ, և գոքա հարկաւոր եղած ժամանակ միշտ կարող էին վկայել և հաստատել գործի որպիսութիւնը և գատաւորի վճիռը: Իսկ աւելի ծանր գործերը պէտք էր վարել անշուշտ գրով, որոյ համար և կարգում Մխիթարը գոլերներ կամ քարտուղարներ: Բայց ներկայ Վ. հեղերորդ գլխի մէջ նա զգուշացնում գատաւորները հսկել իւրեանց գոլերների վերայ, որպէս զի կաշառ չառնեն նոքա և չապրեն գործի արդար վճիռը յեղաշրջելու համար. այս մտքով պէտք է հասկանալ նոյն գլխի հետևեալ խօսքերը: «Ելլև գատաւորն զգոյշ կացցէ յի՛ր ո՛չ ապատաւորացն որք այնպէս կարողք իցեն զի ի գատաստանի խօսիցին, զի սովորութիւն է ի գատ եկելոցն ծածկաբար կաշառել զի յիւրեանց կողմն խօսեսցին, զի մի՛ գուցէ ի նոցա (ապատաւորաց) հնարիւք խօսել խարիցին միտք գատաւորին իրանս նոցա և առնիցէ թիւր զգատաստանն»: Յատեղ յի՛ր ո՛չ ապատաւորացն ասելով պէտք է հասկանանք ոչ թէ հասարակ ապատաւորներ կամ ծառաներ, որք ի հարկէ չէին կարող խօսակցութեան մէջ խառնուիլ գատաստանի ժամանակ, այլ գատարանի ապատաւորներ կամ պաշտօնավարներ—քարտուղար, գոլեր կամ գրագիր, և այլն, որք յիրաւի մէջոց կարող էին ունենալ ատեանի ժամանակ մանաւանդ գատաստանին ատենագրութիւն անելով, գրաւոր բացատրութիւնները և հարկաւոր թղթերը կարգալով, և այլն: Թէպէտ կարելի է Մխիթարի խօսքերը հասկանալ նաև բառական մտքով, որովհետև՝ ինչպէս յայտնի է, արևելեան երկրներում ծառաները առհասարակ մեծ ազդեցութիւն են ունենում իւրեանց տէրերի վերայ:

Մխիթարը, ինչպէս երևում, չէ ընդունում զանազան աստի-

ձանի դատարանները — ատորին, միջին, բարձր, որպես զի մէկի վճռից դժգոհ անձինք կարողանային բողոքել աւելի բարձր ատեաններ։ Ընդհակառակն ատեաններ, գոնեա երկուսը, կային միշտ բոլոր հին ազգերի մէջ, իսկ նորերի մէջ սովորաբար դատարանները բաժանվումն երեք ատեաններ. բայց մեր հեղինակը միայով միշտ աւելի ատուածաբանական և մանաւանդ բարոյական, քան թէ իրաւաբանական շրջանի մէջ, ընդունում դատարանի համար միայն մի ատեաններ։ «Նա ասում. «բայց մի՛ ոք մեզ դիցէ նոցա որ ակամայ սխալին. իսկ որ կամաւ թիւրէ զդատաստանն՝ ինքն մեայ ի դատապարտութիւն վերին դատաստանին»։ Ուրեմն՝ ակամայ կամ անգիտութեամբ տուած սխալ և անարդար վճռի դէմ նա չէ թոյլ տալի բողոք, իսկ կամաւ և գիտութեամբ տուած սխալ և անարդար վճռի համար թոյլ է տալի բողոքել Աստուածն կամ թոռնել անարդար դատաւորի վրէժխնդրութիւնը և պատիժը երկնաւոր դատաւորի ձեռքին։ Ուստի սորանից մեր հեղինակը, իբր տեսակէտից նայելով բանի վերայ, ուզեի հինն աւելորդ համարել դատարանի երկրորդ կամ աւելի ատեաններ։ Նա շատ բարձր հասկացողութիւն ունի դատաւորների վերայ, նա պահանջում նոցանից ամէն տեսակ մտաւոր և բարոյական կատարելութիւն, նա պահանջում արագ և արդար դատաստան և այդ նպատակով նա կարգում հրապարակական կամ դռնեայց դատարանութիւն և երկու կամ երեք խորհրդատուներ կամ դատաւորական վկաներ, նա պահանջում, որ դատաւորը հինի իւր վճիռները ականատես և հաւատարիմ վկաների ցուցմունքների վերայ, և ահա այսպէս բոլոր դժուարութիւնները տեսնելուց յետոյ և կարծելով թէ բոլորովին ապահովացրել է արդարադատութիւնը՝ նա աւելորդ է համարում կարգել և՛ երկրորդ ատեաններ առաջինի վճռի դէմ բողոքելու համար։ Նա թէպէտ Դատաստանագրքի մէջ կան առհասարակ ինչ ինչ անկարելութիւններ անարդար դատաւորների պատասխանատուութեան մասին, բայց չէ որոշուած կարգը և կերպը։

Վ՚երջապէս՝ Վ՚եցերորդ գլխի մէջ Մ՚խիթարը պահանջում, որ դատաւորը ունենայ և բանտ յանցաւորների համար։ Սակայն նա չէ որոշում թէ ի՞նչ տեսակ յանցանքի համար կարելի է բանտարկել և որքան ժամանակով։ Ասկայն նորա հետևեալ խօսքերից — «պարտ է և բանտ լինել դատաւորին զի զատա հակառ ի բանտ արկցէ զի խրատեսցին» — երևում, որ նախ՝ նա բանտարկելի է համարում միայն քրէական յանցաւորները, որովհետև ստատհակ բառը աւելի այդ մտքով պէտք է հասկանալ, և երկրորդ՝ բանտարկութեան փոքայ նայում ոչ իրրև պատժի միայ իրրև արած յանցանքի փոխարէն և վրէժխնդրութիւն, այլ իրրև խրատական և ուղղեցուցիչ միջոցի միայ։ Այս գանազանութիւն մեծ նշանակութիւն ունի իրաւաբանութեան մէջ և ցուցանում Մ՚խիթարի իրաւաբանական գաղափարների նրբութիւնը այն խնդիրների մէջ։ Յայտնի է որ՝ թէ հին ազգերի և թէ մահմետական օրէնքով պատիժը համարվումէր իրրև վրէժխնդրութիւն և փոխարէն կատարած յանցանքի. այդ գաղափարը փոքր առ փոքր մնաւ բոլոր ազգերի իրաւաբանութեան և օրէնսդրութեան մէջ և շարունակվումէր մինչև անգամ քրիստոնէութեան դարերու ընթացքում։ Միայն վերջին ժամանակներում եւրոպական իրաւաբանութիւնը փոխեց այդ գաղափարը և նայում պատժի միայ ոչ իրրև փոխարէն և վրէժխնդրութիւն յանցանքի, այլ իրրև ուղղեցուցիչ միջոց, որ՝ յանցաւորը խրատուի, ուղղուի, լաւանայ իւր բարոյականութիւնը և գործոյ վերստին պիտանի քաղաքացի հասարակութեան և հայրենիքի համար, սորանից — այն մեծ փոփոխութիւնները պատիժների ձևերի, բանտերի և այլ տեսակ պատժարանների կազմակերպութեան մէջ, այլև պատժուածների կեանքի և առողջութեան ապահովութեան մէջ, որ տեսնում ենք այժմ։ Ուրեմն այդ վեմի մարգարէը գաղափարը յայտնում և մեր Մ՚խիթարը, այն ևս մի խօսքով — զի խրատեսցին ասահինները, բանտարկուածները։

Եմրորդ Եօթներորդ գլուխը նուիրում Մ՚խիթարը վկաների հարցին։ Նա պահանջում, ինչպես և նախընթաց գլուխ, որ ոտոխը և գատախազը անպատճառ վկաներ ունենան, որովհետև նոցա բողոքները և վիճաբանութիւնը առանց վկաների ցուցմունքների, կարող են լինել դատարանի մէջ շատ երկարատև, բայց այնու ամենայնիւ դատաւորը կարող է դժուարանալ որոշել և համոզուել թէ նոցանից ո՞րն է արդարը։ Ո՛չնարատևաօս վկաների ցուցմունքների զօրութեամբ դատաստանի վճիռը կլինի աւելի արդար և ուրիշն տեղը չէ տալու գանգատաւորների մէջ կատարճներ ծանոթանալ և բո-

դրքեր յարուցանելուն։ Սոյն իսկ վիճողները՝ ունենալով հաւատարիմ և ճշմարտախօս վկաներ՝ կարող են աւելի շուտով զինջոզութիւններ անել միմեանց և հաշտուիլ։ Թօշի խօսքերից այնպէս է երեւում որ՝ զանգատաւորը և պատասխանատուն կարող են հաշտուիլ գատաւորի մէջ, որով նորա կազմակերպած գատաբանը փոքր ինչ նմանուած այժմեան հաշտարար դատարաններին։

Մ՚խիթարը բացատրում պայմանները թէ ոմ կարող է և ոմ չէ կարող վկայ լինել։ Այդ պայմաններից կարելի է կազմել հետեւեալ երկու ազիւսակը։

I. Վկաները պէտք է լինին.

1. Խարեխիղճ, ճշմարտասէր, անկաշառակեր, և այլն.
2. Չափահաս.
3. Այր մարդ։

II. Վկայ չեն կարող լինել.

1. Ընթարոյականներ, ստախօսներ, կաշառակերներ, և լն.
2. Ընչափահասներ.
3. Ազգականներ.
4. Ոչ — քրիստոնեաներ.
5. Կանայք։

Ունենալով այս երկու ազիւսակը դրական և բացասական պայմանների մենք տեսնում որ՝ ասոցանից մի քանիսը վերաբերվում աւելի բարոյական քան թէ իրաւաբանական շրջանին. իսկ մնացածները զուտ իրաւաբանական են և ընդհանուր են բոլոր հին և նոր օրէնսդրութիւնների մէջ։

Դրական պայմաններից առաջինը պահանջում վկայից անարատ բարոյականութիւն. բայց սոյն պայմանը իւր ներկայ դրական յատկութեամբ չէ զուտ իրաւաբանական։ Թէպէտ ոչ միայն նոր ազգերի, այլ և հին ազգերի օրէնքները միշտ առանձին ուշադրութիւն էին դարձնում վկայի բարոյականութեան վերայ, բայց պայմանները լինում էին թէ դրական, այլ բացասական։ Այսպէս զոր օրինակ՝ հռովմէական օրէնսդրութիւնը չէր պահանջում որ՝ վկան լինէր անպատճառ յայտնի բարոյական և առաքինի մարդ, այլ պահանջում էր որ՝ նա չլինէր յայտնի անբարոյական մարդ իբրեւ արեան մարդով, այսինքն՝ կրած չլինէր մի այնպիսի պատիժ, որով կո-

րուսանդումէին զանազան իրաւաբանական իրաւունքները, որոց հետ և վկայ լինելու իրաւունքը։ Եւ եթէ, հետեւելով Մ՚խիթարի խօսքին, պահանջուէր որ՝ վկան յայտնի բարոյական մարդ լինէր, գատաւորին կը հարկաւորէր նախ և առաջ մի առանձին քննութիւն կատարել և ստուգել նորա բարոյայնութիւնը և ապա ընդունել նորանից ցուցմունքները, որով ի հարկէ պիտի յառաջանային բազմաթիւ անյարմարութիւններ և մանաւանդ պիտի չափազանց ժամանակ և երկարէր բուն գործի դատաքննութիւնը։ Այլ որովհետեւ մի բարոյական մարդ կարող է լինել անշուշտ աւելի հաւատարիմ վկայ, քան մի անբարոյական վկայի ցուցմունքները կարող են լինել սուտ և անհաշտապատ, ուստի հին և մանաւանդ նոր ազգերի օրէնքները դիմում են զանազան դրութեանց միջոցներին վկայութեան ճշմարտութիւնը և հաւատաւորութիւնը ապահովացնելու համար։ Այդ միջոցների մէջ դիտաւոր է երդումն, որով վկան պարտաւոր է կամ նախընթեր ասելոյ երդում, կամ յետոյ երդմամբ հաստատել իւր ցուցմունքները եթէ հարկաւոր կը լինի, յարուցած կասկածը փարատելու համար։ Մի ուրիշ նշանաւոր միջոց այն է որ՝ օրէնքները որոշում են վկաների պատիժ ստախօսութեան, սուտ երդման, կաշառառութեան համար, և այլն։ Իսկ մեր հեղինակը ոչ միայն չէ սահմանում ոչինչ պատիժ սուտ և անհաւատալի վկայութեան համար, այլ նա մինչև անգամ չէ յիշում որ վկաները պարտաւոր լինէին երդմամբ հաստատել իւրեանց ցուցմունքները։ Մենք տեսանք որ՝ նախընթաց դիտի մէջ նա նշանակէս ոչինչ չէյիշեց վկաների երդման մասին։ Նոյն լուռթիւնը պահպանում նա և հետեւեալ Ութերորդ դիտի մէջ, որ խօսում դատաստանական երդման վերայ, որով վիճողները կարող են վերջացնել իւրեանց գործը։ Նա միայն ցանկանում որ՝ վկան բացի առարկել լինելուց ունենայ նաև պատասխանի հնարաւորութիւն լինի ասելով թէ այդպիսի վկան կը լինի անպատճառ հաւատարիմ։

Առաջին ազիւսակից կամ դրական պայմաններից երկրորդը, որով Մ՚խիթարը պահանջում որ՝ վկան չափահաս լինի, ընդհանուր իրաւաբանական սկզբունք է։ Պայմանի որ՝ հռովմէական օրէնսդրութիւնը մեծ ուշադրութիւն էր դարձնում չափահասութեան վերայ զանազան իրաւաբանական գործողութիւնները կատարելու համար։

Նոյնպէս վարժուհին և վարժուհին և ուրիշ օրինաւորութիւնները, Թայց մեր Մխիթարը դադնալ չեղուեաց գուա իրաւաբանական ճանապարհից. Նա սահմանում է վիայի չափահասութեան համար 25 տարեկան հասակը, ասելով թէ միայն այդ հասակն է կատարեալ, որովհետև այդ հասակն է նշանակած եկեղեցական կանոնների քահանայ ձեռնադրվելու համար։ Թայց մի վիճելի գործի կամ մի եղելութեան հանգամանքները ճշմարտութեամբ երևան հանելու համար բաւական է որ վիայն նոյն դիպքում ունենայ հասկացողութիւն, յիշողութիւն և ճիշտ անկիւռութիւն։ Այդ է պատճառը որ հռոմէական օրինաբրութիւնը թեպէտ կատարեալ չափահասութիւնը համարում էր նոյնպէս 25 տարեկան հասակը, բայց վիայ ընդունում էր և ուրիշ պահաս հասակով մարդիկ։ Նոյ առհասարակ որպէս հին, նոյնպէս և նոր օրէնքները չեն սահմանում մի հասակ և անշարժ հասակ վիաներին չափահասութեան համար, այլ զանազան դէպքերում զանազան նշանակութիւն են տալի վիայի այս թէ՝ այն թէ՝ հասակին և նորա վիայութեան։ Նոր օրէնքերը, զոր օրինակ, ընդունում են 7—8 տարեկան մանուկների վիայութիւնը, բայց ասում են, որ 14—15 տարեկան պատանիներից միչև անգամ երդմամբ։ Ինչն Մխիթարը զգում է և հասկանում իր պատկան խառնութիւնը և անյարմարութիւնը և շատ ուշ ընդհանուր կանոններ մի քանի բացառութիւններ, զոր օրինակ՝ վաճառականութեան վերաբերեալ վիճերի մէջ նա թոյլ է տալի ընդունել մանուկների չափահասութիւն ունեցող վիաներ, այսինքն՝ 13—14 տարեկան անձինք. յայտնի է որ՝ այս հասակը և հռոմէական օրէնսդրութեամբ չափահաս էր համարվում մանուկների համար։ Թէպէտ այս մանուկների չափահասութիւնը, որ սահմանել էր մեր եկեղեցին, ասացել էր օրինաւորութիւն և գործադրութիւն նաև ուրիշ գործերի մէջ, բայց Մխիթարը չէ ընդունում այդ հասակը իրրև վիայութեան չափահասութիւն առհասարակ, թեպէտ նրինելով որ՝ չէյ թէ Ծնողները և ազգականները, կամ նոքա, որք բերում են այդ հասակ ունեցող երին իրրև վիայ, ներդրում են նոցա վերայ և գործ չարը գործ դնեն նոցա մասաղ հասակը՝ խաբելով, խրատելով, ահ տալով, և այլն։ Թայց և այնպէս՝ նա ենթադրում, թէ պէս ասացինք, ընդունել իրրև վիայ և՝ մանուկ-

կան չափահասութիւն ունեցող անձինք երբ հարկը ստիպում, զոր օրինակ՝ երբ չկան ուրիշ վիաներ կամ երբ հասատատ յայտնի է որ՝ մի այդպիսի վիան դիտէ գործի ճշմարտութիւնը, և այլն։ Ընդհակառակ դէպքերի համար մեր հնդինակը զգուշութիւն է անում, բայց ոչ թէ ուղղակի, այլ աստիճանաբար. ընդհանրապէս պահանջելով որ վիաները լինին 25 տարեկան և առ նուազն երկք, նա թոյլ է տալի ընդունել մի վիայ ամուսնական չափահասութեամբ, երբ կան երկու կատարեալ չափահասներ—25 տարեկաններ. ընդունել երկու վիայ ամուսնական չափահասութեամբ, երբ կայ մի չափահաս—25 տարեկան վիայ. ընդունել վերջապէս և բոլոր երկք վիաները ամուսնական չափահասութեամբ, երբ չկայ ոչ մի չափահաս—25 տարեկան վիայ։

Վերջապէս՝ առաջին ազիւսակի երրորդ պայմանով Մխիթարը պահանջում էր որ վիան լինի անպատճառ տրեան սեռից. Նա չէ ընդունում կին վիայ։ Թէպէտ հնադոյն գարերից սկսած միչև մեր նոյ. իսկ լուսաւորուած ժամանակը կինը միշտ սահմանափակուած է եղել իր իրաւաբանական իրաւունքների մէջ, բայց զանազան ժամանակ և զանազան ազգերի մէջ այդ սահմանափակութիւնը եղել է զանազան աստիճանով և զանազան զգծադրութիւնների վերաբերմամբ. սակայն կինը գրեթէ միշտ ունեցել է իրաւունք վիայ լինելու, թէպէտ նշդնպէս այնուայլ սահմանափակութիւններով։ Արեւելքում կինը առաւել ևս սահմանափակուած էր իր բոլոր իրաւունքների մէջ. միայն հրէաների կանոյքը, ինչպես երևում Ս. Գրքից, վայելում էին համեմատաբար աւելի ընդարձակ ազատութիւն։ Այն սովորութիւնը, որով կինը Զարմանասանում, Հայասատանում, սկսած է միշտ երեսը փակած պահել, այդ մարդուն չերևայ, և այլն, հին գարերից է մնացած և անշուշտ իր բոլոր զորութիւնը ունէր Մխիթարի ժամանակ. այս կողմից՝ քրդերի կանոյք կազմում են զարմանալի բացառութիւն—նոքա երեք երեսը չեն փակում և նոյնպէս Համարձակ խօսում են օտար մարդու հետ, որպէս իրենց ամուսնու կամ մարդու հետ։ Մխիթարը զրկելով կանոյքը վայելութեան իրաւունքից՝ հեռու տանում է նրանց վիայութիւնից՝ եկեղեցական և ազգային կամ ժողովրդական. Այն երկրորդ հայացքն կողմից Մխիթարի հաղորդած տեղեկութիւնները շատ հետա-

քրքրաշարժ են և թանկագին։ Նիկեցական հայեացքով՝ կինը չէ կարող քահանայ լինել, և այլն։ Ազգային կամ ժողովրդական հայեացքով՝ որի վերայ զուտ ազդեցութիւն է ունեցել դարձեալ նկատի, կինը չէ կարող պինուր լինել, պատուր լինել, վաճառականութիւն անել, տաժարպուռ շորեր հագնել, շուկայում (բազար) նստել, մինչև անգամ հնձան հարկանել, այսինքն հնձանի մէջ գինի քամել[83]։ Նայելով կանոնց այսպիսի դրութեան վերայ՝ Մխիթարը ի հարկէ չէր կարող ասել նոցա իրաւունք վիայ լինելու համար դատաստանական գործերի մէջ, բայց որովհետև անկարելի էր բոլորովին զրկել նոցա այդ իրաւունքից ի նկատի ունենալով երբմեմնական անհրաժեշտ հարկաւորութիւնը, նա թոյլատրում բացատրութիւն և ընդունում նոցա իրրև վիայ միայն հարկաւոր դէպքերում։ զոր օրինակ՝ երբ կինն ուրիշ վիաներ, երբ գործը պատահել է կատարից մէջ, և այլն։ Բայց և այս բացատրութիւնը սահմանափակում նա զանազան պայմաններով, որովհետև կատարեալ հաւատս չէ ընծայում նոցա. այսպէս՝ զոր օրինակ՝ նա պահանջում որ՝ կին վիաների թիւը լինի կրկնապատիկ. այսինքն՝ առ Նուազն չորս կամ վից, որ նոքա լինին բարոյական և գործ մասին պէտք է վիային ուրիշները։ Ասւական չէ այս, նոքա չպիտի գնան գատաստան, այլ իւրանց ցուցմունքները պիտի տան իւրանց անհրում, ուստի նա պատուիրում գատաւորին որ՝ ուզարկէ կին վիաներին մօտ նոցա ցուցմունքները առնելու համար այնքան այլ մարդիկ, որքան են նոքա և ապա պարտաւոր է ընդունել այդ երկրորդական կամ փոխ—վիաները իրրև իսկական վկաներ։ Վերջապես Պօղը ունի և իւր հոգևորական պատճառներ, որով հարկաւոր է համարում հետացնել իսկական տեղը վիայ լինելու իրաւունքից կամ սահմանափակել այդ իրաւունքը. այդ պատճառն է այն որ՝ կանայք պիտ բարդրեա են, ենթակայ են կքերի ազդեցութեան, շուռով խորմուելին վատաբաշական և սիրահարական քաղցր խօսքերով, և այլն. և այս բոլորը նա ամփոփում մի

83։ Եյս մեկը թերևս հաւեստութեան պաճառով որ՝ կինը չօտիպտի բաց անել ոտները մինչև ծունկերը և աւելի ևս բարձր, կամ գուցէ այն պատճառով որ՝ գինին գործադրում է Ս. Բաժակի մէջ։

բաւի մէջ ասելով, «ման դիւրաղդութեան ձէ պարտ ընդունել (դևանայս) իվիայս»։

Մխիթարը սչինէ չէ յիշում կին վիաների չափահասութեան մասին, որով պիտի հասկանանք, որ նա ընդունում նոցա համար նոյն 25 տարեկան հասակը ինչ որ սահմանել է այլ վիաների համար։ Բայց կարելի է թերևս տարաձել և նոցա վերայ այն բոլոր բացառութիւնները, որը սահմանել է նա այլ վիաների չափահասութեան համար, մանաւանդ որ, խնայելով նոցա փոխանորդութիւն այլ վիաներ և դրքա այդպիսի դէպքում պիտի անշուշտ լինին անպատճառ չափահասներ։

Ընդհ պահանջ դէպի երկրորդ ազիւսակը։

Բացատական պայմաններից առաջինը զրկում վիայ լինելու իրաւունքից նոցա, որք են անբարոյական առաքաս, կաշառակեր, և այլն։ Եյս կոպիտ Մխիթարը աւելի մտանում հին և նոր ազգերի իրաւաբանական սկզբունքներ։ Դա ինքնաբ անչուշտ այնպիսի անբարոյական մարդիկ, որոց անբարոյականութիւնը արդէն յայտնի է և հասարակաց, զոր օրինակ՝ վիան արդէն պատիժ է կրել սուտ վկայութեան համար ուրիշ գործի մէջ, և այլն։ Եւ այս ընդհանուր սկզբունքը ընդունում բոլոր հին և նոր օրէնսգրութիւնները։ Եւ այլապես չէր կարող լինել, որովհետև կամ պէտք էր առանձին քննութիւն կազմել, ինչպես վերը ասացինք, ամեն մի վկայի անբարոյականութիւնը նախընթացաբար սուրգելու համար, և կամ կարելի էր լինէր միշտ հետացնել վիաները կասկած յայտնելով նոցա բարոյականութեան և հաւատարմութեան մասին։ Ուր հնդինակը սչինէ բացառութիւն չէ թոյլ տալի այդ տեսակ վիաների համար, մինչդեռ կարող է պատահել որ՝ մի այս ինչ որոշ գործի մէջ բացի դէմ տեսակներից չկան ուրիշ վիաներ. բացի սրանից՝ մի հաստատուած անհատատարիմ վիան կարող է ձշմարտութեամբ վկայել մի ուրիշ գործի մէջ։ Եյս պատճառով մասամբ հին ազգերի և մանաւանդ նոր ազգերի օրէնքները թոյլ են տալի իրրև բացառութիւն երբեմն վկայ ընդունել և յայտնի անհատատարիմները կամ անբարոյականները, բայց և նոքա ընդունում այդ բացառութիւնը աւելի քրէական գործերի մէջ, զոր օրինակ՝ մի բանտարկուած գողը կամ

մարդասպանը կարող է վկայ լինել միևնոյն մարդասպանութեան կամ դաւթեան գործի մէջ, այն ևս առանց երդման։

Ընդհանուր պայմաններից երկրորդը, որով անչափահասը չէ կարող վկայ լինել, մենք քննեցինք վերը կողմնակի կերպով, բացատրելով վկայութեան չափահասութեան պայմանը։

Երրորդ պայմանով վկայ չեն կարող լինել ազգականները։ Այս իրաւաբանական սկզբունքը նոյնպէս ընդհանուր է հին և նոր օրէնսդրութիւնների մէջ։ Ընայ Մխիթարը և այսօրուայ իրերի դրութիւնը նա չէ պրոշում թէ որ տեսակ ազգականները և մինչև որ աստիճանը կարող չեն վկայ լինել։ Այս կողմից նոր օրէնսդրութիւնները ազգականութիւնը բաժանում են երկու դասակարգի. մի տեսակ ազգականները — ամենամերձաւորները ամենևին իրաւունք չունեն վկայ լինելու, զոր օրինակ՝ քաղաքացիական, այսինքն՝ ժառանգական, կալուածական, ընտանեկան, և այն գործերի մէջ որ ղէքը ընդդէմ ծնողների, մի ամուսինը ընդդէմ միւս ամուսնոյ։ միւս տեսակ գործերի մէջ ինքնակամ ազգականները կարող են հրաժարուել վկայութիւնից տալուց, իսկ եթէ չհրաժարուին ինքնակամ կամ հրաժարեցուած չլինին հակառակ կողմի պահանջմամբ, կարող են վկայել՝ բայց առանց երդման։ Ուրիշ մեր հնդինակը չէ տալիս ոչինչ բացատրութիւններ. բայց տեսնելով որ անկարելի է բոլորովին հեռացնել ազգականները վկայ լինելու իրաւունքից՝ նա առհասարակ մի բացառութիւն — ընդունել նոցա կրի հարկը տախտակի, այսինքն՝ երբ չկան ուրիշ վկաներ։ Սակայն՝ և այս բացառութիւնը նա սահմանել ժամանակի պահանջմամբ որ՝ ուրիշ մարդկի վկայն նախքան գործադրութեան դնելը և ճշմարտանալու թիւնը, դատաստանադատութեան համար շատ անյարմար է այն պայմանը, որով հնարաւոր է տալ կողմնակի կամ երկրորդական քննութիւնների և երկարացնում դատաստանադատութիւնը։

Չորրորդ պայմանով Մխիթարը հեռացնում վկայ լինելու իրաւունքից անհատականները, այսինքն՝ ոչ — քրիստոնեաները, զոր օրինակ հեթանոսները, հրէաները, մահմետականները քրիստոնեաների գործերից, իսկ հերետիկոսները, հերձուածողները ամենայն գործերից՝ ուղղափառների գործերից։ Այս կողմից մեր հնդինակը հետևում է ուրիշ ազգերի օրէնսդրութիւններից։ Կրօնը այնպիսի մեծ նշանա-

կութիւն և ազդեցութիւն ունի մարդու հոգու վրայ որ՝ կրօնական խորութիւնը միշտ անկէք է տուել առնութեան զգացմունքին։ Այս պատճառով՝ հին ազգերի օրէնքները միշտ ենթադրում են որ՝ կրօնով տարբեր մարդիկ չեն կարող և հաւատարիմ և անաչառ, անկողմնապահ վկայ լինել միմեանց գործերի մէջ, ուստի կամ բոլորովին հեռացնում են վկայ լինելու իրաւունքից գէմ և կամ ասելի նուազ և երկրորդական նշանակութիւն էին տալի նոցա վկայութեան։ Այս սկզբունքը տարածուեցաւ միչև անգամ քրիստոնեայ ազգերի օրէնսդրութեան մէջ։ Ստոա հետքերը նշմարում ենք միչև այժմ մի քանի նոր ազգերի օրէնքների մէջ, զոր օրինակ՝ հրէաները ոչ ամենայն տեղ ընդունում են վկայ կամ վաճառ վկայ քրիստոնեաների գործերի մէջ, մահմետական վկաների խիստ պահանջում են որ՝ կրկնապատիկ լինին, և այլն [86]։ Ընդհանուր մեր հնդինակը չէ տալիս որոշ կանոն թէ որ ազգերի քրիստոնեաները կարող են վկայ լինել միմեանց գործերի մէջ, մահմետականները մահմետականների համար, հրէաները հրէաների համար, և այլն։ Նոյն սկզբունքը ընդունում է մեր Մխիթարը։

Մեր հնդինակը թեև ուրիշ հին ազգերի պէս հեռացնում քրիստոնեաներին, այսինքն՝ հայերի գործերից ոչ — քրիստոնեայ և ոչ — ուղղափառ վկաները, որովհետև նոքա ժամանակի մի կողմից մահմետականները սրբում են Հայաստանին և Տարածում հայոց ժողովրդը կրօնի համար, շատ անգամ սուտ վկաներ հանելով և նոցա ցուցմունքների զօրութեամբ խլելով հայերից կայքը և կալուածքը, կինը և որդիքը և այլն. միւս կողմից՝ նոյն միջոցներին և ժանտաւանդ փոքր ինչ առաջ սկսել էր վիրաւոր երևալ և տարածուիլ ժողովրդի մէջ հին թշնամութիւնների ոգին, մինչև անգամ քաղքենական յարաբերութիւնները շատ անկերպով ոչ սակաւ հալածում էին, նեղացնում, զրկում էին ուղղափառ հայերին։ Ընայ ուշադրութեան արժանին այն է որ՝ Մխիթարը ոչինչ չէ յիշում թէ քրիստոնեաները փոխադարձաբար նոյնպէս իրաւունք չունէին վկայ լինելու ոչ — քրիստոնեաների և ոչ — ուղղափառների գործերի մէջ, թէ կարող էին վկայ լինել։ Շատ հաւանական է որ՝ նա պատրաստ էր

[86] Տես Сводъ Законовъ 1875 г. Т. XV, ст. 219.

տալ այդ իրաւունքը քրիստոնեաներին, բայց յառաջեմք է անցնել այդ կէտը և թեւրեա դիտակցաբար որովհետև զորանով ցուցած կը լինէր մի տեսակ կոմպետենտահաւատիւն, անարդարութիւն Իայի սրանից՝ ու՞ր — քրիստոնեաների վերաբերմամբ գոյն և աւելորդ կը լինէր տալ քրիստոնեաներին այդ առաւելութիւնը, որովհետև ամբաստանողները դատաւճիռ ժողովրդը, երբ գործը նոցա էր հասնում, ու՞ր թէ հայոց դատաստանագրքով կամ հին սովորութիւններով, այլ իւրեանց օրէնքներով և սովորութիւններով, որոց զօրութեամբ նոքա ինքեանք չէին ընդունում քրիստոնեաների վկայութիւնը մահմետականների գործերի մէջ և կամ դին չէին տայի այդ վկայութեան, ինչպես և այժմ։ Իսկ հերետիկոսների, հերձուածողների, աղանդաւորների գործերի մէջ անշուշտ ընդունվում էր ուղղափառ հայերի վկայութիւնը, մանաւանդ եթէ գործը թէ կրօնական և թէ աշխարհական քննութեամբ հոգևոր իշխանութիւնը ուրեմն և աւելորդ կը լինէր հերետիկի տեսակէտից տանձին յիշել գործ մասին իւր Աստուածատեացքի մէջ, Իսկ ուրշ երկրներում, Հնդստանում, Պրիմում, Վրաստանում, Մխիթարի Նախադրութիւնը, ինչպես տեսանք, գործադրութիւն չունէր

Վերջապէս՝ հինգերորդ կամ վերջին բացառական պայմանը, որով կանոյք իրաւունք չունին վկայ լինելու, մենք արդէն քննեցինք կողմնակի կերպով այլ վկաների վերայ խօսելու ժամանակ։

Իայի վերայ քննեալ դրական և բացառական պայմաններից, Մխիթարը յիշում է վկաների մասին նաև մի քանի այլ պայմաններ, Նկատելս զոր օրինակ այն Նօթ-ներորդ դլխի վերջում վկաների ցուցմունքները բաժանում է նա երկու տեսակ—տեսած և լսած, և թէպետ առաւելութիւն չէ տալի մէկին կամ միւսին, բայց պահանջում է որ՝ վկաները նոքա հասատանն լրեանց տեսանոտես կամ տեսանջատը լինելը և ապա վկայեն Մի այսպիսի դրական պայման կամ պահանջողութիւն չունք տեսնում ու՞ր մի օրէնդրութեան մէջ, որովհետև ըստ ինքեան գօրութեամբ ենթադրվում է որ՝ վկան կամ տեսած է կամ լսած պիտի լինի իւր ցուցմունքների մէջ յիշած հանդամանքները, իսկ երբ մի վկայի ցուցմունքները նման չեն միւս վկաների ցուցմունքներին, նոքա սովորաբար անհիմն են համարվում, թէև ու՞ր միշտ, և այդ կախուած է դատաւորի համոզմունքից,

Վերջապէս, հետևեալ Ութերորդ գլխի մէջ, որը շուտով կսկսինք քննել, Մխիթարը, խօսելով յատկապէս դատաստանական երդման վերայ, ասում է «Մաքսաւորի և արբենցողի և ամենայն մեղաւորի մինչև զղջասցին՝ մի՛ լիցի նոցա երդումն և մի՛ ընդունիցի զնոսա վկայս։ Ուրեմն մաքսաւորները, արբեցողները և այս հասարակ մեղաւորները իրաւունք չունին վկայ լինելու։ Նախ՝ զարմանալին այն է որ՝ մեր հեղինակը ասյն պայմանը չէ դնում ներկայ Նօթներորդ գլխի մէջ, ուր աւելի յարմար էր, այլ հետևեալ Ութերորդ գլխի մէջ։ Այս բանը կարող ենք բացատրել Դատաստանագրքի այն ընդհանուր պակասութեամբ, որը մենք ցուցինք իւր տեղում, այն է՝ Մխիթարը չունի որոշ կարգ կամ սիստեմա, որ անշուշտ նշան է անպատրաստութեան և իրաւաբանական դիտութեան հետ սակաւ ծանօթ լինելուն։ Երկրորդ՝ մաքսաւոր, արբեցող և մեղաւոր բառերը կարօտ են բացատրութեան։

Մաքսաւոր նշանակում է մաքսատան մէջ ծառայող կամ առհասարակ մաքս, բաժ և զանազան տուրքեր ժողովող մարդ։ Ինչպես երևում է աւետարանից՝ մաքսաւորները շատ վատ համարմունք ունէին հրէաների մէջ և ատելի էին ժողովրդին. այդ ատելութիւնը կար և ուրիշ ազգերի մէջ, մինչև անգամ քրիստոնէութեան ժամանակ և մանաւանդ միջին դարերում, որովհետև մաքսաւորները սովորաբար հարստահարում էին ժողովուրդը ամենայն տեղ։ Այդ պետական պաշտօնեաներ կամ կառավարուներ լինելով՝ ու՞ր մի օրէնդրութիւն չէր հսկում նոցա քաղաքացիական իրաւունքները, որոց հետ և վկայ լինելու իրաւունքը։ Իսկ մեր Մխիթարը գրում է նոցա այդ իրաւունքից ոչ թէ իրաւաբանական հիման վրայ, այլ գատնելով անշուշտ աւետարանի ազդեցութեան տակ, մանաւանդ որ՝ միասին է դնում մաքսաւոր և մեղաւոր բառերը, ինչպես և այնտեղ — «Եթէ ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Հիսուսի և ընդ աշակերտս նորա։ Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա։ ընդէ՞ր ընդ մաքսաւորս և մեղաւորս ուտէ վարդապետն ձեր»[87]։ Թեև Մխիթարի ժամանակ մահմետական կամ հայ մաքսաւորները շատ

87. Մատթ. գլ. Թ. համ. 9—13, Ղուկ. գլ. ԺԲ. համ. 10—14։

հարատահարումին ժողովուրդը, որ նա յիշելով աւետարանի տպաւորութիւնը՝ զրկուէ նոցա վկայ լինելու իրաւունքից։

Նոյնպէս դժուար է ըմբռնել, թէ ինչ մտքով է հաստատում Մխիթարը արբեցող բառը։ Սովորաբար երկու տեսակ արբեցողներ են լինում—կամ միանուագ և երբեմն երբեմն, կամ շարունակ մի քանի օր, մի քանի շաբաթ, մինչև անգամ՝ մի քանի ամիս։ Այդ երկրորդ տեսակ արբեցողութիւնը, իբրև մոլութիւն արդէն հիւանդութիւն է։ Ընդ՝ որ տեսակ արբեցողներ ունի ի նկատի մեր հեղինակը—չէ բացատրում։ Մեր կարծիքով նա պէտք է ի նկատի ունենայ երկրորդ տեսակ արբեցողները, որովհետև աւելացնում՝ «մինչև զդջասցին», այսինքն՝ մինչև որ կապաշխարեն, իսկ եկեղեցական կանոններով աւելի ծանր ապաշխարանք է սահմանած երկարատև արբեցողների համար, քան թէ մի անգամ արբեցածների համար [88]։ Եւ թէպէտ ինքն ըստ ինքեան արբեցութիւնը վատ յատկութիւն է, բայց այնու ամենայնիւ իրաւաբանական հիմն չկայ զրկել առհասարակ արբեցողը վկայ լինելու իրաւունքից յատկապէս արբեցողութեան պատճառով։ Այդպիսի մի ընդհանուր կանոն չենք տեսնում ոչ մի օրէնսդրութեան մէջ։ Ի հարկէ արբեցած ժամանակ մարդը չէ կարող վկայ լինել, որովհետև խաւարած է նորա միտքը և շփոթուած է նորա յիշողութիւնը, բայց եթէ արբեցող ը, մինչև անգամ շարունակ արբեցողը, արթնանալ եղած ժամանակին ականատես է եղել կամ ականջալուր որևիցէ անցքին, նա կարող է միշտ վկայ լինել առանց արգելքի։ Ուրեմն՝ պէտք է կարծել որ՝ Մխիթարը ի նկատի ունի շարունակ արբեցողները և արբեցած իսկ ժամանակ։

Իսկ ինչ վերաբերում է մեզաւորներին՝ Մխիթարը անշուշտ ի նկատի ունի ապաշխարողներ նոյն իսկ ապաշխարութեան ժամանակ, երբ նորա ապաշխարութիւն որևիցէ յանցանքի կամ մեղքի համար։ Ապաշխարողները այդպէս ժամանակ կարող են պատկանիլ բացասական պայմաններից առաջինին, այսինքն՝ յայտնի անբարոյականներին կամ վատաբարուներին։ Յայտնի է որ՝ եկեղեցական կանոնե-

88. Ս. Գր. Լուսաւորչի՝ կանոն ԻԲ. Ս. Սահակայ՝ կանոն Ե. Վիճակ եօթներորդ ժողովի՝ կանոն Ը. և Բ. կամ կանոնագիրք № 761, կանոններ՝ ՃԼԲ. Ռ.Գ. Ռ.Ձ.Գ. և Ռ.Ձ.Ե։

քով ապաշխարողները մինչև իրենց ապաշխարութեան վերջը բոլորովին անջատուած էին համարվում ընտանիքից և հասարակութիւնից, նոքա պէտք է կանգնած լինէին եկեղեցու գրան մօտ գրից կամ ներսից, արգիլուած էր լինում հաղորդութիւն ունենալ նոցա հետ, և այլն։ Ուրեմն զատարած լինելով առ ժամանակ գրեթէ իրենց բոլոր քաղաքացիական իրաւունքներից՝ ապաշխարողները, կամ՝ ինչպէս ասում Մխիթարը՝ մեղաւորները չէին կարող և վկայ լինել։

Բոլոր վերոյգրեալ պայմանների մէջ պակաս են, ինչպէս տեսնում ենք, մի քանի հարկաւոր պայմաններ։ Մէջ Նախադրութեան մէջ և ոչ Դատաստանագրքի մէջ Մխիթարը ոչ մի տեղում չէ յիշում թէ խելագարները, ցնորուածները, պակասամիտները, խուլերը, համրերը, հոգևորականները առհասարակ և խոստովանութեան մէջ յայտնած յանցանքների վերաբերմամբ մանաւանդ, որ՝ գիրքը ծնողների դէմ, ծառաները և սարքերը տէրերի դէմ, ստրկացածները իշխանաւորների դէմ, և այլն, կարող են վկայ լինել թէ ոչ։ Թէպէտ, ի նկատի ունենալով Մխիթարի հասկացողութիւնը և հայեացքը առհասարակ վկաների վերայ, պէտք է կարծել որ՝ բոլոր այդպիսի անձինք չեն կարող վկայ լինել, բայց նոյն իսկ նորա լուծութիւնը կարող է մեծամեծ դժուարութիւններ յառաջացնել դատաւորի համար, զոր օրինակ՝ եթէ այսօր մի դատաւոր կամենար Կօշի Դատաստանագրքով վարել դատաստանը, նա պիտի դժուարանար և տարակուսանաց մէջ ընկներ—ընդունել թէ չընդունել իրրև վկայ խելագարները, պակասամիտները, կամ զառամները ընդդէմ ծնողների, և այլն։

Հետևեալ ութերորդ գլուխը հետաքրքրական և ընդարձակ գլուխներից մէկն է, սա ամբողջապէս նուիրած է դատաստանական երդման։ Յայտնի է որ՝ հին ազգերի մէջ բաւական տարածուած իրաւաբանական սովորութիւններից մէկն էր երդմամբ վիջացնել վիճելի գործը։ Այսպէս, զոր օրինակ, կամ ոսոխը երդվում էր որ՝ իւր պահանջը ճշմարիտ է, և կամ դատախազը երդվում էր որ՝ նորա վերայ բարձած պահանջը սուտ է։ Այս սովորութիւնը հետզհետէ իրաւաբանական հաստատութեան կերպարանք ստացաւ և ընդունելութիւն գտաւ ոչ միայն հին ազգերի, այլև քրիստոնեայ ազգերի օրէնսդրու-

թիւններուն մէջ. սոքա հետքերը մինչեւ այժմ նշմարելի են ներկայ եւրոպական պետութիւնների օրէնքների մէջ. սա մնաւ նոյնպէս եւ մահմետական ազգերի օրէնսդրութեան մէջ։ Հռովմայեցիները ճանաչուելին երիք տեսակ դատաստանական երդումն — jnsjurandum, — յօժարակամ, հարկաւոր եւ պարտաւոր. առաջինն էր՝ երբ ոսոխը կամ դատախազը յօժար կամքով յանձն էր առնում երդուիլ իւր պահանջը կամ իւր բացատրութիւնը հաստատելու համար. երկրորդն էր՝ երբ մէկ հակառակորդը առաջարկուելէր միւսին կամ կատարել պահանջը և կամ երդուիլ որ՝ այդ պահանջը անիրաւացի է, — և այդպիսի մի առաջարկութիւնը հարկաւոր էր անպատճառ ընդունել, որովհետև չընդունել երդումն կը նշանակէր հաստատել և իրաւացի խոստովանիլ հակառակորդի պահանջը. երրորդն էր՝ երբ ինքն դատաւորը in jure կամ in judicio պատուիրումէր մի կամ միւս կողմին երդմամբ հաստատել պահանջը։

